



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(68)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2024

Բանբերը հրատարակվում է տարեկան երկու անգամ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

Вестник издается два раза в год по решению ученого совета Государственного университета имени В. Брюсова.

Bulletin is published twice a year by the decision of Brusov State University Scientific Council.

Խմբագրական խորհուրդ՝

Գյուրջինյան Դավիթ	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (<i>գլխավոր խմբագիր, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Եղիազարյան Գայանե	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>գլխավոր խմբագրի տեղակալ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Խաչիկյան Անահիտ	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Աբրահամյան Կարինե	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Գասպարյան Գայանե	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Համբարձումյան Դիանա	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Աբրահամյան Սուրեն	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Էթարյան Ելենա	բանասիրական գիտությունների դոկտոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Սարգսյան Իննա	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)

Թոփուզյան Աիդա	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան</i>)
Խաչատրյան Լալիկ	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան</i>)
Խաչատրյան Կարեն	պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ</i>)
Մկրտչյան Թաթուլ	տնտեսագիտության դոկտոր (<i>Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան</i>)
Օրդուխանյան Էմիլ	քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ (<i>ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ</i>)
Սարվազյան Լիլիթ	փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (<i>ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ</i>)
Պախսարյան Նարայա	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Մոսկվայի պետական համալսարան, ՌԴ</i>)
Սերեբրյակովա Սվետլանա	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Հյուսիս-Կովկասյան ֆեդերատիվ համալսարան, Ռուսաստանի թարգմանիչների միության Ստավրոպոլյան մարզային բաժանմունք, ՌԴ</i>)
Գլտրովա Ժաննա	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ (<i>Էմանուել Կանյի անվան կրթության և հումանիտար գիտությունների ինստիտուտ, Կալինինգրադ, ՌԴ</i>)
Շահվերդյան Անուշ	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ (<i>Համաշխարհային բանկի կրթության գծով միջազգային խորհրդարան, Վաշինգտոն, ԱՄՆ</i>)

Խմբագրական կազմ՝

Թովմասյան Հրանուշ	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հեքեքյան Նարինե	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գևորգյան Լիլիթ	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Բաղայան Լիլիթ	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ղազարյան Դոնարա	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Սաֆարյան Լիանա	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հովհաննիսյան Ֆրունզե	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ռաֆայելովա Քրիստինե	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ապրեսովա Սոնյա	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ղարիբյան Դավիթ	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հարությունովա Քրիստինա	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մուսեյան Ռուզան	բանասիրական գիտությունների թեկնածու

Տեխնիկական խմբագիր՝

Փիլավջյան Հասմիկ

Редакционный совет:

Гюрджинян Давид	кандидат филологических наук, доцент (гл. редактор, Государственный университет имени В. Брюсова)
Егуазарян Гаяне	доктор филологических наук, профессор (зам. гл. редактора, Государственный университет имени В. Брюсова)

Хачикян Анаида	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Абраамян Карине	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Гаспарян Гаяне	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Амбардзумян Диана	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Абраамян Сурен	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Этарян Елена	доктор филологических наук (Государственный университет имени В. Брюсова)
Сарксян Инна	доктор педагогических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Топузян Аида	доктор педагогических наук, профессор (Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна)
Хачатрян Лалик	доктор филологических наук, профессор (Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна)
Хачатрян Карен	доктор исторических наук, профессор (Ереванский государственный университет, факультет истории)
Мкртчян Татул	доктор экономических наук (Государственный экономический университет Армении)
Ордуханян Эмиль	кандидат политических наук, доцент (Институт философии, социологии и права НАН РА)

<i>Сарвазян Лилит</i>	кандидат философических наук, доцент (Институт философии, социологии и права НАН РА)
<i>Пахсарян Наталья</i>	доктор филологических наук, профессор (Московский государственный университет, РФ)
<i>Серебрякова Светлана</i>	доктор филологических наук, профессор (Северо-Кавказский федеральный университет, Ставропольское краевое отделение Союза переводчиков России, РФ)
<i>Глотова Жанна</i>	кандидат педагогических наук, доцент (Гуманитарно-педагогический институт им. Эммануила Канта, Калининград, РФ)
<i>Шахвердян Ануш</i>	кандидат педагогических наук, доцент (Международный консультант Всемирного банка по образованию, Вашингтон, США)

Редакционная коллегия:

<i>Товмасян Грануш</i>	доктор филологических наук, профессор
<i>Экекян Нарине</i>	кандидат филологических наук, доцент
<i>Геворгян Лилит</i>	кандидат филологических наук, доцент
<i>Бадалян Лилит</i>	кандидат филологических наук, доцент
<i>Казарян Донара</i>	кандидат филологических наук, доцент
<i>Сафарян Лиана</i>	кандидат филологических наук, доцент
<i>Оганнесян Фрунзе</i>	кандидат филологических наук, доцент
<i>Рафаелова Кристине</i>	кандидат филологических наук, доцент
<i>Апресова Соня</i>	кандидат филологических наук, доцент
<i>Гарибян Давид</i>	кандидат филологических наук, доцент
<i>Арутюнова Кристина</i>	кандидат педагогических наук, доцент
<i>Мусеян Рузан</i>	кандидат филологических наук

Технический редактор:

Пилавджян Асмик

Editorial Council:

<i>Gyurjinyan Davit</i>	Candidate of Sciences (Philology), Associate Professor (<i>Brusov State University</i>)
<i>Yeghiazaryan Gayane</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
<i>Khachikyan Anaida</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
<i>Abrahamyan Karine</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
<i>Gasparyan Gayane</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
<i>Hambardzumyan Diana</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
<i>Abrahamyan Suren</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
<i>Etaryan Yelena</i>	Doctor of Sciences (Philology), (<i>Brusov State University</i>)
<i>Sargsyan Inna</i>	Doctor of Sciences (Pedagogy), Professor (<i>Brusov State University</i>)
<i>Topuzyan Aida</i>	Doctor of Sciences (Pedagogy), Professor (<i>Armenian State Pedagogical University after KH. Abovyan</i>)
<i>Khachatryan Lalik</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Armenian State Pedagogical University after KH. Abovyan</i>)
<i>Khachatryan Karen</i>	Doctor of Sciences (History), Professor (<i>Yerevan State University, Faculty of History</i>)
<i>Mkrtchyan Tatul</i>	Doctor of Sciences (Economics) (<i>Armenian State University of Economics</i>)
<i>Ordukhanyan Emil</i>	Candidate of Sciences (Political Sciences), Associate Professor (<i>Institute of Philosophy, Sociology And Law of NAS RA</i>)
<i>Sarvazyan Lilit</i>	Candidate of Sciences (Philosophy), Associate Professor (<i>Institute of Philosophy, Sociology And Law of NAS RA</i>)
<i>Pakhsaryan Natalya</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Moscow State University, RF</i>)
<i>Serebryakova Svetlana</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>North-Caucasian Federal University, Stavropol Regional Department of the Russian Translator's Union, RF</i>)

Glotova Zhanna Candidate of Sciences (Philology), Associate Professor (*Immanuel Kant Baltic Federal University, Kaliningrad, RF*)

Shahverdyan Anush Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor (*World Bank International Consultant on Education, Washington, USA*)

Editorial Board:

Tovmasyan Hranush Doctor of Sciences (Philology), Professor
Heqeqyan Narine Candidate of Sciences (Philology), Associate Professor

Gevorgyan Lilit Candidate of Sciences (Philology), Associate Professor

Badalyan Lilit Candidate of Sciences (Philology), Associate Professor

Kazaryan Donara Candidate of Sciences (Philology), Associate Professor

Safaryan Liana Candidate of Sciences (Philology), Associate Professor

Hovhannisyan Frunze Candidate of Sciences (Philology), Associate Professor

Rafayelova Qristine Candidate of Sciences (Philology), Associate Professor

Apresova Sonya Candidate of Sciences (Philology), Associate Professor

Gharibyan David Candidate of Sciences (Philology), Associate Professor

Harutyunova Kristina Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor

Museyan Ruzan Candidate of Sciences (Philology)

Technical Editor:

Pilavjyan Hasmik

Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի 1(68): - Երևան, Լինգվա, 2024, 273 էջ:

Вестник Государственного университета имени В. Брюсова 1(68). - Ереван, Лингва, 2024, 273 с.

Bulletin of Brusov State University 1(68). - Yerevan, Lingva, 2024, 273 pages.

ISSN 1829-3107
© Լինգվա, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ CONTENTS

ՀՈԴՎԱԾՆԵՐ
СТАТЬИ ARTICLES

- Չարիկ Աղաջանյան** 13
Լեզվի և նորմի փոփոխության կանխադրույթներն ըստ Ա. Այտրնյանի «Քննական քերականության»
Зарик Агаджанян
Предпосылки изменения языка и нормы в «Критическом грамматике» А. Айтыняна
Zarik Aghajanyan
Hypotheses for Language and Norm Change in A. Aitynyan's "Critical Grammar"
- Թամարա Անդրեասյան** 25
Նկարագրական պատկերները Լևոն Բաշալյանի գեղարվեստական արձակուժ
Тамара Андреасян
Описательные образы в художественной прозе Левона Башалаяна
Tamara Andreasyan
Descriptive Images in Levon Bashalyan's Literary Fiction
- Լիլիթ Բադալյան, Սասուն Շամիրյան** 38
«Տարօրինակություն» հասկացույթի ճանաչողական հայեցակերպն անգլերենում
Лилит Бадалян, Сасун Шамирян
Когнитивный аспект концепта *Странность* в английском языке
Lililt Badalyan, Sasun Shamiryanyan
Cognitive Aspect of Concept *Strangeness* in English
- Սուսաննա Գաբրիելյան** 47
Մեղմասություն և կոպտասություն. խոսքի արտահայտչական միջոցներ
Сусанна Габриелян
Эвфемизмы и дисфемизмы: средства выразительности речи
Susanna Gabrielyan
Euphemisms and Dysphemisms: The Expressive Means of Speech

<p>Դավիթ Գյուրջինյան Իրանական լեզուների հայերեն անունները. Ժամանակագրությունը, գործածությունը, բառարանային մշակումը և կանոնարկման խնդիրները</p> <p>Давид Гюрджинян Армянские названия иранских языков: хронология, употребление, лексикографическая обработка и задачи нормирования</p> <p>Davit Gyurjinyan Armenian Names of Iranian Languages: Chronology, Usage, Lexicographical Processing, and Normative Issues</p>	<p>64</p>
<p>Հռիփսիմե Զարարյան Միջաբանական սկզբնաղբյուրները որպես միջտեքստայնության նախադեպային տեքստեր</p> <p>Рипсима Закарян Мифические первоисточники как прецедентные тексты интертекстуальности</p> <p>Hripsime Zakaryan Mythical Primary Sources as Precedent Texts of Intertextuality</p>	<p>122</p>
<p>Անի Թամազյան Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների փաստաթղթերում առկա գործաբանական ցուցիչների գործառական դերերի համեմատական վերլուծություն</p> <p>Ани Тамазян Сравнительный анализ функциональных ролей прагматических маркеров в документировании Косовского и Нагорно- Карабахского конфликтов</p> <p>Ani Tamazyan Comparative Analysis of the Functional Roles of Pragmatic Markers in Documenting the Kosovo and Nagorno-Karabakh Conflicts</p>	<p>137</p>
<p>Լալիկ Խաչատրյան, Մարգուշ Միրումյան Ապարբայնացում եզրույթի իմաստաբանությունը</p> <p>Лалик Хачатрян, Маргуш Мирумян Семантика термина “десакрализация”</p> <p>Lalik Khachatryan, Margush Mirumyan Semantics of the Term “Desacralization”</p>	<p>157</p>

- Արքակ Ղուլան** 168
 Միֆական Լիլիթի կերպարի երկատման
 առանձնահատկությունները գրականության մեջ
Артак Гулян
 Особенности раздвоения мифического образа Лилит в
 художественном лиреатуре
Artak Ghulyan
 The Dichotomy of the Mythic Character “Lilit” And Its Portrayal in
 Fiction
- Սպարքակ Մխիթարյան** 187
 Լեզվական առանձնահատկությունները սոցիալական ցանցերի
 գովազդում
Спартак Мхитарян
 Языковые особенности рекламы в социальных сетях
Spartak Mkhitaryan
 Linguistic Peculiarities of Social Media Advertisements
- Մկրտիչ Մկրտչյան** 201
 Նշանագիտական թարգմանության առանձնահատկությունները
 տեսողական հաղորդակցությունում. «Իմ սիրուն» գովազդային
 արշավի օրինակով
Мкртыч Мкртчян
 Особенности семиотического перевода в визуальной
 коммуникации: на примере рекламной кампании "Им сирун"
Mkrtich Mkrтчyan
 Peculiarities of Semiotic Translation in Visual Communication: the
 Case of "Im Sirun" Ad Campaign
- Աննա Շահբազյան** 219
 Կախարդական իրերի անվանումների թարգմանության խնդիրը
 «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպի հայերեն
 թարգմանվածքում
Анна Шахбазян
 Проблема перевода названий волшебных предметов в армянском
 переводе романа “Гарри Поттер и философский камень”
Anna Shahbazyan
 On the Problem of Translating Names of Magical Objects in
 Armenian Translation of the Novel "Harry Potter and the
 Philosopher's Stone"

- Մարիամ Վանյան** 238
 Մոնտաժային պլանների կիրառման առանձնահատկությունները
 Մայքլ Քանինգհեմի «Ժամերը» վեպում
- Мариам Ванян**
 Особенности использования монтажных планов в романе Майкла Каннингема «Часы»
- Mariam Vanyan**
 Peculiarities of the Usage of Editing Shots in the Novel "The Hours"
 by Michael Cunningham

ՀԱՂՈՐԴՈՒՄ

СООБЩЕНИЯ REPORTS

- Գայանե Եղիազարյան** 248
 Եվրոպայի խորհրդի ժամանակակից լեզուների եվրոպական
 կենտրոնի լեզվաքաղաքականությունը
- Гаяне Егиазарян**
 Языковая политика европейского центра современных языков
 Совета Европы
- Gayane Yeghiazaryan**
 Language Policy of the European Center for Modern Languages of
 the Council of Europe

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

РЕЦЕНЗИЯ REVIEW

- Սերգո Հայրապետյան** 262
 Լ. Մ. Խաչատրյան - «Հին հայերենի քերականական
 համակարգի տիպաբանությունը», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.,
 Երևան, 2023, 502 էջ:
- Серго Айрапетян**
 Л. М. Хачатрян - "Типология грамматической системы
 древнеармянского языка", НАН РА, Издательство «Наука»,
 Ереван, 2023, 502 с.
- Sergo Hayrapetyan**
 "Typology of the Grammatical System of Ancient Armenian", NAS of
 RA "Science" Publishing House, Yerevan, 2023, 502 p.

- Տեղեկություններ հեղինակների մասին** 269
Сведения об авторах
Information About the Authors

**ԼԵԶՎԻ ԵՎ ՆՈՐՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱԴՐՈՒՅԹՆԵՐՆ
ԸՍՏ Ա. ԱՅՏԸՆՅԱՆԻ «ՔՆՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ»**

ԶԱՐԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածում քննարկվում և համառոտ ներկայացվում են Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր, արքեպիսկոպոս, լեզվաբան-բանասեր **Արսեն Այտընյանի** կանխադրույթները լեզվի և նորմի փոփոխության հարցերի շուրջ: Մերօրյա գրական հայերենի երկու տարբերակների նորմավորման, մերձեցման ճանապարհով մեկ միասնական լեզու ունենալուն նպատակամիտված գիտական լեզվաշինության, ճիշտ լեզվաքաղաքականության վարույթներում կարևորվում են նրա լեզվաբանական հայացքները, որոնք առնչվում են նաև արդի հանրալեզվաբանության և էկոլեզվաբանության, ընդհանուր և պատմահամեմատական լեզվաբանության շատուշատ հարցերի մեկնաբանմանն ու լուսաբանմանը: **Հիմնականապես** դասական լեզվաբանական ժառանգության արդիականացումն է, գործիքավորումը՝ ժամանակակից մեթոդաբանությամբ՝ ի նպաստ արդի գրական հայերենի բարեշրջման և կատարելագործման:

Հիմնաբառեր՝ լեզվի փոփոխություն, գրական լեզվի նորմ, նորմի փոփոխություն, նորմավորում, լեզվի փոփոխության պատճառներ, պարզություն, հստակություն, լեզվաշինություն, լեզվաքաղաքականություն

Ներածություն

Խորհող և խոսող մարդկությունն է իր լեզվին ձև ու կերպ տվողը. առատ ու ազատ գաղափարների տեր ժողովուրդը հարուստ և ճոխ լեզվի տեր է, գեղեցկասեր մտքերի տերը՝ գեղեցիկ լեզվի, հաղթապանձ ժողովրդի լեզուն հզոր է և հուժկու. այն հայ ժողովրդի նյութական, բարոյական ու մշակութային արժեքների «ծանրաչափն» է: Հայերենն այսպիսին է նաև ազգային լեզուն «ուսման նյութ» դարձնողների՝ իր մշակների, իր «գործավորների» ու «օրենսդիրների» շնորհիվ: Նրանցից մեկն է Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր, արքեպիսկոպոս Արսեն Այտընյանը (1825-1902 թթ.)՝ 19-րդ դարի

նշանավոր «բանասեր-գործասեր», որ ծառայեց իր ժամանակին՝ նոր ժամանակին նոր լեզու ծառայեցնելով, ժողովրդի ձեռքը նոր քերականություն տալով: Նա ինքը հենց իր նկարագրած Քերականն է՝ **դարմանող ու ազնվացնող, ուղղող ու շտկող**, հանճարը՝ **սուր, ճաշակը՝ կիրթ և ընտրող**, զգացողականը՝ **արթուն**, ձեռքը՝ **ճարտար**: Քերական, որը, սակայն, քերականության «օրինաց մատեանի» հեղինակ չէ. «իւր պաշտօնն է դիտել, քննել այն օրէնքներն որ բնութիւնը իւրովի կազմեր է, ժողովել քովէ քով բերել, համեմատել, ընդհանուրն ու մասնաւորը զատել, բացառութիւնը որոշել...» (Այտընյան, 1987, էջ 323):

Այտընյանական կանխադրոյթներ

Հայագետի նպատակն էր գրել հայերենի քննական քերականություն՝ դրանով իսկ փորձելով տեսականորեն հիմնավորել գրաբարն այդ լեզվով փոխարինելու անհրաժեշտութիւնը: Ինչպես Ա. Աբրահամյանն է նշում իր «Արսեն Այտընյանի լեզվաբանական հայացքները» աշխատության մեջ (1984), արևմտահայ գրական լեզվի հարցը Ա. Այտընյանի քննության մեջ վերաճում է հայ գրական լեզվի հարցի, այս վերջինն էլ՝ ընդհանրապես գրական լեզվի հարցի:

Փիլիսոփայական հանրահայտ օրենքը՝ «քանակական փոփոխությունները պատճառ են դառնում որակական փոփոխությունների», կենսունակ է նաև լեզվի, լեզվական նորմի փոփոխության հարցերում: Սրանցում «Բնության խորհուրդն» էլ խորհուրդ ունի. այն, ինչ ծնվում է, պետք է ապրի, իր նմանը առաջ բերի և մեռնի: Բայց և՛ ոչինչ միանգամից (ոստյունացատկով) չի լինում, և ամեն փոփոխություն «անցման կարոտություն» ունի: Լեզվաբանը փիլիսոփայական պատմաբանասիրության այս հիմնահարցին այսպիսի լուծում է տալիս. մարդկային խոսողության գործիքը՝ լեզուն, ևս ենթարկվում է բնության օրենքներին՝ **ծնվել, ապրել, իր նմանին առաջ բերել և մեռնել**, և բնության նման իր զարգացման պատմության մեջ երբեք ոստյուններով՝ ցատկերով չի ընթանում՝ «անցման կարօտութիւն ունի եւ երկարագույն ժամանակի»: Ավելին, հնարավոր չէ նշել փոփոխությունների սկիզբը կամ «անջատման կետը»՝ ո՛չ օրը, ո՛չ տարին, նաև՝ ո՛չ դարը (Այտընյան, 1987, էջ 31):

Լեզուն փոփոխվում-փոխվում է ներքին-բնականոն առաջընթացի թելադրանքով, իսկ փոփոխությունների հիմնապատճառը չգործածվելն է: Համընդհանրական լեզվաիրողություն է՝ **ամեն տեղ և ամեն ժամանակ հին լեզուն մեռնում-ընկնում է նոր լեզվի ծաղկելով**: Սակայն, աշխարհաբարի ձևավորման պատմության ընթացքը քննելով, Ա. Այտընյանը ճիշտ է համարում ընդգծված միտքը շրջումով մեջբերելը՝ **հին լեզվի անկումով նորը ծաղկեց**: Աշխարհաբարի այս

առանձնահատկությունն աչքի տակ առնելով՝ լեզվաբանը անչափ նուրբ դիտողականությամբ է բացատրում լեզվի բնականոն փոփոխության անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը, հին լեզվի կորստյան ու մահացման և նոր լեզվի առաջացման ու կենդանության հիմնապատճառը՝ համընդհանրական լեզվօրենք սահմանելով՝ «...միշտ հին լեզուին անգործութիւնը պատճառ է նոր լեզուին գործունէութեանը, եւ ոչ հետետութիւն» (Այտընյան, 1987, էջ 280-281):

Ա. Այտընյանը լեզվի գլխավոր փոփոխիչներ՝ «այլալիչներ» է համարում **քաղաքական իշխանությունը, կրոնը և գիրը**: Ցանկացած լեզվի պատմության մեջ **Մեծ Սկիզբ** է «լեզվի ազնվացուցիչ տարրի»՝ **Գրի** ստեղծումը, նաև՝ **մատենագրության** սկզբնավորումը: Հինգերորդ դարի սկզբներին Հայաստանի միջնաշխարհի թագավորական ընտիր ու ազնիվ լեզուն գրի առնվեց արքունիքի դպիր Մաշտոցի ձեռքով: Ա. Այտընյանն էլ է հաստատում ազգային մատենագրության մեջ ընդունված կարծիքը. երկար ժամանակ հին հայկաբանության վառարան Գողթան գավառի «օղովը սնած **Գրոյն Տարօնեցի գտիչը**», ազգային գաղափարներն ազատելով օտար շղթաներից, ընտանի լեզուն «փափուկ» ձեռքերի հանձնեց: Անցնող դարերը կրկին ու կրկին կնքում-վերակնքում են մերոպամաշտոցյան գործը՝ **ազգայնության մեկ թևը (պետականությունը) կոտրելու պահին մյուսը՝ լեզուն, կանգուն է պահում նույնը**:

Ա. Այտընյանը լեզվի նորմավորման հարցերում գրի գյուտի կարևորությունը այսպիսի չափանիշներով է ներկայացնում՝

Ա. Աննյութ լեզուն գրի հաստատուն կերպարանքով է մարմին առնում:

Բ. «Գրոյն գիտն զմեզ անկայան եւ անյատակ մակաբերութեանց սահմանէն իրական դիտողութեանց սահմանը կը փոխադրէ» (Այտընյան, 1987, էջ 45):

Գ. «Առակ է՝ թէ Խօսքը կը թռչի, գիրը կը մնայ: Գիրը, որ ժամանակակից բացակայից միանգամայն ու ապագայ հեռաւորաց ուղղուած մնայուն դրոշմ է, լեզուին անդադար կերպարանափոխութեան ընթացքին առջեւը բաւական ամուր թումբ մըն է» (Այտընյան 1987, էջ 35): Նա նաև ուրվագծում է բանավոր և գրավոր խոսքի տարբերություններից հիմնականը՝ «գրողը հասարակօէն խօսածեն աղեկ գրելու մտադիր է»:

Դ. Իր կենտրոնից տարածվելով՝ Արարատյան աշխարհի «ազնիվ» լեզուն բովանդակ Հայաստանի լեզուն դարձավ, այսինքն՝ այն կենտրոնացնող՝ միասնականացնող արժեք ունի:

Ե. Փոփոխությունների («փոփոխմանց») բուն հոսանքն է մեղմում:

Զ. Լեզվի դարեդար փոխանցումն է ապահովում. «Հաջորդ դարերուն օրինակ կ'ըլլայ նոյն լեզուն և կը սեպհականուի գրութեամբ»:

Հազարամյա հայերենի նորմավորումը միայն գրի շնորհիվ անհրաժեշտություն դարձավ. լեզվի անորոշ ու տարտամ ընթացքը որոշակի սահմանների մեջ առնվեց, մշակվեց «լեզվաօրենսդրություն»՝ հաղորդության՝ լեզվափոխանցման այն մատյան-խողովակը, որի միջոցով ներկա դարը ոչ միայն անցյալ դարերի «խոսքն է լսում», այլև իրեն ու իրենն է փոխանցում հաջորդ սերունդներին, կամուրջ դառնում լեզվի դարեդար անցումին:

Սրանցից զատ այլ պատճառներ էլ է նշում, պատճառներ, որոնց բացահայտման ճանապարհին դժվար թե կարողանանք պնդել, թե այս խնդիրները քսանմեկերորդարյա հայերենի նորմավորման գործընթացում հանգուցային չեն:

«Քննականը» թերթելով՝ առանձնացրել ենք հետևյալները՝

Ա. Պատճառների պատճառը լեզվի ներքին պահանջմունքն է՝ հասկացնելու և հասկանալու կամ հաղորդակցության գործընթացի երկու եզրերի դրդիչ ուժը: Ինչո՞ւ է լեզվական նորմը փոփոխվում, և որտե՞ղ փնտրել կանոնի եղծման, նրանից խտորվելու՝ շեղվելու նախաստիճանը: Իհարկե, ժամանակակից առտնին լեզվում: Այստեղանը բացատրում է՝ «գիտնոց և գրագիտաց» լեզվի համեմատությամբ ռամիկի լեզուն ուրիշ սահմանի մեջ է. գրի ազդեցությունը խրճիթներին չի հասնում: Ռամիկը միայն իր բաժինը գիտի՝ իր գավառինն ու իր ժամանակինը, ավելորդ է համարում քերականական պերճությունը, ձևաշատությունից խորշում է և սեփականում է կարճ բառեր, պարզ ու միակերպ ձևեր: Ռամիկի խոսվածքի կամ ժողովրդախոսակցական լեզվի և կամ ընտանեկան լեզվի երկու հատկությունները՝ **պարզությունը**՝ «հասկացնելը», և **բացահայտությունը**՝ «հասկանալը», գիրկընդխառն հեշտացնում են հաղորդակցման գործընթացը: Այստեղ տեսականի և գործնականի փոխկապակցվածության, նաև գրական և ժողովրդախոսակցական լեզվի մերձեցման խնդիրների լուծման պահանջմունքի կողքին նաև լեզվի՝ դյուրությամբ միտքը «թարգմանելու» նպատակով «առձեռնպատրաստ» օգնական դառնալու միջոցն է կարևորում: Ուրեմն՝ լսենք քերականին. «Ռամիկն որ անելի գործոյ քան թէ գրոց ու դպրոցաց վրայ դրած է իւր շահը, յամենայնի դիւրութիւն կը փնտռէ. իր խոսուածքի հոլովելուն երկու բեւեռներն են՝ Պարզութիւն եւ Բացայայտութիւն: Եւ իրօք ո՞րն է ռամկին լեզուն, ո՞րն է ժողովրդեան մ՝

ընտանեկան լեզուն, եթե ոչ՝ կէս մը հնագոյն հարթ ձեւեր (գիտնոց քով անսովոր), կէս մը նորելուկ ձեւեր (գրաւորին նոր աղաւաղութիւնները), շատ մը բացայայտութեան որոշիչ կերպեր, շատ մը օտարամուտ ձայներ, բնածայն բառեր եւ այլն, միու բանիւ՝ ինչ որ **առձեռնպատրաստ օգնական է իրեն՝ դյուրութեամբ իւր մտքին թարգմանն ըլլալու**» (Այտընյան, 1987, էջ 37):

Բ. Լեզվի փոփոխության գլխավոր մղիչը մտքի զարգացումն է կամ նորանոր «գաղափարաց պէսպէսությունը», և լեզվակիրը նորանոր կերպեր ու եղանակներ՝ «եղանակավորումը» է ստեղծում:

Գ. Պատմական դիրքը կամ քաղաքական անցքերը ազդում են ժողովրդի՝ լեզվակիր հանրության վրա: Սրանք ևս չեն կարող չազդել լեզվի կերպավորության վրա, պատճառ չդառնալ նրա փոփոխության:

Դ. Ա. Այտընյանը լեզվի փոփոխության, լեզվի ճյուղավորման իսկական աղբյուր է համարում աշխարհագրական դիրքով պայմանավորված տարածական հեռավորությունը. մեր հայրենիքի ու մեր ժողովրդի տևական բաժանմամբ խարխիլվել է նույնպէզու ազգի սերտ միասնությունը, միությունը:

Ե. Հայոց լեզվի պատմության ընթացքում դարակազմիկ կերպարանափոխության մեծ մղումը պիտի սկսվեր այլալեզու օտարների մեջ հայտնվելուց, հայ ազգի բուն մարմնից զանգված առ զանգված անջատվելուց և վայրիվերո ցիրուցան լինելուց: Իր ազգին բնականորեն հասցված հզոր հարվածն Այտընյանն անվանեց **Գաղթականություն՝** նախասկիզբն այսօրվա **Սփյուռքի** («Ազգ էիր, սփյուռք դարձար». Վ. Թեքեյան): Նոր երկիր, նոր կլիմա, նորանոր սովորույթներ, ընտանեկան անսովոր բարքեր, օտարի լեզու և կախվածություն օտարից, կտրվածություն իր սեփական աշխարհից, միով բանիվ՝ օտար և օտարացուցիչ տարերք՝ իր հնարավոր և անխուսափելի հետևանքներով՝ օտար միջավայրում առաջադեմ ազգերի հետ շփվելը, բարձրագույն կարգի պաշտոններ զբաղեցնելը, տարբեր ոլորտներում գործառություններ կատարելը, ուսման և դաստիարակության ընդհանրությունները, խառն ամուսնությունները, կրոնական հետապնդումը և այլն: Փորձով ստուգված է՝ ֆիզիկական փոփոխությունը, մասնավորապէս՝ տեղափոխությունը, եթե բարոյական փոփոխությամբ չի լրացվում, չի ազդում կամ գրեթե չի ազդում լեզվի վրա: Անգործության խաղաղ վիճակից գործունեության բազմավորով սահմանն անցնելն է, որ մեծ փոփոխությունների պատճառ է դառնում:

Զ. Ա. Այտընյանը չի բացառել նաև վարքութարքի, կենցաղային, բարոյական արժեքների ազդեցությունը լեզվի վրա: Ազգային պատմագրությունը այս տեսությունը արդարացնում է: Այսպէս՝

Հայաստանի հարավային լեռնաբնակները չէին կարող իրենց լեռնային բնակության ու բիրտ բարքերի պատճառով «մեղմ» կամ «ազնիվ» հայերեն ունենալ: Նույն ձևով՝ անմշակ և «կես վայրենի» բարբառ էր պատմության մեջ որպես «գազանամիտ, վայրենագույն, ճիվաղաբարո կողմանք» բնորոշվող Սյունյաց գավառի բարբառը: Իսկ Գողթան գավառի լեզուն «Հայոց Ատտիկէաստանն էր լեզուին գեղեցկութեան կողմանէ» (Այտընյան, 1987, էջ 43):

Լեզվի փոփոխությունն ինքնըստինքյան հանգեցնում է սկզբի, բարձրակետի և վախճանի մասին խորհրդածումների շղթային, որի Մեխն է դառնում հետևյալը՝ գործառական ո՞ր ոլորտներում է կատարելագործվում–կանոնարկվում լեզուն և ե՞րբ է հասնում իր բարձրակետին: Լեզուն իր բազմադարյա պատմության ընթացքում ձգտում է հասնել կատարելության. կատարելության վերին աստիճանը ընդունված է կոչել «**Ոսկեղեն**»՝ «բովանդակ իւր անցյալէն եւ ապագայէն գերազանց» (հաջորդողները, նույնի համեմատությամբ և նրանից հեռանալու համեմատ՝ անվանվում են «**Արծաթեղեն**», «**Պղնձեղեն**», «**Երկաթեղեն**», «**Խեցեղեն**»): Եվ արքունական դահլիճները, ազնվականության սրահները, եկեղեցու կամարները, հրապարակախոսության բեմերը, դպրոցներն ու երաժշտանոցները, մանավանդ «գրագիտաց մատեաններն» են գործառական այն շրջանակները, որոնցով անցնելով ձևավորվում է կատարյալ, հզոր, կենդանի-կենսունակ մի լեզու: Ըստ Ա. Այտընյանի լեզվափոխության՝ սա լեզվի հասուն-գերազանց վիճակն է, որին նախընթաց է խակ մանկությունը, և որին հաջորդում է ծերությունը, որից մահն էլ շատ հեռու չէ: Իսկ տևողությո՞ւնը: Եթե ժամանակները նպաստավոր են, կարող է այդ երջանիկ հասակը երկար տևել...

Ա. Այտընյանը բնական է համարում լեզվի աստիճանականությունը, լեզվատարբերակների գոյությունը և լեզվի տարբեր գոյաձևերի առկայությունը, այսինքն՝ սոցիալական և գործառական տարբերակների խնդիրն է անդրադառնում: Ըստ լեզվակիրների սոցիալ-հասարակական դիրքի, իմացականության և զգացողության՝ լեզվում որոշ աստիճանականություն է դրսևորվում՝ **աստվածների կամ մարդկանց լեզու, գեղջուկի կամ պալատականի լեզու, հասարակ կամ ընտանեկան լեզու** և այլն՝ բազմագունյան պեսպեսություններով՝ **ազնիվ կամ կոշտ, զարդարուն կամ աղքատիկ, պարզ կամ խրթին, գռեհիկ կամ ազնվաշուք...** Այս դեպքում ևս Այտընյանն ուղենշում է՝ ցանկացած լեզվի նորմավորման, լեզվաշինական և լեզվաքաղաքանության խնդիրները կարգավորելու համար կարևոր նախապայման է **տվյալ ժամանակի լեզվավիճակի քննությունը:**

Գնահատելի է, որ լեզվաբանը նորմավորման գործընթացը սկսելու բանալի է տալիս՝ իբրև ժամանակային սահմանափակում՝ **կանոնակարգման աշխատանքները միայն ներկային են վերաբերում**. մենք չենք կարող փոփոխել լեզվի անցյալ վիճակի լեզվական կանոնաշարքը կամ սահմանել ապագայի նորմը: Արդի լեզվավիճակից ելնելով՝ կանոնակարգել լեզուն նշանակում է այն ներկայացնել այնպես, ինչպես որ է իրոք՝ առանց ավելորդ ողբ ու տրտունջքի, առանց ոգևորության կամ լեզվի օրենսդիր հռչակվելու բուռն ցանկության, ավելին՝ «վայրապար հոգնություն է եղածը չեղած երևցնել կամ եղածը չեղած ընելու ջանալ»: Այս սկզբունքով էլ նա նկարագրում է իր ժամանակի լեզվավիճակը. մեռյալ գրաբար և անկենդան աշխարհաբար, միջակա անհարդար վիճակ, եղծված հնի կողքին տարբեր բարբառների բաժանված, օտարոտի տարրերով խառնված, գրագետների մոտ հարգ ու պատիվ չգտած նոր լեզու՝ «Խեցեղեն» լեզու, որին հեղիեղուկ ժամանակն էլ տարբեր կերպերով ու կերպարանքներով է զգեստավորել:

Նույն ձևաչափով՝ այսպիսին է ժամանակակից արևմտահայերենի ներկայիս վիճակը. հայախոս համայնքների ցրվածություն, երկլեզվություն կամ եռալեզվություն, քառալեզվություն, լեզվաշինության գործին հետևող կենտրոնի բացակայություն, զանազան երկրներում քաղաքական ուղղակի և անուղղակի սեղմումներ, սահմանափակումներ, ճնշումներ, բայց և՛ լեզվագործածություն ու լեզվուսուցում՝ հայի նախանձախնդրությամբ ու համառությամբ:

Իհարկե, «Քերականությունն» ընդհանրապես լեզվի մշակման, նորմավորման նպատակին է ծառայում, բայց հարկ ենք համարել արտածել և որպես սկզբունքներ կամ սկզբունքանման հատկանիշներ ձևակերպել մեզ հետաքրքրած մի քանի դիտողություններ՝ ի նպաստ արդի հայերենի նորմավորման գործընթացի բարեշրջման.

- Հաստատված ճշմարտություն է՝ լեզուները երկու դարագլուխ ունեն. մեկը՝ գրի ստեղծումից առաջ, մյուսը՝ գրի ստեղծումից հետո: Այտրյանը գիտականորեն է բացատրում **գրի, կանոնի և սովորույթի աստիճանականության սկզբունքը**: Առաջին դեպքում գիրն ու կանոնը (քերականությունը) սովորությանը պիտի հետևեն, երկրորդ դեպքում՝ սովորությունը՝ գրին ու կանոնին:

- Բնական տրամաբանությամբ և բնական ազդմամբ է ամեն բան կանոնավորվում. այսպես մտածելու հիմքը Կեսար Քանթուի խորհրդածությունն է. նոր լեզուները չեն ստեղծվում արվեստով, այլ դյուրագույն հնչման և համեմատականության կանոններով:

- «**Բնութեան հպատակիլ եւ արուեստական մշակութիւնը բնութենէ անբաժին բռնել՝ մարդկօրեն գործողութեան գլխաւոր**

առավելութիւն է» (Այտընյան, 1987, էջ 318): Իսկ լեզվի նորմավորման գործընթացում հնի ու նորի, մեռնողի և գոյացողի խնդրին անդրադառնալիս այն սաստկացնում է ժողովրդական իմաստնության մթերանոցի հետևյալ համեմատությամբ՝ «Առիժուն ոյժն ու գեղեցկութիւնը ամէն բանէ վեր է, քանի որ կենդանի է, բայց «քան զառիւծ մեռեալ» տարակոյս չկայ որ ընտրելի է միշտ «շուն կենդանի»:

• Լեզվի թուլանալու պատճառը թերակատար քննությունն է, և մեր ձեռքում են նրա խոտելի մասը ջնջել-սրբելն ու «հարդարյալ» կերպարանք տալը. բանասիրությունը միշտ պետք է վերին աստյան լինի:

Մյուս կողմից՝ լեզվի ազնվացումն ու կատարելագործումը առանց կամայականության պիտի լինի. ներկայի տարածամ ու ինքնակամ փոփոխությունները սովորաբար ապագան են եղծանում: Հայերենում ևս գործում է համալեզվական այն ճշմարտությունը, որ **«միտքն է օրենսդիր և ոչ կամքը»:**

• Խոսքը որքան կարճ է ու դիպուկ, նույնքան ավելի ազդու է և զորավոր, որքան գործածության ազատություն ունենա, այնքան ավելի զարդարուն կլինի, որքան կանոններով կապկպված՝ շղթայված լինի, այնքան պարզունակ և վայելչությունից զուրկ կլինի:

• **Տիեզերական ընդհանուր կանոն է՝ յուրաքանչյուր լեզու ժողովրդի բերանում այլայլվելով, իր սկզբնականի խաթարումով, նորանոր ձևեր առնելով է աստիճանաբար փոփոխվում, անգամ առանձին լեզվի կերպարանք առնում:** Եվ որովհետև հին լեզվի կամ լեզվի հին ձևերն ըստ օրինի են հաստատված, նրանց այլայլությունը պետք է որ սահմանված կանոնները խախտելով և ամրակայված օրենքների դեմ մեղանչելով հաստատվի, կանոն դառնալու իրավունք նվաճի՝ բնական տրամաբանությամբ և բնական ազդմամբ: Բնականաբար, շատ տարօրինակ կլիներ, եթե հայի լեզուն այս ճանապարհով չընթանար: Այտընյանի հարցը մեզ էլ է հետաքրքրում. մի՞թե հնարավոր չէ ասել, որ մեր սքանչելի գրաբարն էլ ինչ-որ ժամանակ իր նախընթաց հայերենի օրենքները խախտելով և այլայլելով է ձևացել («կերպացել»):

• Կանոնը պետք է տիրող լինի, որ անտերնչության մեջ աղավաղություններն օրեցօր չզորանան. անկարգություն է խառնիխուռն ու անկանոն աճելը թույլ տալու անհոգությունը: Չմոռանալ նաև՝ **դպրոցում են սովորում «ըստ օրինի» խոսել:**

• Գրավոր լեզուն պետք է ընդհանուր՝ միասնական լինի ազգի համար:

•Նոր ձևերի գործածության հարցում կարևորում է **հայ ականջներին վարժված լինելու, ժողովրդի բերանում ավելի հաճախ հնչելու** նախապայմանները:

Ա. Այտընյանը գրաբարի աղավաղությամբ աշխարհաբարի ջնջման մասին խոսելիս նորմավորման գործընթացի յուրօրինակ մի ճանապարհ է մատնանշում՝ անօրինակ մի բանաձևմամբ, որը կարող է նաև արդի գրական հայերենի մաքրման, կանոնակարգման ելակետային սկզբունք դառնալ. **ուսումնականը անընդհատ զբաղված պիտի լինի նորանոր բուսած մոլախոտը սրբելով**, սակայն եթե դրանք շատ են, նա չի կարող հասցնել մաքրել և հարկադրված շատ բան պիտի անտեսի, **անտեսվածը պիտի ներեն, ներվածը ընդունելի պիտի լինի, ընդունվածը՝ կանոնավոր ճանաչվի...**

Նորմավորման մեկ այլ հետաքրքիր ճանապարհ էլ կա, որով գնալն այսօր էլ է արդիական: Մեջբերում ենք լեզվաբանի խոսքը՝ հետևությունը թողնելով ընթերցողին. «Պղտոր ջրի մը պես կըտեսնենք դեռ մեր աշխարհաբառը. խոշոր աղտերը մէջէն հանելէն ետեւ՝ կերեւնայ թէ քիչ մը ատեն ձգելու ենք որ մանր ու բարակ դիրտը տակը նստի, յստակուի, պարզուի, ու ախորժելի լեզու մը ըլլայ» (Այտընյան, 1987, էջ 328):

Լեզվաբանն անդրադառնում է նաև լեզվի փոփոխության հիմնապատճառին՝ խոտորումներ, գեղծումներ, շեղումներ՝ խստորեն եզրակացնելով՝ **օրենքների զեղծումը միայն ծաղրական և շատ տեղ անիմանալի լեզու կարող է առաջ բերել**: Նա հանգում է սրանց՝ **դիտավորյալ և ոչ դիտավորյալ** տարբերակմանը, որը մերօրյա հայ և օտար լեզվաբանություններում միայն վերջերս է ուշադրության կենտրոնում հայտնվել: Այսպես՝ Մեսրոպի առաջին ու գործակից աշակերտները, որքան էլ որ մտադիր լինեին միայն «բարձրագույն» լեզվով մատենագրելու, շատ անգամներ դիտմամբ իբրև զարդարանք, իբրև ավելի բնական ու կենդանի, մի քիչ «անքերական ձևեր մեղմով մը գողանում էին խոնարհագույն լեզվից»՝ մատենագրականը իրավիճակի թելադրանքով հարկ եղած չափով ընտանեացնելով: Իր խոսքը հաստատում է Կիկերոնի համարձակ վճռի մեջբերումով. «Սովորութիւնն ընդունելի ըրած է քաղցրութեան համար երբեմն լեզուին օրինացը դէմ մեղանչել» (Այտընյան, 1987, էջ 52): Մյուս կողմից՝ կա շեղումների մի խումբ, որը **ճիշտ-սխալ** հակադրությամբ չպետք է գնահատել կամ թերակատար ուսման արդյունք դիտել: Հարկ է մտածել, որ եթե լեզվի քաջ գիտակների գրության մեջ այստեղ-այնտեղ անկանոն ձևեր են սպրդել, կամ թե «ատեն-ատեն գրիչը կ'ապստամբի», նշան է, թե լեզուն այդ իրավիճակում զերծ չէ դժվարություններից (նշան է, թե «կնճոյալ քերականութիւն մը արդեն սկսած էր ժողովրդեան սահմանեն հեռանալ»):

Այտընյանը նման սպրդումների, անկանոնությունների մասին խոսելիս չի մոռանում դրականը նկատել՝ ամենից առաջ դրանք օգնում են ժողովրդի լեզվի էությունն ու կերպը ավելի մոտիկից ճանաչելուն, և բացառված չէ, որ միօրինակության ձգտմամբ այդ երերուն, «երկկողմանի զուգահեռ» դեպքերում (նկատի ունի համազոր, զուգահեռ տարբերակները) հենց նորերը կարող են հաստատվել և կանոն դառնալ:

Լեզվի փոփոխության քննության և նրա նորմավորման գործընթացում այտընյանական անկյունաքարային սկզբունքներն են՝ **ա. Նոր լեզվի բոլոր գանձերը հնի մեջ են, և հինը ստացողը տիրում է նորին: բ. Լեզուն ազնվացնելու կամ ճոխացնելու անվամբ նորոգությունից մինչև իմաստակության սահմանն անցնելու համար բավական է մեկ քայլ:**

Եզրակացություն

«Քննական քերականությունը» ժամանակակից հայերենի ուսումնասիրության, կանոնակարգման գործիքներից մեկն է, և մերօրյա հայերենը նորմավորել-կանոնարկել նշանակում է ավանդառուն լինել նաև Ա. Այտընյանի լեզվաժառանգության:

Ընդհանուր հայերենյան լեզվաշինական աշխատանքների և լեզվաքաղաքականության հիմնաքարային խնդիրը շարունակում է մնալ հայերենի կանոնակարգման սկզբունքների մշակումը, նրա գոյաձևերի, մասնավորապես երկու տարբերակների միջև տեղաշարժերի վերլուծությունը՝ միասնական հայերեն ունենալու համար նպաստավորագույն հող նախապատրաստելու ճանապարհով «լեզվահավաքում» իրականացնելու նպատակամիտվածությամբ: «Մեկ ժողովուրդը մեկ լեզու պիտի ունենա» սկզբունքին համաձայն՝ «Հայոց ազգահավաքմանը զուգընթաց՝ «լեզվահավաքումն» էլ է լինելու: Ի՞նչ տեսք ու վիճակ է ունենալու միասնական հայ ժողովրդի միասնական հայերենը՝ միայն առաջիկա պատմությունն է պարզելու...» (Բեդիրյան, 2012, էջ 100):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Աբրահամյան Ա. Ս. (1984), Արսեն Այտընյանի լեզվաբանական հայացքները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 216 էջ:
Abrahamyan A. (1984), Arsen Ayt'nyani lezvabanakan hayacknery', Yerevan, p. 216 (In Armenian).
2. Աղայան Է. Բ. (1958), Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 412 էջ:
Aghayan E. (1958), Hay lezvabanwutyun patmutyun, h. 2, Yerevan, p. 412. (In Armenian).
3. Աղաջանյան Զ. (2019), Գրական արևմտահայերենը և նրա նորմավորման հարցերն ըստ Ա. Այտընյանի քերականության, Պատմաբանասիրական հանդես, №2, Երևան, էջ 162-175:
Aghajanyan Z. (2019), Grakan arevmtahayereni yev nra normavorman hacery' y'st A. Ayt'nyani qerakanutyun, Patmabanasirakan handes, №2, Yerevan, p. 162-175 (In Armenian).
4. Այտընյան Ա. (1987), Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 866 էջ:
Ayt'nyan A. (1987), Qnnakan qerakanutyun ashxarhabar kam ardi hayeren lezvi, Yerevan, p. 866 (In Armenian).
5. Բեդիրյան Պ. Ս. (2012), Հայերենագիտական հոդվածներ ու նոթեր, Երևան, «Էդիթ-պրինտ» հրատարակչություն, 136 էջ:
Bediryan P. (2012), Hayerenagitakan hodvacner yev noter, Yerevan, p. 136 (In Armenian).

ЗАРИК АГАДЖАНИЯН - ПРЕДПОСЫЛКИ ИЗМЕНЕНИЯ ЯЗЫКА И НОРМЫ В «КРИТИЧЕСКОЙ ГРАММАТИКЕ» А. АЙТЫНЯНА

Ключевые слова: изменение языка, норма литературного языка, изменение нормы, нормирование, причины изменения языка, ясность, языковая конструкция, языковая политика

Арсен Айтынян принадлежит к числу видных представителей армянской филологической науки 19-ого века. Лингвист-философ,

личность во многом определяющая арменоведческую научную мысль своего времени.

Думающее и говорящее человечество постоянно придает своему языку «форму» и «вид». Армянский язык также является своеобразным барометром удачных или неудачных, интеллектуальных, материальных и нравственных состояний армянской нации. Арменовед описывает состояние языка своего времени: мертвый древнеармянский и безжизненный новоармянский, и в цепи исторического исследования языка считает важными вопросы языковой стандартизации, языкового строительства и языковой политики.

ZARIK AGHAJANYAN - HYPOTHESES FOR LANGUAGE AND NORM CHANGE IN A. AITYNYAN'S "CRITICAL GRAMMAR"

Keywords: *Language change, norm of literary language, change of norm, reasons for language change, clarity, language construction, language politics*

Arsen Aytynyan was a prominent figure in Armenian philological science during the 19th century. As a linguist and philosopher, he greatly influenced Armenian scientific thought of his time.

Human thinking and communication shape the "form" and "type" of language. The Armenian language, in turn, reflects the intellectual, material, and moral state of the Armenian nation.

In his work, Aytynyan examines the state of the Armenian language during his era, contrasting the dead ancient Armenian language with the modern Armenian language, which he saw as lifeless. He emphasizes key aspects of linguistic research, such as the standardization of language, changes in language norms, language development, and the language policy.

Ներկայացվել է՝ 22.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 14.05.2024 թ.

**ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԼԵՎՈՆ ԲԱՇԱԼՅԱՆԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ**

ԹԱՄԱՐԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Համառոտագիր

XIX դարի 80-ական թվականներին արևմտահայ գրականության մեջ սկիզբ առած իրապաշտական շարժումը, որ առանձնանում էր կյանքը բազմակողմանիորեն ներկայացնելու նպատակադրմամբ, դիմում է արձակի փոքր ձևերի կիրարկմանը՝ նորավեպ, պատմվածք, քրոնիկ, ակնարկ, պատկեր: Թվարկվածներից հատկապես ժանրային ինքնօրինակ դրսևորում է ցուցաբերում պատկերը՝ նկատելի նկարագրական ու դիտողական բովանդակությամբ:

Լևոն Բաշայանը քննախույզ դիտող է: Նրա ուշադրության կենտրոնում մեկ հայտնվում են Կ. Պոլսի խոնարհ հարկերը, մեկ՝ հարուստ ընտանիքները՝ իրենց վարք ու բարքով, մեկ Փարիզը՝ իր ցուփ ու կրքառատ գիշերներով, մեկ ծովը՝ իր հեղուկ, անծայրածիր զանգվածի լռությամբ:

Մոտ երկու տասնյակի հասնող նորավեպերով ու պատմվածքներով, մի քանի ուղեգրություն-հուշագրություններով Բաշայանը կարողացավ պատկերել XIX դարավերջի հայ կյանքը, թափանցել մարդու ներաշխարհը, ցույց տալ ամենախտյական զգայություններն ու աննկատ հույզերը՝ շատ հաճախ դիմելով նկարագրական պատկերների՝ բնապատկերի, դիմանկար-պատկերի, առարկայական պատկերի օգնությանը, որոնք միջոց դարձան գեղարվեստական ընդհանրացումներ կատարելու համար: Գրողին հաջողվել է պարզ ու սեղմ նկարագրություններով բազմակողմանի և ընդգրկուն ներկայացնել ժամանակաշրջանը, մարդկանց:

Բաշայանի պատկերակերտման համակարգում կարևոր տեղ են զբաղեցնում նաև առանձին պատկերների կրկնությունները, զուգադրումներն ու հակադրումները, որոնք, միևնույն ժամանակ, առանձնանում են դիպաշարաստեղծ նշանակությամբ:

Հիմնաբառեր՝ գեղարվեստական արձակ, նկարագրական պատկեր, բնապատկեր, դիմանկար պատկեր, առարկայական միջավայր, կերպարակերտման արվեստ

Ներածություն

Հոդվածում անդրադարձել ենք Լևոն Բաշալյանի գեղարվեստական արձակի նկարագրական շերտերի քննությանը: Հոդվածի նպատակն է Բաշալյանի արձակում առանձնացնել նկարագրությունների տարաբնույթ դրսևորումներ, ցույց տալ դրանց նշանակությունը կերպարակերտման, հեղինակի վերաբերմունքային գնահատականի արտահայտման, դիպաշարային զարգացումների ժամանակ: Նկարագրական պատկերների առանձնահատկությունների, դրսևորման յուրահատկությունների քննությամբ են վերհանվել հարցին վերաբերող մի շարք խնդիրներ.

- Բաշալյանի գեղարվեստական արձակի ակտիվ շերտ է դիտարկվել բնապատկերը՝ կերպարների ներաշխարհային զարգացումների, շրջապատի հետ ունեցած կապի, ինչպես նաև հեղինակի մտորումների արտահայտման տեսանկյունից:
- Կարևորվել է դիմանկար պատկերի նշանակությունը, վերհանվել են օբյեկտիվ, սուբյեկտիվ և սոցիալ-սիմվոլիկ շերտերը:
- Ընդգծվել են նաև առարկաների, առարկայական միջավայրի պատկերման առանձնահատկությունները: Առարկաների արտաքին բովանդակությունից զատ՝ առանձին նշանակություն է տրվել նրանց ներքին բովանդակությանը:

Կիրառվել են պատմահամեմատական, զուգադրական, կառուցվածքային, հոգեվերլուծական մեթոդները:

Բաշալյանի արձակի նկարագրական շերտերի ուսումնասիրությունը օգնում է ամբողջացնելու գրողի գրական դիմանկարը:

Լևոն Բաշալյանի կյանքն ու գործը ուսումնասիրողներից Հայկ Պարիկյանը իր ուսումնասիրության մեջ գրողի ստեղծագործությունները քննել է ըստ ժանրերի, որտեղ հայտնի պատմվածք, նորավեպ ժանրաձևերի կողքին առանձին վերնագրերով ներկայացրել է «Տպավորապաշտ էջեր», «Նկարագրական էջեր» և «Պատկերներ»: Բաշալյանի գործերի տարբեր հրատարակություններում իբրև նորավեպ ներկայացված «Մանրանկար», «Սիրո գիշեր» գործերը Հ. Պարիկյանը դիտարկում է «Պատկերներ», «Նկարագրական էջեր» վերնագրերի ներքո: «Պատկերը» որպես շարքի ընդհանուր խորագիր նաև գործածվել է արևմտահայ ուրիշ հեղինակների կողմից (Ա. Արփիարյան՝ «Կյանքի պատկերներ», Ա. Չոպանյան՝ «Պատկերներ»):

Գրականագետ Ալ. Մակարյանը, խոսելով գեղարվեստական ժանրերի ցուցաբերած առանձնահատկությունների մասին, նկատում է. «Գրականության տեսությունը մի շարք ժանրերի բնութագրումների հարցում գրեթե հասել է անվիճելի արդյունքի: Սակայն կան ժանրեր,

որոնք համադրական բնույթով և ենթաշերտային տարաբնույթ բևեռացումներով ու «ազգակից» ժանրերին անակնկալ մերձենալու միտվածությամբ հեռանում են իրենց ավանդական սահմաններից, ձեռք բերում կողմանակի հատկանիշներ և դժվարացնում բուն տիրույթի չափորոշիչները» (Մակարյան, 2002, էջ 13): Իհարկե, «պատկերը» չի հասնում ժանրային բյուրեղացման, սակայն արևմտահայ 80-ականների իրապաշտական գրականությունը բնորոշող նկատելի հատկանիշներից է:

Սրա լավագույն վկայությունը «Գրել է առաջ» հոդվածում Լ. Բաշալյանի հետևյալ ձևակերպումն է. «Պետք է նախ դիտել, լարուած ուշադրութեամբ դիտել չորս կողմը, բնութեան ու ընկերութեան մէջտեղ դրած տեսարանները բաղդատել իրարու հետ, անցնող երեսոյթի մը, խուսափուկ պատկերի մը գծերը որոշել, անոնց էութեանը թափանցել, անոնց մէջ գտնել որոշիչ հանգամանքները, մասնաւոր յատկութիւնները որոնք նոր են ամէն դիտողի համար, ու խորհրդածել անոնց վրայ, եզրակացութեան մը յանգիլ» (Բաշալյան, 1894, էջ 1):

Բնապատկեր

Բաշալյանի ստեղծագործությունների պատկերային համակարգում առանձին տեղ է զբաղեցնում **բնապատկերը**, որ հատկապես միջոց է հեղինակի ներքին զգայությունները, ապրումներն արտահայտելու համար: Առանձին դեպքերում գրողը բնապատկերը օգտագործում է նաև կերպարների ներաշխարհն ու հոգեվիճակը պատկերելու նպատակով: Բնության նկարագրությունը հաճախ կազմում է սյուժեի զարգացման հոգեբանական կողմը: Հերոսի ընկալմամբ փոխանցված բնապատկերը գործողության պահին հերոսի հոգեվիճակի նշանն է: Բայց այն կարող է խոսել նաև հերոսի աշխարհայացքի, բնավորության գծերի մասին (Себина, 1999, с. 231):

1. Բնապատկերը՝ կերպարակերտման համակարգում

Ուղիղ կապ կարելի է նկատել Բաշալյանի նկարագրած բնապատկերի և կերպարի հոգեվիճակի միջև: Այս առումով գրողի արձակում կարևոր նշանակություն են ստանում բնության երևույթներից՝ **անձրևի, քամու** պատկերումը: Օրինակ՝ «Հմայաթափ» նորավեպում նկարագրվող կերպարի՝ Գևորգի հոգեվիճակը ներկայացնելու համար, գրողը դիմում է անձրևի օգնությանը. «Մարտի օր մ' է, բարակ անձրև մը կտեղա, գարնանամուտի այն մեղմ անձրևներեն մին, որք մելամաղձությամբ կլնուն մարդուս սիրտը» (Բաշալյան, 1962, էջ 28): Անձրևն այստեղ արտահայտելու միջոց է կերպարի թույլ, ռոմանտիկ բնավորությունը, կյանքից ու պայքարից հրաժարումը:

Իսկ կամային ավելի բարձր հատկանիշներով օժտված մեկ ուրիշ հերոսի՝ Միքե Թումանյանի՝ բարձր հասարակության, հատկապես կնոջ՝

Մառի Սիմյանի նկատմամբ տաճած խոր հիասթափությունն ու ցասումն արտահայտելու համար Բաշայանը կրկին օգտագործում է անձրևը. «Դուրսը անձրև կտեղար, գարնան հորդառատ անձրև մը և շառաչմամբ կզարնվեր պատուհաններուն...» (Բաշայան, 1962, էջ 71): Ինչպես նկատում ենք, տարբեր է երկու հատվածներում նկարագրվող անձրևը, տարբեր են նաև հերոսների հոգեվիճակները:

Քամին, հովը ևս Բաշայանի կերպարակերտման հնարներից են և հերոսի ներաշխարհային հատկանիշների արտահայտիչը: Օրինակ՝ «Խաչախճին» գործում «կծու հովը» միջոց է պատկերելու Համբարձումի ներքին, անհանգիստ հոգեվիճակը, ինչպես նաև ուղղորդում է իրադարձությունների ընթացքը: Որքան մեծանում է Համբարձումի ներքին անհանգստությունը, այնքան սաստկանում է նաև քամու ուժգնությունը: Եթե ստեղծագործության սկզբում հանդիպում ենք՝ «**կծու հով մը կոռնար**» արտահայտությանը, ապա քիչ անց գրողը օգտագործում է «**մրրիկ**» բառը, որին գումարվում է նաև «**խավարը**»: Պատմվածքի հանգուցալուծումը ևս Բաշայանը իրագործում է քամու նկարագրությամբ. «Հիմակ հովը դարձյալ կփչեր անմեհի ու արշավասույր, հու՛, հու՛, հու՛: Բնության տանջանքն էր ատ, անհուն թառանչ մը, ուր առցված են կարծես ամեն ողբերն ու մորմոքները, բոլոր կոծերն ու հառաչանքները» (Բաշայան, 1962, էջ 55):

2. Բնապատկերը՝ դիպաշարաստեղծ միջոց

«Զարթոնք» նորավեպում զվարճացող Փարիզի նկարագրությունը Բաշայանը պարբերաբար ընդմիջարկում է բնապատկերի, այս դեպքում կրկին անձրևի նկարագրությամբ: Եթե վերևում նկարագրվող անձրևը կամ քամին հիմնականում պայմանավորում էին կերպարի ներաշխարհային զարգացումները, ապա այստեղ օգնում են տեքստում նկատվող շարժման պահպանմանը: Զվարճացող Փարիզի խոլական ընթացքը պահպանելու համար գրողը պարբերաբար դիմում է անձրևի նկարագրությանը. «Անձրև կուզա ցերեկվրնե ի վեր, անվերջ, անդադրում...» (Բաշայան, 1962, էջ 205) // «Դիմացի փողոցին մեջ կմտնեմ, պատին տակեն երթալով կամաց կամաց, օձիքս դարձուցած, գլուխս կախ, անուշադիր անձրևին, որ կտեղա, միշտ կտեղա» (Բաշայան, 1962, էջ 208):

Մեկ ուրիշ գործում՝ «Դագաղի մը ետեւէն» ակնարկում, գրողը պատկերում է Կ. Պոլսի ցեխոտ փողոցներով ընթացող թաղման թափորը՝ այն առաջնորդող քահանաների կերկերուն ձայնի ուղեկցությամբ: Մինչև նկարագրության ավարտը, մինչև այն պահը, երբ հեղինակը սկսում է խորհրդածել մեռնողի մասին, փոխարինաբար միմյանց են հաջորդում բնապատկերն ու ձայնը՝ պահպանելով պատկերի համաչափությունը:

«Յեխոտ ճամբաներէ կ' երթանք: Երկու օրէ ի վեր անձրեւ տեղացած է և ջուրը մօրուտներ կազմած ամէն կողմ...» // «Մեռելոց աղօթքներ կը լսուին դաշն և մենակերպ...» // «...Պատուհանի մը ետեւը սեւ եզերքով թաշկինակներու մէջտեղ, արցունքէ ուռած աչուրներ կը տեսնուին» // «...«Վախ եավրում» աղաղակ մը կը լսուի... (Բաշայան, 1890, էջ 188): Ինչպէս նկատում ենք, նկարագրվող հատվածներում բնապատկերը ունի դիպաշարաստեղծ նշանակություն:

3. Բնապատկերը՝ ինքնարտահայտման միջոց

Բաշայանը բնապատկերը օգտագործում է նաև սեփական հույզերը, ապրումները արտահայտելու համար: Երբ գրողը չի ձգտում իր տեսակետը պարտադրել ընթերցողին, բայց միևնույն ժամանակ ցանկանում է լսելի և հասկանալի լինել, հաճախ բնապատկերը դարձնում է իր մտքերի արտահայտման միջոց (Себина, 1999, с. 232):

«Անցորդի մը օրագիրը» գործում Բաշայանը ստեղծում է հակադրական պատկեր՝ իր փոթորկված ներաշխարհի և Մարմարայի խաղաղ ջրերի միջև: Խաղաղ, առարկայական աշխարհը անհանգիստ ձևեր է ստանում «մարդկային մսի և ոսկորներու» հոտից, մարդկային կերպարանք առած ապառաժներից, որոնք բարձրաձայն գոռում են՝ կյանք պահանջելով: Եղեռնի սարսռազդու տեսարանները վերապրող հեղինակը իր խորհրդածություններում իրեն ամենուր հետապնդող մեռելների կենդանանալու և վերստին մեռնելու կոչ է անում. «Մեռնինք և անհետանայ թող մահէ վախցող այս կեանքը» (Բաշայան, 1890, էջ 78):

Մ. Արնաուդովը գրողի ստացած տպավորությունների ու հիշողության մեջ դրանց պահպանման ու հետագայում գեղարվեստական պատկերի վերածվելու մասին գրում է, որ, բարեբախտաբար, մեր հոգեկան աշխարհը այնպես է կառուցված, որ ոչինչ երբևէ ձեռք բերածից, արտաքին կամ ներքին հարուստ փորձից անհետ չի կորչում: Արդյոք այդ տպավորությունները նյութական մարմնավորում կստանան, թե կպահպանվեն արվեստագետի հոգու խորքում, կամ կդառնան նրա երևակայության պտուղ, ուրիշ հարց է (Арнаудов, 1970, с. 93):

«Կաղանդ» նորավեպում երագի ու երևակայության միաձուլման արդյունքում հեղինակը հայտնվում է իրեն շատ ծանոթ մի երկրում, որտեղ իրականում գուցե նա չի եղել, բայց որի յուրաքանչյուր քարը, թուփը, աղբյուրը իրեն հարազատ են. «Ո՛րն է այս երկիրը: Երբեք եղած չեմ հոս, բայց անձանոթ չէ ան ինձի: Տեսնելուց կճանչնամ զայն իսկույն, սիրտս անոր կերթա մեկեն. ընտանի սիրտ, ներքին բան մը կա անոր ու իմ մեջ...» (Բաշայան, 1962, էջ 228): Անձայրածիր մի տարածություն, որը ոչ մի գծով ու սահմանով չի որոշակիանում, պատկերների հորիզոնական, ուղղահայաց, գծային ձևերի փոխարեն Բաշայանը կիրառում է միայն

պատկերների շրջանաձև համակարգ, վերացական դաշտում ուրվագծելու այն եզերքը, որի ճարտարապետը երևակայությունն է. «Երկար երազանքներու մեջ, երևակայությունը անոր տարփոտ ճարտարապետը եղած է, մտքին հարաժամ փայփայանքները կերպավորած, սրտին խանդուն ըղձանքները զայն դաստակերտած են ինձի համար, տարտամ ու որոշ միանգամայն» (Բաշայան, 1962, էջ 228): Գրողը դժվարանում է այդ վայրերին մասնավոր անուն տալ: Սա հայի հավաքական կյանքից մի տեսարան է, որը չի մասնավորվում Մշո դաշտ, Շատախ, Կարին, Հավավ, Բասեն, Սիփան և այլ անվանումներով:

Կառլ Յունզը (2010) վստահեցնում է, որ մարդու հոգեկանի անգիտակցական մակարդակը պարունակում է երկու շերտ՝ անհատական և կոլեկտիվ: Անհատական անգիտակցականը ավարտվում է ամենավաղ մանկական հիշողություններով, իսկ կոլեկտիվ անգիտակցականը, ընդհակառակը, ընդգրկում է մանկությանը նախորդող ժամանակահատվածը, այսինքն այն, ինչը պահպանվել է նախնիների կյանքից: Կոլեկտիվ անգիտակցականի արքետիպերը անհատապես չապրված հիշողության ձևեր են՝ ի տարբերություն անհատական անգիտակցականի:

Իր երևակայության մեջ պտտվող ծանոթ-անծանոթ պատկերի գոյությանը Բաշայանը տալիս է հետևյալ բացատրությունը. «Իրա՛վ երբեք եղած չե՛մ հոս: Ուրիշներու մեջ, իմ արյունս կրող մարդերու մեջ ապրած եմ այստեղ, ու անոնցմե ինձի ա՛յնքան խորապես անցած է իրենց կրած ուղղակի տպավորությունը այս երկրեն որ, անկից հեռու թեև, հոն երազած եմ միշտ, երազական կրկին կյանքով մը» (Բաշայան, 1962, էջ 228):

Ինչպես նկատեցինք, Լ. Բաշայանի գործերում բնապատկերը ծառայում է իբրև միջոց՝ արտահայտելու կերպարների հոգեբանական զարգացումները, մյուս կողմից՝ հեղինակի ինքնարտահայտման եղանակներից է:

Դիմանկար պատկերներ

Բնապատկերից զատ՝ Լ. Բաշայանի պատկերային համակարգում կարևոր տեղ են զբաղեցնում կերպարների արտաքին նկարագրությունները, այսպես կոչված դիմանկար պատկերը: Գրականագետ Զ. Ավետիսյանը առանձնացնում է դիմանկար պատկերի երեք շերտ՝ օբյեկտիվ շերտ (այս շերտի նկատմամբ հեղինակի վերաբերմունքը չեզոք է), սուբյեկտիվ շերտ (հեղինակի ստացած տպավորությունն է հերոսից և վերաբերմունքը նրա նկատմամբ) և սոցիալական սիմվոլիկա (սա մտնում է օբյեկտիվ շերտի մեջ և

միաժամանակ առանձնանում որպես առարկայական պայմանականություն) (Ավետիսյան, 1998, էջ 129):

Սոցիալ-սիմվոլիկ նշանակություն է ստանում «Շալը» գործում նկարագրվող համանուն իրը: Բաշայանը, հպանցիկ հայացք ձգելով Բերայի հարուստ, ոսկեզօծ «Նոր Թատրոնի» սրահներից դեպի մոայլ ու կիսախավար փողոցը, հաջողում է պարզ ու սեղմ նկարագրության միջոցով, անշունչ առարկաների զծագրությամբ, գույների հարադրման եղանակով տալ Կ. Պոլսում կողք կողքի ապրող, սոցիալական տարբեր հարթակների պատկանող երկու կանանց նկարագիրը:

Սեղմ ծավալով, «Մասիս»-ում *դիսկուրսային եղանակով* (ընթերցողին հստակ տեղեկություն է տրվում, թե ով է պատմողը, որտեղ և երբ (դեպքերից որքան ժամանակ անց) է պատմում) (Ջրբաշյան, 2016, էջ 275) շարադրված այս գործում միմյանց հաջորդող նկարագրական պատկերներից խիստ խորհրդանշական է *շալը*, հատկապես նրա *գույնը*: Վերջինս այն կապող օղակն է, որի օգնությամբ Բաշայանը կատարում է իր նկարագրությունների խաչաձևումները: Առաջին անգամ այս իրը մենք հանդիպում ենք սպիտակ գույնով, ժանեկապատ, նրա դերակատարությունը օրիորդին լրացուցիչ հմայք հաղորդելն է. «Մանրադիտական քառակուսի մըն էր այդ շալը, սիրուն պզտիկ ժանեակներով, որ դիւրաւ պիտի սեղմէր ափի մը մէջ, քաղաքակրթութեան յառաջ բերած նրբութեանց մէկ արդիւնքը, աւելի՛ խաղալիկ մը, գլխու քմահաճ զարդ մը, քան ցուրտէն պատսպարուելու միջոց մը» (Բաշայան, 1890, էջ 152):

Երկրորդ դրվագում գրողը փոխում է *շալի* գույնը՝ դարձնելով սև: Փոխվում է նաև նրա դերակատարությունը. այս անգամ այն ծածկում է աղքատ աղջկա՝ ցրտից դողացող մարմինը. «Շալը, հաստ բրդէ պարզ շալ մը, պրկուած էր վեր բարձրացած ուտերուն և ներս քաշուած արմուկներուն վրայ» (Բաշայան, 1890, էջ 152):

Նկարագրվող դրվագներում դիմանկար պատկերը ձեռք է բերում սոցիալ-սիմվոլիկ նշանակություն, որովհետև, եթե ճերմակ շալի «ծագումնաբանությունը» գրողի համար պարզելը հեշտ չէր, ապա սև շալի պարագայում դա պարզագույն խնդիր է, որովհետև դյուրին է պատկերացնել, թե ինչ դժվարությունների գնով, անքուն զիշերների հաշվին՝ աղջիկը գործած կլիներ այդ պարզ, կուպիտ, անպաճույճ շալը՝ միայն մտածելով ցուրտ օրերին իր փոքրիկ, նիհար մարմինը պատսպարելու մասին:

Դիմանկար-պատկերի սուբյեկտիվ շերտ կարելի է համարել «Միջերկրականի հիշատակներ» ուղեգրության «Մաթաբանի ճգնավորը» գլխում տրվող նկարագրությունները: Մաթաբանի ճգնավորի նկատմամբ

ունեցած պատկառանքը Բաշայանը ձեռք էր բերել ընդամենը նրա մասին լսած պատմությունների ազդեցությամբ: Ինչպես որ ի սկզբանե գրողի ներաշխարհում խոսքը ծնել էր ակնածանքի հասնող զգացումներ, այնպես էլ խոսքի նմանօրինակ բովանդակության բացակայությունը ի չիք են դարձնում ճգնավորի՝ գերբնական, ոչ սովորական հատկանիշները՝ թողնելով միայն նրա հետ կապ ունեցող առարկայական պատկերները՝ ժայռերի վրա նշմարվող ճերմակ տունը և մատուռը: Մաթաբանի ճգնավորի սրբակենցաղ վարքի մասին պատմություններին Բաշայանը ծանոթ էր մինչև Հարավային Հունաստանի ծովեզերքում հայտնվելը, և նա մտովի արդեն կերտել էր այդ մարդու պատկերը՝ իբրև դիցաբանական էակի: Եվ պատահական չէ, որ ճգնավորին չտեսնելը հիասթափության փոխարեն նրա ներսում առաջացնում է բավարարվածության զգացում, որովհետև իրականությունը միգուցե շատ կողմերով տարբերվեր մտապատկերից. «Ճգնավորը չերևցավ, ու չցավեցա այս բանին համար. իրեն իրագործած բանաստեղծությունն այնքան մեծ էր որ մարդը հարկավորաբար պզտիկ ու տխեղծ պիտի երևնար աչքիս. մինչ, իր ճերմակ տնակին պատերուն ետև քաշված, կպահեր իր անծանոթ ու աներևոյթ էակի բոլոր հրապույրը» (Բաշայան, 1962, էջ 133):

«Ռեալիզմը մեծացնում է ոչ միայն հերոսի ազատության, այլև գրողի անհատականության սահմանները: Կյանքի փորձը, տեսածն ու զգացածը, ճակատագրերը, բնավորությունները, որոնց հանդիպել է նա, դեպքերն ու դեմքերը, որ ուշադրության են արժանացել, այս ամենի տպավորություններն ու խոր ապրումները վերածվել են գրողի ստեղծագործական խոհանոցի մեջ եփվող գեղարվեստական փաստի» (Սաֆարյան, 2001, էջ 5) :

Գրողի ներաշխարհում ինչը որ ծնել էր զրույցը, զրույցն էլ պիտի անխաղաղ: Ճգնավորի մասին արդեն պատմվող երկբայական պատմությունները իրենց գերբնական կերպից պիտի զրկեին Մաթաբանը և իր ճգնավորին:

Դիմանկար պատկերի սուբյեկտիվ շերտ են նաև Բաշայանի նորավեպերում նկատվող այն նկարագրությունները, որոնք վերաբերում են գավառացի հայ կնոջը, որը լուռ ու մունջ, մեծ զրկանքների գնով, բայց հպարտությամբ տանում է իրեն բաժին հասած հոգսը:

«Աղավնի հանընդ սակայն «բուխ-սիրտ կնիկ» էր...» (Բաշայան, 1962, էջ 13):

«Առջի մեկ քանի օրվան ցնցումեն ետքը, Մարիամ տուտուն ինքզինքը ժողվեց: Գավառացի կնոջ այն կորովի և հաստատ

բնավորությամբ՝ որ տարակա պանդխտին տունը կանգուն կպահե գավառաց մեջ...» (Բաշայան, 1962, էջ 74):

«Օ՛հ, անմիջապես ճանչցա զինքը. մենե էր, իր արյունեն կար մեր երակներուն մեջ: Գավառացի պանդուխտ կին մըն էր, Մշո դաշտեն, եթե չեմ սխալիր» (Բաշայան, 1962, էջ 156):

Այստեղ կարելի է առանձնացնել նաև հերոսների աչքերի գույնի ընդգծումը, որը արտաքին-բնութագրական կողմից գատ՝ ունի նաև ներքին բովանդակային ենթաշերտ, որտեղ կարևոր նշանակություն է ստանում նաև ազգային ինքնատիպության ընդգծումը:

Օրինակ՝ հայ կնոջ կերպավորման ժամանակ գրողը կարևոր նշանակություն է տալիս աչքերի սև գույնին, որն ընդհանրություն է ցուցաբերում գրեթե բոլոր գործերում. «սևաթույր աչվրներ», «մանրիկ սևուկ աչվրներ», «լայն ու վճիտ աչվրները, իրենց սևորակ սպիտակուցին մեջ տարօրեն իմն մելամաղձիկ»:

Առարկայական միջավայր (ինտերիեր)

Գրողը, սակայն, սեղմ է առարկայական միջավայրի (ինտերիերի) նկարագրություններում: Ի տարբերություն նորավեպերի և պատմվածքների՝ այս առումով առանձնանում են նրա ճանապարհորդական նոթերը՝ «Արմաշի ուխտագնացությունը», «Թուրքահպատակի մը արկածները մեծ պատերազմի ատեն»: Որոշ գործերում կարևորություն է տրվում առանձին առարկաների նշանակության ընդգծմանը: Որպես այդպիսին կարելի է դիտարկել ժամանակի թերթերի հիշատակումը, որոնք ուշագրավ են այն տեսանկյունից, որ ակնարկում են ժամանակաշրջանի, հասարակության պատկերացումների, ինչպես նաև կերպարների անձնային հատկանիշների մասին: Որպեսզի ընդգծի «Հմայաթափ» նորավեպում նկարագրվող հերոսի՝ Գևորգի կամային թույլ հատկանիշները, որոնց մասին խոսեցինք վերևում, գրողը դիմում է մի հնարի, նշելով, որ երկար վարանումներից հետո տղան որոշում է իր գրվածքներից մեկը ոչ թե իր անվամբ, այլ ծածկանվամբ ուղարկել «Արևելք»-ին: Ժամանակաշրջանից տեղյակ մարդը կարող է ենթադրել, որ «Արևելքը», լինելով ժամանակի առաջադիմական պարբերականներից մեկը, գրականության հարցերին մոտենում էր ռեալիզմի դիրքերից և չէր կարող ընդունել Գևորգի ռոմանտիկ, մելամաղձիկ գրվածքները: Իսկ XIX դարավերջի հայ մարդու ունեցած հետաքրքրությունների մասին մեկ ուրիշ գործում ենթադրել են տալիս «Արևելք»-ի, «Ավետաբեր»-ի, «Բյուրակն»-ի հիշատակումը:

Առարկայական միջավայրի պատկերմամբ է գրողը հասնում եվրոպական բարձր քաղաքակրթության ու ասիական հետամնացության հարադրմանը: Արմաշի եկեղեցու բակում հավաքված ամբոխի կողքով

աննկատ անցել է քաղաքակրթությունը, միմյանց հաջորդող աղտոտ առարկաների, ուտելիքների նկարագրությունն է կազմում պատումի առանցքը. «խարխուլ խանութները», «աղտոտ ուտելիքներ», «շաքարեղեններ»: Հակառակ սրան՝ մեծ ոգևորությամբ է գրողը նկարագրում շվեդական միջավայրը, որտեղ հայտնվել էր ինքը Անգլիա մեկնելու ժամանակ. «Լայն ու երկայն սեղանի մը վրա շարված են քսան երեսուն տեսակ աղանդերներ...Սպասավոր չկա. ամեն մարդ պնակ մը, դանակ մը և պատառաքաղ մը կ' առնե և ափսեներուն մէջէն կը վերցնե ուզած ուտելիքը...» (Բաշայան, 1962, էջ 255)

Առարկայական միջավայրի նկարագրությունը օգնում է պատկերելու ամբոխի հոգեբանությունը: Եթե սովորական պայմաններում՝ ամբոխից դուրս, այս մարդիկ այլ կերպ կվարվեին, ապա դառնալով ամբոխի մի մասը, կառավարվելով ենթագիտակցականի կողմից, ընդունելի են համարում այն ամենը, ինչը ընդունելի է մնացածների համար:

Եզրակացություններ

- Արևմտահայ 80-ականների ստեղծագործություններում ինքնօրինակ դրսևորում են ստանում նկարագրական պատկերները: Ելնելով կյանքը ճշմարտագիտորեն պատկերելու գեղագիտական սկզբունքից՝ նրանք համակողմանիորեն ուսումնասիրում էին միջավայրը, մարդկանց՝ ուշադրություն դարձնելով նույնիսկ աննշան թվացող երևույթների պատկերմանը:
- 80-ականների իրապաշտական գրականության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում նաև Լ. Բաշայանի գեղարվեստական արձակը՝ պատկերակերտման ինքնօրինակ դրսևորումներով:
- Բաշայանի գործերի նկարագրական շերտերից առավել հաճախ հանդիպում է բնապատկերը, որին հեղինակը դիմում է տարբեր պատճառներով. բնապատկերը օգտագործում է կերպարակերտման, վերաբերմունքային գնահատականի արտահայտման, դիպաշարային զարգացումների ընթացքը կառավարելու նպատակներով:
- Բաշայանի նկարագրության առավել ակտիվ շերտերից է դիմանկար պատկերը՝ սուբյեկտիվ, օբյեկտիվ և սոցիալ-սիմվոլիկ շերտերով:
- Առավել թույլ է արտահայտված առարկայական միջավայրի պատկերումը, բայց ուղեգրությունների և ճանապարհորդական նոթերի պատկերակերտման նկատելի հատկանիշներից է:
- Բաշայանի խոսքը բյուրեղագման է հասնում հատկապես նկարագրություններում, որտեղ զուգադրությունների, հարադրությունների, առանձին դեպքերում նաև կրկնությունների շնորհիվ Բաշայանին հաջողվում է նկարագրությունը դարձնել դիպաշարի կարևոր բաղադրիչներց մեկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ
REFERENCES

1. Ավետիսյան Զ., Գրականության տեսություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, 240 էջ:
Avetisyan Z., Grakanut'yan tesut'yun, Erevan, EPH hratarakchut'yun, 2011, 240 e'j. (In Armenian)
1. Բաշալյան Լ., Երկեր, Երևան, Հայպետհրատ, 1962, 283 էջ:
Bashalyan L., Erker, Erevan, Haypethrat, 283 e'j. (In Armenian)
2. Գրականության տեսության արդի խնդիրներ, Ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 328 էջ:
Grakanut'yan tesut'yan ardi xndirner, Usumnakan d'er'nark, Erevan, EPH hratarakchut'yun, 2016, 328 e'j. (In Armenian)
3. Մակարյան Ա., Գրական դիմանկարի ժանրային ինքնօրինակությունները // «Կանթեղ. գիտական հոդվածներ», Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2002, N2, 268 էջ:
Makaryan A., Grakan dimankari jhanrayin inqno'rinakut'yuny' // «Kantegh. gitakan hodvac'ner», Erevan, «Asoghik» hratarakchut'yun, 2002, N2, 268 e'j. (In Armenian)
4. Սաֆարյան Վ., Գրողի և կերպարի անհատականությունը (Մուրացան. Նար-Դոս), Երևան, «Մակմիլան-Արմենիա», 2001, 239 էջ:
Safaryan V., Groghi & kerpari anhatakanutyuny' (Muracan, Nar-Dos), Erevan, «Mamiklan-Armenia», 2001, 239 e'j. (In Armenian)
5. Арнаудов М., Психология литературного творчество, Москва, издательство «Прогресс», 1970, 652 стр.
Arnaudov M., Psixologya literaturnogo tvorchestvo, Moskva, izdatel'stvo «Progress», 1970, 652 str.. (In Russian)
6. Введение в литературоведение: Литературное произведение: основные понятия и термины, Москва, Издательство «Высшая школа», 1999, 555 стр.
Vvedenie v literaturovedenie: Literaturnoe proizwedenie: osnovny'e ponyatiya i terminy, Moskva, Izdatel'stvo «Vy'shaya shkola», 1999, str. 232. .. (In Russian)
7. Юнг К., Очерки по психологии бессознательного, Москва, «Когито-Центр», 2010, 349 стр.
Yung K., Ocherki po psixologii bessoznatel'nogo, Moskva, «Kogito- Centr», 2010, 349 str. .. (In Russian)

8. «Հայրենիք», 1894, թիվ 983.
«Hayreniq», 1890, tiv 983. (In Armenian)
9. «Մասիս», 1890, թիվ 3932.
«Masis», 1890, tiv 3932. (In Armenian)
10. «Մասիս», 1890, թիվ 3935.
«Masis», 1890, tiv 3935. (In Armenian)

ТАМАРА АНДРЕАСЯН - ОПИСАТЕЛЬНЫЕ ОБРАЗЫ В ХУДОЖЕСТВЕННОЙ ПРОЗЕ ЛЕВОНА БАШАЛЯНА

Ключевые слова: художественная проза, описательный образ, пейзаж, портретный образ, предметная среда, искусство создания образа

Реалистическое движение, начавшееся в 80-е годы XIX века в западноармянской литературе и отличавшееся нацеленностью на многообразное изображение жизни, обращалось к применению малых форм прозы: новеллы, рассказы, хроники, очерки, зарисовки. Среди всех перечисленных жанров именно зарисовки демонстрируют своеобразие жанрового проявления, характеризующееся заметным описательным и наблюдательным содержанием.

Левон Башалян – пытливый наблюдатель. В центре его внимания оказываются то укромные постройки Константинополя, то богатые семьи с их жизненным укладом, то Париж с его чувственностью и страстью, то море с его бесконечной и необъятной тишиной.

В почти двух десятках новелл и рассказов, нескольких путевых заметках-мемуарах Л. Башалян сумел изобразить армянскую жизнь конца XIX века, проникнуть во внутренний мир человека, показать самые неистовые чувства и утонченные эмоции, зачастую прибегая к описательным приемам: пейзажам, портретам-образам, предметным образам. Последние стали средством художественных обобщений. Писателю удалось простыми и лаконичными описаниями всесторонне и всеобъемлюще представить эпоху и людей.

В образующей системе Л. Башаляна важное место занимают повторы, сопоставления и противопоставления отдельных образов, которые одновременно отличаются контекстообразующим значением.

TAMARA ANDREASYAN - DESCRIPTIVE IMAGES IN LEVON BASHALYAN'S LITERARY FICTION

Keywords: *fiction, descriptive image, landscape, portrait image, subject environment, art of character creation.*

The realist movement, which began in the 1880s in Western Armenian literature, is characterized by its aim to depict life in its diversity. It turned to smaller forms of prose, such as novellas, short stories, chronicles, essays, and sketches. Among these, the sketch particularly stands out as a genre with distinctive descriptive and observational content.

Levon Bashalyan is a keen observer. His focus ranges from the secluded buildings of Constantinople and the lifestyles of wealthy families to the passionate, dissolute nights of Paris and the silent, endless expanse of the sea.

In nearly twenty short stories and novellas, along with a few travelogues and memoirs, Bashalyan skillfully portrays Armenian life at the end of the 19th century. He explores the inner world of individuals, revealing their most intense feelings and refined emotions. His use of descriptive techniques—such as landscapes, portrait-like character sketches, and symbolic imagery—serves as a means of artistic generalization. The writer succeeds in presenting the era and its people in a comprehensive and insightful manner through simple yet effective descriptions.

In Bashalyan's system of imagery, repetitions, comparisons, and contrasts play a crucial role, providing significant context and depth to his work.

Ներկայացվել է՝ 04.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 06.05.2024 թ.

COGNITIVE ASPECT OF CONCEPT
STRANGENESS IN ENGLISH

LILIT BADALYAN
SASUN SHAMIRYAN

Abstract

The paper aims to explore the cognitive aspect of the concept of "Strangeness" in English. It examines this concept through the lens of the image-schema of Relation, as "strangeness" is primarily perceived as a quality associated with being unnatural, unknown, or unrecognizable. Through an analysis of the meanings of the synonymic set of adjectives with the dominant "strange", the study reveals that, in addition to the common semantic component of "different from what is usual or ordinary," these adjectives also share other semes. These semes include "striking or shocking," "eccentric," "inspiring fear," and "remote in space/time," which differentiate them into smaller subgroups.

Overall, based on the semantic analysis of the selected adjectives, it can be concluded that English speakers perceive something or someone as strange when they cannot categorize them into known categories or when the objects are distant in time and space. The quality of strangeness typically carries a negative connotation.

Key words: *Cognitive Linguistics, concept, image schema, semantic component, categorization, distance and space*

Introduction

Concepts are a basic unit of cognition in the human consciousness. The Merriam-Webster dictionary defines a concept as "an abstract or generic idea generalized from particular instances". That is to say, concepts are abstract images formed in the human mind that help us to organize our knowledge about the world. Felix Berenskoetter calls concepts "abstract heuristic devices" (Berenskoetter 2016: 4) and thus states that they are not considered to be accurate representations of reality or the real world. Rather, they are images which are formed in our minds and enable us to meaningfully organize reality through our sensory perceptions. The importance of concepts

is largely practical in nature since they allow us to communicate and investigate phenomena in the real world. Concepts are usually named through words though concepts are more than just words.

Initially many simple concepts like a house, a flower, a table and so on emerge on the object-image sensual basis as an empirical image of an object or a phenomenon. Later, when these simple concepts become more complex as a result of acquiring knowledge through various cognitive activities, these images function as representative of these concepts in human consciousness (Solonchak, Pesina 2014: 354). As the number of attributes associated with the concept grows, so does the level of abstraction. By this manner, the concept turns from a sensory image to a mental one.

It is this shift from a sensory image to a mental one that permits the aforementioned scholars to make the claim that language is the essential tool through which concepts are formed in the human consciousness. In their own words: “the concept constantly interacts with the word, is realized in it and is corrected by the language. Language is not only a tool, but also a general precondition of our thinking” (Solonchak, Pesina 2014: 353).

The construction of concepts is a dynamic process where linguistic units serve as entry points for an array of conceptual operations (Evans, Green 2006). Because of the essential role that concepts play in every intellectual activity, they are often taken for granted. Many concepts which at first glance seem simple and obvious, become much more difficult to formulate and explain. Thus, even the seemingly simple and everyday concepts are worth studying and examining since they can explain and elucidate many aspects of human cognition, language and culture.

The present paper **aims** to study the concept “*strangeness*” and its linguistic realization through English adjectives. The methods of cognitive, semantic and componential analyses were used to achieve the aim set before the given research.

The Role of Image Schemas in Understanding Concepts

Multiple frameworks and methodologies exist which study and explain the essence and structure of concepts. In fact, concepts have been objects of study since ancient times. But one of the most recent, and scientifically accurate, approaches is that of Cognitive Linguistics. Within the framework of Cognitive Linguistics, the theory of conceptual metaphors was developed. It emphasizes the role of metaphors in the perception and formation of new concepts and the close interconnection of language and thought. Image schemas are an essential part of the above mentioned theory. The central idea is that our ability to conceptualize depends on our bodily nature. Image

schemas are conceived as kinesthetic structures that emerge from our sensory-motor programs, by means of which we make sense of our everyday experiences. Johnson (1987:27) explains that image schemas are proposed as a more primitive level of cognitive structure underlying metaphor and providing a link between bodily experience and a higher cognitive domain such as language. According to Johnson's definition "A schema is a recurrent pattern emerging as a meaningful structure at the level of our bodily movement through space, our manipulation of objects, and our perceptual interactions in forming the human comprehension and language" (1987:29). When studying the concept "Strangeness" the first issue we should deal with is establishing whether we should treat the concept as a state or a property. Within the cognitive framework, the conceptual basis of nominal structures is the THING schema (Langacker 1987: ch 5). Langacker clarifies that "the definition of a thing is abstract: it makes reference not to physical objects but rather to cognitive events. A symbolic structure whose semantic pole designates a thing is categorized as a noun" (Langacker 1987: 183). By *semantic pole* Langacker means the meaningful side of the symbolic structure as opposed to the phonological pole which is the formal side of the symbolic structure. In his view, the THING schema is a set of interconnected entities, a "region in some domain of conceptual space" (Langacker 1987: 494). As Frannhag notes, these entities could be anything – "a thing, relation, sensation, point on a scale, location, value" and so on (Frannhag 2010: 41).

If nominal structures are based on the THING schema, adjectives are based on the ATEMPORAL RELATION schema. This schema forms the conceptual basis of not only adjectives but also adverbs and prepositions. It is established that a THING schema is made up of entities that are interconnected and this integrated whole is the final concept. But concepts based on the ATEMPORAL RELATION schema profile one individual interconnection or "the actual relating of one entity to another" (Frannhag 2010: 46). Evidently concepts based on the ATEMPORAL RELATION schema are dependent on concepts based on the THING schema. As Frannhag states, "because it is impossible to conceptualise an interconnecting process without also conceptualising entities that are interconnected, it is reasonable to assume that an atemporal relation profiles not only the interconnection as such, but also entities that are interconnected" (Frannhag 2010: 46-47). We can assume that the concept "*strangeness*" is perceived as a certain quality, so it should be studied through the RELATION schema of adjectives. The fact that nouns denoting various manifestations of strangeness, such as *weirdness*, *bizarreness*, *outlandishness*, *oddness*, *uncanniness*, *queerness* and

so on are derivatives from the corresponding adjectives further proves this point. Moreover, the adjectives conveying the meaning of strangeness vastly outnumber the nouns, for instance the Free Dictionary provides more than 50 synonyms for the adjective **strange** and only 11 synonyms for the noun **strangeness**.

We have chosen the word *strangeness* for the generic term to refer to the concept. This is mainly because within the semantic field of words denoting strangeness, *strange* is the most neutral term. Merriam-Webster defines the word strange as “different from what is usual, ordinary, or expected: odd; not before known, heard, or seen: unfamiliar.” As we can see, this definition encompasses all the general semantic components that the concept may have.

The other meanings of the adjective under study point to different manifestations of the property of being strange, e.g.:

Not of one's own or a particular locality, environment, or kind; not native.

Out of the ordinary or difficult to account for; unusual or peculiar.

Not easily explained.

Estranged; alienated

Thus, the adjective **strange** represents the core of the concept, that is the most fundamental and universal layer of a concept. It includes those attributes of the concept which are the same across different cultures. In short, we can state that at the core of the concept *strangeness* is “the state of not knowing or not recognizing something”. Further study of the semantic structure of the adjective leads us to conclude that the given quality can be manifested along two axes: categorization and distance in time and space.

Concept Strangeness Through the Axis of Categorization

Categorization is the central and essential component of our cognition (Lakoff 1987). Concepts are, by their nature, built on the process of categorization (Evans, Green 2006: 168). We classify and order our experiences and the objects around us into categories which help us construct our reality. That is how human cognition functions. Whenever we encounter something, we try to fit it into a category, but if for whatever reason it doesn't, we enter the domain of the strange. It is a kind of hybrid state, an awareness of not knowing something. For example, someone might laugh when we would expect them to cry and their behavior would seem strange to us because there is a discrepancy between what we expected and reality. In other words, the event does not fit our model of reality.

The second axis that can be distinguished is the distance in time and space. First, it is obvious that the farther away something is, the stranger and more exotic it is considered to be. Second, just as we cannot see something that is far away from us in space, we also cannot “see” events that are far away from us temporally. The older something is, or the farther away it is from the subject, the less we know about it. This is why ancient cultures or monuments are thought to be mysterious and the less information is known about them, the more mysterious they become. Their distance from the present moment is directly correlated to their degree of strangeness. This is why, for example, the Egyptian pyramids are so mysterious and intriguing, the Sumerians are more enigmatic than the ancient Greeks. Not much is known about ancient Sumerians, especially when compared to the Greeks where the historical documents are abundant. Admittedly, the axis of time does not carry the negative connotations the way categorization does, at least not always. But still, it is evident that the older something is, the less we can potentially know about it which in turn imbues the object with strangeness.

The semantic analysis of the members of the group of the adjectives actualizing the concept *strangeness* reveals that they can also be viewed through either the axis of categorization or axis of distance in time or space.

The subgroup of the adjective which share the semantic component of “defying the ordinary or the familiar” comprises such words as *odd*, *bizarre*, *weird*, *uncanny*, *eerie*, *outré*, *freakish*, *eldritch*, *queer*, *quaint*, etc., with the first four being the most frequently used ones after the dominant *strange*.

A frequently used adjective expressing the property of *strangeness* is **odd**. Merriam-Webster dictionary defines *odd* as “differing markedly from the usual, ordinary, or accepted: peculiar.” This is very similar to the Free Dictionary’s definition: “deviating from what is ordinary, usual, or expected; strange or peculiar.” An interesting observation is that *odd* also denotes strangeness from the angle of spatial distance as one of the definitions in The Free Dictionary is (definition 7): “remote; out-of-the-way.”

The adjective **bizarre** is another commonly used word to denote the quality of *strangeness*. What sets this word apart is that it is often used to suggest incongruity: “odd, extravagant, or eccentric in style or mode; involving sensational contrasts or incongruities.” Another important feature in the meaning of *bizarre* is that it is usually conceived of as shocking. As the Free Dictionary defines it, the word means something “very strange or unusual, especially in a striking or shocking way.” This semantic component is also shared by the adjectives *outré* (highly unconventional; eccentric or bizarre), *freakish* (markedly strange or abnormal), *off-the-wall*

(highly unusual), *left-field* (*informal* regarded as being outside the mainstream; unconventional). The informal words *kinky* and *wacky* that describe “eccentric” people whose behavior may deviate from normal, can be included in the subgroup under study.

Unlike the above mentioned words, the adjectives **quirky** meaning “having many quirks: unusual in especially an interesting or appealing way” can be said to convey a positive connotation.

The next set of close synonyms that denote strangeness through the axis of categorization, share the semantic component “in a supernatural manner”. The given subgroup comprises the adjectives *weird*, *uncanny*, *erie*, *eldritch* and *queer*. Merriam-Webster dictionary identifies their differences in the following way: **Weird** may imply an unearthly or supernatural strangeness or it may stress peculiarity or oddness. **Eerie** suggests an uneasy or fearful consciousness that mysterious and malign powers are at work.” **Eldritch** denotes a quality of being “strange or unnatural especially in a way that inspires fear”. **Uncanny** implies disquieting strangeness or mysteriousness. Another adjective that can be added to this list is **queer** that expresses *strangeness* especially through the additional semantic components of *unwell* and *suspicious*. It is perhaps these two attributes that have contributed to the extension of the word to relate, somewhat derogatorily, to sexual orientation or gender identity. The perception of something strange in the sense of raising suspicion or looking unhealthy has probably led to the development of these meanings. The adjectives **unearthly**, **preternatural** **supernatural** and **spooky** can be included in this subgroup. They all stress the quality of “existing outside nature” which for sure inspires fear and suspicion.

Concept Strangeness Through the Axes of Distance and Time

If the above mentioned words convey the meaning of not belonging to the earth, some other adjectives, such as *outlandish*, *exotic*, *foreign*, and *out-of-place*, express strangeness through the axis of distance in space. The adjective **outlandish** presents interest in this respect. According to Merriam-Webster Dictionary it has four meanings: 1. *of or relating to another, foreign*, 2. *strikingly out of the ordinary, bizarre*, 3. *exceeding proper or reasonable limits or standards*, 4. *remote from civilization*. As can be seen from the definitions, the adjective *outlandish*, like the word *odd*, actualizes the concept under study from the two perspectives: deviating from standards and categorization, and remoteness, i.e. distance in space. However, in case of the adjective *odd*, the semantic component “unusual” is the central one, while in

outlandish the component “remoteness” comes to the fore due to the meaning of its root and derivational pattern.

Strangeness is not the main semantic component in the meanings of the adjectives **foreign** and **exotic**, but it is still a relevant one. Both of them mean “situated outside a place or country” but there is a slight difference between them that has to do with their emotive charge. While *foreign* has a mostly neutral or slightly negative connotation, *exotic* is more positive. Both Merriam-Webster and the Free Dictionary define *exotic* as something strange in an exciting manner (Merriam-Webster: “strikingly, excitingly, or mysteriously different or unusual.” The Free Dictionary: “Intriguingly unusual or different; excitingly strange”).

And lastly, another adjective with positive connotation that is worth discussing is **quaint**. It denotes *strangeness* that deals with the temporal characteristics of the concept. Besides that, it is also one of the few positive manifestations of the concept. Merriam-Webster defines it as “pleasingly or strikingly old-fashioned or unfamiliar” while the Free Dictionary defines “quaint” as “charmingly odd, especially in an old-fashioned way.” As we can see, both definitions point out the oldness of something while also maintaining the positive emotive charge.

As it becomes evident, *quirky*, *quaint* and *exotic* are some of the few adjectives where the concept of *strangeness* is perceived as a positive phenomenon, but the overwhelming majority of the words convey negative connotation.

Conclusion

In summary, the concept *strangeness* is, at its core, the condition of not knowing or not recognizing something. It is understood through the schema of RELATION and can be manifested along the two axes of categorization and distance in time and space. Since categorization is such a fundamental part of human cognition, entities that do not fit within their expected or agreed upon categories are conceptualized as *strange*. Distance in time and space is the other key semantic component of *strangeness*, it contributes to the sense of *strangeness* since the object becomes unknown or unrecognizable.

REFERENCES

1. Berenskoetter, F. *Concepts in World Politics*. London, Sage Publications, 2016.
2. Evans, V., Green, M. *Cognitive Linguistics. An Introduction*. Edinburgh, Edinburgh University Press, 2006.

3. Frannhag, H. *Interpretive Functions of Adjectives in English – A Cognitive Approach*. Lund University, Media-Tryck, 2010.
4. Johnson, M. *The Body in the Mind*. Chicago, The University of Chicago Press, 1987.
5. Langacker, R., W. *Foundations of Cognitive Grammar Vol. I*. Stanford, Stanford University Press, 1987.
6. Lakoff, G. *Women, Fire, And Dangerous Things*. Chicago, The University of Chicago Press, 1987.
7. Solonchak T., Pesina S. “Concept and its structure”, 2nd Global Conference on Linguistics and Foreign Language Teaching, Dubai, 2014
8. <https://www.merriam-webster.com/>
9. <https://www.thefreedictionary.com/>

ԼԻԼԻԹ ԲԱԴԱԼՅԱՆ, ՍԱՍՈՒՆ ՇԱՄԻՐՅԱՆ- «ՏԱՐՕՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Հիմնաբառեր՝ ճանաչողական լեզվաբանություն, հասկացույթ, պատկեր-սխեմա, իմաստային բաղադրիչ, կարգայնացում, հեռավորություն և ժամանակ

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել «Տարօրինակություն» հասկացույթի ճանաչողական հայեցակերպն անգլերենում: Տվյալ հասկացույթն ուսումնասիրվում է Հարաբերության պատկեր-սխեմայի տեսանկյունից, քանի որ «տարօրինակությունը» հիմնականում ընկալվում է որպես հատկանիշ, որը կապված է անբնական, անհայտ կամ անճանաչելի լինելու հետ: «Տարօրինակ» նույնացուցիչով հոմանիշային խմբի ածականների իմաստների վերլուծությունը ցույց է տալիս, որ բացի «սովորականից տարբերվող» ընդհանուր իմաստային բաղադրիչից, այս ածականները նաև ունեն այլ իմաստներ՝ «ցնցող», «էքսցենտրիկ», «վախ ներշնչող» և «հեռավոր տարածություն/ժամանակ մեջ», որոնք էլ դրանք տարանջատում են ավելի փոքր ենթախմբերի:

Ընտրված ածականների իմաստային վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ անգլիացիները ինչ-որ բան կամ ինչ-որ մեկին տարօրինակ են ընկալում, երբ չեն կարողանում դրանք դասակարգել հայտնի կարգերի շրջանակում կամ երբ առարկաները հեռու են ժամանակի և տարածության մեջ: Տարօրինակության հատկանիշը սովորաբար կրում է բացասական հարանշանակություն:

ЛИЛИТ БАДАЛЯН, САСУН ШАМИРЯН - КОГНИТИВНЫЙ АСПЕКТ КОНЦЕПТА *СТРАННОСТЬ* В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

Ключевые слова: когнитивная лингвистика, концепт, образ-схема, семантический компонент, категоризация, время и пространство

Цель настоящей статьи – исследование когнитивного аспекта концепта *странность* в английском языке. Концепт рассматривается сквозь призму образа-схемы *отношения*, поскольку *странность* в первую очередь воспринимается как качество, связанное с неестественностью, неизвестностью или непознаваемостью. Анализ значений прилагательных синонимического ряда с доминантой *странный* показывает, что, помимо общего семантического компонента "отличный от привычного или обыденного", эти прилагательные объединены и другими семами - "поразительное или шокирующее", "эксцентричное", "внушающее страх" и "удаленное в пространстве или времени". На основе данных сем синонимический ряд делится на подгруппы. В целом, на основе семантического анализа выбранных прилагательных можно сделать вывод, что носители английского языка воспринимают что-либо или кого-либо в качестве странного в том случае, когда они не могут отнести их к известным категориям или когда объекты удалены во времени и пространстве. Помимо этого, качественные характеристики странности обычно предполагают негативный оттенок.

Ներկայացվել է՝ 22.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 14.05.2024 թ.

**ՄԵՂՄԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՊՏԱՍՈՒԹՅՈՒՆ.
ԽՈՍՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

ՍՈՒՍԱՆՆԱ ԳԱՐԻԻԵԼՅԱՆ

Համառոտագիր

Սույն հոդվածի ուսումնասիրության առարկան բովանդակում է շարահյուսական բանադարձումներից երկուսի՝ մեղմասության և կոպտասության քննությունը. դրանք ոճական-արտահայտչական յուրահատկություններ և հնարավորություններ են դրսևորում խոսքային և միջանձնային հարաբերություններում, հաղորդակցության որոշակի ոլորտներում, մասնավորապես՝ բժշկական, տնտեսական, պետական-քաղաքական, ռազմական, դիվանագիտական, մանկավարժական և այլն: Մասնագիտական տարբեր բնագավառներում գործածվող քոդարկված մեղմասությունները ընկալելի են հաղորդակցվող կողմերի խոսքային համատեքստում:

Ուսումնասիրության նպատակը վերլուծական-համադրական մեթոդների համատեղմամբ վերոհիշյալ արտահայտչամիջոցների կարևորության քննությունն է՝ դրանց գործառական նպատակաուղղվածության առումով: Խնդրի արդիականությունը պայմանավորված է մի շարք գործոններով՝ կիրառական առանձնահատկություններ և հաճախականություն, արտահայտչական հնարավորությունների ներգործունություն: Դրանք առանցքային նշանակություն ունեն ժամանակակից լեզվական հաղորդակցական մակարդակը գնահատելու և միտվածությունը բնութագրելու տեսանկյունից:

Քննարկվող հարցի առաջ քաշած դրույթները սերտորեն պայմանավորված են ինչպես հաղորդակցման լեզվական ավանդույթով (լեզվական տարուի հաղթահարում և այլն), այնպես էլ արդի խոսույթում վերապահված գործառույթով՝ հարցի քննարկման առանցքում ունենալով դրանց՝ նորմալ պայմաններ ապահովելու նշանակությունը:

Մեր աշխատանքում մեղմասությունը քննարկվում է բառային, բառակապակցության, դարձվածքային, նաև շարահյուսական ոճագիտության մակարդակներում: Կոպտասությունը ոլորտային գործառույթամբ թեև ավելի սահմանափակ է, սակայն դրա կիրառության հաճախականությունը մեծ է մեր օրերում, որը թելադրված է սոցիալ-

հասարակական, քաղաքական, տեղեկատվական միջոցների փոփոխություններով՝ թվայնացված դարաշրջանի ընձեռած հնարավորությունների շրջանակներում:

Հիմնաբառեր՝ մեղմասություն, կոպտասություն, հուզաարտահայտչականություն, գործառույթ, արտահայտչական միջոցներ և նպատակներ, կիրառության ոլորտներ

Ներածություն

Մեղմասության և կոպտասության արտահայտչական հնարավորությունները մեծ են. դրանց դրսևորումները խոսքում արդիական են և գործառական ներուժությունը մեծ է: Ոճական այս բանադարձումները սերտորեն առնչվում են լեզվական պրագմատիզմի խնդրին, քանզի կիրառություններում մի բառի, բառակապակցության, շարահյուսական միավորի՝ մեկ այլ բառով, արտահայտությամբ փոխարինելու հարց չէ սա միայն, այլ հաղորդակցման պայմաններով և հանգամանքներով պայմանավորված իրադրական լուծում՝ բարեկիրթ և ոչ բարեկիրթ, վայելույ և ոչ վայելույ խոսքի տարբերակման համատեքստում:

Հայ լեզվաբանները անդրադարձել են մեղմասություն երևույթին, տվել են դրա գնահատականը խոսքի ոճավորման, յուրահատկությունները բացահայտելու և գնահատելու տեսանկյունից, սակայն կոպտասությանը գրեթե չեն անդրադարձել:

Մենք փորձել ենք մասնակիորեն լրացնել այդ բացը:

Եզրակացություն

Որպես ամփոփում մեր զուգադրական-համեմատական քննության՝ կարող ենք եզրակացնել, որ մեղմասությունները երևույթները հիմնականում քողարկելու, մեղմ ներկայացնելու, իսկ կոպտասությունները, ընդհակառակը, դրանք հաճախ խեղաթյուրելու, բացասական ընկալումներ և տրամադրություններ ձևավորելու (մանիպուլյատիվ վարքագիծ) ոճական հնարանքներ են, որոնք արդի խոսույթի ընդհանրական բնութագրի կարևոր բաղադրիչներից են:

Մեկ դիտարկում ևս. մեղմասության ընկալման սահմանները խիստ հարաբերական են: Այսպես՝ հասարակական զարգացման մի փուլում որպես մեղմասություն ընկալվող բառը, արտահայտությունը կարող են տարակերպ հասկացվել մեկ այլ միջավայրում. այստեղ, ժամանակային գործոնից բացի, կարևորվում է նաև խոսքային միջավայրը:

Ի դեպ, մեր ժամանակներում տեղեկատվական տեխնոլոգիաների համընդհանուր հասանելիությանը և տարածմանը զուգահեռ համացանցը

առավել է նպաստում կոպտասության խոսքային ազդեցության շրջանակների ընդլայնմանը հանրային կյանքում և միջանձնային հարաբերություններում, որտեղ հաճախ շրջանցվում և խախտվում են խոսքային էթիկայի պահանջները:

Կոպտասությունների կիրառությունը նպաստում է հասարակության մեջ բացասական տրամադրությունների գեներացմանը, որը հաճախ վերածվում է ատելության խոսքի:

Խոսքի մշակույթը հաղորդակցական-գործառական նշանակություն ունի, փոխկապակցված է գրական լեզվի նորմերին և փոփոխվում է դրանց համապատասխան՝ միտված լինելով սեղմ, ճշգրիտ, բազմազան, մատչելի, տրամաբանական, արտահայտիչ խոսք կառուցելու նպատակադրմանը: Որպես լեզվական դիսցիպլին՝ խոսքի մշակույթը միավորում է հետևյալ հիմնական դրույթները՝ նորմավորում, հաղորդակցում, էթիկական նորմերի պահպանում. վերջիններս պայմանավորված են հաղորդակցական ավանդույթներով կամ որպես այդպիսիք գիտակցվող պատկերացումներով և հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ձևային և բովանդակային փոփոխություններ և առանձնահատկություններ են դրսևորում:

Խոսքին արտահայտչականություն և հուզականություն հաղորդող ոճական բանադարձումների բազմազանության մեջ առանձնանում են մեղմասությունը (euphemism) և կոպտասությունը (disfemism). սրանք ոճական հնարանքներ են, որոնք խոսքի կառուցման, բառերի գործածության, շարահյուսական յուրահատկություններ են դրսևորում՝ գործածվելով հաղորդակցության որոշակի ոլորտներում: Լեզվաոճական տարբերակված այլատեսակներից յուրաքանչյուրը, հիմնական գործառույթից բացի, հավելյալ նշանակություն և երանգներ է հաղորդում ասելիքին:

Սույն ուսումնասիրության նպատակը արտահայտչական այս միջոցների զուգադրական, վերլուծական, նկարագրական քննությունն է:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է որոշակի հանգամանքներով. դրանք են՝ ժամանակակից խոսույթում կիրառական հատկանիշներ և հաճախականություն, գործնական նշանակություն: Վերոհիշյալ գործոնները ամբողջության մեջ բնութագրում և առնչվում են արդի լեզվական-հաղորդակցական իրողություններին և միջավայրին:

Հայ լեզվաբանության մեջ անդրադարձներ եղել են մեղմասությանը, սակայն կոպտասությունը՝ որպես ոճական միջոց, ուսումնասիրողների կողմից անտեսվել է, թեև վերջին ժամանակներում՝ մասնավորապես մեր օրերում, դրա գործածականությունը նկատելիորեն

մեծացել է, որին նպաստել են սոցիալ-հասարակական, քաղաքական կյանքի զարգացման բովանդակային փոփոխությունները, թվայնացված դարաշրջանի տեղեկատվական հաղորդակցման ընձեռած հնարավորությունները:

Հոդվածի շրջանակներում մենք կանդրադառնանք դրանց գործառույթներին, թեմատիկ դրսևորումներին. սրանցից յուրաքանչյուրի՝ մասնավորապես մեղմասության կիրառությունը չի սահմանափակվում միայն բառային, բառակապակցության, դարձվածքային մակարդակներով: Շարահյուսական ոճաբանության մեջ կրավորական սեռի մեղմասության կառույցներին քաղաքական խոսույթի բովանդակային պլանում իմաստազատող գործառույթ է վերապահվում:

Եվ այսպես՝ Էդ. Աղայանը գրում է. «Էվֆեմիզմ է կոչվում «անքաղաքավարի» կամ «անհարմար» համարվող բառերի փոխարինումը նորերով» (1967, էջ 300):

Ոճաբանական բառարանում երևույթը բնութագրվում է այսպես. «1. Տիան, կոպիտ բառերի և արտահայտությունների փոխարինումը վայելուչ համարվող հոմանիշներով: 2. Այնպիսի բառերի գործածություն, որոնք նվազեցնում, մեղմացնում են բացասական, անվայելուչ համարվող հատկանիշները» (Խլղաթյան 2000, էջ 39-40): Այսինքն՝ բառը կամ բառակապակցությունը խոսքային իրադրության պայմաններում փոխարինվում է իմաստով զուգահեռելի միավորներով՝ հնարավորություն ստեղծելով բովանդակային և ոճական լրացուցիչ նրբերանգներ հավելելու, նաև բարձրացնելու խոսքի բարեկրթության մակարդակը: Եվ ընդհանրապես, սա մի բառը կամ արտահայտությունը մյուսով փոխարինելու, քողարկելու կամ մեղմացնելու ինքնաբերական գործողություն չէ, այլ լեզվական պրագմատիզմի դրսևորում, որի միջոցով գործնականորեն ցանկալի վերջնարդյունք է ակնկալվում՝ գնահատելով խոսքի արտահայտչական իրական հնարավորությունների, կիրառական խնդիրներ լուծելու նպատակաուղղվածության տեսանկյունից:

Մեղմասությունը կախման մեջ է դնում խոսքը հաղորդակցման նպատակներից և պայմաններից, քանզի տվյալ սոցիալական միջավայրում և իրադրությունում այն կարող է համարվել ոչ պատշաճ, բարեկիրթ առարկան կամ երևույթը ուղիղ անվանելու համար (ի դեպ, ասելիքի քողարկված իմաստը համատեքստում շատ հաճախ մտովի ընկալելի է):

Այնուամենայնիվ, նկատենք, որ մեղմասության գործառույթները սահմանափակվում են միայն որոշակի երևույթների, առարկաների, ոլորտների և մարդկային փոխհարաբերությունների գնահատումների պատեհությամբ, այլ պարագաներում դրանք չեզոքություն են հանդես

բերում: Ավելին՝ հաղորդակցման միջավայրից կախված՝ որքան խոսքի վերահսկողությունը և ինքնավերահսկողությունը խիստ է, այնքան մեղմասության ի հայտ գալու հավանականությունը մեծանում է: Հակառակ պատկերը սոցիալական ցանցերն են՝ խոսքի անվերահսկելիության ծայրահեղ դրսևորումներով: Մի հանգամանք ևս. հասարակական զարգացման մի փուլում մեղմասության համարվող բառը, արտահայտությունը կարող է այդպիսին չընկալվել այլևս. բացի ժամանակային գործոնից՝ կարևորվում է նաև սոցիալական միջավայրը. բարեկրթության և ոչ բարեկրթության հասարակական ընկալումների տեսանկյունից տարակերպություն կա:

Առանձնացվում է մեղմասության գործածության երկու որոշակի նպատակ. «ա) Մեղմասության ենթ դիմում նախ և առաջ խոսքի առարկայի իրական բնութագիրը կամ անվանումը պարկեշտ կամ ոչ կոպիտ հնչեցնելու, հաղորդակցումը բարեկիրթ մակարդակում պահելու նպատակով... բ) Մեղմասությունը գործածվում է երևույթի բուն էությունը քողարկելու նպատակով» (Ավետիսյան 2015, էջ 70):

Հասարակական և միջանձնային հարաբերություններում մեղմասությունները հաղորդակցվելիս անպատշաճությունից իմաստային այլ՝ համեմատաբար մեղմ և այլ կերպ, այսինքն՝ բառի ուղիղ և անվանողական արժեքին հավասար նշանակություն ունեցող լեզվական միավորով փոխարինելու հնարավորություն է տալիս՝ կոյր (տեսողությունից զուրկ), խուլ (լսելու ունակությունը կորցրած), սխալ (ոչ ճիշտ), հաշմանդամ (շարժողունակությունը կորցրած), գեր (խոշորամարմին), տգեղ (արտաքինի հարցում բախտը չի բերել) և այլն:

Առարկաների, երևույթների՝ գրական և ժողովրդական լեզվամտածողությանը բնորոշ (բարբառային, խոսակցական բառեր, դարձվածքներ) գնահատողական-զգայական տեսանկյունից բնութագրվող մեղմասությունները՝ բարեկրթության և անբարեկրթության տարանջատումով, լեզվական տարուի հաղթահարման կամ առարկայի, երևույթի քողարկման արտահայտչական-գործառական առանձնահատկություններ են ցուցաբերում և հաղորդակցման մեկ այլ իրավիճակում կարող են որպես այդպիսիք չընկալվել. օրինակ՝ մարմնավաճառ՝ գիշերային թիթեռնիկ, հետերա, ի նոցանե, փողոցային պչրուհի, սոցիալական ցածր պատասխանատվություն ունեցող, սիրո քրմուհի, բարոյական օրենքներից զուրկ և այլն, կամ՝ բիճ (բրբ.)՝ ապօրինածին, անմեղ-մեղավոր (գրք.), ընկեցիկ և այլն, նաև՝ հղի՝ պատճառավոր, ծոցվոր, տղոցկան, մացուկ, ծանր ոտք և այլն:

Ի տարբերություն հոմանշային հարաբերության մեջ գտնվող բառերի՝ մեկը մյուսով փոխարինելու ընդհանրական բնույթ կրող

գործառությանը՝ որպես մեղմասություններ հանդես եկող միավորները ընդունելի կամ անընդունելի լինելու հասարակական պահանջին են ենթակա: Մեղմասությունների դրսևորման այս յուրահատկությունները թույլ են տալիս անդրադառնալ շատ ավելի զգայունություն ունեցող թեմաների՝ պահպանելով հասարակական հարաբերություններում թույլատրելիության նորմերը: Այս առումով մեղմասությունը կարելի է կոչել երկիմաստ նշանակություն ունեցող խոսք՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ խոսքային տարբեր միջավայրերում այն կարող է ունենալ ոչ միանշանակ ընկալում (Յեքեբա 2008, с.217-219):

Հարցի պատմությունը ձևավորվել է դեռևս հնագույն դարերում: Բոլոր ժամանակներում էլ եղել են թեմաներ, որոնք չեն հանրայնացվել կամ քննության ենթակա չեն եղել, և խոսքում դրանց հիշատակումն իսկ պարկեշտ, բարեկիրթ չի համարվել, ուստի և տաբու (արգելք) է դրվել բառի գործածության վրա, որի խախտումը, ըստ սնոտիապաշտական պատկերացումների, կարող էր պատժվել գերբնական ուժերի կողմից և բացասական հետևանքներով հակադարձվել այն հիշատակողին: Ի դեպ, հասարակական գիտակցության մեջ ամրագրված ժամանակակից բազմաթիվ մեղմասություններ սոցիալական, քաղաքական և կրոնական տաբուների արդյունք են: Մեր օրերում լեզվական տաբուի պատճառ կարող է համարվել գրաքննությունը՝ հատկապես ռազմական, քաղաքական-դիվանագիտական ոլորտներում:

Այսպես, համաձայն հին հավատալիքների՝ պետք էր խուսափել կամ զգուշանալ մահվան, վտանգավոր երևույթների, հիվանդությունների մասին ուղղակի հիշատակումից, քանզի մեր նախնիները գերբնական էակների, երևակայական ոգիների գոյության հաստատուն համոզմունքն ունեին: Սնոտիապաշտական նախապաշարումներից բխած կանխակալ այս պատկերացումները կարգավորում էին մարդկային համակեցությունը:

Ահավասիկ՝ Սատանա (կրոն.), Սադայել, չարք (սնոտ.), դև (հնգ.), չարասկիզբ, խորամանկ, փորձասեր, շեյթան (գվռ.), մեզնից լավերը, մեզմեն աղեկները, սև վարդապետ (անձնավորված չար ոգի), գրող (երևակայական չար ոգի, որ մարդկանց մահ է բերում), իբլիս և այլն: Կան նաև դարձվածքային տասնյակ տարբերակներ՝ սատանի ականջը խուլ, սատանան տանի-գրողը տանի, սատանի բաժին-գրողի բաժին (դառնալ) և այլն (Սուքիասյան 2003, էջ 983):

«Սատանա» բառը զուգակցվում է տգեղության, չարամտության, անազնվության, խաբեության, խորամանկության, նենգության, ճարպկության, չարաճճիության և այլ հատկանիշների հետ, որոնցից յուրաքանչյուրը, իմաստային նրբերանգներից բացի, ունի նաև

արտահայտչականորեն տարբերակվող վերաբերմունք, որը այս կամ այն չափով անդրադարձնում է խոսողի անհատական-հուզական գնահատականը առարկայի նկատմամբ:

Ամեն մի ժողովուրդ իր կրոնական հավատալիքների մեջ չարի և բարու սեփական ըմբռնումներն ունի և հոմանշային մերձիմաստ բառախմբերում ոճական արժեք և արտահայտչականության հնարավորություն ունի յուրաքանչյուրը՝ կիրառական տարբեր հաճախականությամբ և նկատելի *այլալրեսականությամբ* կամ երկուսով էլ:

Թեմատիկ առումով մեղմասությունների կիրառումը կարելի է բաժանել անձնական և սոցիալական կյանքին վերաբերող ոլորտների:

«Մահ» և «մեռնել» հասկացությունների վրա դեռևս հնուց տաբու էր դրված. այս թեմայով մեղմասությունները բնույթով ավելի զգացմունքային են և հոգեբանական առումով արտահայտչական պլանում փորձում են մեղմացնել, վերստին ցավ չպատճառել հարազատի կորուստը վերապրողին՝ ընտրություն կատարելով մարդու ճանաչողական և արժեքային համակարգի մաս կազմող ընկալումների և մտածումների միջև:

Առանձնացնենք «մեռնել» բառի տասնյակ հոմանշային բառերից և դարձվածքային արտահայտություններից մի քանիսը միայն՝ ոճականորեն չեզոք, դրական և բացասական ընկալումներով՝ ննջել, հանգչել, սատկել (անարգ.), (գվռ.)՝ պակսել, խատել, մահկանացուն կնքել (գրք.), հոգին ավանդել (փչել), հոգին Աստծուն տալ, աստղը (արևը) խավարել (մարել), մյուս աշխարհ գնալ, հոր տուն գնալ, Աստծո (տիրոջ) հույսին մնալ, փալաս-փուլուսը հավաքել, կարմիրը կապել, ոտները մեկնել (տնկել, երկարացնել), գրողի ծոցը գնալ, շանսատակ լինել, կյանքը հայրենիքի զոհասեղանին դնել, գնալ ի վերին Երուսաղեմ, երկնային հոր արքայությանն արժանանալ, հավերժական (հավիտենական) քնով քնել, հավերժի ճամփորդ դառնալ և այլն:

Կենսափիլիսոփայությունը, որ խտացված է դարձվածքային կայուն, փոխաբերական-այլաբերական իմաստ արտահայտող այս միավորներում, ոչ միայն մարդու ֆիզիկական չգոյության, այլև երևույթին զգայական-հոգեբանական գնահատանքներ տալու մասին է, որոնց նախընտրությունը խոսքում կարող է և՛ մեղմել, և՛ կոշտացնել հաղորդակցական իրավիճակը: Ըստ որում, դարձվածքներով արտահայտված մեղմասությունները (նաև՝ կոպտասությունները) ավելի պատկերավոր են և սոցիալ-մշակութային կյանքի (կրոնական, էթնիկական, կենցաղավարության և այլն) տեղեկություն են պարունակում՝ իմաստային և գործառական հետաքրքիր դրսևորումներով՝ «դատարկ

տակառ» (պոռոտախոս, մեծաբերան մարդ), «բերանը յուղոտ պատառ զցել» (սիրաշահել, կաշառել), «իրենով անել» (յուրացնել), «երեսի մեռոնը գնալ (կամ թաքնվել)» (խսկց.)՝ ամոթը, պատկառանքը կորցնել, «տանձի պոչ (կամ կոթ») (խսկց.)՝ ապուշ, տխմար, «խաչ ունի՞» (խսկց.)՝ անսիրտ, անխիղճ մարդ», «ծամ/ը կտրած» (անբարոյական, թեթև վարքի տեր), «մատաղ լինել» (զոհվել, նահատակվել) և այլն:

Լեզվական որոշ միավորների իմաստաձևային փոխհարաբերությունների պայմաններում որևէ բառի, արտահայտության՝ մեղմասությամբ փոխարինելը սովորաբար դիտարկվում է որպես հոմանշության դրսևորում, սակայն մերձիմաստությանը զուգահեռ երևույթը կիրառական առանձնահատկություն ունի, այն է՝ փոխհաջորդող բառին, դարձվածքին, արտահայտությանը, շարահյուսական կառույցին բովանդակային և գործառական կարևոր դեր է առանձնացվում:

Իբրև լեզվական հնարանք՝ մեղմասույթը երևույթների, առարկաների միջև պայմանական զուգահեռներ անցկացնելու, համադրելու հնարավորություն է ստեղծում, ինչը, անշուշտ, իմաստատարբերակիչ նշանակություն է ձեռք բերում համատեքստում (երևույթը գործուն է հատկապես մամուլում)՝ «Այդ գործողությունները, ինչպես միշտ, բերելու են հայտնի արդյունքին» (վատ, բացասական), «Ապրանքը (թմրանյութը) Հայաստան է ներկրվել օդային ճանապարհով», «Տնօրենի դեմ նյութեր (կոմպրոմատ-վատաբեկիչ տեղեկություն) են նախապատրաստվում» և այլն:

Իմաստային առանձնահատկությամբ պայմանավորված՝ դերանունները (այս դեպքում՝ ցուցական և անորոշ)՝ որպես լեզվական հնարանք, կարող են մեղմասույթային գործառույթ կատարել տվյալ խոսքային ենթատեքստում՝ ընդգծելով առարկայի, հատկանիշի և՛ կարևորությունը, և՛ միաժամանակ քողարկելով դրանք՝ դրանով իսկ ակնարկելով այն, ինչի մասին բացահայտ չի ասվում: Անուղղակի կերպով հիշեցվող խոսքը, թեև ամբողջական չէ, սակայն կռահելի է. «Դուք սխալ եք-Դուք այնքան էլ ճիշտ չեք, նա տգետ է- նա այնքան էլ գիտակ չէ այդ հարցում», «Մի՞թե ես ընդունակ եմ դրան (վատ արարք)», «Ձեր միջև ինչ-որ բան է եղել» (ի նկատի է առնվում սեռական կապ), «Այդ մասին լռում են, այնինչ պետք է խոսել, բացատրել» (սեռական դատարկության մասին) և այլն:

Որոշ բառեր և արտահայտություններ իմաստային կանխորոշող նշանակություն են վերագրում կապակցությանը և ձևավորում նոր ընկալումներ: Այսպես՝ որոշակի (ուժեր, ուժային կառույցներ, հայտնի (դեպքեր, իրադարձություններից հետո), համապատասխան (համապատասխան վայրում հայտնվել՝ կալանավայր, ոստիկանական

բաժանմունք) և այլն: Բառային-քերականական միջոցներից գործուն են միջանկյալ բառերը, բառակապակցությունները. «Երևի Դուք պետք է փոխեք Ձեր վարքագիծը», «Միգուցե վերանայեիք Ձեր տեսակետը», «Ցավոք, Ձեր խոսքը համոզիչ չէ» և այլն:

Որպես մեղմասության լեզվական միավորներ կարող են հանդես գալ նաև հապավումները, տերմինները, օտար բառերը (ի դեպ, հաղորդակցվողների մի մասի համար դրանք կարող են և անհասկանալի լինել)՝ ԼԳՏԲ, ցածր IQ ունենալ (70-ից պակասը մտավոր հետամնացության ցուցիչ է), որոշ մասնագիտությունների վերանվանումները՝ մաքրուհի (հավաքարարուհի), ցրիչ (առաքիչ), քարտուղար (մենեջեր), էսկորդ (ծառայության տեսակ) և այլն:

Իբրև մեղմասություններ հանդես եկող ձևակերպումների ոչ քիչ օրինակներ բառային և բառակազմական մակարդակներում ռուսերենի միջոցով որպես փոխառություններ ներթափանցված բառիմաստային պատճենումներ են, որոնք իմաստով կարող են նույնական լինել կամ մոտ նշանակություն արտահայտել. սրանք հայերենի բառապաշարը հարստացնող միջոցներ են՝ несовместимое с жизнью огнестрельное ранение (կյանքի հետ անհամատեղելի հրաձգային վիրավորում), особенный ребенок (յուրահատուկ երեխա՝ շատ հաճախ նյարդային համակարգի ախտահարում ունեցող), солнечные люди (դաունի համախտանիշ ունեցող), непопулярные меры (ոչ համընդունելի միջոցներ), зачистка местности (տեղանքի զտում), человеческие потери (մարդկային կորուստներ), неуставные взаимоотношения (ոչ կանոնադրական հարաբերություններ), гуманитарный кризис (մարդասիրական աղետ, ճգնաժամ), пятая колонна (5-րդ շարասյուն) և այլն:

Այս կամ այն ոլորտին բնորոշ մեղմասությունները բազմաթիվ են՝ բժշկական, սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլն:

Բժշկական մեղմասությունները հաղորդակցվողներից պահանջում են խոսքային վարվեցողության էթիկական նորմերի պահպանում՝ փոխադարձ շփումների համար դրական-հուզական մթնոլորտ ապահովելու նպատակով: Երկուստեք վստահության համար նրբանկատությունը առաջնային անհրաժեշտություն է՝ հոգեբուժարան (հոգեկան առողջության կենտրոն), ժողովրդագրական աղետ (ծնելիության նվազում), արհեստական բեղմնավորման կենտրոն (վերարտադրողական բժշկության կենտրոն), ուռուցք (նորագոյացություն) և այլն:

Բավական մեծ խումբ են կազմում սեռական հատկանիշներ և հասկացություններ, կողմնորոշումներ, ֆիզիոլոգիական առանձնահատ-

կություններ և գործողություններ, խանգարումներ, շեղումներ, հիվանդություններ, մարդակազմությանը վերաբերող բառերը և արտահայտությունները. սրանց մի մասը արտահայտչական տեսանկյունից չեզոք բառեր, տերմիններ, բառակապակցություններ են, որոնց իրենց իսկ անունով կոչելը կարող է անպարկեշտություն դիտարկվել խոսքային որոշակի միջավայրում:

Բժիշկ-հիվանդ շփումներում թերահավատության երանգ ունի հետևյալ արտահայտությունը՝ «Եթե հիվանդի հետ բան չպատահի...», ինչը նշանակում է՝ «Եթե հիվանդը չմեռնի...»:

Տնտեսական բնագավառում գործածվող մեղմասություններից են՝ օպտիմալացում (կրճատում), տնտեսական ճգնաժամ, սանկցիաների (պատժամիջոցների) կիրառում, մարդասիրական աղետ, ռուբլու անկում, բացասական դինամիկա, դրամի արժեզրկում և այլն:

Քաղաքական, նաև ռազմական գործունեությանը վերաբերող մեղմասությունները սպասարկում են ներպետական և արտաքին հարաբերությունները և իրենց միտվածության մեջ հիմնականում կա՛մ սքոդում են իրականությունը, կա՛մ ավելի բարենպաստ լույսի տակ են ներկայացնում այն՝ ծառայեցնելով որոշակի նպատակների՝ էթնիկ գտում, քաղաքական բլոկադա, սահմանային լարվածություն (միջադեպ), հայելային պատասխան, թշնամու հարձակման չեզոքացում, մեծամասշտաբ ռազմական գործողությունների հավանականություն (վտանգ), հատուկ ռազմական գործողություն, անցանկալի անձ (դիվանագ.) և այլն:

Շարահյուսական մակարդակում մեղմասութային հետաքրքիր գործառույթ է դրսևորում կրավորական կառուցվածքի նախադասությունը, ու թեև հայերենին այնքան էլ բնորոշ չէ այն (ի դեպ, քաղաքական մտքի հարուստ ավանդույթներ ու մշակույթ ունեցող անգլերենում սա առանցքային հարց է), այնուամենայնիվ, ներթափանցել է նաև մեր լեզվական տիրույթ և կիրարկման հաճախականություն ունի հատկապես գիտական, հրապարակախոսական, պաշտոնական ոճերում: Ներգործական բնույթի նախադասության՝ կրավորականի փոխակերպված տարբերակը, չնայած իմաստային նույնությանը կամ մերձավորությանը, արտահայտում է այլ հարաբերություն և նրբերանգ, որոնք առանձնակի են կարևորվում քաղաքական խոսույթում (ի միջայլոց, սա քաղաքական գործչի գիտակցական նախընտրությունն է): Լեզվաբան Պ. Պողոսյանը գրում է. «Կրավորական կառուցվածքի դեպքում վերանում է խոսողի հոգեբանական միջամտությունը իր ներկայացրած պատումի մեջ, ասելիքն ասվում է ուրիշի կողմից, խոսքը դառնում է մի տեսակ

չեզոք, խոսողը կարծես թե իրեն ապահովագրում է պատմաժի բովանդակության համար պատասխանատվությունից» (1990, էջ 255):

Հետևաբար, քաղաքական խոսույթում իր գործողությունների՝ գործունեության համար պատասխանատու լինելու հանգամանքի անտեսումը, քողարկումը կատարում է կրավորական կառույցի նախադասությունը, որը սովորաբար չեզոք վերաբերմունք է արտահայտում: Քաղաքական գործչի կողմից խոսքում կրավորական կառույցի վրա կենտրոնանալը լեզվի մեղմասութային կիրառության առանձնահատկություններից է. այն թույլ է տալիս չհիշատակել գործողություն կատարողին՝ դրանով իսկ նախապես ապահովելով ոչ հարմար թեմայի քննարկման հնարավորությունը: Այստեղ է, որ մեղմասությունն իր հիմնական գործառույթներից մեկն է իրականացնում, այն է՝ դրա միջոցով տեղեկատվության կանխակալ, քողարկված, նաև խեղաթյուրված փոխանցում կատարել:

Խնդիրը հետևյալն է. կրավորական կառույցի նախադասություններում գործողություն կատարողը ոչ ուղղակի, այլ անհայտ հասցեատերն է, իսկ քաղաքական տեքստը (նաև՝ խոսքը) որոշակիություն, կոնկրետություն, պարզություն է պահանջում՝ «Ընտրության արդյունքները կեղծվել են», «Պաշտոնական պարտականությունները կատարելիս ցուցաբերվել է անփութություն», «ՌԴ ՊՆ հայտարարում է. «Լեռնային Ղարաբաղում արձանագրվել է հրադադարի ռեժիմի խախտում» և այլն:

Անդրադառնանք կոպտասությանը. ըստ Էդ. Աղայանի՝ այն բնորոշվում է այսպես. «Տվյալ ասույթի համար պատշաճ ու սովորական բառի կամ արտահայտության փոխարինումը գռեհիկ՝ կոպիտ բառով կամ արտահայտությամբ՝ ոճական նկատառումներով (դիսֆեմիզմ)» (1976, էջ 759):

Լեզվական բարեկրթության խնդիրը գործնական առումով առնչվում է և՛ մեղմասությանը, և՛ կոպտասությանը. առաջինի դեպքում քննության առնվող կամ հիշատակվող ոչ հաճելի թեմաները (էթնիկ, կրոնական, սեռական փոքրամասնություններ, հիվանդություններ և այլն) կարող են հաղթահարվել մեղմասութային կիրառություններով, իսկ կոպտասության դեպքում հաղորդակցական գործառույթը (մասնավորապես քաղաքական հռետորաբանության մեջ), թեև արտաքին արտահայտչական կողմին, այնուամենայնիվ բովանդակային պլանում գրեթե անկարևոր է դառնում, քանզի մանիպուլյատիվ բնույթ է կրում, այն է՝ ուղղակի իմաստով չի բնութագրում առարկան, երևույթը, այլ գնահատում է դրանք անձին, գաղափարը, նսեմացնելու, վիրավորելու նպատակով:

Կոպտասությունը մարդկանց մտքերի վրա ազդելու հուզագգացական գործառույթ ունի (սա մասնավորապես լայնորեն կիրառվում է լրագրողների և քաղաքագետների կողմից). դա հնարավորություն է տալիս ուղղորդել լսարանին՝ ակնկալելով իրենց շահավետ տեսակետի ներագրում և տարածում:

Ի վերջո, երկուսն էլ լեզվական տաբուները հաղթահարելու միջոցներ են և բացի այս՝ կարող են մեկը մյուսով փոխարինվել. նույն համատեքստում կարող են գործածվել և՛ մեղմասությունը, և՛ կոպտասությունը. վերջինիս կիրառությունը կախված է նաև արտաքին գործոններից. դրանք են՝ խոսողի զգացական-հոգեբանական վիճակը, դաստիարակությունը, խոսքային իրադրությունը, միջավայրը և այլն: Կոպտասությունը հաղորդակցվողի ներքին կոնֆլիկտայնության ցուցիչն է, սոցիալ-հոգեբանական խնդիր, որը, փոխկապակցված լինելով սեփական շահերի, ընկալումների, նպատակների հետ, հարցի լուծումը տեսնում է բացասական վերաբերմունքի գեներացման մեջ, ինչը վերածում է անընդունելի վարքագծի, որը ներհակ է լեզվի մշակույթի հաղորդակցական նորմերին: Կոպտասությունների կուտակումը ձևավորում է ագրեսիվ պահվածք և ատելության խոսք:

Հրապարակային խոսքում, քաղաքական բանավեճերում «թքած ունենալ» արտահայտությունը գոեհիկ է և ոչ բարեկիրթ՝ «Թքած ունեմ նրա վրա», «Ո՞վ է թքում քո կրթության վրա» և այլն: Ասվածը միանշանակ չէ. այն անձի անհավասարակշիռ վիճակի, սեփական տեսակետի հանդեպ անվստահության, ուրիշի կարծիքի հանդեպ չարակամության, իրավիճակի անորոշության, նեղսրտության, հասարակական ոչ բավարար կարգավիճակի, սեփական կարողությունների ոչ համարժեք գնահատման, նաև՝ գերազանցության, խոսքային իրադրությունը սրելու բազում այլ բնութագրումներ ունի: Բովանդակային առումով չեզոք ոճին պատկանող անվանողական արժեք ունեցող որոշ բառեր գործառույթային այլ միտվածություն և իմաստային այլ զուգորդություն կարող են ունենալ, այդ թվում նաև բացասական, երգիծական՝ կլան (նախնադարում նշանակում էր տոհմային համայնք, այժմ՝ քաղաքական, նյութական և այլ շահերով իրար հետ կապված մարդկանց խումբ), կառավարող ռեժիմ, քաղաքական մուտանտ, մանկուրտ, վեցերորդ պալատի հայրենասերներ, ժեխ, զոմբի, պիցայակեր, լափամանից օգտվողներ, բիոզանգված և այլն: Վերոհիշյալ բառերի և արտահայտությունների ենթատեքստը հասկանալի է: Սրանք կոնկրետ բովանդակություն և հասարակայնորեն ճանաչելիություն ունեցող բառեր, արտահայտություններ են, որոնք վերջին ժամանակներում որոշակիորեն հաստատվել են արդի խոսույթում և բովանդակային առումով տարբերակված ձևով արտացոլվել են

հաղորդակցական ընկալումներում՝ ունենալով նաև հոգեբանական-զգացական նշանակալի ենթատեսքատ:

Ուսումնասիրողները նշում են կոպտասության երեք հիմնական գործառույթ, այն է՝ սովորական (չեզոք) բառի կամ արտահայտության՝ գոեհիկ, կոպիտ բառով փոխարինելը, դրա հետևանքով խոսքի արտահայտչականության, հուզազգացական ազդեցության մեծացում և վերջապես մանիպուլացիոն. վերջինս իրականությունը և դրա ընկալումը նենգափոխող, մարդկանց վարքագիծը կառավարելի դարձնելու միջոց է:

Ե՛վ մեղմասությունը, և՛ կոպտասությունը ընդհանրական են մի գործառույթի շրջանակում. երկուսն էլ թաքցնում են բառի, արտահայտության իրական նշանակությունը՝ ձևավորելով ցանկալի, սակայն իրականության վերացարկված պատկերացում, միայն թե, ի տարբերություն մեղմասության, կոպտասությունն ուղղորդում է որոշակի՝ տվյալ դեպքում բացասական ընկալում մեկի, մի բանի կամ ամեն ինչի նկատմամբ:

Կոպտասությունների դասակարգման հարցում որոշ վերապահումներ կան:

Արտահայտության և բովանդակության պլանում երբեմն դժվար է տարանջատել գոեհկաբանությունը, հասարակաբանությունը, ժարգոնային բառերը կոպտասությունից. դրանք կարող են համընկնել՝ լացել-զոռալ, ուտել-լափել-խժռել և այլն: Կոպտասությունները ցածր ոճ և ընդգծվող արտահայտչականություն ունեցող բառեր, արտահայտություններ են, որոնք հրապարակային, գեղարվեստական, ժողովրդախոսակցական հաղորդակցման ոլորտներում լայն կիրառություն ունեն:

Թեմատիկ բնույթով և կիրառական ոլորտների բազմազանությամբ կոպտասությունը զիջում է մեղմասությանը:

Բառային-իմաստային մեծ խումբ են կազմում մահվանը, հիվանդություններին, մարդկային արատներին առնչվող կոպտասությունները:

Այն խոսքը ավելի արտահայտչական դարձնելու միջոց է. ուժեղացնելով նրա հուզազգացական ներազդեցությունը՝ ընտրվում է հաղորդակցման նպատակին հասնելու ոչ ազնիվ՝ մանիպուլացիոն ճանապարհը: Ըստ այսմ խախտվում են բարեկրթության նորմերը, և վարքագծային առումով հաղորդակցումը անընդունելի է դառնում: Եվ ընդհանրապես, բառը և բառակապակցությունը ընկալվում են որպես կոպտասություն, եթե սովորական բնույթ ունեցող գործածությունից վերածվում են ներգործող ազդեցություն ունեցող գործոնի, այն է՝

քաղաքական խոսքը նպատակաուղղելով դեպի ոչ կառուցողական և ոչ ազդեցուն դաշտ:

Ըստ սոցիոլոգիկականների՝ այսօրվա թվային դարաշրջանում առանձնակի է ընկալվում սոցիալական գործոնով պայմանավորված լեզվի և հասարակական հաղորդակցական փոխկապակցվածությունը. վերջինս նաև բավականաչափ խնդիրներ է առաջադրում մեր օրերում: Փոխվել է հաղորդակցվողների խոսքային վարքագիծը՝ երբեմն ձեռք բերելով ատելության և թշնամանքի ընդգծված բացասական երանգներ: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից տեմպերը և համընդհանուր հասանելիությունը իրենց կնիքն են դրել փոխադարձ շփումների մշակույթի վրա, որն էլ ապահովում է ցանցային հաղորդակցման նոր որակ՝ ցավոք, ատելության խոսքի մեծ չափաբաժնով: Պատճառները տարբեր են՝ հասարակության շերտավորում, բևեռվածություն, շահերի բախում, կրթական ցածր մակարդակ, ինքնահաստատման դրսևորում և այլն: Սեփական կարծիքը մեկին պարտադրելու նպատակը մեկն է՝ վիրավորել մարդուն, ստորացնել նրա արժանապատվությունը: Հայիոյախառն խոսքը, գոեհկաբանությունները, անեծքները շփումների անձնական տիրույթից դուրս են գալիս. այն հրապարակայնացվում է, ինչը անընդունելի է: Ըստ որում, վիրավորանք է հնչում ոչ միայն տվյալ անձի, այլև այն խմբի հասցեին, որին պատկանում է տվյալ անձնավորությունը՝ անտեսելով տարիքային, կրոնական էթնիկ պատկանելությունը: Սոցիալական կայքերում անհանդուրժողականությունը՝ հաճախ հայիոյանքի տեսքով, մեծ չափերի է հասնում. սա միտումնավոր չարամտություն է: Խնդիրն ունի նաև հոգեբանական ենթատեքստ. քննարկումներում դիմացինը դիտարկվում է ոչ թե որպես մրցակից, այլ թշնամի: Ի դեպ, ագրեսիվ կեցվածքը և խոսքը ի սկզբանե ուղեկցող են եղել մարդու՝ հասարակական կյանքում և հասարակության մեջ կեցության և ինքնաճանաչման ընկալմանը. դրա մեջ գոյաբանական պայքարի նախապայման կա: Խոսքային այս համատեքստում կարևորվում են մեղմասության դերը և էթիկական նորմերի պահպանումը: Կոպտասությունը նախընտրելի արտահայտչական միջոց է դառնում, եթե նպատակը դիմացինին շփոթեցնելը, անհարմար վիճակի մեջ դնելն է: Դիրքորոշումը կոպտացնելու որոշակի դիտավորություն ունեցող կիրառություն է՝ համաձայնեցված մտադրություններին:

Իմաստային և կիրառական տեսանկյունից խոսքում տարբեր (երբեմն՝ հակադիր) գործառույթներ ունեցող արտահայտչական այս միջոցները, ըստ էության, գործնական առումով գիտակցական ընտրությամբ պայմանավորված լեզվաոճական միավորներ են՝

իրականության և իրողությունների ընկալման վերջարդյունք ապահովելուն նպատակաուղղված մտայնությամբ:

Որպես ամփոփում նկատենք, որ ոճական արտահայտչական այս միջոցները որոշակիորեն արտացոլում են տվյալ ժողովրդի պատմական-մշակութային զարգացման ընթացքը և առանձնահատկությունները, որոնք միշտ չէ, որ կարող են համընկնել կամ ընկալելի լինել այլ լեզվակիրների միջավայրում: Դրանք կրում են ժողովրդի էթնիկ նույնականության դրոշմը և հիմնավորապես մտել ու տարածվել են լեզվական-հաղորդակցական մակարդակներում:

Երկու դեպքում էլ խոսքի արտահայտչականությունը կապված է բովանդակության կամ հասցեատիրոջ հանդեպ վերաբերմունքի ցուցադրականության հետ. միայն մեղմասության կիրառությամբ առարկան, իրականությունը, մարդկային գործունեության և փոխհարաբերությունների ոլորտն է (բնականաբար այն վերաբերում է որոշակի թեմաների և բնագավառների) հնարավորինս պահպանում «չեզոքությունը», իսկ կոպտասության պարագայում արտահայտվելու շարժառիթը կամ մտայնությունը ձևավորում և արտահայտում է ընդգծված բացասական սուբյեկտիվ գնահատական՝ հուզազգացական տարբեր որակումներով: Տվյալ երևույթների համադրումը, ավելի հաճախ՝ հակադրումը քննության բազմազանության և յուրահատկությունների բացահայտման հնարավորություն է ստեղծում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Աղայան Է. (1976), Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, „Հայաստան” հրատարակչություն, 929 էջ:
Aghayan E'. (1976), Ardi hayereni bacatrakan bar'aran, Erevan, „Hayastan” hratarakchownt'yown, 929 e'j: (In Armenian)
2. Աղայան Է. (1967), Լեզվաբանության ներածություն, Երևան, „Միտք” հրատարակչություն, 638 էջ:
Aghayan E'. (1967), Lezvabanowt'yan nerac'owt'yown, Erevan, „Mitq” hratarakchownt'yown, 638 e'j:
3. Եզեկյան Լ. (2003), Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 375 էջ:
Ezekyan L. (2003), Hayoc lezvi otwagitowt'yown, Erevan, Erevani hamalsarani hratarakchownt'yown, 375 e'j:
4. Խլղաթյան Ֆ. (2000), Ոճաբանական բառարան, Երևան, „Զանգակ” հրատարակչություն, 188 էջ:

- Xlghat'yan F. (2000), Otwabanakan bar'aran, Erevan, „Zangak” hratarakchownt'yown, 188 e'j:
5. Պողոսյան Պ. (1990), Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, գիրք I, 424 էջ:
Poghosyan P. (1990), Xosqi mshakowyt'i ev otwagitowt'yan himownqner, Erevan, Erevani hamalsarani hratarakchownt'yown, girq I, 424 e'j:
 6. Սուքիասյան Ա. (2003), Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1237 էջ:
Sowqiasyan A. (2003), Hayoc lezvi homanishneri bacatrakan bar'aran, Erevan, Erevani hamalsarani hratarakchownt'yown, 1237 e'j:
 7. Ավետիսյան Յ. (2015), Խոսքի արտահայտչականություն. մեղմասություն և փոխարկում, Երևան, «Բանբեր» Երևանի համալսարանի հրատարակչություն, №1 (16), էջ 67-75:
Avetisyan Y. (2015), Xosqi artahaytchakanowt'yown. meghmasowt'yown ev p'oxarkowm, Erevan, «Banber» Erevani hamalsarani hratarakchownt'yown, №1 (16), e'j 67-75:
 8. Ахманова О. (1966), Словарь лингвистических терминов, М., 669 с.
Ahmanova O. (1966), Slovar' lingvisticheskikh terminov, M., 669 s. (In Russian)
 9. Зверева Е. (2008), Основы культуры речи, М., 219 с.
Zvereva E. (2008), Osnovy kul'tury rechi, M., 219 s. (In Russian)
 10. <https://fundamental-research.ru/ru/article/view?id=36992> (Դիտված՝ 21.08.2023)
 11. <https://avtoram.com/evfemizm/> (Դիտված՝ 18.09.2023)
 12. <https://moluch.ru/archive/361/80706/> (Դիտված՝ 20.11.2023)
 13. https://dzen.ru/a/YLhk2c4gW2ZfG_DF (Դիտված՝ 10.01.2024)

СУСАННА ГАБРИЕЛЯН - ЭВФЕМИЗМЫ И ДИСФЕМИЗМЫ: СРЕДСТВА ВЫРАЗИТЕЛЬНОСТИ РЕЧИ

Ключевые слова: эвфемизмы, дисфемизмы, эмоциональная выразительность, функция, средства и цели выразительности, сферы употребления

В рамках данной статьи рассматриваются эвфемизмы (euphemism) и дисфемизмы (dysphemism). Цель исследования- выявление языковых и стилистических особенностей упомянутых стилистических фигур, а также частотности их употребления, тематического разнообразия, функций в той или иной сфере. Данные языковые единицы исследуются в

конкретной лингвосоциальной среде, в диапазоне употребления в качестве единиц выражения вежливости или, наоборот, невежливости, в аспекте уместности или неуместности.

Практическая и актуальная значимость данных явлений обуславливает методы исследования, среди которых – сопоставительный, аналитический, описательный. Особое значение имеет то, что вышеуказанные единицы не предполагают стилистических приемов замены того или иного слова либо фразы другими элементами в целях завуалирования, смягчения или, наоборот, усиления или подмены смысла сказанного (манипулятивное поведение), а являются проявлением языкового прагматизма, посредством которого может быть достигнут желаемый эффект, заключающийся в расширении истинных возможностей средств выразительности и решения определенных задач.

SUSANNA GABRIELIAN - EUPHEMISMS AND DYSPHEMISMS: THE EXPRESSIVE MEANS OF SPEECH

Keywords: *euphemism, dysphemism, expressiveness, function, expressive means and goals, fields of application*

The present article offers an in-depth exploration of two linguistic phenomena: euphemism and dysphemism among a myriad of expressive tools, aiming to shed light on their linguistic and stylistic characteristics, frequency of use, thematic diversity and functional applications. These linguistic units are studied within a specific linguistic and social context, examining their use as expressions of politeness or, conversely, impoliteness, and their appropriateness or inappropriateness."

Employing a blend of comparative, analytical, and descriptive methods, this study challenges the conventional perception of euphemism and dysphemism solely as veils or manipulative tools. Instead, it highlights their essence as manifestations of linguistic pragmatism. In this light, they are not seen merely as tools masking or substituting one word or phrase for another in a manipulative manner. Rather, they emerge as integral elements that play an instrumental role in raising the emotional and expressive overtones of speech, ultimately contributing to the achievement of communicative goals.

Ներկայացվել է՝ 26.02.2024 թ.
Գրախոսվել է՝ 06.05.2024 թ.

**ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵՁՈՒՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ.
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ
ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Համառոտագիր

V դարի հայ պատմագրության մեջ գործածվել են իրանական երկու լեզուների հայակազմ անուններ (**պարսկերէն**, **պարթեարէն**), փոխառյալ մի լեզվանուն էլ (**Ֆարսի**)՝ միջին հայերենում: Լեզվաբանության զարգացմանը զուգընթաց XX դարում և մեր օրերում նույնպես կազմվել են իրանական լեզուների և բարբառների մի քանի տասնյակ հայերեն անուններ, որոնք հաճախ ունենում են տարատեսակ տարբերակներ՝ ուղղագրական-հնչյունական, բառային, բառակազմական, կառուցվածքային:

Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել իրանական լեզուների հայերեն անունների ամբողջական պատկերը, լեզվանունների կիրառության ընթացքը հայերենի զարգացման ամբողջ ընթացքում, ներկայիս միտումները:

Հանգամանորեն հետազոտվում են հայերենի իրանական բոլոր լեզվանունները (պամիրյանները առանձին ուսումնասիրության նյութ են դարձել), բացահայտվում են դրանց բոլոր տարբերակները, ներկայացվում է լեզվանունների բառարանագրման պատմությունը, կատարվում են լեզվանունների տառադարձման և գործածության մի շարք ճշգրտումներ, արվում են կանոնակարգման առաջարկություններ: «Իրանական լեզվանունների» տարբերակայնության նվազեցումը կնպաստի հայերեն գիտական խոսքի ճշտությանը, միասնականացման հաստատմանը:

Հիմնաբառեր՝ իրանական լեզուներ, հայերեն լեզվանուններ, բարբառանուն, պարսկերէն, պարթեարէն, լեզվանունների տարբերակայնություն, ուղղագրական-հնչյունական տարբերակ, բառային տարբերակ, բառակազմական տարբերակ, կանոնարկում, լեզվանունների միասնականացում, բառարանագրական մշակում

Ներածություն

Իրանական լեզուները պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքին: Այդ լեզուները գործառում են մի շարք երկրներում՝ Իրան, Աֆղանստան, Տաջիկստան, Ռուսաստան, Ադրբեջան, Թուրքիա, Իրաք, Սիրիա, մասամբ նաև Հայաստան և այլն: Մի քանիսում դրանք պետական-պաշտոնական լեզվի կարգավիճակ ունեն:

Իրանական լեզուները ժամանակագրական տեսանկյունից ընդունված է դասակարգել երեք փուլի՝ հին, միջին և նոր, և աշխարհագրորեն՝ երկու մասի՝ արևմտյան և արևելյան:

Հայերենը և իրանական լեզուները հազարամյա առնչությունների մեջ են, հայերենն ունի մեծաթիվ իրանական փոխառություններ, կան նաև հայերեն բառեր, որոնք անցել են իրանական լեզուներին:

Բնական է, որ հայերեն գիտական խոսքում վաղուց ի վեր կազմվել են իրանական լեզուներ անվանող բառեր՝ լեզվանուններ: Նշելի է այն փաստը, որ իրանական լեզուներից երկուսի հայերեն անունները վկայվել են V դարի հայ մատենագրության մեջ (**պարսկերէն**, **պարթեւարէն**) (Գյուրջինյան, 2023, էջ 102-139):

Իրանական որոշ լեզուներ լավ ուսումնասիրված չեն, հստակ սահմանազատված չեն լեզուների և բարբառների սահմանները, ուստի և լեզվանուն գիտաբառով կարող է որևէ բարբառ անվանվել, որ նշանակում է, թե իրականում գործ ունենք բարբառանվան հետ (մի շարք դեպքերում էլ **-երեն** ածանցով հենց բարբառանուններ են կազմվել):

Իրանական լեզուների հայերեն շատ անուններ ունեն տարատեսակ տարբերակներ (ուղղագրական-հնչյունական, բառային, բառակազմական), որ մասամբ նկատվում է ռուսերենում և եվրոպական լեզուներում նույնպես:

Հայերեն գիտական (հիմնականում ընդհանուր լեզվաբանական, հայերենագիտական, իրանագիտական) գրականության մեջ, բուհական դասագրքերում գործածված և բառարաններում արձանագրված իրանական լեզուների և բարբառների անունները խայտաբղետ պատկեր են ներկայացնում. հայակազմ լեզվանունների և բարբառանունների կողքին գործածվում են լեզվանունների փոխառյալ տարբերակներ, կիրառվում են այլազան տարբերակներ:

Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել իրանական լեզուների հայերեն անունների գործառության ամբողջական պատկերը հայոց լեզվի զարգացման ամբողջ ընթացքում, ներկայիս միտումները, նպաստել զուգաձևություն և տարբերակայնություն ունեցող լեզվանունների և բարբառանունների կանոնարկմանը և գիտական

խոսքում միօրինակության հաստատմանը, իրանական լեզուների անունների գիտական ճշտված անվանացանկի ստեղծմանը:

Քննենք հայերենում գործածվող իրանական լեզուների անունները՝ սկսելով ոսկեդարյան **պարսկերեն**-ից, որը իրանական խմբի առաջատար լեզուն է: Պամիրյան լեզուները, որոնք ավելի շատ աշխարհագրական հատկանիշով են խմբավորվել, ուսումնասիրել ենք առանձին:

ՊԱՐՍԿԵՐԵՆ

Պարսկերենի պատմությունը բաժանվում է երեք շրջանի՝ ա) հին պարսկերեն (ավանդվել է մ.թ.ա. VI դարից), որով գրված են քրեմենյան թագավորների սեպագիր արձանագրությունները, բ) միջին պարսկերեն կամ պահլավերեն, որը Սասանյանների և Պարթևների շրջանի լեզուն է, գ) նոր պարսկերեն, որը զարգանում է արաբական արշավանքների դարաշրջանից (VII դարից): Սա պարսիկների գրական լեզուն է դառնում IX դարից և իբրև այդպիսին է մնում մեր օրերում նույնպես:

Պարսկերենը բազմակենտրոն լեզու է, տրոհված երեք մերձավոր ցեղակից լեզուների, որոնք պետական-պաշտոնական լեզվի կարգավիճակ ունեն երեք երկրներում՝ Իրանում, Տաջիկստանում և Աֆղանստանում, որոնցից յուրաքանչյուրն ինքնուրույն է նորմավորում-կանոնարկում իր պետության մեջ կիրառվող լեզվի իրողությունները:

Բուն պարսկերենը Իրանի Իսլամական Հանրապետության պետական լեզուն է, պարսիկների՝ Իրանի բնակչության 58 տոկոսի մայրենի լեզուն (խոսողների թիվը՝ 40 միլիոնից ավելի), երկրի ազգամիջյան հաղորդակցության և գրականության ու կրթության լեզուն:

Պարսկերեն լեզվանունը կազմվել է **պարսիկ** ածանցավոր հիմքից (պարս+իկ) և **-երեն** «լեզու» նշանակող ածանցից, **պարսիկ-ի ի**-ն սղվել է:

Պարսկերենին հայերը ծանոթ են եղել վաղագույն ժամանակներից: Լեզվանունը գործածվել է V դարի հայ ինքնուրույն մատենագրության մեջ: Այսպես. «Հեզաբար կարդաց յանուանէ զեպիսկոպոսն, քանզի քաջ իսկ գիտէր **պարսկերէն**» (Եղիշե, 1989, էջ 298), «Հրաման տային երանելոյն Սահակայ եպիսկոպոսին՝ թարգմանել, քանզի սուրբն եպիսկոպոսն միայն գիտէր **պարսկերէն**, եւ այլ ոք ի սրբոցն ոչ գիտէր» (Ղազար Փարպեցի, 1904, էջ 97): Հանդիպում է նաև **լեզու** բառի հարադրությամբ. «Անարգանս եւս դներ թշնամանաց, ասելով ի **պարսկերէն լեզու**՝ թէ» (Փավստոս Բուզանդ, 1883, էջ 106):

Նույն դարում **պարսկերէն** բառույթին զուգահեռ գործածվել է համարժեք **պարսկական լեզու** բաղադրյալ անունը. «Ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ **պարսկական լեզուին** Դուին կոչի» (Մովսես Խորենացի, 1991, էջ 265): Ի դեպ, Քերթոզահոր «Պատմութիւն Հայոց»

երկի համաբարբառում **պարսկական լեզու**-ն բաղադրյալ անուն չի ըմբռնվել, այնինչ **հայկական լեզու**-ն ներկայացված է որպես գլխաբառ, թեև նույնարժեք են (Հայկական համաբարբառ, 1976, էջ 187):

Բնականաբար, V դարում գործածված **պարսկերէն** լեզվանունը զետեղվել է գրաբարի բառարաններում: Մակբայի արժեքով և Եղիշեի վերոհիշյալ բնագրային օրինակով լեզվանունը կա Նոր հայկազյան բառարանում (Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան, 1837, էջ 640), ինչպես նաև գրաբարի մյուս բառարաններում (Խուդաբաշեանց, 1838, էջ 333, Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի, 1865, էջ 693, Ղազարյան, 2000, էջ 410):

Պարսկերեն-ը արդի հայերենի համագործածական բառերից է, և բնական է, որ արձանագրվել է աշխարհաբարի միալեզվյան և թարգմանական տարատեսակ բառարաններում: Տեղ է գտել նաև հանգաբառարանում, ի թիվս իրանական ուրիշ լեզուների (**աֆղաներեն, բելուջերեն, զենդերեն, թաթերեն, պահլավերեն, տաջիկերեն, քրդերեն**) (Հայոց լեզվի հանգաբառարան, 1976, էջ 353):

ՊԱՐՍԻԿ ԼԵԶՈՒ

VII դարի երկրորդ կեսի պատմիչ Հովհան Մամիկոնյանը գործածել է **պարսիկ լեզու** բաղադրյալ անվանումը. «Եւ մտեալ զաւրացն ի տունսն՝ զորս եւ գտին **Պարսիկս** (կամ **Պարսիկ**) **լեզուաւ**՝ սատակէին եւ զգլուխսն կտրէին» («Մատենագիրք հայոց», 2005, էջ 1090): Արևելահայերեն թարգմանության (վերածման) մեջ այս բառակապակցությունը դարձել է **պարսից լեզու**. «Զինվորները գիշերով մտնում էին տները. որ տանը **պարսից լեզվով** խոսող էին գտնում՝ սպանում էին անխտիր» (Հովհան Մամիկոնյան, 1980, էջ 90), քանի որ **պարսիկ լեզու**-ն ժամանակակից ընթերցողին անսովոր (նույնիսկ սխալ) կարող էր թվալ:

Պարսիկ լեզու հարադրությունը համեմատելի է V դարի հայերենում վկայված **հայ լեզու** (Մովսես Խորենացի, Փավստոս Բուզանդ), **յոյն լեզու** (Եզնիկ Կողբացի, Մովսես Խորենացի), **ասորի լեզու** (Ղազար Փարպեցի), **հելլեն լեզու** (Մովսես Խորենացի), **հռոմ լեզու** (Եվսեբիոս Կեսարացի) կապակցություններին, որոնք կազմվել են «ժողովրդանուն (ուղիղ ձևով)+**լեզու**» կաղապարով (Գյուրջինյան, 2023, էջ 109-111):

Իսիստ հազվադեպ է: Ահա մեկ օրինակ XIX դարից. «Մանկական օրերից վարժուելով հելլենական դպրութեան և խելամուտ լինելով **ասորի** և **պարսիկ լեզուներին**՝ աշակերտեց Մեծ Ներսէսին» («Պսակ» (Երևան), 15.10.1882):

ՊԱՐՍԻՑ ԼԵՁՈՒ

Պարսկերեն համագործածական լեզվանունից բացի հայերենում գործածվում է նաև **պարսից լեզու** բաղադրյալ անունը: Սրա առաջին բաղադրիչը **պարս** «պարսիկ» բառի գրաբարյան հոգնակի սեռական հոլովածն է՝ **Պարսք** > **պարսից** = **պարսիկների** (Մալխասեանց, 1945, էջ 87), որ կայունացել-քարացել է և աշխարհաբարում հանդիպում է ազատ և կայուն բառակապակցություններում՝ **Պարսից ծոց, պարսից արքա / թագավոր / շահ, պարսից թագավորություն / տերություն / պետություն, պարսից զորք** և այլն:

Պարսից լեզու լեզվանվանական բառակապակցությունը հաճախադեպ չէ: Հանդիպում է ինչպես հայ դասական հեղինակների ստեղծագործություններում, այնպես էլ ժամանակակից մամուլի լեզվում: Այսպես. «Սամվել» պատմավեպում՝ «Ամեն տեղ ոչնչացնում էք հայոց գրքերը, որպեսզի **պարսից լեզու** և պարսից դպրություն տարածեք Հայաստանում» (Րաֆֆի, 1986, էջ 452), «Պապ թագավոր» պատմավեպում՝ «Այս երկրի կառավարչին, որ արմենների և **պարսից լեզվով** կոչված է բղեշխ, ստրատելատ Մուշեղը ենթարկել է մահապատժի» (Զորյան, 1983, էջ 356), «Գրողների միությունում տեղի ունեցավ «**Պարսից լեզուն** եւ մշակույթը Հայաստանում» թեմայով համաժողով» («Առավոտ», 02.12.2004), «Այսօր Հայաստանը **պարսից լեզվի** ուսուցման առումով ԱՊՀ երկրների շարքում Տաջիկստանից հետո գտնվում է առաջին տեղում» («Ազգ», 14.12.2005) և այլն: Բաղադրյալ լեզվանունը կարող ենք տեսնել նաև գիտական խոսքում, ինչպես՝ «Դժվար է գերազանահատել **պարսից լեզվի** ուսուցման կարևորությունն ու անհրաժեշտությունը» (Նալբանդյան, 1987, էջ 5), անգամ բուհական ուսումնական ձեռնարկների վերնագրում՝ «**Պարսից լեզվի** քերականություն» (Նալբանդյան, 1980, Փարսադանյան, 2012): Կառուցվածքով համեմատելի է **հայոց լեզու, վրաց լեզու, ռուսաց լեզու** լեզվանուններին:

Պարսից լեզու-ն համընդհանուր ընդունելության արժանացած **պարսկերեն**-ի սակավադեպ մի տարբերակն ընդամենը, որը բնորոշ է գերազանցապես գրավոր խոսքին: Սակայն պետք է նկատել, որ գիտական աշխատություններում երբևէ չի գետեղվել լեզվանունների ցանկերում:

Պարսից լեզու կապակցությունը չի գործածվել հայերենի բացատրական բառարանների **պարսկերեն** բառահոդվածում որպես լեզվանվան բացատրության մի մաս կամ առանձին տրվող կայուն բառակապակցություն (միայն ակադեմիական բացատրական բառարանում կա այսպիսի բացատրություն՝ «պարսից ժողովրդի լեզուն»

(Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1980, էջ 194)): Բառարաններում **պարսից**-ն էլ գլխաբառ չի դարձել այն դեպքում, երբ ժամանակակից հայերենում այն քարացած ձև է և բառային արժեք է ձեռք բերել, ինչպես **հայոց**-ը («հայկական», «հայերի» իմաստներով) (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1974, էջ 284, Աղայան, 1976, էջ 812), **ռուսաց**-ը և **վրաց**-ը (Աղայան, 1976, էջ 1266, 1401, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1980, էջ 427. այստեղ **ռուսաց**-ը չկա):

ՖԱՐՍԻ /ՖԱՐՍԵՐԵՆ

Միջին հայերենում ոսկեդարյան **պարսկերեն** լեզվանունից բացի գործածվել է նաև **Ֆարսի** (< պրսկ. farsi) փոխառյալ լեզվանունը, որ նշանակում էր ոչ միայն «պարսկերեն», այլև «պարսկական» (Ղազարյան, Ավետիսյան, 2009, էջ 830): Հեղինակներն իրենց խոսքում հաճախ ցույց են տալիս այս երկու բառերի համարժեքությունը: Օրինակ՝ **«Ֆարսի լեզուն կամ պարսկերենը** աշխարհի հնագույն լեզուներից մեկն է» (Բայբուրդյան, 2001, էջ 6):

Ֆարսի-ն առանձնաբար և **լեզու** բառի հարադրությամբ գործածվել է հայ գեղարվեստական գրականության լեզվում: Օրինակ՝ «Հացի խնդիր» վեպում. «Մեր գործակալը հայերէն այնքան գիտէ, որքան ես **Ֆարսի լեզուն**» (Պոռոշյան, 1880, էջ 230):

Բանաստեղծական խոսքում **Ֆարսի** լեզվանվան գործածությունը պայմանավորված է մասնավորապես կոլորիտ ստեղծելու նպատակադրումով: Իհարկե, դեր են խաղացել նաև հանգավորումը, վանկերի քանակը և այլն: Այսպես, օրինակ.

Հավիտյան պիտի խոսի ու հոսի

Նունուֆար լեզուն՝ լեզուն էլ **Ֆարսի** («Բիբլիականի երկրորդ արարչականը») (Շիրազ, 1982, էջ 26):

Հանդիպում է գեղարվեստական խոսքի թարգմանություններում ևս: Օրինակ՝

Այն մեծաշնորհ ու քանքարավոր մարդն է հասկանում խոսքը Հաֆեզի,

Որ **Ֆարսի լեզվի** նուրբ ու գեղեցիկ հյուսվածքի հանուր գաղտնիքը գիտի (Հաֆեզ, 2023, էջ 128):

Գործածվում է նաև գիտական և գիտատեղեկատվական նյութերում: Մասնավորապես գործածված ենք տեսնում հայկական բազմահատորյա հանրագիտարանում. «IX-X դդ. **Ֆարսի** և արաբ. լեզուներով գրվել են բազմաթիվ պատմ. գործեր»՝ «Բուխարայի

պատմությունը», 957-ին գրված «Թագավորների պատմությունը», որը համարվում է Ֆիրդուսու «Շահնամե»ի աղբյուրներից)» (Հայկական սովետական հանրագիտարան, 1985, էջ 584), «Միջին պարսկական այլ երկերի և դրանց արաբ. թարգմանությունների հիման վրա X դ. **Ֆարսի** լեզվով կազմվել են «Շահնամեներ»» (Հայկական սովետական հանրագիտարան, 1979, էջ 92), «IX դ. Միջին Ասիայում և Խորասանում արաբալեզու գրականության կողքին զարգացել է **Ֆարսի լեզվով** պոեզիան» և «X դ. 2-րդ կեսից **Ֆարսին** գրական լեզու է դարձել նաև Իրանի արևմուտքում» (Հայկական սովետական հանրագիտարան, 1978, էջ 447), «**Ֆարսի** լեզվով առաջին հայտնի արձակ ստեղծագործության՝ («Նաբուս-Նամե») բարոյա-խրատական ժողովածուի հեղինակը» (Հայկական սովետական հանրագիտարան, 1986, էջ 546):

Ֆարսի-ն գլխաբառ է դարձել «Լեզվաբանական բառարանում» (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 315): **Ֆարսի**-ի կողքին՝ փակագծերում, տրվել է **դարի** մասնավորումը, ապա հղում է արվում **պարսկերեն** բառահոդվածին, որտեղ ասվում է, որ նոր «գրական լեզուն կոչվում է **Ֆարսի (դարի), ֆարսերեն**» (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 260): Այսինքն՝ **Ֆարսի**-ն և **դարի**-ն համարժեքներ են. **ֆարսերեն**-ը **Ֆարսի**-ի հայերենացված տարբերակն է:

Մեծ աշուղ Սայաթ-Նովան (XVIII դար) գրել է. «Էրեսըտ՝ փարսեվար սսիմ, նման է շամս ու դամարին» («Խաղ»): **փարսեվար**-ը ծանոթագրության մեջ բացատրվում է այսպես՝ **ֆարսերեն - պարսկերեն** (Սայաթ-Նովա, 1963, էջ 51, 245):

Ֆարսերեն-ը հանդիպում է հատկապես գեղարվեստական խոսքում, երբ նյութը Իրանն է, Արևելքը, պարսկական մշակույթը: Օրինակներ՝ «Նա խոսում էր ընտիր **ֆարսերեն**, դերվիշի պես ազատ, փոքր-ինչ երգեցիկ առոգանությամբ», «Բարձրաստիճան անձինք ճգնում էին **ֆարսերեն** խոսել, որ մեծապատիվ հյուրը հասկանա» (Զ. Դարյան, «Սայաթ-Նովա»), «-Մի՞թե նա պարսիկ է,- զարմացավ Այծեմնիկը, լսելով, թե ինչպես սովետական սպան **ֆարսերեն** է խոսում», «Ինչո՞ւ **ֆարսերեն**, կարծում եք ասածներս պետք է փոխվե՞ն դրանից» (Գ. Սևունց, «Թեհրան») (բնագրային օրինակները՝ ըստ Արևելահայերենի ազգային կորպուսի՝ ԱՐԵՎԱԿ-ի (www.eanc.net)) և այլն:

Պատահում է նաև գիտական խոսքում: Ուշագրավ է այս օրինակը, որտեղ **ֆարսերեն**-ը հաջորդում է **Ֆարսի լեզու** բաղադրյալ անվանը. «Գրականության զարգացմանը զգալիորեն նպաստել են նաև **Ֆարսի լեզվով** գրված ստեղծագործությունները: XX դ. մեծ ճանաչում է ստացել աֆղանական լուսավորիչ Մահմուդ Թարգին (1866-1934), որը գրել է **ֆարսերեն**» (Հայկական սովետական հանրագիտարան, 1975, էջ 174):

Կա **Ֆարսի**-ի հնչյունական տարբերակը՝ **փարսի**: Օրինակ՝ «IX դարի վերջին Իրանի հյուսիս-արևելյան նահանգներում երևան են եկել առաջին գրական ստեղծագործությունները վաղ պարսկերեն լեզվով, որն այն ժամանակ կոչվել է **փարսի** (կամ Ֆարսի), փարսի-յե (Ֆարսի-յե) դարի» (Բայբուրդյան, 2001, էջ 7):

Հայակազմ լեզվանունն ունի հնչյունական տարբերակ՝ **փարսերեն** (գրադաշտական պարսիկներին կոչվում են «փարսի») (Աղայան, 1976, էջ 1514): Օրինակ հայ դասական գրականությունից՝ Ղ. Աղայանի «Արություն և Մանվել» վեպից. «Մեկ ինձ ասող լինի, թե դու ի՞նչ տեղից գիտես, ինչի՞ ես խելքիդ գոռ տալիս, կարելի է թե **փարսերեն** էլ է այդպես. մի՞թե քիչ խաղեր կան **փարսերեն**...» (Աղայան, 1962, էջ 137):

Նաև այժմյան հայերեն գիտական խոսքում. ««Կովկասյան պարսկերեն» եզրով է նշվում նաև Շաբրանի շրջանում գտնվող Քիլվար և Շամախիի Մադրասա գյուղերի հայ բնակիչների լեզուն, ընդ որում, Մադրասայի բնակիչներն այն անվանում են **փարսերեն**» (Տոնոյան, 2015, էջ 3): Ավելորդ չենք համարում նշել, որ **փարսերեն**-ի գոյությունը պայմանավորված է նաև նրանով, որ հայերենի որոշ բարբառներում (Ղարաբաղ, Թիֆլիս) **Ֆ** հնչյուն չունեն:

Թեպետ փոխառյալ **Ֆարսի** և **փարսի** տարբերակային լեզվանունները գործածվել են (թեև քիչ, այսօր էլ շարունակում են գործածվել) գեղարվեստական և գիտական խոսքում, բայց և այնպես տեղ չեն գտել ժամանակակից հայերենի բացատրական և այլ բառարաններում: Նույնը նաև **Ֆարսերեն** և **փարսերեն** տարբերակները:

ԴԱՐԻ / ԴԱՐԻԵՐԵՆ

Դարի փոխառյալ լեզվանունը գործածվում է Աֆղանստանում կիրառվող պարսկերենի համար (**դարի** նշանակում է «արքունի»): Օտար լեզուներում գործածվում են լեզվանվան այսպիսի տարբերակներ՝ ռուս. дари, фарси-кабули, афганско-персидский язык, անգլ. Dari language, Dari Persian language: Հմմտ. «Աֆղանստանն ունի երկու պետական լեզու՝ փուշթու (աֆղաներեն) և դարի (ֆարսի-քաբուլի)» (Հայկական սովետական հանրագիտարան, 1975, էջ 171):

Հաճախ գործածվում է մասնավորող-պարզաբանող որևէ լեզվանվան կամ կապակցության հետ: Ահա այդպիսի գործածության մեկ օրինակ հայկական հանրագիտարանից. «Աֆղանները պահպանում են **դարի** (**Ֆարսի**) լեզուն, իսկ 1936 թվականից դարիին զուգահեռ պետական լեզու է նաև փուշթուն» (Հայկական սովետական հանրագիտարան, 1975, էջ 170): «Լեզվաբանական բառարանում»

հակառակն է. **դարի**-ն, ինչպես տեսանք վերևում, գործածվել է որպես **Ֆարսի** լեզվանունը պարզաբանող լեզվանուն:

Վերջին ժամանակներս փոխառյալ **դարի**-ից բացի համացանցում հազվադեպ գործածվում է հայակազմ **դարիերեն** տարբերակը: Օրինակ՝ «Կայքում ներկայացված նյութերը կարելի է ընթերցել շվեդերեն, արաբերեն, սոմալիերեն եւ **դարիերեն**» (<https://news.am/arm/news/519835.html> (մուտք՝ 16.01.2024)), «Ինչ վերաբերում է պարսկերենին ու **դարիերենին**, պետք է նշել, որ դրանք տարբերվում են այնպես, ինչպես ամերիկյան անգլերենը բրիտանականից» (<https://blognews.am/arm/news/323574/null> (մուտք՝ 16.01.2024)):

Չնայած գործածությանը՝ հայերեն բառարաններում, ինչպես և «Լեզվաբանական բառարանում» **դարի**-ն, բնականաբար **դարիերեն**-ը նույնպես, գլխաբառ չեն դարձել:

ԱՎԵՍՏԵՐԵՆ (ԱՎԵՍՏԱՅԻ ԼԵՉՈՒ)

Սա գրադաշտական կրոնի սուրբ գրքի՝ Ավեստայի լեզուն է, որը դժվար է որոշակիորեն սահմանազատել ժամանակային և տարածական տեսանկյունից (որոշ գիտնականներ Ավեստայի հայրենիքը համարում էին Մարաստանը, ուստի նրա լեզուն՝ մարերենը, ուրիշները՝ Բակտրիան, մյունները՝ Խորեզմը, ըստ այդմ էլ՝ ավեստերենը Պարսկաստանի հյուսիսարևելյան լեզուներից է) (Նալբանդյան, 1960, էջ 18):

Մինչև վերջին ժամանակները գործածվում էր հիմնականում **Ավեստայի լեզու** բաղադրյալ անվանումը: Հարկ է նկատել, որ լեզվանունն ունի գրության երկձևություն՝ **ավեստայի լեզու** (փոքրատառով), **Ավեստայի լեզու** (մեծատառով): Հմմտ. «Հնում զենդերեն ասելով հասկանում էին **ավեստայի լեզուն**», «1860-ական թվականներին հրատարակվում են **ավեստայի լեզվին** նվիրված մի շարք աշխատություններ» (Ջահուկյան, 1960, էջ 442) և «Հին պարսկերենին զուգահեռ բարբառ է համարվել **Ավեստայի լեզուն**, որ սխալ կերպով կոչվել է երբեմն զենդերեն» (Աղայան, 1967, էջ 573), «Իրանյան լեզուներից Ավեստայի լեզվում հանդիպում ենք gaoz՝ «ծածկել, թաքցնել»» (Մկրտչյան, 2004, էջ 124): Ավելի շատ հանդիպում է առաջինը. **Ավեստա** / «**Ավեստա**» հատուկ անունից փոխանցում է կատարվել հասարակ անվան: Իսկ չակերտներով «**Ավեստայի**» **լեզու** կապակցությունը լեզվանվանական նշանակություն չունի, այլ հատկացուցիչ-հատկացյալի կապակցություն է, այսինքն՝ «Ավեստա» տեքստերի հավաքածուի լեզու: Օրինակ՝ ««Ջենդ»» անվամբ նշանակում են «Ավեստայի» ուշ շրջանի մեկնությունները, որոնց լեզուն տարբերվում է «**Ավեստայի**» լեզվից (Ջահուկյան, 1960, էջ 442):

Այժմ ավելի շատ հանդիպում է **ավեստերեն** բառույթով արտահայտված լեզվանունը, որը նախ կարճ է, ապա և **-երեն** ածանցի միջոցով լեզվանվան իմաստ է հաղորդվում: Օրինակ՝ «Բարբառային որոշ տարբերություններ հանդես են եկել նաև ավելի վաղ՝ հին կոչված շրջանում՝ արտահայտվելով մի կողմից՝ մեղերենի (մարերենի) ու մասամբ **ավեստերենի** և մյուս կողմից՝ հին պարսկերենի տարբերությունների մեջ» (Զահուկյան, 1987, էջ 491):

Այս լեզուն սխալմամբ բավական ժամանակ կոչել են **զենդերեն**: Որտեղի՞ց է այս տարբերակայնությունը: Երբ Ավեստայի հնագույն օրհներգությունները անհասկանալի դարձան, դրանք մեկնվեցին պահլավերենով. «մեկնություն» = պահլավերեն **զենդ** կամ **զանդ**: Այստեղից էլ՝ **զենդերեն** լեզվանունը: Ավեստայի լեզվի սխալ անվանումը սկիզբ է առել և տարածվել ֆրանսիացի գիտնական Ա. Դյուպերրոնից, որը Ավեստան կոչեց «Ջենդավեստա», իսկ նրա լեզուն՝ **զենդերեն** (Նալբանդյան, 1960, էջ 19-20): Սա տասնամյակներ շարունակ գիտական շրջանառության մեջ էր: Օրինակ՝ «Կան մի խումբ բառեր, որոնք գտնվում են միայն հայերենի և **զենդերենի** մեջ» (Աճառյան, 1940, էջ 316):

Ավեստայի պահլավական մեկնությունը հետագայում կրկին մեկնեցին արդեն դարի լեզվով, որը կոչեցին **Փազենդ** (pa<pat, որը նշանակում է «կրկին, նորից») (Նալբանդյան, 1960, էջ 20) Այստեղից էլ – **երեն** ածանցով սկզբնահնչյունի փոփոխությամբ կազմվել է **պազենդերեն** լեզվանունը: Այսպես՝ «Կարելի է մինչև անգամ կազմել յուրաքանչյուր բառի պատմությունը և հին պարսկերեն, զենդերեն, Արշակունի ու Սասանյան պահլավերեն, **պազենդերեն** ու պարսկերեն ձևերի համեմատությամբ որոշել...» (Աճառյան, 1940, էջ 235):

Ջենդերեն-ն էլ իր հերթին ունեցել է բառակազմական տարբերակ՝ **զանդկերեն**, որը խիստ հազվադեպ է: Օրինակ՝ «Ցուցակը կազմված է այբբենական կարգով, համեմատությամբ նոր պարսկերեն, պահլավերեն և **զանդկերեն** ձևերի» (Աճառյան, 1940, էջ 240): «Լեզվաբանական բառարանում» **զանդկերեն**-ը ներկայացված է **զենդերեն** բառահոդվածում (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 91)՝ որպես անցյալի իրողություն:

Ավեստերեն լեզվանունը չի արձանագրվել հայերենի բացատրական ընդարձակ բառարաններում: Այն գիտական շրջանառության մեջ մտել է XX դարի կեսերից: Գ. Զահուկյանի «Լեզվաբանության պատմություն» երկհատոր աշխատության մեջ գործածվել է միայն Ավեստայի լեզու բաղադրյալ անվանումը, սակայն լեզուների ցանկում դրա կողքին փակագծերում հավելվել է ավեստերեն բառույթը (Զահուկյան, 1962, էջ 567): Իսկ «Լեզվաբանական

բառարանում» գլխաբառ է դարձել միաժամանակ երկու միավոր՝ **Ավեստայի լեզու** բաղադրյալ անվանումը և **ավեստերեն** բառը (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 31):

Ջենդերեն-ը գլխաբառ դարձել է բացատրական բառարաններում, քանի որ ժամանակին դա էր Ավեստայի լեզվի անվանումը: Ակադեմիական բառարանում **զենդերեն**-ը եռարժեք է. 1. գոյ. «միջին պարսկերենը, որով գրված են գրադաշտական գրքերը», 2. մկբ. «այդ լեզվով», 3. ած. «զենդական» (ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1969, էջ 29): Բառիմաստի մեջ պահլավերենի առկայությունը հասկանալի է, քանի որ Ավեստայի մեջ արտահայտություն են գտել թե՛ բուն ավեստերենը՝ հնագույն օրհներգերի լեզուն, և թե՛ պահլավերենը՝ թարգմանության ու կրկնակի մեկնության միջոցով:

Էդ. Աղայանի կազմած բառարանում **զենդերեն**-ը ներկայացվել է միայն գոյականի արժեքով, երկու իմաստով՝ «1. «Ավեստայի» լեզվի հին անվանումը, որ այժմ սխալ է համարվում, 2. «Ավեստայի» մեկնությունների գրքի լեզուն, որ է պահլավերեն» (Աղայան, 1976, էջ 371): Ուրիշ լեզվանունների պարագայում սովորաբար երկու կամ երեք արժեք է նշվում:

ՄԱՐԵՐԵՆ

Մարերենը հյուսիսարևմտյան իրանական լեզու է, իրանական բարձրավանդակի հյուսիսարևմտյան և Ատրպատականի հարավային մասերում՝ Ուրմիա լճից արևելք ընկած պետության՝ Մարաստանի կամ Մեդական թագավորության լեզուն: Այս լեզվից ստույգ ոչինչ ավանդված չէ, նրա մասին տեղեկությունները խիստ կցկտուր են, որոշ իրողություններ ենթադրվում են ուրիշ լեզուների տվյալների օգնությամբ:

Մարերը կամ մեդացիները սեպագիր արձանագրություններում հիշատակվում են մ.թ.ա. IX դարից սկսած: VI դ. կեսերին՝ 549 թվականին, Մարաստանը պարտվում է պարսիկների թագավոր **Կյուրոսին** և ընկնում Պարսկաստանի գերիշխանության տակ:

Մարերեն լեզվանունը կազմվել է **մար** ժողովրդանունից և **-երեն** ածանցից: XX դարի առաջին կեսին արդեն գործածության մեջ էր հայերենագիտության մեջ: Այսպես, օրինակ՝ «Որովհետև **մարերենը** չափազանց մոտ էր պարսկերենին և հենց դրա համար էլ շուտով վերացվեց Մարաստանից ու դարձավ պարսկերեն» (Աճառյան, 1940, էջ 231):

Հայերենագիտության մեջ գործածվում է այս լեզվանվան բառային տարբերակը նույնպես՝ **մեդերեն**: **Մեդերեն** տարբերակի դեպքում ընկել է **մեդացի** բառի ածանցը (< հուն. Μηδία / Մեդիա = Մարաստան), ավելացել **-երեն**-ը:

Գ. Զահուկյանը նախընտրում էր **մեղերեն**-ը: Լեզվաբանը նշում է, որ «**մեղերենը** հայերենի հետ ամենից ավելի վաղ շփման մեջ մտած իրանական լեզուներից մեկն է, ընդ որում այդ շփումը բավական երկարատև է եղել» (Զահուկյան, 1987, էջ 505-506): Կամ էլ լեզվաբանը տեքստում **մեղերեն**-ն է գործածել՝ **մարերեն**-ը նշելով փակագծերում: Այսպես. «Հարցը դժվարանում է այն փոխառությունների պատճառով, որ հին շրջանում կատարել են հին պարսկերենը **մեղերենից** (մարերենից), միջին շրջանի հարավ-արևմտյան բարբառները՝ հարավ-արևելյաններից» (Զահուկյան, 1987, էջ 491-492):

Հայ լեզվաբանական գրականության մեջ այնուամենայնիվ իշխում է **մարերեն**-ը: Օրինակներ՝ «Նշված բառերը պատկերացում են տալիս **մարերեն** լեզվի մասին» (Նալբանդյան, 1960, էջ 21), «**Մարերենի** մասին գիտությանը փաստորեն ոչինչ հայտնի չէ» և «Ի տարբերություն **մարերենի**, իրանագիտությունը հավաստի տվյալներ ունի հին պարսկերենի վերաբերյալ» (Հովհաննիսյան, 1990, էջ 63, 66), «Որոշ իրանագետ լեզվաբաններ առանձնացնում են մի խումբ բառեր, որոնք հայերենին են անցել **մարերենից**» (Մկրտչյան, 2015, էջ 25):

Լեզվաբանական գրականության մեջ գործածվում են «մարական ծագում ունեցող անուններ», «մարական փոխառություններ», «մարական շերտ» և նման այլ կապակցություններ, որոնք գրեթե չեն հանդիպում **մեղացի** և **մեղերեն** բառերի հիմքով՝ **մեղ-մեղական**:

Մարերեն-ը բառարանագրման հարուստ պատմություն չունի: Գլխաբառ է դարձել «Լեզվաբանական բառարանում» (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 212): Էդ. Աղայանի բառարանում այն տրված է երեք արժեքով, երկու իմաստով՝ գոյ. «մարերի լեզուն», ած. / մկբ. «մարերի լեզվով» (Աղայան, 1976, էջ 979):

ՍՈՂԴԵՐԵՆ

Այս լեզվանունը մյուսներից առանձնանում է բազմատարբերակայնությամբ: Այս առումով հարկ է նկատել, որ լեզվանունների տարբերակայնությունը բնորոշ է ոչ միայն հայերենին, այլև ուրիշ լեզուների: Իրանական լեզուներն անվանելու համար ռուսերենում, օրինակ, գոյություն ունեն 120 լեզվանուններ և դրանց 45 տարբերակներ (Дуличенко, 2020, էջ 13):

Հայկական բազմահատորյա բառարանում գրանցված են **սողդեր** ժողովրդանունը և նրա տարբերակը՝ **սողդացիներ** (Հայկական սովետական հանրագիտարան, 1984, էջ 496): Այս հին ժողովուրդը մ.թ.ա. I հազարամյակում ապրել է Պարսկաստանի Սողդիանիա կամ Սողդիա նահանգում (կրճատ՝ Սողդ, այժմյան Ղազախստանի և Միջին Ասիայի

տարածքում, Ջարավշան և Կաշկադարյա գետերի ավազանում): Միջին դարերում մեծ տարածում ունեցր. Կենտրոնական Ասիայի միջազգային լեզուն էր, հասնում էր մինչև Մանջուրիա և Չինաստանի սիրտը (Աճառյան, 1955, էջ 480):

Սողդերի լեզուն վկայվել է մ.թ.ա. I դ. - մ.թ. IX դ. հիմնականում կրոնական (բուդդայական, մանիքեական, քրիստոնեական) բովանդակություն ունեցող հուշարձաններով (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 275-276. այլ աղբյուրներում տարբեր դարեր են նշվում, ինչպես՝ II-VIII դարեր (Աղայան, 1967, էջ 573)): Մեռած լեզու է: Արևելաիրանական այս լեզվից՝ սողդերենից է սերել յաղնոբերենը:

Սողդ ժողովրդանվանն ավելացել է **-երեն** վերջածանցը, և կազմվել է **սողդերեն** լեզվանունը: Գործածվում է մասնագիտական գրականության մեջ, ինչպես՝ «Մինչև մ.թ. IX դ. **սողդերենը** այդ տարածքի հաղորդակցության և գրագրության հիմնական լեզուն էր» և «**Սողդերենը** գիտությանը հայտնի դարձավ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին՝ Միջին Ասիայում և Թուրքստանում կատարված հնագիտական պեղումների շնորհիվ» (Հովհաննիսյան, 1990, էջ 60):

Եթե ընդունենք, որ լեզվանվան հիմքում ընկել է **սողդացի** տարբերակը, ապա կարող ենք ասել, որ այս դեպքում էլ գործել է հայերեն լեզվանուն կազմելու ընդունված եղանակը, **-ացի** վերջածանցն ընկել է, ավելացել է **-երեն**-ը (հմմտ. **գերմանացի - գերմաներեն, իտալացի - իտալերեն, իսպանացի - իսպաներեն, ռումինացի - ռումիներեն**):

Լեզվանվան երկրորդ տարբերակը **սոգդերեն**-ն է, որը ժամանակագրական առումով ավելի վաղ է կազմվել և գործածվել գիտական խոսքում: Օրինակներ՝ «1900 թվին տեղի ունեցած գիտական արշավանքի ժամանակ երևան հանվեցին զանազան լեզուներով բնագիրներ (թոխարերեն, քուչերեն, **սոգդերեն**, պահլավերեն)» (Աճառյան, 1940, էջ 237), «**Սոգդերեն**, հին Պարսկաստանի Սոգդիանիա նահանգի լեզուն է» (Աճառյան, 1955, էջ 480): Հարկ է նկատել, որ **ց** է նաև եվրոպական լեզուներում և ռուսերենում. հմմտ. անգլ. Sogdian, ֆրանս. sogdien, գերմ. sogdische Sprache, ռուս. согдийский язык: Կասկած չկա, որ այդ ազդեցությամբ է այդպես տառադարձվել:

Երրորդ տարբերակը նախորդից տարբերվում է **ի** բաղադրիչի առկայությամբ՝ առաջացել է ռուսերենի ազդեցությամբ (հմմտ. ռուս. согдийский язык). բառակազմական հիմքի **ղ**-ի փոխարեն **գ** է՝ **սոգդիերեն**: Օրինակ՝ «Հին իրանական լեզուներից են **սոգդիերենը**, խորեզմերենը, սակերենն ու պարթևերենը» (Նալբանդյան, 1960, էջ 22), «Սոգդիերենում պահպանվել է նաև zanak «տեսակ» ածանցված ձևը» (Մկրտչյան, 2004, էջ 102): Լեզվաբանության համալսարանական

դասագրքի հին և նոր հրատարակություններում նույնպես այս տարբերակն է գործածվել (հմմտ. Աղայան, 1967, էջ 573, Աղայան, 1987, էջ 674):

Լեզվանվան չորրորդ տարբերակը ևս **ի** բաղադրիչով է՝ **սողդիերեն**, որը **սոգդիերեն**-ի «սրբագրված-մասամբ հայերենացված» (**գ/ղ**-ի առումով) տարբերակն է: Վերջերս գործածվել է լեզվաբանական ուսումնական բառարանում (Բազատրյան, 2021, էջ 402):

Հինգերորդ տարբերակը նույնպես կա: Սա նախորդների հետ բնականորեն ընդհանուր աղերսներ ունի, սակայն բնութագրվում է էական մի տարբերությամբ. կազմվել է **-արէն** ածանցով՝ **սոգդիարէն** (Աճառյան, 1971, էջ 66):

Անդրադառնանք նաև լեզվանվան տարբերակների բառարանագրմանը: **Սողդերեն** գլխաբառ է դարձել հայկական հեղինակավոր հանրագիտարանում (Հայկական սովետական հանրագիտարան, 1984, էջ 496), **սոգդերեն** տարբերակը՝ «Լեզվաբանական բառարանում» (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 275-276), **սոգդիերեն**-ը՝ հայուսերեն լեզվաբանական բառարանում և ուղղագրական ծավալուն բառարանում (Հարությունյանց, 1963, էջ 199, Բարսեղյան, 1973, էջ 840):

ԽՈՐԵՀՄԵՐԵՆ

Խորեզմը հնագույն պետություն էր Միջին Ասիայում՝ Ամուդարյա գետի ստորին ավազանում: Խորեզմերենը XIII-XIV դարերում հին Խորեզմում խոսված լեզուն է, որը հետագայում իր տեղը զիջել է թուրքերենին և պարսկերենին: Խորեզմերենից արաբալեզու սկզբնաղբյուրներում ավանդված են բազմաթիվ բառեր (նաև աղավաղված), այդ թվում՝ օրացուցային և աստղաբաշխական տերմիններ, որոշ արտահայտություններ և նախադասություններ (Նալբանդյան, 1960, էջ 37-39): Գրի հիմքում արաբական այբուբենն է: Մտնում է միջին իրանական լեզուների մեջ:

Լեզվանունը կազմվել է **խորեզմ** տեղանունից և **-երեն** ածանցից: Բառակազմական մյուս ուղին էլ է հնարավոր. **խորեզմացի** բառի ածանցն ընկել է, ավելացել է **-երեն** վերջածանցը:

խորեզմերեն լեզվանունը հայերեն գիտական գրականության մեջ գործածվել է XX դարի երկրորդ կեսից, առանց տարբերակայնության: Օրինակներ՝ «Մինչև այժմ մեզ հայտնի միջին իրանական լեզուներն են՝ միջին պարսկերենը կամ պահլավերենը, պարթևերենը և **խորեզմերենը**» (Նալբանդյան, 1960, էջ 29), «**խորեզմերեն**, Հնդեվրոպական ընտանիքի հնդ-իրանական ճյուղի մեռած իրանական

լեզու» (Աղայան, 1967, էջ 612), «**Խորեզմերեն**: Հին Խորեզմի (գրքում փոքրատառ է.- Դ.Գ.) լեզուն է» (Հովհաննիսյան, 1990, էջ 60) և այլն:

Գլխաբառ է դարձել միայն լեզվաբանական և հանրագիտական բառարաններում (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյույան, 1975, էջ 142, Հանրագիտական բառարան, 2016, էջ 1005):

ՍԱԿԵՐԵՆ

Սակերը սկյութական ցեղեր են, որոնք բնակվել են հյուսիսային մերձսևծովյան տարածքներում: Մ.թ.ա. VII դ. սկզբին հոծ զանգվածներով անցել են Կովկասյան լեռնաշղթան, հիմնականում Կասպից ծովի արևմտյան ափերով և սփռվել Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան և արևելյան, ինչպես նաև Միջին Ասիայի և Իրանի որոշ շրջաններում:

Սակերի լեզուն՝ սակերենը, պատկանում է միջին իրանական լեզուների արևելյան խմբին: Մեռած լեզու է: Արևելյան Թուրքեստանում սակերի լեզուն պահպանվել է մինչև X դարը (Հայկական սովետական հանրագիտարան, 1984, էջ 133): Հայտնաբերվել է XX դ. սկզբին չինական Թուրքեստանում, VII-X դդ. ստեղծված հուշարձաններով:

Սակերեն լեզվանվան հիմքում ընկել է **սակ** արմատական ցեղանունը: Գործածության օրինակներ՝ «Սակերեն, նույնպես երևան եկավ Թուրքանի պեղումների ժամանակ, բազմաթիվ բնագիրներով» (Աճառյան, 1955, էջ 480), «... որոշ տեղեկություններ են տալիս **սակերենի** վաղնջական վիճակի մասին» (Հովհաննիսյան, 1990, էջ 54) և այլն:

Կոչել են նաև **խոթաներեն** (Աղայան, 1967, էջ 573) և **խոթանի լեզու** (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյույան, 1975, էջ 140) խոթանում գործածվելու պատճառով: Լեզվանվան տարբերակայնության տեսանկյունից ուշագրավ է բնագրային հետևյալ օրինակը. «Մինչև այժմ մեզ հայտնի միջին իրանական լեզուներն են՝ միջին պարսկերենը կամ պահլավերենը, պարթևերենը, սոգդիերենը, **սակերենը** կամ **խոթանի լեզուն**» (Նալբանդյան, 1960, էջ 29): Բառակապակցական տարբերակը կարելի է ասել այժմ դուրս է մղվել գործածությունից:

Կա նաև **սակերեն**-ի և **խոթաներեն**-ի յուրահատուկ համադրությամբ կազմված հատվածական (մի **-երեն**-ի կրճատմամբ) բաղադրություն՝ **խոթանո-սակերեն** կամ **խոթանասակերեն**: Վերջինս էլ ունի **տ**-ով տարբերակ՝ **խոտանասակերեն**: Օրինակ՝ «**խոտանասակերեն**: Գործածվել է Տիբեթի շրջանում՝ խոտանի օազիսի իրանալեզու բնակչության կողմից» (Հովհաննիսյան, 1990, էջ 60):

Հայերենագիտության մեջ նույնացվել են սակերենը և սկյութերենը: Դա են վկայում զույգ լեզուների անունների զուգադիր գործածության այս

նմուշները. «**Սակերենը կամ սկյութերենը** իրանալեզու սակերի (սկյութների) լեզուն է» և «**Սկյութերենի (սակերենի)** ուսումնասիրությամբ զբաղվել են այնպիսի նշանավոր արևելագետներ, ինչպիսիք են Մեյեն, Բենվենիստը, Հենինգը և այլք» (Հովհաննիսյան, 1990, էջ 54), «Մեր կարծիքով աֆղաներենի (փուշտուի) հետ ընդհանուր կամ զուգահեռ բառապաշարը հայերենում հայտնվել է **սկյութերենի-սակերենի** միջոցով» (Մկրտչյան, 2015, էջ 29):

Սակերեն-ը գլխաբառ է դարձել «Լեզվաբանական բառարանում» (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյույան, 1975, էջ 267):

ՍԿՅՈՒԹԵՐԵՆ

Սկյութների (կամ սկյութացիների) լեզուն է, որը պատկանում է իրանական արևելյան խմբի հյուսիսարևելյան ենթախմբին: Մ.թ.ա. I հազարամյակի երկրորդ կեսին սկյութական բարբառները տարածվել են հյուսիսային մերձսևծովյան և մերձկասպյան ընդարձակ տարածքներում, Դանուբից մինչև Սիրդարյա (Հայկական սովետական հանրազիտարան, 1984, էջ 442): Սկյութերեն տեքստեր չեն պահպանվել, սակայն վիմագրերում և անտիկ հեղինակների գրքերում կան զգալի թվով սկյութական հատուկ անուններ, տեղանուններ, ցեղանուններ:

Սկյութերեն լեզվանունը կազմվել է **սկյութ** արմատական ցեղանունից և **-երեն** ածանցից: Եթե ընդունենք, որ բառի հիմքում ընկել է **սկյութացի** ցեղանունը (Մալխասեանց, 1945, էջ 230, թեև այստեղ ասվում է՝ «հին ժողովուրդ թուրք-թաթարական ցեղից», որ ճիշտ չէ), ապա տեղի են ունեցել բառակազմական հետևյալ քայլերը. ընկել է ցեղանվան **-ացի** ածանցը, ապա ավելացել է **-երեն** ածանցը:

Ի տարբերություն **սակերեն**-ի՝ այս լեզվանունը գրանցվել է XX դարի հայերեն ընդարձակ բացատրական բառարաններում: Էդ. Աղայանի բառարանում **սկյութերեն**-ը ներկայացվել է երեք արժեքով՝ 1. գոյ. «սկյութացիների լեզուն», 2. ած., մկբ. «սկյութացիների լեզվով» (Աղայան, 1976, էջ 1311): Ակադեմիական բացատրական բառարանում հատկանշային արժեքները տրոհված են: Այսպես՝ 1. գոյ. «սկյութների լեզուն», 2. մկբ. «սկյութների լեզվով», 3. ած. «սկյութների լեզվի» (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1980, էջ 310): Թեև այս բառարանում **սկյութ** բառից հղում է արվում **սկյութացի**-ին, սակայն, ինչպես տեսանք, լեզվանվան բացատրության մեջ գործածվել է անաձանց **սկյութ** ցեղանունը:

Լեզվանունը տեղ է գտել նաև ուրիշ բառարաններում՝ ուղղագրական (Բարսեղյան, էջ 837), լեզվաբանական (մասնագիտական) (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյույան, 1975, էջ 275), հանրագիտական

(Հանրագիտական բառարան, 2018, էջ 838), թարգմանական (Հայ-
ռուսերեն բառարան, 1987, էջ 607):

Մեռած լեզվի անվան այս չափով բառարանագրումը զարմանալի է,
քանի որ **սկյութերեն**-ը հանրածանոթ մի բառ չէ, ընդհակառակը՝ շատ-
շատերին բոլորովին անծանոթ է: ԱՐԵՎԱԿ-ում, օրինակ, այս բառը
հանդիպում է ընդամենը չորս համատեքստում (երեքը՝ հայկական
բազմահատորյա հանրագիտարանում, մեկը՝ բուհական պարբերականում
տպված գրախոսականում):

ՊԱՐԹԵԱՐԷՆ / ՊԱՐԹԵՎԵՐԵՆ

Պարթևների լեզուն պատկանել է իրանյան լեզվախմբի արևմտյան
ենթախմբերից մեկին, Պարթևատանի (Պարթևք)՝ Կասպից ծովից հարավ-
արևելք տարածված պետության լեզուն էր: Մ.թ.ա. I հազարամյակից եղել
է Իրանական բարձրավանդակում կազմավորված պետությունների
պետական և վարչական լեզուն, գործածությունից դուրս է մղվել V-VI
դարերում (հմմտ. Հայկական սովետական հանրագիտարան, 1983, էջ
200): Հին հայերենի իրանական փոխառությունները կատարվել են
հատկապես միջին պարսկերենից և պարթևերենից: Իրանագիտությունը
հիմնականում բացահայտել է այս լեզուների առանձնահատկությունները,
և դա հնարավորություն է տալիս հայերենի իրանական
փոխառությունների մեջ տարբերակելու պարթևական զուգահեռները
(Ջահուկյան, 1987, էջ 507-556):

Պարսկերեն-ի նման գործածվել է V դարի հայ ինքնուրույն
մատենագրության մեջ: Այսպես. «Գայր հասանէր ի գիւղն զոր
Բագայառիճն կոչեն ըստ **պարթևարէն լեզուին**», «գայր հասանէր ի
քաղաքագեաւղն Բագաւան, որ անուանեալ կոչի ի **պարթևարէն լեզուէն**՝
Դիցաւան» (Ագաթանգեղոս, 1909, էջ 412, 416): Ինչպես տեսնում ենք,
երկու դեպքում էլ լեզվանունը **լեզու** բառի հարադրությամբ է, որը V դարի
հայերենում սովորական է:

Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» երկում հանդիպող այս
լեզվանունն ուշագրավ է նրանով, որ միջինիրանական լեզուներից մեկի
գոյության եզակի վկայություններն են (Հովհաննիսյան, 2016, էջ 24-25):

Հայկազյան բառարանում **պարթևարէն**-ը բացատրվում է այսպես՝
«ի լեզու պարթևաց» և «պարթևական (լեզու)» (Աւետիքեան, Սիրմէլեան,
Աւգերեան, 1837, էջ 635): Ստ. Մալխասյանցի բառարանում **պարթևարէն**
գլխաբառից հետո գրված է «տե՛ս **պահլավերէն**», որն էլ բացատրվում է
«միջին պարսկերէն լեզու, որ գործ էր անվում Պարսկաստանում
Սասանյանների ժամանակ» (Մալխասեանց, 1944, էջ 40), բայց այս
բացատրությունն այժմ ճիշտ չի համարվում: Գրաբարի ձևաբանորեն

տարարժեք բառերի բառարանում լեզվանունը տրվել է մակբայի և ածականի արժեքներով, «պահլավերեն, պահլավական լեզվով» իմաստներով (**Խաչատրյան**, 2003, էջ 309):

-երեն ածանցով կազմված մեծաթիվ լեզվանունների ազդեցությամբ, համաբանության օրենքով, ժամանակակից հայերենում լեզվանունը գործածվում է բացառապես **-երեն** ածանցով՝ **պարթևերեն**: Անգամ Ագաթանգեղոսի արևելահայերեն թարգմանության մեջ գործածվել է **-երեն** ածանցով տարբերակը (Ագաթանգեղոս, 1983, էջ 445, 457):

Լեզվանունը ո՛չ **-արեն**, ո՛չ էլ **-երեն** ածանցով չկա Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և Է. Աղայանի կազմած բացատրական բառարաններում: Ստ. Մալխասյանցին հետևելով և **պահլավերեն**-ին հղում անելով՝ որպես գլխաբառ զետեղվել է «Լեզվաբանական բառարանի» բառացանկում (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 260): «Հզվդ.» նշումով և «պահլավերեն» պարզաբանմամբ **պարթևերեն**-ը գրանցվել է ուղղագրական ընդարձակ բառարանում (Բարսեղյան, 1973, էջ 775):

ՊԱՀԼԱՎԵՐԵՆ

Պահլավերենը միջին պարսկերենն է, արևմտյան իրանական լեզուներից է: Խոսվել է Իրանական բարձրավանդակի հարավ-արևմուտքում մ.թ.ա. IV դարից մինչև հավանաբար մ.թ. X դար (Հայկական սովետական հանրագիտարան, 1983, էջ 98): Պահլավերենն ավանդված է մի շարք արձանագրություններով և կրոնական ու աշխարհիկ բովանդակությամբ գրքերով:

Բաժանվում է երկու շրջանի՝ հին պահլավերեն կամ արշակունյան պարթևական պահլավերեն (մ.թ.ա. 250-ից մինչև մ.թ. 226 թ., որը կոչվում է նաև պարթևերեն) և նոր պահլավերեն կամ սասանյան պահլավերեն (մ. թ. 226-ից մինչև 642 թ.) (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 253): Իրանագիտական գրականության մեջ միջին պարսկերեն տերմինի փոխարեն գործածվում է պահլավերեն անվանումը, որը կարող է շփոթության պատճառ դառնալ, **պահլավերեն** (pahlavi) ստուգաբանորեն նշանակում է **պարթևերեն**, որը զգալապես տարբերվում է միջին պարսկերենից, պարթևներն էլ նույնական չէին միջին պարսկերենը կրող ցեղերի հետ. վերջիններս իրենց լեզուն անվանում էին pārsīg / pārsik, որը հետագայում՝ X-XI դդ. արաբացված fārsī կիրառվում և ամրագրվում է նոր պարսկերենի համար, իսկ միջին պարսկերենին, շփոթից խուսափելու նպատակով, տրվում է pahlavi անունը (Հովհաննիսյան, 1990, էջ 56):

Հայերենագիտության մեջ էլ գործածվում են թե՛ **միջին պարսկերեն** և թե՛ **պահլավերեն** լեզվանունները: Դրանք երբեմն միմյանց պարզաբանող դեր են ստանձնում: Օրինակ՝ «Սասանյանների օրոք (III—VII դդ.), բանավոր, ավանդությունների հիման վրա, կազմվել և օրինականացվել է Ավեստայի **պահլավերեն (միջին պարսկերեն)** տեքստը, ինչպես նաև նրա մեկնությունը՝ **Ջենդը**» (Հայկական սովետական հանրագիտարան, 1974, էջ 610):

«Պահլավերեն» իմաստն արտահայտելու համար գրաբարում կա **պահլաիկ** փոխառյալ բառը, որն առաջին իմաստով նշանակում է «պահլավների ցեղին պատկանող», իսկ երկրորդ իմաստով՝ «պահլավերեն» (Ղազարյան, 2000, էջ 380): Լեզվանվան արժեքով գործածվելիս հարադրվել է **լեզու** հիմնաբաղադրիչը՝ **պահլաիկ լեզու** (Մալխասեանց, 1944, էջ 40):

Պահլավերեն-ն արձանագրված է հայերենի տարբեր բառարաններում: Լեզվանունը երեք արժեքով ներկայացված է Ստ. Մալխասյանցի բացատրական բառարանում՝ «միջին պարսկերեն լեզուն, որ գործ էր ածվում Պարսկաստանում Սասանեանների ժամանակ. փեհլեվի» (Մալխասեանց, 1944, էջ 40): Ակադեմիական բառարանը հետևում է Մալխասյանցին, գեղջելով **փեհլեվի**-ն (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1980, էջ 151): Էդ. Աղայանն ավելացնում է, որ պահլավերենը Սասանյանների և պարթևների դարաշրջանի պարսից գրական լեզուն է, որ կոչվում է նաև միջին պարսկերեն (Աղայան, 1976, էջ 1172):

Պահլավերեն / պահլաերեն գլխաբառ է դարձել հայերենի նաև թարգմանական բառարաններում՝ հայ-ռուսերեն (пехлеви (язык), пехлевиийский), հայերեն-անգլերեն (Pehlevi/pahlavi), հայերեն-ֆրանսերեն (pehlevi/pahlavi) (Հայ-ռուսերեն բառարան, 1987, էջ 547, Գոյումճեան, 1950, էջ 656, Բարլեզիզյան, 2009, էջ 747 և այլն): Հրատարակվել է պահլավերենի հինգլեզվյան բառարան (Աբրահամյան, 1965):

ԲԱԿՏՐԻԵՐԵՆ

Բակտրիան պատմական երկիր է Ամուդարյա գետի միջին և վերին հոսանքներում, ընդգրկել է այժմյան Աֆղանստանի հյուսիսային, Ուզբեկստանի և Տաջիկստանի հարավային տարածքները: Մ.թ.ա. VI-IV դարերում մտել է Աքեմենյան պետության մեջ՝ որպես առանձին կուսակալություն, այնուհետև՝ Ալեքսանդր Մակեդոնացու տերության, մ.թ.ա. III դ. կեսերին՝ Հունա-Բակտրիական թագավորության: Մի շրջան հռչակվել է անկախ թագավորություն: Մ.թ.ա. II դ. Բակտրիան նվաճել են թոխարները և վաչկատուն ուրիշ ցեղեր:

Բակտրիայի լեզուն պատկանում է միջին արևելաիրանական լեզուներին:

Հայերեն լեզվանունը հայտնի է երկու տարբերակով՝ **ի** բաղադրիչով՝ **բակտրիերեն** և առանց **ի** բաղադրիչի՝ **բակտրերեն**: Հայկական բազմահատորյա հանրագիտարանի տարբեր հատորներում, օրինակ, երկուսն էլ գործածվել են: Այսպես. նախ՝ «Ավեստայի լեզուն նախկինում կոչվել է հին **բակտրիերեն** և ավելի շատ՝ զենդերեն ոչ ճիշտ անվանումներով» (Հայկական սովետական հանրագիտարան, 1974, էջ 610), ապա՝ «Տարբերում են միջին պարսկերեն (պահլավերեն), պարթևերեն, **բակտրերեն**» (Հայկական սովետական հանրագիտարան, 1978, էջ 452): Այդպես էլ գիտական աշխատանքներում. «**Բակտրիերեն** «զան»-«ճանաչել», «իմանալ» բառից է» (Եզնիկ Կողբացի, 1970, էջ 221), «Գիտությանը հայտնի **բակտրերեն** բառերի քանակը 100-ից չի անցնում» (Հովհաննիսյան, 1990, էջ 60):

Ժամանակագրորեն առաջինը թերևս **բակտրիերեն**-ն է, և արդի հայերենի ներկայիս փոփոխ հակվածությունը կարծեք թե հենց այդ տարբերակի կողմն է (Խաչատրյան, 2008, էջ 260, նաև Խաչատրյան, 2021, էջ 402, ինչպես նաև «Ասիայի հին և նոր լեզուներ» դասիչով ասպիրանտուրայի ընդունելության քննության հարցաշարը (<https://www.yasu.am/media/5035>): Մեր կարծիքով ընդունելի պիտի համարել **բակտրիերեն** տարբերակը, քանի որ **բակտրիացի** ցեղանունից օրինաչափորեն ընկել է **-ացի** վերջածանցը, և **բակտրի**-բառակազմական հիմքին ավելացել է **-երեն**-ը: Բակտրերեն-ի կողմնակիցները կարող են հիմնավորել այսպես. **Բակտրիա** երկրանունից ընկել է **-իա** տեղանվանանիշ վերջնամասնիկը, միացել **-երեն**-ը:

Հայերենի բառարաններում գլխաբառ չի դարձել:

ՏԱՋԻԿԵՐԵՆ

Տաջիկստանի հիմնական բնակչության՝ տաջիկների ազգային լեզուն է, երկրի պետական լեզուն: Մասամբ խոսվում է նաև Ուզբեկստանի, Ղրղզստանի և Ղազախստանի, Աֆղանստանի որոշ շրջաններում, Իրանի Խորասանում, Չինաստանի Ույղուրական ինքնավար մարզում: Խոսողների թիվը՝ 14 միլիոնից ավելի:

Տաջիկերենը մեծ ընդհանրություններ ունի պարսկերենի հետ: Դրանք այնքան շատ են, որ ոմանք տաջիկերենը նույնիսկ համարել են պարսկերենի մի բարբառ:

Հայերեն լեզվաբանական գրականության մեջ XX դարի կեսերից սկսած՝ **տաջիկերեն**-ին զուգահեռ հանդիպում է **թաջիկերեն** տարբերակը: Այսպես, օրինակ. «Իրականում **թաջիկերենը** և

պարսկերենը այնքան մոտ են իրար, որ պետք է ենթադրել, թե նրանք երկուսն էլ մի ավելի հին լեզվի տարբեր ժառանգներն են» (Աճառյան, 1955, էջ 478), «Ռուսական այբուբենը հիմք հանդիսացավ ոչ միայն մինչև հեղափոխությունը գիր չունեցող լեզուների, այլև այնպիսի լեզուների այբուբենների համար, ինչպիսիք են ադրբեջաներենը, **թաջիկերենը** և այլն» (Աղայան, 1967, էջ 229): Հանդիպում են նույնահիմք **թաջիկական, Թաջիկստան** տարբերակները ևս (Աղայան, 1971, էջ 5, 147):

Թաջիկերեն տարբերակը, սակայն, տարածում չի գտել. Խորհրդային Հայաստանի պաշտոնական գրագրության մեջ, մամուլում և գրահրատարակչության ոլորտում գործածվել են բացառապես **տ-ով** բառամիավորներ՝ **տաջիկ, տաջիկական** (այդ թվում՝ **Տաջիկական ՍՍՀ**), **Տաջիկստան, տաջիկերեն, տաջիկուհի**: Բայց և այնպես **թաջիկերեն** տարբերակը գործածությունից լիովին դուրս չի մղվել և ավանդույթի ուժով շարունակում է գործածվել: Ահավասիկ ժամանակային առումով համեմատաբար նոր օրինակներ՝ «... զուգահեռներ ունի իրանական լեզուներում, օրինակ՝ **թաջիկերենում**», «... ապացույցն է ինչպես հայերենում նրա ունեցած դերբայակերտ դերը, այնպես էլ պարսկերենի, պամիրյանների, **թաջիկերենի** զուգահեռ -aki/-agi դերբայակերտ ածանցը» (Մկրտչյան, 2015, էջ 79, 98): Հանդիպում է նաև համալսարանական և դպրոցական դասագրքերում (Խաչատրյան, 2008, էջ 262, Գյուրջինյան, Հեքեքյան, 2010, էջ 5):

Հայերենի բառարաններում մասամբ արտացոլվել է լեզվանվան զուգաձևությունը: Հայ-ռուսերեն լեզվաբանական բառարանում **թաջիկերեն**-ից հղվում է **տաջիկերեն**-ին (Հարությունյանց, 1963, էջ 83, 211): Էդ. Աղայանի բառարանում գլխաբառ են դարձել **թաջիկական, թաջիկերեն, թաջիկներ** բառային միավորները, սակայն սրանցից հղում է արվում **տ-ով** տարբերակներին (Աղայան, 1976, էջ 418, 1412): «Լեզվաբանական բառարանում» **թ-ով** տարբերակը սոսկ նշված է **տաջիկերեն** բառահոդվածում (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 289): Իսկ ահա ակադեմիական բացատրական բառարանում և ուղղագրական բառարաններում լեզվանվան միայն **տ-ով** տարբերակն է տրվում (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1980, էջ 449, Բարսեղյան, 1973, էջ 886, Նազարյան, Գյոդակյան, 2004, էջ 440) այսինքն՝ զուգաձևությունը վերացված է, և այսօր գործածվում է **տաջիկերեն** տարբերակը:

ՅԱՂՆՈՐԲԵՐԵՆ

Տաջիկստանում՝ Յաղնոր գետի հովտում ապրող յաղնորների լեզուն պատկանում է իրանյան լեզուների արևելյան խմբի հյուսիսարևելյան ենթախմբին: Խոսողների թիվը խիստ սահմանափակ է, 2500-ից մինչև 5000 մարդ, գիր ստեղծվել է XX դարի վերջին քառորդում:

Սկզբնապես գործածվել է **յաղնորի** փոխառյալ լեզվանունը (հմմտ. անգլ. Yaghnobi, ֆրանս. yaghnobi): Հր. Աճառյանն ավանդական ուղղագրությամբ գրում է. «Եաղնորի (իրանեան բարբառ Պամիրում)» (Աճառյան, 1971, էջ 63): Իրանագիտական աշխատանքներում այսօր էլ գործածվում են փոխառյալ տարբերակը: Օրինակ՝ «... **յաղնորի** x(w)orta/x war-, շուղնի xūd/xar-, սարիքուլի xīg/xor-, յազղուլամի xug/xār-, x war-, յիղղա xoar-/xur-, մունջի xūr-/xur- և այլն» (Հակոբյան, 2022, էջ 5):

Գործածության մեջ է նաև **յաղնորի լեզու** հարադրությունը: Տարբերակիչ ցեղանուն բաղադրիչի կողքին **լեզու**-ն կապակցությանը հստակորեն լեզվանվան արժեք է հաղորդում:

Այս լեզուն նաև բարբառ են համարում, ուստի գործածում են **յաղնորի բարբառ** հարադրությունը: Օրինակներ՝ «Իր ներկայացուցիչն է (սողդերենի.- Դ.Գ.) այսօր **յաղնորի բարբառը**» (Աճառյան, 1955, էջ 480), «Սողդերենի շարունակությունն է համարվում այժմյան **յաղնորի բարբառը** (Սամարղանդի մոտ), որը անհետացող բարբառներից է» (Հովհաննիսյան, 1990, էջ 60):

Հայերեն **յաղնորերեն** լեզվանունը կազմվել է **յաղնոր** ժողովրդանվանն ավելացնելով **-երեն** ածանցը: Գործածվել է լեզվաբանության դասագրքերում (Աղայան, 1967, էջ 573, Աղայան, 1987, էջ 674, Խաչատրյան, 2008, էջ 262), հայկական բազմահատորյա հանրագիտարանում (Հայկական սովետական հանրագիտարան, 1978, էջ 452), սովորական է ժամանակակից հայերեն լեզվաբանական աշխատություններում: Բնագրային օրինակ՝ «**Յաղնորերենում** -ik, -ek ածանցները հարաբերական ածականներ են կերտում» (Մկրտչյան, 2015, էջ 88):

Հայերենում կա **յաղնորերեն**-ի հնչյունական տարբերակը՝ **յաղնուբերեն**: Օրինակ՝ «**Յաղնուբերենը** գտնվում է տաջիկերեն լեզվի ազդեցության տակ և հավանական է՝ ապագայում ձուլվի նրա մեջ» (Նալբանդյան, 1960, էջ 57): Մեզ հայտնի չէ, թե որտեղից է **ու**-ն. հմմտ. յաղնոր. yaghnobī zivók / йағнобӣ зивок, ռուս. ягнобский язык, գերմ. Jaghnobische Sprache:

Այժմ հայերեն լեզվաբանական գրականության մեջ և մասնագիտական բառարաններում գործածվում է միայն **յաղնորերեն** լեզվանունը: «Լեզվաբանական բառարանում» **յաղնորի** և **յաղնուբերեն**

տարբերակներից հղում է արվում **յաղնոբերեն**-ին (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 222):

Տասնամյակներ առաջ հայ-ռուսերեն լեզվաբանական բառարանում գլխաբառ է դարձել **յագնոբերեն** տարբերակը (ակնհայտ է ռուսերենի ազդեցությունը), որից հղում է արվում **յաղնոբերեն**-ին (Հարությունյանց, 1963, էջ 163-164): Սա **յաղնոբերեն**-ի բառարանային առաջին գրանցումն է:

ԱՖՂԱՆԵՐԵՆ / ՓՈՒՇԹՈՒ

Աֆղանստանի հիմնական բնակչության՝ աֆղանների լեզուն է: Խոսվում է առավելաբար Աֆղանստանում, ինչպես նաև Պակիստանի որոշ մարզերում: 1936 թվականից դարիին զուգահեռ Աֆղանստանում պետական լեզու է նաև փուշթուն՝ աֆղաներենը:

Հայերեն **աֆղաներեն** բառը կազմվել է «ժողովրդանուն+ «լեզու» նշանակող **-երեն** վերջածանց» լեզվանվանակերտ կաղապարով: Գիտական գրականության մեջ և այլուր գործածվում է XX դարի կեսերից: Օրինակներ՝ «**Աֆղաներենը** խոսվում է նաև այս երկրից դուրս, բավական ընդարձակ տարածության վրա» (Աճառյան, 1955, էջ 479), «**Աֆղաներենում** գոյություն ունի սեռի քերականական բաժանում» (Նալբանդյան, 1960, էջ 58):

Հայերեն գիտական, մասնավորապես լեզվաբանական գրականության մեջ հայակազմ լեզվանունից թերևս ավելի շատ գործածվել են տարատեսակ տառադարձությամբ փոխառյալ տարբերակներ՝ **փուշտու**, **փուշթու**, **փաշտու**, **փաշտո**: «Լեզվաբանական բառարանում», օրինակ, **աֆղաներեն** հայերեն գլխաբառի կողքին նշվում են **փուշտու**, **փաշտու**, **փաշտո** տարբերակները (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 40), իսկ հայկական հանրագիտարանում **աֆղաներեն** գլխաբառից հղում է արվում **փուշթու լեզու**-ին (Հայկական սովետական հանրագիտարան, 1975, էջ 170), որ նշանակում է, թե նախապատվությունն այդ տարբերակին է տրվում: Նշենք սակայն, որ նույն հանրագիտարանի մեկ այլ հատորում հանդիպում է **փուշտու** ձևով տառադարձված տարբերակը (Հայկական սովետական հանրագիտարան, 1978, էջ 452):

Լեզվաբանության դասագրքում **աֆղաներեն**-ը և **փուշտու**-ն հավասարաթեք են դիտվել: Այսպես. «Արևելյան իրանական լեզուներն են **աֆղաներենը կամ փուշտուն**՝ Աֆղանստանում» (Աղայան, 1967, էջ 573): Հմնտ. նաև «**Աֆղաներենը (փուշտու)** տարածված է Աֆղանստանում և Պակիստանի հյուսիս-արևմտյան մարզերում» (Հովհաննիսյան, 1990, էջ 62), «Բակտրիայի և հարևան սակերի

անմիջական ժառանգը հանդիսանում է **աֆղաներենը՝ փուշտուն»** (Մկրտչյան, 2015, էջ 10):

Փոխառյալ լեզվանունները աֆղանների ինքնանվանման բարբառային և տառադարձման տարբերակներն են, որոնք նաև լեզվանվան արժեք ունեն: Լեզվանվան նշանակությամբ գործածվելիս սրանց հետ հաճախ կիրառվում է **լեզու** բառը՝ **փուշտու** կամ **փուշթու** լեզու: Օրինակ՝ «**Փուշթու լեզվով** գրավոր հնագույն հուշարձանը «Սրբերի վարքը» (XIII դ.) ձեռագրի մի մասն է» (Հայկական սովետական հանրագիտարան, 1975, էջ 174):

-երեն ածանցով կազմված բազմաթիվ լեզվանունների համաբանությամբ կազմվել և գիտական պարբերականում գործածվել է **փուշթուերեն** հայերեն ածանցավոր տարբերակը: Օրինակ՝ «Բացի բելուջերենից, **փուշթուերենից** և բրահվիերենից, բնակչության ճնշող մասը հասկանում և խոսում է նաև ազգային լեզվով՝ ուրդուերենով» («Հայկական քաղաքագիտական հանդես», 2017, էջ 138):

Սպասելի էր և համացանցում պատահում է հայկազմ լեզվանվան **փուշտուերեն** հնչյունական տարբերակը. «Հաղորդագրությունը տարածվել է հինգ լեզվով՝ արաբերեն, դարիերեն, անգլերեն, **փուշտուերեն** եւ ուրդուերեն» (<https://news.am/arm/news/767336.html> (մուտք՝ 16.01.2024)):

Աֆղաներեն-ը որպես գլխաբառ արձանագրվել է հայերենի միալեզվյան և թարգմանական մի շարք բառարաններում (Բարաթյան, 2002, էջ 92. *Afghan, the Afghanlanguage*), Բարլեզիզյան, 2009, էջ 158. *afghan, langue afghane*), Թորոսեան, 2019, էջ 93 (*Afghanisch*): Արդի հայերենի բացատրական բառարանում լեզվանունը եռարժեք է՝ գոյ. «աֆղանների լեզուն» և ած./մկբ. «աֆղանների լեզվով» (Աղայան, 1976, էջ 150): Ի դեպ, Ստ. Մալխասյանցի և ակադեմիական բացատրական բառարանները այս լեզվանունը և նրա որևէ տարբերակ չեն գրանցել:

Աֆղաներեն-ը գրության դժվարություն ունի (հաճախ **աղվաներեն**-ի հետ են շփոթում և **Ֆ**-ի փոխարեն **վ** գրում), այդ իսկ պատճառով ավանդաբար ընդգրկվում է հայերենի ուղղագրական ընդարձակ և դպրոցական բառարաններում (տե՛ս, օրինակ, Ղարիբյան, Շեկյան, 1965, էջ 27, Բարսեղյան, 1973, էջ 157, Սուքիասյան, 2002, էջ 39, Նազարյան, Գյոդակյան, 2004, էջ 58 և այլն):

Փաստորեն **աֆղաներեն**-ը հատուկ ուսուցանվում է, բայց գիտական խոսքում հայերեն կազմությունը զիջում է փոխառյալ տարբերակ(ներ)ին: Ի դեպ, եվրոպական լեզուներում և ռուսերենում նույնպես գործածության զուգաձևություն կա: Հմմտ. «Пашто (пушту, афганский) - литературный язык, с 30-х годов государственный язык Афганистана» (Реформатский, 1967, էջ 408): Հետագայում հրատարակված մեկ այլ դասագրքում արդեն երկու տարբերակ է տրված՝ афганский (пушту) (Кодухов, 1979, էջ 311): Եվ, իհարկե, կա նաև առանց տարբերակի՝ միայն афганский (Головин, 1973, էջ 257):

ԲԵԼՈՒՋԵՐԵՆ

Պակիստանի արևմուտքում՝ Բելուջիստան նահանգում, ինչպես նաև սահմանակից Իրանում, Աֆղանստանում, Օմանում, Արաբական Միացյալ Էմիրություններում և Թուրքմենստանում ապրող բելուջների լեզուն է: Խոսողների թիվը՝ մոտավորապես 9 միլիոն:

Բելուջերեն լեզվանունը կազմվել է արմատական **բելուջ** ժողովրդանունից՝ **-երեն** վերջածանցով (ժամանակակից հայերենի բացատրական բառարանում, որպես ժողովրդի ներկայացուցիչ նշանակող միավորներ, նշվում են **բելուջիներ** (բառավերջի **ի**-ով), ապա և **բելուջի**, **բելուջուհի** (Աղայան, 1976, էջ 184)): Այս լեզվանվան գործածությունը սովորական է հայերեն գիտական խոսքում:

Խիստ հազվադեպ պատահում է նաև փոխառյալ **բալուջի** լեզվանունը (հմմտ. ռուս. балучи, балучский / белуджский язык, անգլ. Balochi / Baluchi, ֆրանս. Balotchi, գերմ. Belutschisch / Balutschi), այն էլ որպես պարզաբանող միավոր: Օրինակ՝ «Բելուջերեն լեզուն (**բալուջի**) տարածված է գլխավորապես Իրանի հարավ-արևելքում՝ Բելուջիստանում և Սիստանում, հանդիպում է նաև Քերմանում և Խորասանում» (Բայբուրդյան, 2001, էջ 7): Առանձին գործածությամբ կարող է և լեզվանուն չընկալվել, այնինչ **բելուջերեն**-ում **-երեն** ածանցը լեզվանվան ցուցիչ է:

Մեզ հանդիպել է նաև **բելուջերեն** տարբերակը՝ **չ**-ով (Նալբանդյան, 1960, էջ 29), որը տեսնում ենք **բալուջի**-ում: Թվում է՝ սա պատահական վրիպում չէ, թեպետ պիտի նշենք նաև, որ նույն գրքույկի մեկ այլ հատվածում քանիցս գործածվել է **բելուջերեն**-ը՝ այսօր էլ ընդունված **ջ**-ով (Նալբանդյան, 1960, էջ 53-54):

Լեզվանունը միջհամակարգային տարբերակայնություն ունի՝ արևելահայերեն **բելուջերեն** - արևմտահայերեն **պելուճերեն** (Գյուրջինյան, 2022, էջ 31), որն արտասանվում է «բելուջերեն»: Հարկ է նշել, որ ժամանակին արևմտահայ (պոլսահայ) Հր. Աճառյանը իր «Արմատական բառարանում» գործածել է **բելուճերեն** տարբերակը (Աճառյան, 1940, էջ 225, 232, Աճառյան, 1971, էջ 63), որի **բ**-ն արևելահայերեն է, **ճ**-ն՝ արևմտահայերեն:

Բելուջերենն արձանագրվել է հայերենի տարբեր բառարաններում՝ լեզվաբանական (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 65-66), բացատրական (Աղայան, 1976, էջ 184): Վերջինում մյուս լեզվանունների նման եռարժեք է (գոյ., ած., մկբ.) «բելուջիների լեզուն», «բելուջիների լեզվով»:

ՕՍԵՐԵՆ

Խոսվում է Կովկասում՝ Հյուսիսային Օսիայում (Ռուսաստան) և Հարավային Օսիայում (չճանաչված պետություն), խոսողների թիվը՝ կես միլիոնից ավելի: Գրավոր լեզու է XVIII դարի վերջերից (գործածվել է նախ ռուսական, ապա՝ լատինական այբուբենը, այժմ՝ նորից ռուսական այբուբենը):

Լեզուն անվանելու համար հայերենում կազմվել են տարբերակային երկու լեզվանուններ՝ **օսերեն** և **օսեթերեն** (հմմտ. ռուս. осетинский язык), որոնց հիմք են դարձել ժողովրդական տարբերակները՝ **օս** և **օսեթ**: Գիտական աշխատություններում գործածվում են երկուսն էլ: Տարբերակները միևնույն խոսքաշարում երբեմն գործածվում են **կամ**-ով, ինչպես՝ «Իրանագետները վաղուց են ապացուցել **օսերենի** կամ **օսեթերենի** կապը սկյութների հետ» (Մկրտչյան, 2015, էջ 20):

Հայերենի բառարաններում առանձնաբար և համատեղ արձանագրվել են ինչպես **օսեթերեն**-ը, այնպես էլ **օսերեն**-ը:

Ստ. Մալխասյանցի բառարանում միայն **օսերեն**-ն է տրված, այն էլ ածականի արժեքով (Մալխասեանց, 1945, էջ 610): Այդպես նաև միայն **օս** ժողովրդանունն է գլխաբառ դարձել (բացատրվում է, որ սա մի ժողովուրդ է, որն ապրում է Օսեթիայում՝ Կովկասյան լեռներում, և իրեն կոչում է իրոնցի, այսինքն՝ իրանցի»):

«Լեզվաբանական բառարանում» գլխաբառ են դարձել և՛ **օսերեն**-ը, և՛ **օսեթերեն**-ը (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 313), սակայն առաջնությունը տրվել է վերջինին, քանի որ **օսերեն**-ից նրան է հղում արվում, և բառահոդվածն էլ **օսեթերեն**-ի ներքո է զետեղված: Էդ. Աղայանի բառարանում ևս երկուսն էլ կան. **օսերեն**-ի կողքին գրված է, որ նույնն է, ինչ **օսեթերեն**-ը, բայց, այնուամենայնիվ, բառի բացատրությունը

օսեթերեն-ի բառահոդվածում է տրված, երեք արժեքով (Աղայան, 1976, էջ 184):

Ակադեմիական բացատրական բառարանում **օսեթերեն** և **օսերեն** տարբերակային լեզվանունները միևնույն բառահոդվածի գլխաբառեր են, հավասարաթեք (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1980, էջ 449):

Ուղղագրական ընդարձակ բառարանում **օսեթերեն**-ի կողքին տրված է «օսերեն» բացատրությունը, առանձին էլ գլխաբառ է դարձել **օսերեն**-ը (Բարսեղյան, 1973, էջ 967): Այստեղից կարելի է եզրակացնել, որ **օսերեն**-ն է մատչելի և ընդունելի տարբերակ դիտվել:

Հայ-ռուսերեն բառարանում միայն **օսերեն**-ն է տրված (осетинский язык) (Հայ-ռուսերեն բառարան, էջ 720): Հայ-ֆրանսերեն բառարանում գլխաբառն է **օսեթերեն**-ը, փակագծերում տրված է **օսերեն**-ը (langue ossète) (Բարլեզիզյան, 2009, էջ 955):

Լեզվանվան պատմությունն ամբողջականացնելու նկատառումով ասենք, որ ժամանակագրական առումով **օս** հիմքով կազմված տարբերակն է առաջինը: Սակայն պետք է նկատել, որ Հր. Աճառյանն այս լեզվանունը գործածել է զուգաձևությամբ՝ **օսերեն** և կրկնակ բաղաձայնով **օսսերեն** (Աճառյան, 1940, էջ 225, 232. գրքում **ո**-ով է, 1922 թ. ուղղագրության ձախող փոփոխության պարտադրանքով): Այս գրությունն է կիրառվել ամենայն հավանականությամբ եվրոպական լեզուների ազդեցությամբ. հմմտ. գերմ. Ossetisch:

Մեր կարծիքով ներկայումս շրջանառվող **օսերեն** և **օսեթերեն** զուգաձևերից կարճ տարբերակը՝ **օսերեն**-ն է նպատակահարմար գործածել, որի շնորհիվ կվերանա գիտական խոսքի ճշտությանը խանգարող անմիօրինակությունը:

ԻՐՈՆԵՐԵՆ, ԴԻԳՈՐԵՐԵՆ

Օսերենն ունի երկու բարբառ՝ իրոնական (տարածված է Հյուսիսային Օսիայի արևմուտքում և Կարադիինա-Բալկարիայում) և դիգորական (Հյուսիսային Օսիայի մնացած տարածքում, Հարավային Օսիայում, Վրաստանում, նաև Կարաչաևո-Բալկարիայում): Այս բարբառներն անվանելու համար գործածվում են **բարբառ** բառի հարադրությամբ բաղադրյալ անուններ՝ **իրոնական բարբառ** և **դիգորական բարբառ**, որն ընդունված է հայերենագիտության մեջ: Նշված կապակցությունները երբեմն հանդիպում են լեզվաբանական աշխատություններում: Օրինակ՝ «օսերեն (իրոնական բարբառ) xæryn/xord-, xærd-, (դիգորական բարբառ) xwærun/xward-, փաշթոն xwarəl/xūr-» (Հակոբյան, 2022, էջ 5):

Այս դեպքում էլ **բարբառ** բաղադրիչի փոխարեն վերցվել է «լեզու» նշանակող **-երեն** ածանցը և բարբառանուններ են կազմվել՝ **դիզորերեն** և **իրոներեն**: Օրինակ՝ «Օսերենի բարբառներից են **դիզորերենը** և **իրոներենը**» (Հովհաննիսյան, 1990, էջ 62): Հմմտ. **քեսաբերեն** «Քեսաբի հայ բարբառ», **թիֆլիսերեն** «Թիֆլիսի հայ բարբառ»: Վերջիններս գիտական խոսքին բնորոշ չեն, սակայն գոյություն ունեցող բառային միավորներ են:

Այս բարբառանունները խիստ հազվադեպ են, և բնական է, որ հայերենի բառարաններում չեն արձանագրվել:

ԱԼԱՆԵՐԵՆ

Ալանները սկյութա-սարմատական ծագում ունեցող իրանալեզու ցեղեր են, որոնք սփռված էին Կովկասից մինչև Վոլգա, Դոն և Դնեպր գետերի ստորին հոսանքների հարթավայրեր: Ալանական ռազմատենչ ցեղերը մ. թ. I դարից սկսած կողոպտչական արշավանքներ էին կատարում դեպի Վիրք, Աղվանք, Մեծ Հայք, Պարթևաստան, Փոքր Ասիա և Հռոմեական կայսրության շրջանները: Հետագայում հայ Արշակունիներից Տրդատ Գ և Արշակ Բ թագավորները դաշնակցել են ալանների հետ ընդդեմ Սասանյանների: Հայ-ալանական առնչությունները արտացոլվել են «Արտաշես և Սաթենիկ» ավանդավեպում:

XII դարում ալանները հունական այբուբենով ստեղծել են գրականություն (Հայկական սովետական հանրագիտարան, 1974, էջ 136):

Հյուսիսից շարժվող քոչվոր ցեղերի, հատկապես հոների ճնշմամբ Կովկասյան լեռները քաշված ալանները, խառնվելով տեղական ցեղերի հետ, հիմք են դրել օս ժողովրդի և նրա լեզվի կազմավորմանը: Ալանների լեզուն՝ ալաներենը, միջին իրանական լեզուներից է, միջին օսերենը (Հայկական սովետական հանրագիտարան, 1978, էջ 452): Օսերենը իրանական լեզուների հյուսիսարևելյան՝ սկյութական կոչվող ճյուղի միակ մնացորդն է:

Գործածությունից ելնելով ասենք, որ **ալաներեն** բառի կազմությունը կարող է վերաբերել XX դարի երկրորդ կեսին: Լեզվանունը կազմվել է ցեղանուն հիմքից: Հայերեն գիտական խոսքում սակավադեպ է: Օրինակ՝ «Այն ծագում է **ալաներեն** (օսերեն) «ձարախ»՝ լավ, բարեբեր բառարմատից» (Մելքոնյան, 2005, էջ 48):

Լեզվանունը հանդիպում է նաև գեղարվեստական խոսքում: Հայկ Խաչատրյանի «Արտաշես» պատմավեպում թեմայի թելադրանքով քանիցս գործածվել է, ընդ որում՝ քերականական տարբեր ձևերով:

Այսպես. «Երբ Մասյացուտն եկավ, **ալաներեն** գիտեր այնպես, ինչպես հայերենը»: «Հայոց արքունիքում **ալաներենը** հնչում էր այն ժամանակ, երբ տիկնանց-տիկինն ու նաժիշտը առանձնանում էին երկուսով», «Սաթենիկի հայերեն հարցումին Մեմը պատասխանեց **ալաներեն**», «Կարծում ես **ալաներեն** իմանալով կտիրանա՞ս իմ սրտին: - Ոչ: Բայց... Նաև **ալաներենով...**» (Խաչատրյան, 1980, էջ 98, 143, 149, 150):

Հայերենի բառարաններում որպես գլխաբառ չի արձանագրվել:

ԱԶԱՐԵՐԵՆ

Մեռած լեզու է, խոսվել է Ատրպատականում, գոյություն է ունեցել մինչև XVII դարը: Պատկանում է իրանական լեզուների հյուսիսարևմտյան ենթախմբին: Խոսվել է ներկայիս Ադրբեջանի հարավային այն տարածքներում, որտեղ թալիշներն են ապրում, և Իրանի Արդաբիլ (այստեղ էլ թալիշախոսներ կան), Արևելյան և Արմտյան Ադրբեջան և Զանջան նահանգներում: Մասնագիտական գրականության մեջ կարծիք կա, որ թալիշները ազարիների ժառանգներն են, և որ «ազարի լեզվի մերօրյա շարունակությունը թալիշերենն է» (Ասատրյան, 1989):

Ազարիների լեզուն հայերենում անվանվում է երեք տարբերակով: Նախ՝ փոխառյալ **ազարի** ձևով. «**Ազարիի** մեզ մատչելի բառապաշարի և թալիշերենի միջև գոյություն ունեն հնչյունական զուգահեռներ և ընդհանուր բառեր», բայց ավելի շատ հանդիպում է **ազարի լեզու** բաղադրյալ անվանումը. «**Ազարի լեզվի** գոյության մասին կողմնակի պատմական տեղեկություններից բացի, պահպանվել են նաև ուղղակի բնագրային վկայություններ պարսկական միջնադարյան հուշարձաններում» (Ասատրյան, 1989), ապա նաև **ազարերեն**. ««Թեքե» կամ «թաքուն» **ազարերեն** նշանակում է արու այժ» (<https://parstoday.ir/hy/radio/uncategorised-i136466>. մուտք՝ 12.02.2024): **Ազարերեն**-ը կազմվել է ժողովրդանուն հիմքից՝ հայերեն մյուս լեզվանունների համաբանությամբ:

Հայերենի բառարաններում այս լեզվանունը գլխաբառ չի դարձել:

ԳԻԼԱՆԵՐԵՆ

Գիլաներենը արևմտյան իրանական լեզուներից է («Լեզվաբանական բառարանում» սխալմամբ գրվել է «արևելյան» (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 72)): Խոսվում է Իրանի հյուսիս-արևմուտքի Գիլան նահանգի մերձկասպյան հարավարևմտյան շրջաններում:

Լեզվանունը կազմվել է գիլանների անվան հիման վրա՝ **-երեն** ածանցով: Դիտում են նաև նոր պարսկերենի բարբառ, թեպետ գրական պարսկերենից զգալապես տարբերվում է:

Լեզվանունն ունի **գիլյաներեն** տարբերակը, որը, ի դեպ, «Լեզվաբանական բառարանում» առաջնային է դիտվել (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյույան, 1975, էջ 72, 73): Այստեղ նշվում են այլ տարբերակներ ևս՝ **-երեն** ածանցով՝ **գիլյաքերեն / գիլաքերեն**, նաև անաձանց՝ **գիլաքի** (նահանգի անունով բնակիչներին կոչում են «գիլաք»): Գիլաքին Գիլանում տարածված իրանական երեք խոշոր լեզվախմբերից մեկն է (թալիշերենի և ռուդբարիի կողքին) (Ղազարյան, 2012-2013, էջ 126): Ըստ այդմ կարող ենք եզրակացնել, որ ավելի շուտ գործ ունենք ոչ թե նույնության, այլ ընդհանուր և մասնավորի հետ: Իմիջիայլոց ասենք, որ մերձկասպյան **գիլյաքերեն / գիլաքերեն**-ը չպետք է խառնել **գիլյակերեն / գիլակերեն** (ռուս. гилыцкий язык) լեզվանվան հետ, որը **նիվխերեն**-ի տարբերակն է: Նիվխերենը Ամուր գետի ստորին հոսանքներում և Սախալինում ապրող նիվխերի (գիլյակների) լեզուն է:

Հայերեն ուսումնագիտական խոսքում գործածված ենք տեսնում և՛ **գիլաներեն** և՛ **գիլյաներեն** տարբերակները, ավելի շատ՝ առաջինը (Աղայան, 1967, էջ 573, Խաչատրյան, 2021, էջ 402 և այլն): Բնագրային օրինակներ գիտական խոսքից. մի կողմից՝ «Արևմտյան ու արևելյան **գիլաներենի** հիմնական տարբերակիչ առանձնահատկությունները դրսևորվում են բայական համակարգում» (Ղազարյան, 2012-2013, էջ 126), մյուս կողմից՝ «Թալիշերենը պատկանում է լեզուների իրանական խմբի հյուսիս-արևմտյան ճյուղին և քերականական կառուցվածքով շատ ընդհանրություններ **գիլյաներենի** հետ» (Բայբուրդյան, 2001, էջ 8), «Դրանցից մեկն էլ Իրանի հյուսիս-արևմուտքում գտնվող **գիլյաներենն** է» (Մկրտչյան, 2015, էջ 26):

Գիլաներենը բաժանվում է բարբառային երկու ճյուղի՝ արևելյան և արևմտյան, ըստ այդմ գործածվում են **արևմտյան գիլաներեն**, **արևելյան գիլաներեն**, **արևմտագիլանական բարբառ(ներ)**, **արևելագիլանական բարբառ(ներ)** կապակցությունները, նաև բառ է կազմվել՝ **արևմտագիլաներեն** (Ղազարյան, 2012-2013, էջ 126) (թերևս **արևմտահայերեն**-ի հետևողությամբ):

Անցյալի հայ մամուլում հանդիպում է նաև **գիլաքերեն** լեզվանունը. «Երկրի ընդհանուր տիրապետող լեզուն **գիլաքերենն** է, որը տարբերվում է մաքուր պարսկերենից» («Հորիզոն» (հասարակական-գրական օրաթերթ, Թիֆլիս), 1910, հոկտեմբերի 7, էջ 3):

Թեպետ հայերեն **գիլաքերեն**-ը կազմված էր, դարակեսին լեզվաբանական աշխատության մեջ գործածված ենք տեսնում **գիլաքի** փոխառյալ բարբառանունը (Աճառյան, 1955, էջ 477): Հետագայում նույնպես. «**Գիլաքին** Գիլանում տարածված երեք խոշոր իրանական լեզվախմբերից մեկն է՝ թալիշերենի և ռուդբարիի կողքին, որով, որպես

առաջին և երկրորդ լեզու, խոսում է մոտավորապես երեք միլիոն մարդ» (Ղազարյան, 2012-2013, էջ 126): Ի դեպ, տրված նախադասությունն այն հոդվածից է, որի վերնագրում, այնուամենայնիվ, **գիլաներեն** լեզվանունն է գործածվել, տեքստում էլ **գիլաներեն**-ն է գերակշռում:

Լեզվաբանական մասնագիտական բառարաններում գլխաբառ են դարձել տարբերակային **գիլաներեն** և **գիլյաներեն** լեզվանունները («Լեզվաբանական բառարանից» բացի տե՛ս նաև Հարությունյանց, 1963, էջ 60):

ԳԱԼԵՇԵՐԵՆ

Գիլաներենի մի բարբառն է գալեշների լեզուն՝ գալեշերենը: Այս բարբառով խոսում է Գիլանի և Մազանդարանի լեռնային շրջաններում բնակվող և «գալեշ» անվանումը կրող էթնոսոցիալական ենթախումբը: *Gâleš* եզրը մերձկասպյան բարբառներում բառացի նշանակում է «խոշոր անասունների հովիվ, նախրապան», որով Մազանդարանի և Գիլանի տարածքներում անվանվում են խաշնարածական տնտեսություն վարող հանրույթները (Սաֆարի, 2013, էջ 3):

Գալեշերեն-ը իրականում բարբառանուն է, լեզվանվան մի տարատեսակ. հմմտ. **գալեշի բարբառ** և **գալեշերեն**, որի **-երեն** ածանցը նշանակում է ոչ միայն «լեզու», այլև «բարբառ»: Գործածության օրինակներ՝ «**Գալեշի բարբառում** այս ձևույթով կառույցը անցյալ անկատարի միակ կազմությունն է» «**Գալեշերենում** անցյալ անկատարը վերլուծական կառույց է, այն կազմվում է հիմնական (խոնարհվող) բայի անցյալի հիմքից» (Ղազարյան, 2012-2013, էջ 126): Հանդիպում է իրանագիտական, մասնավորապես բարբառագիտական աշխատանքներում (այդ թվում՝ թարգմանական): Օրինակ՝ «Գիլաներենի մյուս բարբառների հետ համեմատական քննության արդյունքում պարզվել է **գալեշերենի** բնիկ բառամիավորների շերտը» (Սաֆարի, 2013, էջ 4):

Բառարանային գրանցում չունի:

ԹԱԹԵՐԵՆ

Թաթերն ապրում են Ադրբեջանի հյուսիսարևելյան մերձկասպյան շրջաններում, հարավային Դաղստանում (Ռուսաստան), մասամբ՝ Իրանում և Իսրայելում (Հանրագիտական բառարան, 2016, էջ 768): Լեզուն թաթերենն է: Ռուսաստանի մարդահամարի տվյալներով թաթերենը մայրենի լեզու է համարում 700-ից ավելի մարդ, Ադրբեջանից հստակ տվյալներ չկան, բայց հայտնի է, որ թաթերից շատերը խոսում են ադրբեջաներեն: Թաթերեն խոսողների մեջ նշվում են նաև լեռնային հրեաները, եղել են թաթախոս որոշ հայեր: Թաթերենով կրթություն չի

իրականացվում: ՅՈՒՆԵՍԿՕ-ն թաթերենը ճանաչել է չափազանց վտանգված լեզու:

Թաթերենը պատկանում է լեզուների հարավարևմտյան իրանական խմբին: Լեզվանունը կազմվել է **թաթ** ժողովրդանվանը –**երեն** ածանց ավելացնելու միջոցով, ինչպես որ հայերենի բազմաթիվ լեզվանուններ են կազմվել:

Լեզվանունը տարբերակներ չունի, գրանցվել է հայերենի տարբեր բառարաններում (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1972, էջ 123, Բարսեղյան, 1973, էջ 341, Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 106, Աղայան, 1976, էջ 412, Հայ-նուսերեն բառարան, 1987, էջ 240):

ԹԱԼԻՇԵՐԵՆ

Թալիշների մեծ մասն ապրում է Հյուսիսային Իրանի և հարավարևելյան Ադրբեջանի մերձկասպյան շրջաններում, մասամբ նաև Դահստանում (Ռուսաստան): Թալիշերենը պատկանում է իրանական լեզուների հյուսիսարևմտյան խմբին: Այդ լեզվով խոսողների թիվը հստակ չէ, էապես տարբերվող թվեր են նշվում. 200 հազարից մինչև մեկ միլիոնից ավելի: Գրական թալիշերենի հիմքում ընկել է Լենքորանի բարբառը:

Թալիշերեն լեզվանունն առաջացել է պարզ արմատական ժողովրդանվանը –**երեն** ածանցն ավելացնելու միջոցով. հմմտ. նաև **արաբերեն, թուրքերեն, ռուսերեն, լեհերեն** և այլն: Գործածության նմուշ՝ «Ընդհանուր **թալիշերեն** միասնական լեզու գոյություն չունի, այն, ավելի շուտ, բարբառների և խոսվածքների մի համակարգ է» (Ասատրյան, 1993, էջ 18):

Հայակազմ **թալիշերեն**-ից բացի սահմանափակ գործածվել է նաև **թալիշի** տարբերակը: Հր. Աճառյանը, օրինակ, իր «Արմատական բառարանի» լեզուների ցանկում տալիս է **թալիշի** ձևը՝ «պրս. [պարսկերենի] բարբառ» բացատրությամբ (Աճառյան, 1971, էջ 64): Բայց սա տարածում չի գտել:

Հետագայում «Լեզվաբանական բառարանում» գլխաբառ է դարձել հայակազմ լեզվանունը, իսկ փոխառյալ բառը նշվել է որպես տարբերակ (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 106): Էդ. Աղայանի բառարանում տարբերակային երկու ձևերը ներկայացված են միևնույն բառահոդվածում՝ երեք արժեքի նշումով՝ գոյ. «թալիշների լեզուն», ած., մկբ. «թալիշների լեզվով» (Աղայան, 1976, էջ 412), թեև բառարանագիրն իր հեղինակած լեզվաբանության դասագրքում նախապատվությունը **տվել է թալիշերեն**-ին (Աղայան, 1967, էջ 573): Ակադեմիական բացատրական

և հանրագիտական բառարաններում միայն **թալիշերեն**-ն է արձանագրվել (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1972, էջ 125, Հանրագիտական բառարան, 2016, էջ 770): Այժմ ամենուրեք (գիտական խոսք, մամուլ) **թալիշերեն**-ն է գործածվում:

ՄԱՁԱՆՊԱՐԱՆԵՐԵՆ

Իրանի Մազանդարան նահանգում (անցյալում կոչվել է նաև Թաբարիստան) ապրող շուրջ չորս միլիոն մազանդարանցիների լեզուն է: Ժամանակակից մազանդարաներեն գրական լեզուն ձևավորվել է հիշյալ նահանգի Սարի կենտրոնական քաղաքի բարբառի հիման վրա:

Մազանդարաներեն լեզվանվան կազմությունը կարող ենք բացատրել հետևյալ կերպ. **մազանդարանցի** ցեղանունից անջատվել է **-ցի** ածանցը, միացել է **-երեն**-ը կամ էլ լեզվանիշ ածանցը միացել է ուղիղ **Մազանդարան** տեղանվանը՝ որպես «Մազանդարանի լեզու»:

Լեզվանունը գործածվում է միայն գիտական խոսքում: Ահա գործածության մի քանի օրինակներ՝ «Կասպից ծովի ափերի երկայնքով ապրող ժողովուրդների մեծ մասի համար (Գիլյան և Մազանդարան) մայրենի լեզու է համարվում գիլյաներենը և **մազանդարաներենը**» (Բայբուրդյան, 2001, էջ 7), «Գիլանից դեպի արևելք ընկած շրջաններում տարածված բարբառները աստիճանաբար մերձենում են **մազանդարաներենին**» (Ղազարյան, 2012-2013, էջ 126), «Թաթերենը կապում է իրանական լեզուների մերձկասպյան խմբի լեզուների՝ **թալիշերենի**, **գիլաներենի** և **մազանդարաներենի** հետ» (Տոնոյան, 2015, էջ 15):

Հայերեն գիտական խոսույթում հազվադեպ պատահում է նաև **մազանդարանի** փոխառյալ տարբերակը: Օրինակ՝ «Խոսքը հարավկասպյան-ատրպատականյան լեզուների՝ զազայի, գիլաքիի, **մազանդարանիի**, **թալիշերենի**, **թաթերենի**, **գորանիի**, Սեմնանի շրջանի բարբառների, կենտրոնական կասպյան և կենտրոնական Ալբորզի բարբառների մասին է» և «Այս ներկա ժամանակաձևը հանդիպում է զազայում, արևելյան գիլաքիում, **մազանդարանիում**, Սեմնանի շրջանի բարբառներում» (Հակոբյան, 2022, էջ 3, 5, տե՛ս նաև Հարությունյան, 2016, էջ 404): Առհասարակ նկատելի է, որ իրանագիտական հայերեն աշխատանքներում հաճախ նախապատվությունը տրվում է փոխառյալ լեզվանուններին, այն դեպքում, երբ հայակազմ լեզվանունները որոշակիորեն կայունացած են լինում գիտական խոսքում:

Մազանդարերենը հնում կոչվել է **թաբարի**: Հմմտ. «Նոր արևմտահրանական լեզուների և բարբառների շարքում **թաբարին**, որը ներկայում առավել հայտնի է **մազանդարաներեն** անվանումով»

(Էբրահիմի, 2013, էջ 3): Փոխառյալ **թաբարի** լեզվանունից հայերենի բառակազմական օրինաչափության հիման վրա կազմվել է **թաբարերեն** լեզվանունը. «Գիրքը տասներորդ դարում գրվել է հին **թաբարերեն (մազանդարերեն)** լեզվով» (<https://gir.am/media/uploadfiles/qm9kudig613wc5nj.pdf> մուտք՝ 10.02.2024 թ.): Ի դեպ, երկու գործածությունն էլ պարսկերենից արված թարգմանություններում են:

Հայերենի բառարաններում այս լեզվանվան տարբերակները չեն արձանագրվել:

ԼՈՌԵՐԵՆ

Լոռերը արևմտյան Իրանում՝ Լոռեսթան / Լոռեստան, նաև Լորիստան) լեռնային նահանգում՝ Ջագրոսի լեռներում, ապրող իրանալեզու ժողովուրդ են: Նրանց լեզուն պատկանում է իրանական լեզուների արևմտյան խմբին, շատ մոտ է պարսկերենին: Խոսողների թիվը՝ միլիոնից ավելի:

Տեղանվան զուգաձևությունն իր անդրադարձն է ունենում ցեղանվան և լեզվանվան վրա: Չուգաձևություն կա ոչ միայն հայերենում, այլև ուրիշ լեզուներում: Անգլերենում, օրինակ, Lorestan հիմնական ձևին զուգահեռ գործածվում են հետևյալ տարբերակները՝ Luristan, Lurestan, Loristan)

Ցեղանունից **-երեն** ածանցով կազմվել է **լոռերեն** լեզվանունը:

Այս լեզվի մասին հիշատակություն չկա լեզվաբանության բուհական դասագրքում, հայկական բազմահատորյա հանրագիտարանում, գլխաբառ չի դարձել «Լեզվաբանական բառարանում», թեև հիշատակվել է «Իրանական լեզուներ» բառահոդվածում (Պետրոսյան, Գալստյան, Ղարաբյուրյան, 1975, էջ 122): Սակայն լեզվանունը տեղ է գտել ժամանակակից հայերենի բացատրական ընդարձակ բառարաններում: Ակադեմիական բացատրականում **լոռերեն**-ը տրված է մյուս լեզվանունների նման. «1. գոյ. լոռերի լեզուն, 2. մկբ. լոռերի լեզվով» (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1972, էջ 425): Երկրորդ իմաստին Էդ. Աղայանն ավելացրել է նաև մակբայի արժեքը (Աղայան, 1976, էջ 536): Ի դեպ, այս բառարանում գլխաբառ է դարձել նաև **լոռեր** հոգնակիի ձևը՝ եզակիի **լոռ**, **լոռուհի** ձևերի հիշատակումով և «Իրանում ապրող մի ցեղ» բացատրությամբ, և **լոռերեն**-ը ամբողջովին հիմնավորված է դառնում:

Չնայած **լոռեր** ցեղանվան և **լոռերեն** լեզվանվան առկայությանը, վերջինիս որոշակիորեն ընդունված լինելուն, նկատում ենք, որ կազմվել է արմատահնչյունով տարբերվող **լուրերեն** բառը, գործածվել դրա փոխառյալ **լուրի** տարբերակը (Հարությունյան, 2016, էջ 405): Դա

ակներևաբար տեղի է ունեցել օտար լեզուների ազդեցությամբ. հմմտ. անգլ. Luri language, ռուս. лурский язык «язык луров»: Լեզվանվան բառարանային արձանագրումները և թեկուզ սահմանափակ գործածությունը խոսում են **լուերեն** տարբերակի օգտին:

ՔՐՂԵՐԵՆ

Քրղերենը հյուսիսարևմտյան իրանական լեզուներից է: Խոսվում է Թուրքիայում, Իրանում, Սիրիայում, Իրաքում, Հայաստանում և այլուր: Քրղերը պետություն չունեն, սփռված են աշխարհով մեկ: Խոսողների թիվը տատանվում է 35-ից 40 միլիոնի միջև, բայց այս թվերը ճշգրիտ չեն:

1992 թ. նոյեմբերի 5-ին Ստրասբուրգում ընդունված «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիային» Հայաստանը միացել է 2002 թ. մայիսի 1-ին և հայտարարել, որ Հայաստանի Հանրապետության փոքրամասնությունների լեզուներն են ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը և քրղերենը (www.arils.am):

Քրղերի լեզվի անունը տարբերակայնություն է դրսևորվում ժամանակակից գրական հայերենի երկու ճյուղերում: Լեզվանվան տարբերակայնությունը բխում է իրանյան ժողովրդի անվան տարբերակայնությունից՝ արևել. **քուրդ** / **քիւրդ** (հնգ.) և արևմտ. **քուրտ** / **քիւրտ** (արտասանվում է *քուրդ*): Արևելահայերենում ընդունված **քրղերեն**-ի դիմաց արևմտահայերենն ունի երկու տարբերակ՝ **քրտերէն** (Frondjian, 1952, էջ 497) և **քիւրտերէն** (Լուսինեան, Բասմաջեան, 1915, էջ 822), որոնք հատկանշվում են հնչյունափոխված և անհնչյունափոխ բառակազմական հիմքերով: Հայերեն-գերմաներեն նոր բառարանում նույն բառահոդվածում տրված են արևմտ. **քիւրտերէն** և արևել. **քրղերեն** տարբերակները (Թորոսեան, 2019, էջ 740. **քրտերէն**-ը բացակայում է): Արևելահայերենում միայն **քրղերեն**-ն է գործածական, արևմտահայերենում՝ **քրտերէն**-ը, իսկ **քիւրտերէն**-ը հնացած է համարվում. հազվադեպ է վերջինիս **դ**-ով՝ **քիւրդերէն** տարբերակը (Գյուրջինյան, 2022, էջ 30): Նաև պետք է ասենք, որ արևմտահայերենի թարգմանական հայտնի մի բառարանում արձանագրված է միայն **քրղերէն**-ը (Գույումճեան, 1950, էջ 880): Գրական արևմտահայերենում **քրտերէն** / **քրղերէն**, **քիւրտերէն** / **քիւրդերէն** տարբերակների առկայությունը ոչ միայն լեզվանվան գործածության և բառարանագրման պատմությունն է, այլ նաև վկայությունն այն բանի, որ, այնուամենայնիվ, որոշակի միասնականություն հաստատելու խնդիր կա:

Քննարկվող լեզվանունը բառարանագրական հարուստ պատմություն ունի: Բառարանագրվել է հայերենի (արևմտահայերենի

և արևելահայերենի) տարբեր բառարաններում: Թերևս առաջին արձանագրումը, ինչպես տեսանք, եղել է 1915-ին Կոստանդնուպոլսում, թարգմանական բառարանում: Սովորաբար ներառվում է հայերեն-օտար լեզու թարգմանական ընդհանուր (և ընդարձակ) բառարանների բառացանկում:

Հայերենի բացատրական բառարաններում լեզվանունը եռարժեք է՝ գոյ. «քրդերի լեզուն», ած./մկբ. «քրդերի լեզվով», «քրդերի լեզվի» (Մալխասեանց, 1945, էջ 592, Աղայան, 1976, էջ 1578, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1980, էջ 753): Ստ. Մալխասյանցի բառարանում **քրդերէն** լեզվանվան հետ նույն բառահոդվածի գլխաբառ է դարձել **քրդեվար** բառը ևս, որը ժամանակին բնորոշ է եղել հայերեն ժողովրդական-բարբառային խոսքին:

Իրանական լեզուների անուններից միայն **քրդերեն**-ն է տեղ գտել հայերենի հաճախականության բառարանում, այն էլ՝ «2-1 հաճախականություն ունեցող բառերի ցանկում» (Ղազարյան, 1982, էջ 367):

ԵԶՂԻԵՐԵՆ

Որպես Սիրիայում, Իրաքում, Թուրքիայում, Հայաստանում, Վրաստանում և այլուր ապրող եզդիների լեզու գիտական գրականության մեջ, այլուր ավանդաբար նշվել է քրդերենը: Այսպես. «Բոլորովին առանձին են նաև եզդիները Նրանք ունեն առանձին կրոն, որ շատ հայտնի չէ. խոսում են քրդերեն» (Աճառյան, 1955, էջ 479), «Եզդիները խոսում են քուրմանջի քրդերենով» (Նալբանդյան, 1960, էջ 52) և այլն: Ավելին, Խորհրդային Հայաստանի 1936 թ. մարդահամարից մինչև 1989 թ. սովետական վիճակագրական հաշվետվությունները եզդիներին մտցնում էին քրդերի բաժնի մեջ. Այնինչ 1922 թ. ՀԽՍՀ առաջին պաշտոնական մարդահամարը տարանջատել է եզդիներին և քրդերին (Առաքելովա, 2015, էջ 10):

Իրենց լեզուն եզդիները կոչում են **եզդիկի**, որը քրդերենի կուրմանջի բարբառի մի խոսվածքն է:

Հայերեն գիտական խոսքում (և առհասարակ) մինչև վերջին ժամանակները **եզդիերեն** բառ (լեզվանուն) չի գործածվել: Բառային այս միավորը Հայաստանի նոր անկախության շրջանում է սկսել գործածվել: Հայերենում պաշտոնապես շրջանառության մեջ է դրվել 2001 թվականի վերջից, երբ Հայաստանը միացավ «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիային» (<https://www.irtek.am/views/act.aspx?aid=15653>. մուտք՝ 22.01.2024 թ.): Այս փաստաթղթում եզդիերենը հիշատակվում է որպես Հայաստանի ազգային փոքրամասնություններից մեկի լեզու:

Արևելահայերենի ազգային կորպուսում **եզդիերեն** բառի սակավաթիվ գործածությունների վկայությունները (16 համատեքստ, 12 տեքստ, ընդ որում մի մասը՝ բանավոր խոսքից, մնացածը՝ մամուլից) սկսվում են 2002 թվականից (www.eanc.net): 2005 թվականին Երևանում լույս է տեսել «Եզդիերենի այբբենարան» («Ալիֆբան»), 2016-ին՝ հանրակրթական դպրոցի 3-5-րդ դասարանների «Եզդիերեն լեզու» դասագիրքը (Թամոյան, 2016) և այլն: Եզդիերենի ազգային միության «Էզդիխանա» պաշտոնաթերթի նշանաբանն է՝ «Ազգությունս՝ եզդի, լեզուս՝ **եզդիերեն**, կրոնս՝ շարֆադին» (2014, դեկտեմբեր, N 12. <https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Ezdixana/2014/12.pdf>. մուտք՝ 13.02.2024 թ.): Պատահում է մամուլում, այդ թվում՝ պաշտոնական լրատվության մեջ: Այսպես. «Եզդի ժողովրդի լեզուն, կրոնն ու ավանդույթները պահպանելու գործում այն չափազանց մեծ դեր ունի, սակայն հասունացել է **եզդիերեն** հաղորդումները բարեփոխելու ժամանակը» (<https://armenpress.am/arm/news/840222>. մուտք՝ 13.02.2024 թ.): Գիտական խոսքում դեռևս չի հանդիպում:

Հազվադեպ է **եզդիկի** փոխառյալ տարբերակը (Հարությունյան, 2016, էջ 404):

ՉԱՉԱՅԵՐԵՆ

Չազաները քրդական ցեղ են, ապրում են այժմյան Թուրքիայի պատմական Դերսիմի շրջանում:

Հայերենում Չազաների լեզուն անվանելու համար նախ գործածվել է **զազա** ցեղանուն-լեզվանունը (Աճառյան, 1971, էջ 63), որը մեր օրերում էլ հազվադեպ պատահում է: Այսպես, օրինակ՝ «... որոնց թվին են դասվում նաև գիլաքին, Մազանդարանի բարբառը, **զազան**, ազարին (ատրպատականցիների հին լեզուն)» (Ասատրյան, 1993, էջ 18), «Այս ներկա ժամանակաձևը հանդիպում է **զազայում**» (Հակոբյան, 2022, էջ 3, տե՛ս նաև Հարությունյան, 2016, էջ 404):

Օտար լեզվանունները հայերենացնելու ընթացքում **զազա** ցեղանուն-լեզվանվանն ավելացվեց **-երեն** ածանցը, առաջին բաղադրիչի վերջի **ա**-ից հետո օրինաչափորեն հավելվեց **յ** կիսաձայնը, և կազմվեց **զազայերեն** լեզվանունը: Գործածվում է լեզվաբանական, մասնավորապես իրանագիտական աշխատություններում: Օրինակներ՝ «... պատկանում է իրանական լեզվախմբի (հնդեվրոպական լեզվաընտանիքի) հյուսիս-արևմտյան ճյուղի կասպյան խմբին, որն ընդգրկում է նաև **զազայերենը** (զազաների կամ դլմիկների լեզուն)» (Ասատրյան, 1995, էջ 24), «Այն, որ **զազայերենը** առանձին լեզու է, այլ ոչ թե քրդերենի բարբառներից մեկը ... ապացուցված է» (Չանդոյան, 2022, էջ 142): Երբեմն հանդիպում է մամուլում, լրատվական կայքերում:

Այսպես. «Իրանական լեզու է նաև **զազայերենը**՝ տարածված, մասնավորապես, այսօրվա Թուրքիայի Դերսիմի (Թունջեի) շրջանում» («Անկախ», 09.10.2017), «Համալսարանի տարբեր ֆակուլտետներում նախատեսվում է որպես կամընտրական առարկաներ ուսուցանել հայերեն, քրդերեն, **զազայերեն**, արաբերեն» (<https://armenpress.am/arm/news/636354>. մուտք՝ 23.01.2024 թ.), «Ոչ բոլոր զազաներն են **զազայերենի** կրողներ. կան նաև քրդախոսներ ու թուրքախոսներ» (www.panarmenian.net/m/arm/details/225050. մուտք՝ 11.01.2024 թ.):

Զազաների ինքնանվանական բառերն են **դըմլի** կամ **դիմլա**, հայերն այս ժողովրդին կոչում են **դլմիկ**, որն ավանդված է հայկական միջնադարյան մատենագրության մեջ (**Ասատրյան**, 1995-1996, էջ 38): Հնչյունների դրափոխությամբ առաջացած **դլմիկ** ցեղանունից –**երեն** ածանցով կազմվել է սակավադեպ **դլմկերեն** լեզվանունը: Գործածության օրինակներ՝ «Բնակչության հիմնական մասը կազմում է իսլամական միջնադարում Իրանի մերձկասպյան Դեյլամի լեռնային շրջանից դուրս եկած գաղթականությունը, որը խոսում է **դլմկերենին (զազայերեն)**, թալիշերենին և գիլաներենին մոտ գորանի լեզվի բարբառներից մեկով» (<https://armeniasputnik.am/20170613>. մուտք՝ 22.01.2024 թ.), «Այս երգի լեզուն՝ **դլմկերենը** կամ **զազայերենը**, Հայկական լեռնաշխարհ է եկել միջնադարում Իրանի մերձկասպյան Դեյլամ երկրամասից» (<https://shabat.am/am/article/139589>. մուտք՝ 22.01.2024 թ.): Երկու դեպքում էլ ընթերցողին հասկանալի լինելու նպատակով **դլմկերեն**-ի հետ գործածվել է **զազայերեն**-ը՝ որպես պարզաբանող միավոր (զույգ գործածությունն էլ կապվում է իրանագետ Վ. Ոսկանյանի հետ):

Բառարանային հետաքրքրական արձանագրում կա սկադեմիական բացատրական բառարանում. այստեղ որպես գլխաբառ գրանցված **զազա** բառի առաջին իմաստն է «քրդական մի ցեղի և բարբառի անուն» (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1972, էջ 1), մինչդեռ Ստ. Մալխասյանցի և Էդ. Աղայանի բառարանները բարբառի մասին նշում չունեն (Մալխասեանց, 1944, էջ 5, Աղայան, 1976, էջ 359):

Զազայերեն և **դլմկերեն** հայակազմ լեզվանունները բառարանային գրանցում չունեն, բայց տեղ պիտի գտնեն իրանական լեզուների հայերեն անունների ցանկում:

ԳՈՒՐԱՆԵՐԵՆ / ԳՈՐԱՆԵՐԵՆ

Իրանի հյուսիսարևմտյան շրջաններում՝ Քերմանշահի մերձակայքում, և Իրաքի սահմանակից որոշ շրջաններում ապրում են ցեղային-դավանական ինքնատիպ ցեղեր՝ **գուրան** (կամ **գորան**)

ընդհանուր անվամբ: Գուրանների լեզուն պատկանում է իրանական լեզվախմբի հյուսիսարևմտյան ճյուղի կասպյան խմբին:

Ցեղանվան երկու տարբերակներն էլ լեզվանվան հիմք են դարձել: Այսպես: Փոխառյալ լեզվանունը իրանական մյուս լեզուների նման կազմված է բառավերջի **ի** մասնիկով՝ **գուրանի**, հայերեն լեզվանվան մեջ նրա փոխարեն հանդես է գալիս **-երեն** ածանցը՝ **գուրաներեն**: Սրանք միևնույն խոսքաշարում գործածվում են ինչպես առանձնաբար, այնպես էլ միաժամանակ: Այսպես. «Գուրանների լեզուն՝ **գուրանին**, մանավանդ նրա ավրոմանի (կամ հավրամի) բարբառը, իրանական առավել հետաքրքիր և հնավանդ լեզուներից է»: «16-18-րդ դարերում **գուրանին՝ գուրաներենը**, հյուսիս-արևմտյան իրանում ձեռք է բերում, այսպես կոչված, վերբարբառային koine-ի կարգավիճակ»: «**Գուրաներենով** (գլխավորապես ավրոմանի բարբառով) գոյություն ունի հարուստ գրականություն» (Ասատրյան, 1995, էջ 24-25): Սրանք եզակի կիրառություններ են:

Գիտական խոսքում գործածվում են նաև **գորան** հիմքով կազմված **գորաներեն** տարբերակային լեզվանունը: Օրինակ՝ «Քուրդ ժողովրդի մի մասը խոսում է նաև հյուսիսարևմտյան իրանական երկու այլ լեզուներով՝ զազայերեն (զազակի) և **գորաներեն** (գորանի կամ հավրամանի) լեզուներով» (Չանդոյան, 2022, էջ 141): Սա էլ հազվադեպ է իրանագիտական աշխատություններում:

Հայակազմ **գուրաներեն** և **գորաներեն** տարբերակային լեզվանունները բառարանային գրանցում չունեն, սակայն դրանք պիտի ներմուծել իրանական լեզվանունների ցանկ:

ՕՐՄՈՒՐԵՆԵՆ

Միջին դիրք է գրավում արևելյան և արևմտյան իրանական լեզուների միջև: Մարա-պարթևական բարբառներից միջին դարերում առաջացել են քրդերենը, բելուջերենը, կասպյան, կենտրոնաիրանական և օրմուրի-պարաչիական խմբերի լեզուները (խոսվածքները) (հմմտ. Широков, 1985, с. 156):

Հայ լեզվաբանության մեջ սկզբնապես գործածվել է փոխառյալ **օրմուրի** լեզվանունը (ռուս. ормури, ֆրանս. orhuri), ըստ այդմ էլ որպես գլխաբառ գրանցվել է «Լեզվաբանական բառարանում», որտեղ ասվում է, որ մինչև փուշթու լեզվի տարածումը Աֆղանստանի բնակչությունը խոսել է օրմուրի լեզվով, որը, սակայն, աստիճանաբար դուրս է մղվել ինչպես փուշթուի, այնպես էլ պարսկերենի կողմից (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 314):

Բառարանում որպես տարբերակ նշված է **լոգոր**, որը թերևս վրիպակ է. պիտի լիներ **լոգար**. Լոգարը գավառ է Աֆղանստանում՝ Քաբուլից հարավ-արևելք, որտեղ խոսվել (խոսվում) է այս լեզուն (բարբառը) (Оранский, 1963, с. 168): Այժմ Աֆղանստանում և Պակիստանում օրմուրի լեզվով սակավաթիվ (շուրջ հազար) խոսողներ կան:

Լեզվանունների հայերենացման ընթացքում կազմվել է բառույթով արտահայտված **օրմուրերեն** լեզվանունը: Օրինակ՝ «Մի շարք իրանական լեզուներում (փուշտու, պամիրյաններից՝ մունջաներենում, յիդգայերենում, բելուջերենում, **օրմուրերենում**, պարաչիերենում, որոնք ձևավորվել են հնդարիականների տարածքում)....» (Մկրտչյան, 2015, էջ 28): Սա լեզվանվան եզակի գործածություններից է:

Հայերեն տարբերակը չի բառարանագրվել:

ՊԱՐԱՉԻԵՐԵՆ

Օրմուրերենին ամենամոտ լեզուն է. ինչպես ասվեց, երկուսն էլ առաջ են եկել մարա-պարթևական բարբառներից: Գիր չունի: Խոսվում է մասնավորապես Աֆղանստանի մայրաքաղաք Քաբուլից հյուսիս և հյուսիսարևմուտք ընկած մի քանի բնակավայրերում, սակայն օրմուրերենի պես դուրս է մղվում աֆղաներենի և պարսկերենի կողմից: Այս լեզվով խոսում է ընդամենը մի քանի հարյուր մարդ: Լեզվակիրները հիմնականում երկլեզու են:

Հայերեն լեզվաբանական գրականության մեջ անցյալ դարում գործածվել է **պարաչի** փոխառյալ լեզվանունը, որն էլ գլխաբառ է դարձել «Լեզվաբանական բառարանում» (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 259): Այստեղ տրված է նաև **փարաչի** հնչյունական տարբերակը. հմմտ. անգլ. Parachi, ֆրանս. parachi, գերմ. Paratschi կամ Parachi, ռուս. парачи:

Խիստ հազվադեպ է **պարաչիերեն** լեզվանունը, որը կազմվել է մյուս լեզվանուն / բարբառանունների համաբանությամբ: Օրինակ՝ «.... պամիրյաններից՝ մունջաներենում, յիդգայերենում, բելուջերենում, օրմուրերենում, **պարաչիերենում**, որոնք ձևավորվել են հնդարիականների տարածքում....» (Մկրտչյան, 2015, էջ 28): Սա արդեն XXI դարի կազմություն է: Բայց իրանագետները լեզվաբանական (բարբառագիտական) աշխատանքներում շարունակում են գործածել հիշյալ լեզուների փոխառյալ տարբերակները՝ **օրմուրի**, **պարաչի** (Հակոբյան, 2022, էջ 5):

Հայակազմ տարբերակն արձանագրված չէ հայերենի որևէ բառարանում, բայց այն պետք է ընդգրկել իրանական լեզուների և բարբառների հայերեն ցանկում:

ՍԵՄՆԱՆԵՐԵՆ

«Լեզվաբանական բառարանում» որպես գլխաբառ տրված է **Սեմնանի բարբառ**-ը՝ «նոր պարսկերենի բարբառներից մեկը» բացատրությամբ: Իրանի Սեմնան քաղաքի լեզուն է, որը ոմանք առանձին լեզու են համարում՝ նշելով, որ պատկանում է իրանական լեզուների հյուսիսարևմտյան ճյուղին, պահպանել է միջին պարսկերենի բառապաշարը, քերականական իրողություններ և բավական տարբեր է արդի պարսկերենից: Խոսողների թիվը՝ մոտ 70 հազար:

Անկախ լեզու թե բարբառ համարելուց՝ փաստ է, որ կազմվել է **սեմնաներեն** հայերեն լեզվանունը (անգլ. Semnani language, ռուս. семнанский язык, ֆրանս. semnani): Հայերեն գիտական խոսքում հազվադեպ է: Օրինակ՝ ««Մարական խումբը», ուր մտնում էր նաև պարթևերենը, «ծնել է» մեծ քանակությամբ խոսվածքներ Դրանք են բելուջերենը, **սեմնաներենը**, մազանդարաներենը, գիլաքին, թալիշերենը, թաթերենը» (Ռոդայեհ, 2017, էջ 17-18):

ԲԱԽՏԻԱՐԵՐԵՆ

Բախտիարները Իրանի հնագույն բնակիչներն են: Նրանց բարբառը (կամ լեզուն) պատկանում է իրանական լեզուների հյուսիսարևմտյան ճյուղին: Խոսողության տարածքը՝ Չհարմահալ, Բախտիարի, Խուզեստան, Լոռեստան, Սպահան. խոսողների թիվը՝ շուրջ մեկ միլիոն:

Տպագիր գիտահանրամատչելի խոսքում արձանագրել ենք ցեղանուն հիմքից կազմված **բախտիարերեն** բարբառանունը. «Իրանի արևմուտքում, իրանա-իրաքյան սահմանի երկայնքով տարածված են լուրերեն ու **բախտիարերեն** բարբառները» (Բայբուրդյան, 2001, էջ 8): Գիտաուսումնական խոսքում հանդիպում է **տ**-ով տարբերակը՝ **բախտիարերեն**-ը՝ որպես իրանական լեզվի անուն (Մանասյան, 2011, էջ 130): Հարկ է նշել, որ հայերենում **բախտիար(ի)** ցեղանունը և **Բախտիար** հատուկ անունը (տեղանուն և անձնանուն) ևս ընդունված է նույն տառով գրել. այսպես՝ «Աբաս խանը լորիստանցի **բախտիարներից** էր», «Երիտասարդ **բախտիարին** դատարկ բաժակը ետ տվավ» («Ասի (վեպ պարսկական կյանքից)». Փափազյան, 1958, էջ 101, 133), **Բախտիարի լեռներ**, **Բախտիար** Հովակիմյան: **Թ**-ով վերոհիշյալ տարբերակն ընդունելու պարագայում համակարգայնության խախտում տեղի կունենա:

Այս և ուրիշ լեզվանուններ (ու բարբառանուններ) պարզորոշ ցույց են տալիս **-երեն** ածանցի բառակազմական մեծ ներուժը, որի շնորհիվ համարվում է հայակազմ լեզվանունների ցանկը (Գյուրջինյան, 2021, էջ 17-37, Ավստրոնեզ 2023, էջ 125-147, Դադստանյան 2023, էջ 65-98):

ԲԵՀԴԻՆԵՐԵՆ

Իրանի Յազդ և Քերման քաղաքներում, ինչպես նաև շրջակա մի շարք գյուղերում բնակվող զրադաշտականների ներհամայնքային լեզուն, որը պատկանում է իրանական լեզուների մարական ենթախմբին, կոչում են **բեհդիներեն** (Behdini. լեզվանվան հիմքում ընկած է միջին պարսկերեն vehden «վեհ կրոնի հետևորդ» բառը) (Հայրապետյանց, 2021, էջ 145-146):

Զուգահեռաբար գործածվում է նաև **բեհդինի** փոխառյալ լեզվանունը: Օրինակ՝ «**Բեհդինի** -ս/-սց-ով կազմված ձևերը կարելի է համարել Քերմանի պարսկական բարբառի ազդեցության արդյունք» (Հայրապետյանց, 2021, էջ 150):

Հայակազմ **բեհդիներեն**-ի և փոխառյալ **բեհդինի**-ի բառային տարբերակն է փոխառյալ **գաբրի** լեզվանունը: Բոլորն էլ խիստ սակավադեպ են:

Եզրակացություններ

1. Իրանական լեզուներից երկուսի անունները՝ **պարսկերեն** և **պարթևարեն**, գործածվել են V դարի հայերենում: VII դարում վկայվել է **պարսիկ լեզու** լեզվանունը, միջին հայերենում՝ **Ֆարսի**-ն, որից հետագայում առաջացել է **Ֆարսերեն**-ը: Մյուս լեզվանունները նոր ժամանակների և մեր օրերի կազմություններ են:

2. «Իրանական լեզվանունները» կենդանի և մեռած լեզուների, որոշ դեպքերում՝ նաև բարբառների անուններ են: **Լեզվանուն** բառն այդ պարագայում փաստորեն նշանակում է նաև «բարբառանուն»:

3. Իրանական բոլոր լեզուների հայերեն անունները կազմվել են **-երեն** վերջածանցով, միայն գրաբարյան **պարթևարեն**-ը և XX դարի տարբերակային **սոգդիարեն**-ը՝ **-արեն** ածանցով:

4. Իրանական լեզուների հայերեն անունները ունեն տարատեսակ տարբերակներ՝

ա) հնչյունական-ուղղագրական (տառադարձության)՝ **սողդերեն** - **սոգդերեն** / **սողդիերեն** - **սոգդիերեն**, **լոռերեն** - **լուրերեն**.

բ) բառակազմական՝ **պարթևարեն** - **պարթևերեն**, **օսերեն** - **օսերթերեն**.

գ) բառային՝ **սակերեն** - **խոթաներեն**, **մարերեն** - **մեդերեն**:

դ) կառուցվածքային (բառ և բառակապակցություն)՝ **պարսկերեն** - **պարսից լեզու**:

Գիտական խոսքում, մասնավորապես իրանագիտական լեզվաբանական աշխատանքներում, նկատվում է հայակազմ և փոխառյալ լեզվանունների տարբերակայնություն, ինչպես՝ **մազանդարաներեն - մազանդարանի**:

5. Հայերեն լեզվանունների գիտական անվանակարգում հարկավոր է նվազագույնի հասցնել իրանական լեզուների անունների տարբերակայնությունը և միասնականություն հաստատել, որը կնպաստի գիտական խոսքի ճշտությանը և կանոնավորությանը:

6. Հին հայերենի բառարաններում գլխաբառ են դարձել **պարսկերէն** և **պարթեարէն** լեզվանունները, աշխարհաբարի միալեզվյան (բացատրական, ուղղագրական, լեզվաբանական (մասնագիտական), հանրագիտական, հանգաբառարան) և թարգմանական բառարաններում՝ **ավեստերեն, աֆղաներեն, բելուջերեն, գիլ(յ)աներեն, թաթերեն, թալիշերեն, լոռերեն, խորեզմերեն, մարերեն, յաղնոբերեն, պահլավերեն, սակերեն, սկյութերեն, սողդերեն / սոգդ(ի)երեն, տաջիկերեն / թաջիկերեն, քրդերեն, օսերեն / օսեթերեն** հայակազմ լեզվանունները և դրանց տարբերակները:

7. Չեն բառարանագրվել **ազարարեն, ալաներեն, բախթարերեն / բախտիարերեն, բակտր(ի)երեն, բեհդիներեն, գալեշերեն, գուրաներեն / գորաներեն, դարիերեն, դիգորերեն, եզդիերեն, զազայերեն, իրոներեն, խոթաներեն / խոթանո-սակերեն / խոթանասակերեն, մազանդարաներեն, մեդերեն, պարաչիերեն, սեմնաներեն, օրմուրերեն, ֆարսերեն / փարսերեն** հայակազմ լեզվանունները (ներառյալ բարբառանունները):

8. Իրանական լեզուների հայերեն անուններից համագործածական են **պարսկերեն, տաջիկերեն** և **քրդերեն** լեզվանունները: Մի շարք լեզվանուններ հանդիպում են միայն գիտական տեքստերում, մի քանիսը հայտնի են եզակի գործածություններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Աբրահամյան Ռ. (1965), Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-նուսերեն-անգլերեն բառարան, Երևան, 338 էջ:
Abrahamyan R'. (1965), Pahlaveren-parskeren-hayeren-oooseren-angleren bar'aran, Erevan, 338 e'j: (in Armenian)

2. Ագաթանգեղոս (1983), Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 552 էջ:
Agat'angeghos (1983), Hayoc patmowt'yown, ashxarhabar t'argmanowt'yowny' & c'anot'agrowt'yownnery' A. Ter-Ghevondyani, Erevan, 552 e'j: (in Armenian)
3. Ագաթանգեղոս (1909), Պատմութիւն Հայոց, Տփղիս, 504 էջ:
Agat'angeghos (1909), Patmowt'iwn Hayoc, T'p'ghis, 504 e'j: (in Armenian).
4. Աղայան Է. Բ. (1976), Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1642 էջ:
Aghayan E'.B.(1976), Ardi hayereni bacatrakan bar'aran, Erevan, 1642 e'j: (in Armenian)
5. Աղայան Է. Բ. (1971), Դրվագներ արևելքի գրականության պատմության, Երևան, 243 էջ:
Aghayan E'. B. (1971), Drvagner arevelqi grakanowt'yan patmowt'yan, Erevan, 243 e'j: (in Armenian)
6. Աղայան Է. Բ. (1987), Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 734 էջ:
Aghayan E'. B. (1987), Lezvabanowt'yan himownqner, Erevan, 734 e'j: (in Armenian)
7. Աղայան Է. Բ. (1967), Լեզվաբանության ներածություն, Երևան, 638 էջ:
Aghayan E'. B. (1967), Lezvabanowt'yan nerac'owt'yown, Erevan, 638 e'j: (in Armenian)
8. Աղայան Ղ. (1962), Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 414 էջ:
Aghayan Gh. (1962), Erkeri jhoghovac'ow, h. 1, Erevan, 414 e'j: (in Armenian)
9. Աճառյան Հ. (1955), Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների. Ներածություն, Երևան, 656 էջ:
Atwar'yan H. (1955), Liakatar qerakanowt'yown hayoc lezvi, hamematowt'yamb 562 lezowneri. Nerac'owt'yown, Erevan, 656 e'j: (in Armenian)
10. Աճառյան Հ. (1971), Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 699 էջ:
Atwar'yan H. (1971), Hayeren armatakan bar'aran, h. 1, Erevan, 699 e'j: (in Armenian)

11. Աճառյան Հ. (1940), Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, 356 էջ:
Atwar'yan H. (1940), Hayoc lezvi patmowt'yown, I mas, Erevan, 356 e'j:
(in Armenian)
12. Առաքելովա Վ. (2015), Եզդիները և նրանց կրոնը, Երևան, 216 էջ:
Ar'aqelova V.(2015), Ezdinery'&nranckrony', Erevan, 216e'j:(in Armenian)
13. Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի, (1865), Բ տպ., Վենետիկ, 849 էջ:
Ar'd'er'n bar'aran Haykaznean lezowi, (1865), B tp., Venetik, 849 e'j:
(in Armenian)
14. Ասատրյան Գ. (29.09.1989), Ադրբեջան տեղանվան, ազարի լեզվի և հարակից այլ հարցերի մասին, «Գրական թերթ»:
Asatryan G. (29.09.1989), Adrbejan teghanvan, azari lezvi & harakic ayl harceri masin, «Grakan t'ert'»: (in Armenian)
15. Ասատրյան Գ. (1995 թ. 1), Գուրաններ, «Իրան-նամէ», էջ 21-30:
Asatryan G.(1995t'.1), Gowranner, «Iran-name'», e'j 21-30: (in Armenian)
16. Ասատրյան Գ. (1995, թ. 6 - 1996, թ. 1), Ջազաների ավանդական աշխարհայացքը (համառոտ ակնարկ), «Իրան-նամէ», էջ 38-40:
Asatryan G. (1995, t'. 6 - 1996, t'. 1), Zazaneri avandakan ashxarhayacqy' (hamar'ot aknark), «Iran-name'», e'j 38-40:
(in Armenian)
17. Ասատրյան Գ. (1993), 4, Թալիշներ, «Իրան-նամէ», էջ 17-19: Asatryan G. (1993), 4, T'alishner, «Iran-name'», e'j 17-19: (in Armenian)
18. Աւետիքեան Գաբրիէլ (1837), Սիրմէլեան Խաչատուր, Ազերեան Մկրտիչ, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Կ. Բ, Վենետիկ, 1068 էջ:
Awetiqean Gabrie'l (1837), Siwrme'lean Xachatowr, Awgerean Mkrtich, Nor bar'girq Haykazean lezowi, h. B, Venetik, 1068 e'j: (in Armenian)
19. Բայբուրդյան Վ. (2001, նոյեմբեր), Քանի՞ լեզու է տարածված Իրանում, «Միհր», էջ 6-9:
Baybowrdyan V. (2001, noyember), Qani' lezow e' tarac'vac' Iranowm, «Mihr», e'j 6-9: (in Armenian)
20. Բարաթյան Ն. (2002), Հայերեն-անգլերեն բառարան, Երևան, 592 էջ:
Barat'yan N. (2002), Hayeren-angleren bar'aran, Erevan, 592 e'j:
(in Armenian)

21. Բարլեզիզյան Ա. (2009), Հայերեն-ֆրանսերեն բառարան, Երևան, 976 էջ:
Barlezizyan A. (2009), Hayeren-franseren bar'aran, Erevan, 976 e'j:
(in Armenian)
22. Բարսեղյան Հ. Խ. (1973), Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Երևան, 980 էջ:
Barseghyan H. X. (1973), Hayeren owghghagrakan-owghghaxosakan, terminabanakan bar'aran, Erevan, 980 e'j: (in Armenian)
23. Գյուրջինյան Դ. (2023), Ավստրոնեզիական (մալայա-պոլինեզյան) լեզուների հայերեն անվանումները. գործածության և կանոնարկման հարցեր, «Լրաբեր հասարակական գիտությունների», էջ 125-147:
Gowrjinyan D. (2023), Avstroneziakan (malaya-polinezyan) lezowneri hayeren anvanowmneri'. gorc'ac'owt'yan & kanonarkman harcer, «Lraber hasarakakan gitowt'yowneri», e'j 125-147: (in Armenian)
24. Գյուրջինյան Դ., Դաղստանյան լեզուների հայերեն անունները. գործածությունը և բառարանային մշակումը, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Լեզվաբանություն և բանասիրություն, 2023, էջ 65-98:
Gowrjinyan D., Daghstanyan lezowneri hayeren anownneri'. gorc'ac'owt'yowny' & bar'aranayin mshakowmy', Banber V. Bryowsovi anvan petakan hamalsarani, Lezvabanowt'yown & banasirowt'yown, 2023, e'j 65-98: (in Armenian)
25. Գյուրջինյան Դ., Լեզվանունների արևելահայերեն / արևմտահայերեն տարբերակայնությունը, Հանրապետական գիտաժողով՝ նվիրված Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակին, Հանրապետական գիտաժողովի նյութեր, պրակ Գ, Երևան, 2022, էջ 26-37:
Gowrjinyan D., Lezvanownneri ar&elahayeren / ar&mtahayeren tarberakaynowt'yowny', Hanrapetakan gitajhoghov' nvirvac' X. Abovyani anv. HPMH himnadrman 100-amyakin, Hanrapetakan gitajhoghovi nyowt'er, prak G, Erevan, 2022, e'j 26-37: (in Armenian)
26. Գյուրջինյան Դ. (2023), Հինգերորդ դարի հայերեն լեզվանունները, «Վէմ», էջ 102-139:
Gowrjinyan D. (2023), Hingerord dari hayeren lezvanownneri', «Ve'm», e'j 102-139: (in Armenian)

27. Գյուրջինյան Դ. (2021), Հնդկական լեզուների անունները հայերենում. գործածության, կանոնարկման և բառարանային մշակման հարցեր, Հայ բառարանագրության արդի խնդիրներն ու հեռանկարը, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, էջ 17-37:
Gyowrjinyan D. (2021), Hndkakan lezowneri anownnery' hayerenowm. gorc'ac'owt'yan, kanonarkman & bar'aranayin mshakman harcer, Hay bar'aranagrowt'yan ardi xndirnern ow her'ankary', Mijazgayin gitajhoghovi nyowt'er, Erevan, e'j 17-37: (in Armenian)
28. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն. (2010), Հայոց լեզու, դասագիրք ավագ դպրոցի 10-րդ դասարանի համար (հումանիտար հոսք), Երևան, 224 էջ:
Gyowrjinyan D., Heqeqyan N. (2010), Hayoc lezow, dasagirq avag dproci 10-rd dasarani hamar (howmanitar hosq), Erevan, 224 e'j: (in Armenian)
29. Գույումճեան Մ. Կ. (1950), Ընդարձակ բառարան հայերէնէ անգլիերէն, Կահիրէ, 1152 էջ:
Gowyowmtwean M. K. (1950), Y'ndard'ak bar'aran hayere'ne' angliere'n, Kahire, 1152 e'j: (in Armenian)
30. Եզնիկ Կողբացի (1970), Եղծ աղանդող, Աղանդների հերքումը, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա. Աբրահամյանի, Երևան, 256 էջ:
Eznik Koghbeci (1970), Eghc' aghandogh, Aghandneri herqowmy', t'argmanowt'yowny', nerac'owt'yowny' & c'annot'agrowt'yownnery' A.A. Abrahamyani, Erevan, 256 e'j: (in Armenian)
31. Եղիշէ (1989), Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 448 էջ:
Eghishe' (1989), Vasn Vardanay ew Hayoc paterazmin, Erevan, 448 e'j: (in Armenian)
32. Զորյան Ստ. (1983), Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 8, Երևան, 704 էջ:
Zoryan St. (1983), Erkeri jhoghovac'ow 12 hatorov, h. 8, Erevan, 704 e'j: (in Armenian)
33. Էբրահիմի Ա. Բ. (2013), Հին թաբարիի լեզվական առանձնահատկությունները (ըստ Ղուրանի հին թաբարիով թարգմանված ձեռագրի), բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման սեղմագիր, Երևան, 24 էջ:

- E'brahimi A. B. (2013), Hin t'abarii lezvakan ar'and'nahatkowt'yownnery' (y'st Ghowrani hin t'abariov t'argmanvac' d'er'agri), banasirakan gitowt'yownneri t'eknac'owi gitakan astitwani haycman seghmagir, Erevan, 24 e'j: (in Armenian)
34. Թամոյան Հ. , Թամոյան Ա. (2016), Եզդիերեն լեզու (Зьмахе эздики), Երևան, 100 էջ:
T'amoyan H. , T'amoyan A. (2016), Ezdieren lezow (Зьмахе эздики), Erevan, 100 e'j: (in Armenian)
35. Թորոսեան Լ. (2019), Ընդարձակ բառարան հայերէնէ-գերմաներէն, Վիեննա, 765 էջ:
T'orosean L. (2019), Y'ndard'ak bar'aran hayere'ne'-germanere'n, Vienna, 765 e'j: (in Armenian)
36. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (1969), հ. 1, Երևան, 602 էջ:
Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran(1969),h.1, Erevan, 602 e'j: (in Armenian)
37. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (1972), հ. 2, Երևան, 716 էջ:
Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran(1972), h.2, Erevan, 716 e'j: (in Armenian)
38. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (1974), հ. 3, Երևան, 674 էջ:
Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran(1974),h.3, Erevan, 674 e'j: (in Armenian)
39. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (1980), հ. 4, Երևան, 828 էջ:
Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran (1980), h. 4, Erevan, 828 e'j: (in Armenian)
40. Լուսինեան Գ., Բասմաջեան Կ. (1915), Առձեռն բառարան հայերէն աշխարհիկ լեզուէ ֆրանսերէն, Կ. Պոլիս, 840 էջ:
Lowsinean G., Basmajean K. (1915), Ar'd'er'n bar'aran hayere'n ashxarhik lezowe' fransere'n, K. Polis, 840 e'j: (in Armenian)
41. Խաչատրյան Լ. Մ. (2003), Գրաբարի բացատրական բառարան (ձևաբանորեն տարարժեք բառեր), Երևան, 384 էջ:
Xachatryan L. M. (2003), Grabari bacatrakan bar'aran (d'&abanoren tararjheq bar'er), Erevan, 384 e'j: (in Armenian)

42. Խաչատրյան Լ. Մ. (2021), Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, Երևան, 446 էջ:
Xachatryan L. M. (2021), Lezvabanakan terminneri owsowmnakan bar'aran, Erevan, 446 e'j: (in Armenian)
43. Խաչատրյան Լ. Մ. (2008), Լեզվաբանության ներածություն, Երևան, 304 էջ:
Xachatryan L. M. (2008), Lezvabanowt'yan nerac'owt'yown, Erevan, 304 e'j: (in Armenian)
44. Խաչատրյան Հ. (1980), «Արտաշես», Երևան, 476 էջ:
Xachatryan H. (1980), «Artashes», Erevan, 476 e'j: (in Armenian)
45. Խոսրոբաշեանց Աղ. (1838), Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ, հ. 2, Մոսկվա, 530 էջ:
Xowdabasheanc Agh. (1838), Bar'aran i haykakan lezowe' i r'owsac barbar', h. 2, Moskva, 530 e'j: (in Armenian)
46. Հակոբյան Գ. Գ. (2022), Հարավկասպյան-ատրպատականյան իրանական լեզվամիությունը, բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման սեղմագիր, Երևան, 23 էջ:
Hakobyan G. G. (2022), Haravkaspyan-atrpatakanyan iranakan lezvamiowt'yowny', banasirakan gitowt'yownneri t'eknac'owi gitakan astitwani haycman seghmagir, Erevan, 23 e'j: (in Armenian)
47. Հայ-ռուսերեն բառարան (1987), Երևան, 736 էջ:
Hay-r'owseren bar'aran (1987), Erevan, 736 e'j: (in Armenian)
48. Հայկական համաբարբառ 7, Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց (1976), բնագրային, գիրք 2-րդ, Երևան, 450 էջ:
Haykakan hamabarbar' 7, Movsisi Xorenacwoy Patmowt'iwn Hayoc (1976), bnagrayin, girq 2-rd, Erevan, 450 e'j: (in Armenian)
49. Հայկական սովետական հանրագիտարան (1974), հ. 1, Երևան, 720 էջ:
Haykakan sovetakan hanragitaran (1974), h. 1, Erevan, 720 e'j: (in Armenian)
50. Հայկական սովետական հանրագիտարան (1975), հ. 2, Երևան, 720 էջ:
Haykakan sovetakan hanragitaran (1975), h. 2, Erevan, 720 e'j: (in Armenian)

51. Հայկական սովետական հանրագիտարան (1978), հ. 4, Երևան, 720 էջ:
Haykakan sovetakan hanragitaran (1978), հ. 4, Erevan, 720 e'j:
(in Armenian)
52. Հայկական սովետական հանրագիտարան (1979), հ. 5, Երևան, 720 էջ:
Haykakan sovetakan hanragitaran (1979), հ. 5, Erevan, 720 e'j:
(in Armenian)
53. Հայկական սովետական հանրագիտարան (1983), հ. 9, Երևան, 720 էջ:
Haykakan sovetakan hanragitaran (1983), հ. 9, Erevan, 720 e'j:
(in Armenian)
54. Հայկական սովետական հանրագիտարան (1984), հ. 10, Երևան, 736 էջ:
Haykakan sovetakan hanragitaran (1984), հ. 10, Erevan, 736 e'j:
(in Armenian)
55. Հայկական սովետական հանրագիտարան (1985), հ. 11, Երևան, 720 էջ:
Haykakan sovetakan hanragitaran (1985), հ. 11, Erevan, 720 e'j:
(in Armenian)
56. Հայկական սովետական հանրագիտարան (1986), հ. 12, Երևան, 752 էջ:
Haykakan sovetakan hanragitaran (1986), հ. 12, Erevan, 752 e'j:
(in Armenian)
57. Հայոց լեզվի հանգաբառարան (1976), Երևան, 655 էջ:
Hayoc lezvi hangabar'aran (1976), Erevan, 655 e'j: (in Armenian)
58. Հայրապետյանց Ա. (2021), Իրանի զրադաշտականների լեզվի որոշ բառապաշարային միավորների շուրջ, Արևելագիտության հարցեր, N 19, Երևան, էջ 145-156:
Hayrapetyanc A. (2021), Irani zradashtakanneri lezvi orosh bar'apasharayin miavorneri showrj, Ar&elagitowt'yan harcer, N 19, Erevan, e'j 145-156: (in Armenian)
59. Հանրագիտական բառարան (2016), հ. 1, Երևան, 1120 էջ:
Hanragitakan bar'aran (2016), հ. 1, Erevan, 1120 e'j: (in Armenian)

60. Հարությունյան Հ. (2016), Աշխարհի բնակչության էթնոլեզվադավանական հակիրճ բնութագիրը / Պատմություն և մշակույթ. Հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, էջ 398-424:
Harowt'yownyan H. (2016), Ashxarhi bnakchowt'yan e't'nolezvadavanakan hakirtw bnowt'agiry' / Patmowt'yown & mshakowyt'. Hayagitakan handes (gitakan hodvac'neri jhoghovac'ow), Erevan, e'j 398-424: (in Armenian)
61. Հարությունյանց Մ. (1963), Հայ-ռուսերեն լեզվաբանական բառարան, Երևան, 308 էջ:
Harowt'yownyanc M. (1963), Hay-r'owseren lezvabanakan bar'aran, Erevan, 308 e'j: (in Armenian)
62. Հաֆեզ, Գազելներ և քառյակներ, թարգմ. Ժ. Աբրահամյան (2023), Երևան, 312 էջ:
Hafez, Gazelner & qar'yakner, t'argm. Jh. Abrahamyan (2023), Erevan, 312 e'j: (in Armenian)
63. Հովհան Մամիկոնյան (1980), Տարոնի պատմութիւն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Վ. Վարդանյանի, Երևան, 176 էջ:
Hovhan Mamikonyan (1980), Taroni patmowt'iwn, t'argmanowt'yowny', nerac'owt'yowny' & c'anot'agrowt'yownnery' V.Vardanyani, Erevan, 176e'j: (in Armenian)
64. Հովհաննիսյան Լ. Շ. (2016), Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, Երևան, 156 էջ:
Hovhannisyan L. Sh. (2016), Bar'eri meknowt'yownnery' hingerord dari hay matenagrowt'yan mej, Erevan, 156 e'j: (in Armenian)
65. Հովհաննիսյան Լ. Շ. (1990), Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 304 էջ:
Hovhannisyan L. Sh. (1990), Hayereni iranakan p'oxar'owt'yownnery', Erevan, 304 e'j: (in Armenian)
66. Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց (1904), Տփղիս, 211 էջ:
Ghazaray P'arpecwoy Patmowt'iwn Hayoc (1904), Tr'ghis, 211 e'j: (in Armenian)
67. Ղազարյան Բ. Կ. (1982), Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Երևան, 759 էջ:
Ghazaryan B. K. (1982), Jhamanakakic hayoc lezvi hatwaxakanowt'yan bar'aran, Erevan, 759 e'j: (in Armenian)

68. Ղազարյան Լ. (2012-2013), Քննական որոշ դիտարկումներ գիլաներենի բարբառային շերտի բայական առանձնահատկությունների շուրջ, «Իրան-նամէ», հ. 44-45, Երևան, էջ 126-129:
Ghazaryan L. (2012-2013), Qnnakan orosh ditarkowmner gilanereni barbar'ayin sherti bayakan ar'and'nahatkowt'yownneri showrj, «Iran-name'», հ. 44-45, Erevan, , e'j 126-129: (in Armenian)
69. Ղազարյան Ռ. Ս. (2000), Գրաբարի բառարան, հ. Բ, Երևան, 660 էջ:
Ghazaryan R'. S. (2000), Grabari bar'aran, հ. B, Erevan, 660 e'j:
(in Armenian)
70. Ղազարյան Ռ. Ս. (2009), Ավետիսյան Հ. Մ., Միջին հայերենի բառարան, Երևան, 836 էջ:
Ghazaryan R'. S. (2009), Avetisyan H. M., Mijin hayereni bar'aran, Erevan, 836 e'j: (in Armenian)
71. Ղարիբյան Ա. Ս., Շեկյան Գ. Ս. (1965), Դպրոցական ուղղագրական բառարան, Երևան, 216 էջ:
Gharibyan A. S., Shekyan G. S. (1965), Dprocakan owghghagrakan bar'aran, Erevan, 216 e'j: (in Armenian)
72. Մալխասեանց Ստ. (1944), Հայերէն բացատրական բառարան, հ. 2, Երևան, 512 էջ:
Malxaseanc St. (1944), Hayere'n bacatrakan bar'aran, հ. 2, Erevan, 512 e'j: (in Armenian)
73. Մալխասեանց Ստ. (1945), Հայերէն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 648 էջ:
Malxaseanc St. (1945), Hayere'n bacatrakan bar'aran, հ. 4, Erevan, 648 e'j: (in Armenian)
74. Մանասյան Մ. (2011), Բնակչության աշխարհագրություն, Երևան, 294 էջ:
Manasyan M.(2011), Bnakchowt'yan ashxarhagrowt'yown, Erevan, 294 e'j:
(in Armenian)
75. Մելքոնյան Ա. (2005), Ջավախքի տեղանունների հարցի շուրջ, Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), 6, Երևան, էջ 46-62:
Melqonyan A. (2005), Javaxqi teghanownneri harci showrj, Hayoc patmowt'yan harcer (gitakan hodvac'neri jhoghovac'ow), 6, Erevan, e'j 46-62: (in Armenian)

76. Մկրտչյան Ն. (2004), Բառերի կենսագրությունից, Երևան, 300 էջ:
Mkrtchyan N. (2004), Bar'eri kensagrowt'yownic, Erevan, 300 e'j:
(in Armenian)
77. Մկրտչյան Ն. (2015), Պամիրյան լեզուները և հայերենը: Սկյութերեն բառապաշարը, Երևան, 372 էջ:
Mkrtchyan N. (2015), Pamiryan lezownery' & hayereny': Skyowt'eren bar'apashary', Erevan, 372 e'j: (in Armenian)
78. Մովսէս Խորենացի (1991), Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, 560 էջ:
Movse's Xorenaci (1991), Patmowt'iwn Hayoc, qnnakan bnagiry' ew nerac'owt'iwny' M. Abegheani ew S. Yarowt'iwneani, Erevan, 560 e'j:
(in Armenian)
79. Յովհան Մամիկոնեան (2005), Պատմութիւն Տարանոյ / «Մատենագիրք հայոց», Ե. Հատոր, Է. դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 970-1126:
Yovhan Mamikonean (2005), Patmowt'iwn Tarawnoy / «Matenagirq hayoc», E. Hator, E'. dar, Ant'ilias-Libanan, e'j 970-1126: (in Armenian)
80. Նազարյան Ռ., Գյոդակյան Ա. (2004), Հայերեն դպրոցական բառարան, Երևան, 520 էջ:
Nazaryan R'., Gyodakyan A. (2004), Hayeren dprocakan bar'aran, Erevan, 520 e'j: (in Armenian)
81. Նալբանդյան Գ. Մ. (1960), Իրանական լեզուներն ու բարբառները, Երևան, 66 էջ:
Nalbandyan G. M. (1960), Iranakan lezownern ow barbar'nery', Erevan, 66 e'j: (in Armenian)
82. Նալբանդյան Գ. Մ. (1980), Պարսից լեզվի քերականություն (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն), Երևան, 454 էջ:
Nalbandyan G. M. (1980), Parsic lezvi qerakanowt'yown (hnchyownabanowt'yown, bar'agitowt'yown, d'&abanowt'yown), Erevan, 454 e'j: (in Armenian)
83. Նալբանդյան Գ. Մ. (1987), Պարսկերեն-հայերեն բառարան, Երևան, 666 էջ:
Nalbandyan G. M. (1987), Parskeren-hayeren bar'aran, Erevan, 666 e'j:
(in Armenian)

84. Շիրազ Հովհ. (1982), Երկեր, հ. 2, Երևան, 350 էջ:
Shiraz Hovh. (1982), Erker, h. 2, Erevan, 350 e'j: (in Armenian)
85. Չանդոյան Տ. (2022), Քրդական ազգայնականության էթնիկա-աշխարհագրական սահմանները Թուրքիայի Հանրապետության տարածքում, Արևելագիտության հարցեր, N 21, Երևան, էջ 134-144:
Chandoyan T. (2022), Qrdakan azgaynakanowt'yan e'tnik-ashxarhagrakan sahmannery' T'owrqiayi Hanrapetowt'yan tarac'qowm, Ar&elagitowt'yan harcer, N 21, Erevan, e'j 134-144: (in Armenian)
86. Պետրոսյան Հ. Զ., Գալստյան Ս. Ա., Ղարազյուլյան Թ. Ա. (1975), Լեզվաբանական բառարան, Երևան, 318 էջ:
Petrosyan H. Z., Galstyan S. A., Gharagyowlyan T. A. (1975), Lezvabanakan bar'aran, Erevan, 318 e'j: (in Armenian)
87. Պոռշյան Պ. (1880), Հացի խնդիր, ազգային վիպասանութիւն, Թիֆլիս, 356 էջ:
Pr'oshyan P. (1880), Haci xndir, azgayin vipasanowt'iwn, T'iflis, 356 e'j: (in Armenian)
88. Ջահուկյան Գ. (1960), Լեզվաբանության պատմություն, հ. I, Երևան, 636 էջ:
Jahowkyan G. (1960), Lezvabanowt'yan patmowt'yown, h. I, Erevan, 636 e'j: (in Armenian)
89. Ջահուկյան Գ. (1962), Լեզվաբանության պատմություն, հ. II, Երևան, 604 էջ:
Jahowkyan G. (1962), Lezvabanowt'yan patmowt'yown, h. II, Erevan, 604 e'j: (in Armenian)
90. Ջահուկյան Գ. Բ. (1987), Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 748 էջ:
Jahowkyan G. B. (1987), Hayoc lezvi patmowt'yown: Naxagrayin jhamanakashrjan, Erevan, 748 e'j: (in Armenian)
91. Ռոդայեհ Ք. Ն. (2017), «Շահնամե»-ի բառապաշարի քննություն, բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության, Երևան, 27 էջ:
R'oghayeh Q. N. (2017), «Shahname»-i bar'apashari qnnowt'yown, banasirakan gitowt'yownneri t'eknac'owi gitakan astitwani haycman atenaxosowt'yan, Erevan, 27 e'j: (in Armenian)

92. Սայաթ-Նովա (1963), Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասարթյան, Երևան, 346 էջ:
Sayat'-Nova (1963), Hayeren, vraceren, adrbejaneren xagheri jhoghovac'ow, kazmec, xmbagrec & c'anot'agrec Morows Hasrat'yan, Erevan, 346 e'j: (in Armenian)
93. Սաֆարի Է. (2013), Գալեշների լեզուն, բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 24 էջ:
Safari E'. (2013), Galeshneri lezown, banasirakan gitowt'yownneri t'eknac'owi gitakan astitwani haycman atenaxosowt'yan seghmagir, Erevan, 24 e'j: (in Armenian)
94. Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք. (2002), Արդի հայերեն ուղղագրական-ձևակազմական բառարան, Երևան, 408 էջ:
Sowqiasyan A., Sowqiasyan Q. (2002), Ardi hayeren owghghagrakan-d'akazmakan bar'aran, Erevan, 408 e'j: (in Armenian)
95. Տոնոյան Ա. Ա. (2015), Կովկասյան պարսկերեն. պատմահամեմատական ուսումնասիրություն, բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 28 էջ:
Tonoyan A. A. (2015), Kovkasyan parskeren. patmahamematakan owsowmnasirowt'yown, banasirakan gitowt'yownneri t'eknac'owi gitakan astitwani haycman atenaxosowt'yan seghmagir, Erevan, 28 e'j: (in Armenian)
96. Րաֆֆի (1986), Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 606 էջ:
Raffi (1986), Erkeri jhoghovac'ow, h. 8, Erevan, 606 e'j: (in Armenian)
97. Փարսադանյան Վ. (2012), Պարսից լեզու: Դասագիրք, գիրք 1, 2, Երևան, 240, 190 էջ:
P'arsadanyan V. (2012), Parsic lezow: Dasagirq, girq 1, 2, Erevan, 240, 190 e'j: (in Armenian)
98. Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց (1883), Ա. Պետերբուրգ, 234 էջ:
P'awstosi Bowzandacwoy Patmowt'iwn Hayoc (1883), S. Peterbowrg, 234 e'j: (in Armenian)
99. Փափազյան Վրթ. (1958), Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 696 էջ:
P'ap'azyan Vrt'. (1958), Erkeri jhoghovac'ow, h. 3, Erevan, 696 e'j:

(in Armenian)

100. Головин В. Н. (1973), Введение в языкознание, Москва, 320 с.
Golovin V.N.(1973), Vvedenie v jazykoznanie, Moskva, 320 s. (in Russian)
101. Дуличенко А. Д. (2020), Лингвонимика / Ученые записки Петрозаводского государственного университета, т. 42, N 7, с. 13-16.
Dulichenko A.D.(2020), Lingvonimika / Uchenye zapiski Petrozavodskogo gosudarstvennogo universiteta, t. 42, N 7, s. 13-16. (in Russian)
102. Кодухов В. И. (1979), Введение в языкознание, Москва, 352 с.
Koduhov V.I. (1979), Vvedenie v jazykoznanie, Moskva, 352 s.(in Russian)
103. Оранский И. М. (1963), Иранские языки, Москва, 206 с.
Oranskij I. M. (1963), Iranskie jazyki, Moskva, 206 s. (in Russian)
104. Реформатский А. А. (1967), Введение в языковедение, Москва, 544 с.
Reformatskij A. A. (1967), Vvedenie v jazykovedenie, Moskva, 544 s. (in Russian)
105. Широков О. С. (1985), Введение в языкознание, Москва, 264 с.
Shirokov O.S.(1985), Vvedenie v jazykoznanie, Moskva, 264 s. (in Russian)
106. Froundjian, D. (1952), Armenisch-Deutsches Wörterbuch, München, 505 S.

ДАВИД ГЮРДЖИНЯН - АРМЯНСКИЕ НАЗВАНИЯ ИРАНСКИХ ЯЗЫКОВ: ХРОНОЛОГИЯ, УПОТРЕБЛЕНИЕ, ЛЕКСИКОГРАФИЧЕСКАЯ ОБРАБОТКА И ЗАДАЧИ НОРМИРОВАНИЯ

***Ключевые слова:** иранские языки, армянские лингвонимы, названия диалектов, персидский язык, парфянский язык, вариативность лингвонимов, фонетико-орфографический вариант, лексический вариант, словообразовательный вариант, нормирование, унификация лингвонимов, лексикографическая обработка*

В пятом веке в армянском языке использовались названия двух иранских языков: персидского (**սարսկերէն**) и парфянского (**սարթեւարէն**). В седьмом веке был зафиксирован лингвоним **սարսիկ լեզու** (персидский язык), а в среднеармянском - **Ֆարսի** (фарси).

Образование остальных лингвонимов относится к новому времени и современности.

В армянском языке лингвонимы живых и мёртвых иранских языков в некоторых случаях являются названиями диалектов. Они обычно образуются с помощью суффикса **-երեն** (-ерен). Исключение составляют древнеармянский **պարթևաբերեն** (парфянский язык) и вариативный **սոգդիաբերեն** (согдийский язык), образованный в двадцатом веке, при помощи суффикса **-աբերեն** (-аберен).

Армянские названия иранских языков имеют следующие варианты: а) фонетико-орфографический, б) словообразовательный, в) лексический, г) структурный (слово и словосочетание).

В армянской научной литературе, в частности в ирановедческих лингвистических трудах, отмечаются вариативность армянских и заимствованных лингвонимов. Необходимо довести до минимума вариативность армянских названий иранских языков и унифицировать лингвонимы, что будет способствовать правильности и точности научной речи.

В одноязычных и переводных словарях древнеармянского и новоармянского языков заглавными словами стали названия двух десятков иранских языков с их различными вариантами. Такое же количество лингвонимов, в том числе названия диалектов, еще не зафиксировано в словарях.

Из армянских названий иранских языков общеупотребительны лингвонимы **պարսկերեն** (персидский язык), **տաջикերեն** (таджикский язык) и **քրդերեն** (курдский язык). Целый ряд лингвонимов встречается только в научных текстах, некоторые использованы в единичных случаях.

DAVID GYURJINYAN - ARMENIAN NAMES OF IRANIAN LANGUAGES: CHRONOLOGY, USAGE, LEXICOGRAPHICAL PROCESSING, AND NORMATIVE ISSUES

***Keywords:** Iranian languages, Armenian linguonyms, names of dialects, Persian language, Parthian language, variability of linguonyms, phonetic-orthographic variant, lexical variant, derivational variant, standardization, unification of linguonyms, lexicographic processing*

In the fifth century, the Armenian language used the names of two Iranian languages: պարսկերէն (Persian) and պարթևաբերէն (Parthian). In the seventh century, the linguonym պարսիկ լեզու (Persian) was recorded, while

in Middle Armenian it was ֆարսի (Farsi). The formation of the remaining linguonyms refers to modern times.

In the Armenian language, linguonyms of living and dead Iranian languages are in some cases names of dialects. They are usually formed using the suffix -երեն (-eren). The exceptions are the ancient Armenian պարթևարէն (Parthian language) and the variable սոգդիարեն (Sogdian language), formed in the twentieth century, using the suffix -արէն (-aren).

The Armenian names of Iranian languages have the following options: a) phonetic-orthographic, b) word-formative, c) lexical, d) structural (word and phrase).

In the Armenian scientific literature, in particular in the linguistic works on Iranian studies, the variability of Armenian and borrowed linguonyms is noted. It is necessary to minimize the variability of Armenian names of Iranian languages and unify linguonyms, which will contribute to the correctness and accuracy of scientific speech.

In monolingual and bilingual dictionaries of the Old Armenian and New Armenian languages, the names of two dozen Iranian languages with their various variants became headwords. The same number of linguonyms, including the names of dialects, have not yet been recorded in dictionaries.

Among the Armenian names of Iranian languages, the most commonly used linguonyms are պարսկերեն (Persian language), տաջիկերեն (Tajik language) and քրդերեն (Kurdish language). A number of linguonyms are found only in scientific texts, some are used in isolated cases.

Ներկայացվել է՝ 22.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 14.05.2024 թ.

**ՄԻՖԱԲԱՆԱԿԱՆ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԸ ՈՐՊԵՍ
ՄԻՋՏԵՔՍԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՏԵՔՍԵՐ**

ՀՈՒՓՍԻՄԵ ԶԱՔԱՐՅԱՆ

Համառոտագիր

Նախադեպայնության տեսությունը ժամանակակից գրականագիտության ամենազարգացող ոլորտներից է: Արդի գրականության մեջ, մասնավորապես՝ վերջին տասնամյակների հայկական պոեզիայում, նախադեպայնության առավել արդիական ու գործածական սկզբնաղբյուր են միջական ու սուբբոյալին տեքստերը, քրիստոնեական միջերը:

Գրական ստեղծագործության մեջ միջակիրառումը, միջի փոխակերպումն օգնում է կերտել գրական պայմանական, խորհրդանշական յուրօրինակ աշխարհ, որի մեջ յուրովի արտացոլում են նորագույն իրականության բազմակերպ շերտերը: Հետևաբար գեղարվեստական տեքստում նշյալ հիմնահարցի (միջակիրառման) տարաբնույթ մոտեցումներով մեկնաբանություն-դիտարկումները դառնում են այն բանալին, որոնց միջոցով հնարավոր է բացել ստեղծագործության ընդհանրացնող ուժի գաղտնիքը, բնորոշել պատմական այս կամ այն ժամանակահատվածի փիլիսոփայական բնույթն ու ոգին:

Գրական ստեղծագործության մեջ միջակիրառումը տարբեր կերպ է դրսևորվում: Մի դեպքում այն դրսևորվում է միջական սյուժեների նույնական կրկնություններով, մի դեպքում կրում է ձևակառուցվածքային գործառույթ, որպես գեղարվեստական նյութն ամբողջացնող միջոց:

Միջի բոլոր տեսակները՝ թե՛ հնագույն և թե՛ ժամանակակից, որպես կոլեկտիվ հույզերի, ապրումների վրա կառուցված գաղափարական հյուսվածք, սերտորեն միահյուսվում են գիտակցության մեջ՝ ձևավորելով իր բնույթով բարդ ու բազմաշերտ համակարգ: Միջը, լինելով երևակայության արդյունք, որպես նախադեպային տեքստ ներթափանցելով գեղարվեստական կառույց, արտացոլում է հեղինակի յուրահատուկ մտասևեռումները, ինքնատիպ աշխարհը, հայեցակարգային համակարգը, որը յուրահատուկ կերպով դրսևորվում է գեղարվեստական ստեղծագործության մեջ:

Միֆական հիմքերի վրա կառուցելով սեփական գեղարվեստական աշխարհը, միֆական սկզբնաղբյուրները միահյուսելով սեփական գեղարվեստական հյուսվածքին ու ընդհանրացումներին՝ հեղինակը միֆը տարբեր շեշտավորումներով, տարբեր կողմերով փոխակերպում է, որի արդյունքում միֆի գաղափարական-հոգեբանական անդրադարձումների մթնոլորտում ձևավորվում է մեկ այլ՝ արտահայտչական, լեզվաոճական, կառուցվածքային, իմաստաբովանդակային ուրույն առանձնահատկությամբ արարված գեղարվեստական կառույց:

***Հիմնաբառեր՝** միֆ, նախադեպային տեքստ, Աստվածաշունչ, արքետիպ, հեթմոդեոնիզմ, նշանաբանություն, սյուժե, փիլիսոփայություն, հեղինակային ոճ*

Ներածություն

«Նախատեքստ», «նախադեպային տեքստ» (լատ. praecedens (praecedentis) - «առջևից գնացող») հասկացությունը որպես եզրույթ առաջին անգամ գործածել է 1987 թ. ռուս խորհրդային լեզվաբան Յու. Կ. Կարաուլովը՝ «Ռուսաց լեզու և լեզվական անհատականություն» մենագրության մեջ: Յու. Կարաուլովը նախադեպային տեքստերը սահմանում է որպես «տեքստեր, որոնք ճանաչողական ու հուզական առումով նշանակալի են վերանձնային բնույթով օժտված այս կամ այն անհատի համար, լայն տարածում ունեն և հայտնի են կոնկրետ անհատին շրջապատող լայն շրջանակներին, նրա նախորդներն ու ժամանակակիցներին», միաժամանակ նախանշելով նաև նախատեքստի հետագա ընթացքի որոշ միտումներ՝ որոշ տեքստեր ժամանակի ընթացքում կորցնում են արդիականությունը, մոռացվում, փոխարինվում նորերով (Karaulov 1987, էջ 216): Սահմանելով նախադեպայինություն երևույթի առանցքային էությունը՝ Յու. Կարաուլովը հիմնավորում է, որ «նախադեպային տեքստեր» հասկացույթի ներքո ամփոփվում են նախ և առաջ մինչգեղարվեստական հեղինակային-անհատական գրականության ստեղծումից առաջ արարված առավել համապարփակ էթնոմշակութային ու կոլեկտիվ գիտակցական ոլորտներին առնչվող գեղարվեստական տեքստերը՝ «միֆերի, լեգենդների, բանավոր բանաստեղծական երկերի տեսքով», ինչպես նաև նոր գեղարվեստական իմաստների ձևավորման գործընթացում հիմնասյունային արժեք ներկայացնող «Աստվածաշնչյան տեքստերն ու բանավոր ժողովրդական գրականության տեսակները» (Karaulov, 1987, էջ 216): Նախադեպային երևույթները, ըստ էության, «հայտնի են որոշակի լեզվամշակութային հանրության ցանկացած միջին ներկայացուցչի և այս հանրույթի ճանաչողական հիմքի մաս են կազմում» (Proxorov, 2004, էջ 149):

«Ցանկացած ծավալի տեքստ կարող է նախադեպ լինել՝ առածից կամ աֆորիզմից մինչև էպոս» (Слышкин, 2004, էջ 45),- գրում է Գ. Գ. Սլիշկինը:

Խոսելով նախադեպային տեքստերի մասին՝ հարկ է նկատել, որ առավել հաճախական նախադեպային տեքստեր են դասական հանրահայտ ստեղծագործությունները, բանահյուսական նյութերը, սուրբգրային (աստվածաշնչյան) միֆերն ու միֆական ծածկագրերը, խորհրդանիշները, սյուժետային համակարգերի փոխակերպումները, միֆական անունների ու կերպարների փոխակերպումները, քրիստոնեական միֆերը և այլն: Թվարկվածներից առավել գործածականն ու նշանակալին թերևս աստվածաշնչյան տեքստն է, որը, ներթափանցելով այս կամ այն գեղարվեստական տարածություն, դառնում է ստեղծագործության բովանդակային-թեմատիկ շերտի «իմաստային միջուկը, որի ուժային դաշտն առաջացնում է նոր իմաստներ ու նոր տեքստեր» (Мечковская, 1998, էջ 148): Աստվածաշնչյան սյուժեները, պատկերներն ու գաղափարները դարերով գեղարվեստական աշխարհաճանաչողության, հոգևոր-խոհական աշխարհի ձևավորման, տարբեր արվեստաձևերի կայացման առանցքային մասն են կազմել:

Կրոնական հավատալիքներն ու նախապաշարմունքները մշտապես իրենց առանձնահատուկ դրոշմն են թողել ժողովուրդների հոգեբանության, աշխարհընկալման, ավանդույթների, հետևապես նաև դրանց արտացոլումը հանդիսացող գեղարվեստական տեքստի վրա:

Հայտնի է, որ Վերածննդի դարաշրջանում արդիական դարձան անտիկ մշակույթի ավանդույթների վերաիմաստավորումը, միֆակիրառումը, պոեզիայի ու աստվածաշնչի անտրոհելի կապը: Գեղարվեստական մտածողության մեջ հաստատվում են սուրբգրային տեքստերի գեղարվեստական մարմնավորման խորացումները: Վերջինս սկսվեց ընկալվել ու կարևորվել ոչ միայն դավանանքային-ուսմունքային, այլև՝ գեղագիտական-գեղարվեստական նշանակությամբ: Բանաստեղծական մոտիվների, պատկերների անհատնում աղբյուր է դառնում Աստվածաշնչյան բնագիրը՝ որպես ճանաչողության բարձրագույն սկիզբ: Այս կերպ՝ աստվածաշնչյան տարրերը հասարակական-բարոյական-աստվածաբանական աշխարհայացքային լայն հորիզոններով խորապես ներթափանցեցին հասարակության գիտակցական, ենթագիտակցական ու անգիտակցական շերտեր, իսկ սուրբգրային լեզուն հիմք դարձավ նորաստեղծ գրական լեզվի ձևավորման ու զարգացման համար, դարերի ընթացքում դարձավ գեղարվեստական լեզվի սկզբնատարրը, անդրլեզուն, ձևավորեց լեզվամտածողության առանձնահատուկ որակ, աստվածայինին

մերձենալու և այն դրսևորելու լեզվամշակույթը: Սա լեզվի զարգացման բարձրագույն շրջափուլն է, երբ լեզուն արդեն ի զորու է վերակերպելու աշխարհի ներդաշնակ, ավարտուն պատկերը: Այս մեկնակետով գեղարվեստական ստեղծագործության կառուցվածքային-արտահայտչական համակարգը սկսեց հիմնաթելային տարբեր նրբերանգներով անդրադառնալ սրբազան տեքստերին ու հիմնվել հոգևոր-մշակութային ավանդույթների հիմքերի վրա: Գեղարվեստական ստեղծագործության նորդարյա ընթացքում էլ Աստվածաշունչն այն կենտրոնն է, որի «ուժադաշտն» արարում է նոր արտահայտչական սկզբունքներ ու միջոցներ, նոր իմաստներ ու նոր տեքստեր՝ հարստացնելով մշակութային իմաստային տարածությունը: Որպես նախադեպային տեքստեր՝ գեղարվեստական համակառուց ներթափանցված սուրբգրային տեքստերը կարող են բանալի ծառայել հասկանալու միջտեքստային տարածության քառուղիներում ամփոփված հեղինակային մտադրությունը: XX դարի համաշխարհային մշակույթը, մասնավորապես՝ 1960-1970-ական թթ. հայկական պոեզիան, այդ ավանդների շարունակողն է, որի մեջ սուրբգրային միջը մարմին է առնում՝ ձուլվելով հեղինակային մտապատկերներին՝ դառնալով փոխադրական, գեղարվեստական-գեղագիտական հիմնարար մտայնությունների ու ավանդների արտահայտություն:

Այսպիսով, սույն հոդվածի թեմայի **արդիականությունը** բխում է արդի գրականագիտության մեջ արդիական դարձած նախադեպայնության տեսության ու արդի գրականության մեջ միջակիրառման նոր ձևաբովանդակային դրսևորումների առանձնահատկությունների ուսումնասիրման անհրաժեշտությունից:

Հոդվածի գիտական **նորույթն** այն է, որ սույն հոդվածի հետազոտության շրջանակներում փորձ է արվում միջակական ու սուրբգրային տեքստերն ընդունել որպես միջտեքստայնության նախադեպային տեքստեր:

Աշխատության **տեսական արժեքն** այն է, որ սույն հոդվածի ուսումնասիրության արդյունքները կարող են նպաստել միջի մասին տեսական ուսումնասիրությունների ու միջտեքստային փոխազդեցությունների առանձնահատկությունների հետազոտ ուսումնասիրության խնդրում:

Ուսումնասիրության արդյունքները կարող են **գործնական արժեք** ներկայացնել միջտեքստային ընդգրկումներով տեքստի դիտարկումներին նվիրված ուսումնասիրությունների համար: Հոդվածում կիրառվել են դիտարկման, ընդհանրացման նկարագրական մեթոդը, համատեքստային ու հասկացութային մեթոդները:

Հողվածի նպատակն է դիտարկել միֆակիրառման առանձնահատկությունը, այն բնորոշել որպես նոր տեքստային կառույցի ձևավորման համար իբրև նախադեպային տարր՝ գեղարվեստական տեքստում տարաբնույթ միֆաբանական, սուրբգրային տեքստերի ներմուծումներն ընդունելով որպես թեմատիկ-գաղափարական ամբողջացման միջոց: Նշված նպատակն իրականացնելու համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

1. դիտարկել «միֆ» երկույթի տիպաբանական առանձնահատկությունները,

2. ուսումնասիրել միֆի գործառույթների դերը գեղարվեստական տեքստերի հետ ներգործության գործընթացում,

3. որոշարկել միֆական ու սուրբգրային տեքստերի՝ որպես գաղափարա-թեմատիկական, գեղարվեստական պատկերի առանցքային միավորի դերն ու նշանակությունը գեղարվեստական տեքստում,

4. ընդգծել գեղարվեստական ստեղծագործություններում նորմիֆականացման առանձնահատուկ դրսևորումները, միֆի տարաբնույթ ոճավորումների, վերաիմաստավորումների, հեղինակային միֆերի կառուցման ու արարման միտումների առանձնահատկությունները,

5. միֆական, սուրբգրային սկզբնաղբյուրները դիտարկել որպես միջտեքստայնության նախադեպային տեքստեր:

Միֆընկալման ու միֆակիրառման առանձնահատկությունները գեղարվեստական տեքստում

Մինչ ընտրված նյութի դիտարկմամբ երկույթի որոշակիությունը հստակեցնելը, հարկ է հնարավորության սահմաններում համառոտ-ընդհանրական պատկերացում ձևավորել «միֆ» հասկացույթի առանձնահատուկ գծերի, դրա կիրառման յուրահատկությունների, դրանց անհրաժեշտության ու կարևորության մասին: Միֆաբանաստեղծական մտածողությունն ու միֆապոետիկան ժամանակակից գրականագիտության ամենաարդիական հետազոտական ոլորտն ու ամենաարդիական մեթոդաբանական հիմքն են: Միֆը՝ որպես ճանաչողության ձև, միջոց է թափանցելու երկույթների խորքերը, քննելու ամենայնի ծագման ու կայացման պատճառահետևանքային հիմքերը, հայտնաբերելու նոր իրողություններ: Այդ ամենի հետ մեկտեղ՝ միֆը, լինելով բազմատարր երկույթ, ունի տարբեր մեկնաբանություններ՝ կախված, թե որ գիտակարգը որ դիտանկյունից է մոտենում: Թեպետ պանության մեջ միֆաընկալման հիմնահարցը քննարկվել է առնվազն միջնադարից, սակայն միֆը՝ որպես մարդկային լինելիության արժեքը իրավամբ սահմանող, ճանաչողությունն ուղղորդող երկույթ, առաջին

անգամ Մ. Էլիադեի աշխատություններում է հիմնավորապես իմաստավորվում: «Միֆ» եզրույթը հունական ծագում ունի, թարգմանաբար նշանակում է (μῦθος) «պատմություն» կամ «ավանդություն»: Այն գործածվում է կրոնական ու աշխարհիկ պատմությունների առումով, որոնք «գերբնական բացատրություններ են տալիս աշխարհի և մարդկության ծագման, մահվան, ահեղ դատաստանի ու հանդերձյալ կյանքի մասին» (Левин-Строц, 1983, էջ 284): Իսկ առավել լայն առումով՝ միֆ ասելով հասկացվում է աշխարհըմբռնում ու աշխարհայացք:

«Միֆի դիալեկտիկան» գրքում Ա. Ֆ. Լոսևը միֆագիտակցության էությունը դիտարկում է մի կողմից օբյեկտիվ իրականության լույսի ներքո, մյուս կողմից՝ իրականության ընկալման չմեկնաբանված հասկացումների սահմաններից. «Միֆը նախապատմական մտաստեղծություն չէ,- գրում է նա, - այլ աշխարհընկալման համապարփակ ձև» (Лосев, 1991, էջ 198): Նախապատմական դարերի մարդը, համապատասխան իր զարգացման մակարդակին, սահմանափակ երևակայական աշխարհ ուներ: Հետևապես միֆը ոչ թե երևակայության արդյունք է, այլ աշխարհընկալման հայելիավորված արտացոլանք: Այս իմաստով հստակվում են «միֆ» երևույթի ընկալման սահմանները. մի դեպքում միֆ ասելով հասկացվում է հնագույն աշխարհընկալման արդյունք, մի դեպքում երևակայական՝ մտացածին իրականություն: Հնագույն ընկալումներում, համաձայն Ա. Ֆ. Լոսևի, միֆը ոչ թե «հնարանք» էր, այլ իրականության կրկնապատճեն՝ դրսևորված պատկերային մտածողության միջոցով: Հետագայում, երբ լայնացան մարդկային գիտակցության ու աշխարհընկալման հորիզոնները, անցյալում մնացին հնագույն միֆական հավատալիքները. միֆը դարձավ հնագույն աշխարհընկալման ու պատկերացումների խտացումը: Փոխարենը մարդկային երևակայության ստեղծագործ ուժի զորությամբ արարվում-ծնավորվում են նոր միֆեր, կամ էլ նորակերպվում են ավանդական միֆերը. վերջիվերջո՝ միֆաբանական մտածողությունը, ըստ էության, գիտակցության ճանաչողական ներուժ է:

Նորագույն միֆաբանական մտածողությունը խորքային արմատներով թեև կապված է հնագույն միֆին, սակայն, այնուամենայնիվ, մի շարք էական հատկանիշներով տարբերվում է վերջինից: Արդի միֆամտածողությունն ունի ճանաչողական-արտացոլական բնույթ: Այն սահմանվում է որպես նորմիֆաբանական մտածողություն (նեոմիֆ եզրույթն առաջին անգամ գործածվել է միֆի ու միֆակիրառման մասին նշանագիտական դիտարկումներում: Նշանագիտական եզրութաբանությամբ արդի միֆը՝ նեոմիֆը,

երկրորդական նշանային համակարգ է...) (առավել մանրամասն տե՛ս Барт Р. 1989): Ժամանակի ընթացքում միֆակիրառումը դառնում է գաղափարական/գեղագիտական գործոն: Բանաստեղծական հյուսվածքի գեղարվեստական-գաղափարական արժեքի բանալին երբեմն հարկ է փնտրել հենց ստեղծագործության մեջ ներակա կամ արտակա կերպով ներմուծված միֆի մեջ՝ տրամաբանականի ու գեղարվեստականի, իրականի ու երևակայականի սահմանազծում: Գեղարվեստական ստեղծագործության մեջ՝ նոր դարաշրջանի գեղարվեստական մտածողության ասպարեզում, նոր մարդու հայեցակետերից դիտված, պատմական հնագույն ծալքերից պեղված այդ, այսպես ասած՝ մտապատրանքի (միֆի) ու իրականության միահյուսումն է կառուցում ստեղծագործության նորագույն գաղափարական շերտը՝ միևնույն ժամանակ նաև շեշտում տարբեր ժամանակների փոխադարձ կապն ու հարատև լինելիությունը:

Այս առումով ֆրանսիացի կառուցվածքաբան Կլոդ Լևի-Ստրոսի հայեցակարգերի հիմնադրույթներն այն գաղափարն են ձևավորում, թե միֆը բանական մտքի գործառնություն է, ճանաչողական գործընթաց: Դիտարկելով միֆի էությունը՝ նա մասնավորապես ընդգծում է միֆի ճանաչողական արժեքը, միֆական պատկերի նախահիմքային նշանակությունը՝ միաժամանակ շեշտելով, որ միֆը յուրահատուկ մտածողության արդյունք է՝ «ամրակայված» բառի մեջ, որը բառային մակարդակից տեղափոխվում է գաղափարների մակարդակ. «Միֆը լեզվական գործունեության բաղկացուցիչ մասն է, այն փոխանցվում է բառերով, բայց ընդհանուր առմամբ անցնում է պատումային ոլորտ: Միֆը լեզու է, սակայն այդ լեզուն աշխատում է ամենաբարձր մակարդակի վրա, որում իմաստին հաջողվում է, այսպես ասած, առանձնանալ լեզվական հիմքից, որի վրա այն ձևավորվել է» (Левин-Строс 1983, էջ 185-187): Միֆը, լինելով միֆաբանական գիտակցության դրսևորում, կարող է ձևավորվել, ինչպես նաև վերածնվել-վերահիմաստավորվել պատմական տարբեր ժամանակաշերտերում, արմատավորվել ոչ միայն կոնկրետ այն դարաշրջանում, որում արարվել է, այլև հնօրյա մտածողությամբ վերաճած նույնական տրամաբանությամբ՝ ճեղքելով տարածաժամանակային սահմանները՝ հաստատվել տարբեր դարաշրջանների հասարակական գիտակցության խորքային շերտերում՝ մարդկային գիտակցության «հեռավոր» շերտերում ամփոփվելով որպես արքետիպ: Ներմուծվելով այս կամ այն գեղարվեստական կառույց՝ միֆին լրացուցիչ իմաստաբովանդակային շերտեր են հավելվում, լիցքավորվում միմյանց լրացնող ու պայմանավորող նոր բովանդակությամբ: Միֆն իր խորհրդանշական ու

արքետիպական բնույթով թույլ է տալիս բացահայտել համընդհանուր ու մասնավոր դրսևորումների հարափոխ, «անսահման ու հոսուն» բնույթը: «Անսահման ու հոսուն» ասելով՝ ի նկատի ունենք վերջինիս պատկերային կառուցվածքի կերպափոխությունն ու իմաստային բազմաձևվալ ճյուղավորումները, այդ բազմաճյուղության մեջ բազմիմաստություն դրսևորելու, տեքստային համատեքստում փոխաբերական իմաստավորումներով օժտվելու միտումը: Հենց բազմաշերտությունն ու բազմիմաստությունն են թույլ տալիս միֆին չանցյալանալ, այլ անվերջ վերաձևվել՝ պատմական յուրաքանչյուր հասարակական-մշակութային իրականության մեջ վերաիմաստավորվելով նորովի ու նորակերպ՝ միաժամանակ կրելով այս կամ այն ժամանակաշրջանի գեղարվեստական մտածողության առաջընթացի ընդհանուր մտայնությունների դրոշմը:

Միֆական նախատեքստը որպես գեղարվեստական տեքստի ձևաբովանդակային շերտի իմաստավորման կաղապար

Միֆական ընդգրկումներով, միֆականի ու գեղարվեստականի երկմիասնությամբ հյուսված գրական ստեղծագործության ընկալման կերպը պայմանավորված է առաջադիր խնդիրների ու հնարանքների զուգորդական առանձնահատկությամբ, որը դրսևորվում է մի քանի մակարդակներում, առաջին հերթին՝ միֆաբանական սկզբնահիմքերի՝ սյուժեների, մոտիվների ու պատկերների գործածմամբ ու փոխակերպմամբ, հեղինակի՝ ժամանակի անհատական ու ընդհանրական մթնոլորտի համապատկերում սեփական միֆական համակարգ ձևավորելու ու ավանդական միֆական աշխարհի պատկերը վերակերտելու հանգամանքով՝ միֆական կառույցների մեջ ներմուծելով նոր բովանդակություն, հաղորդելով գեղարվեստական նոր երանգավորում:

Միֆաբանական մտածողությունն օժտված է նաև փոխաբերական (մետաֆորական) բնույթով: Կարելի է ասել՝ միֆը կառուցվում է պատկերային ելակետից, պայմանական ու խորհրդանշական ձևերի միահյուսումից: Քանի որ գեղարվեստական տեքստը նույնպես աշխարհն ընկալելու ու մեկնելու «մեկնակետ» է, վերջինիս համար ևս հավերժական նյութ են փոխաբերությունները՝ որպես գեղարվեստական խոհը կոնկրետ պատկերի մեջ ընդհանրացնող միջոց:

Երբեմն միֆը գեղարվեստական տեքստում գործածվում է որպես գրական ակնարկ՝ միֆաբանական պատկերային զուգահեռների միջոցով ընդգծելով ստեղծագործության թեմայի ներիմաստը, որի յուրօրինակության արմատները, ըստ էության, թաքնված են գեղարվեստական տեքստի հնամենի տարակառույց ակունքներում,

երբեմն գործածվում է որպես հյուսվածքային-պատկերային, կառուցվածքային-արտահայտչական տարր, երբեմն էլ բազում թելերով հյուսված հանգույցներով այնքան է համասեռված տեքստին, որ դժվար է հստակ բաժանարար գիծ անցկացնել միֆի ու այն պարունակող տեքստի ու տեքստային իմաստի միջև: Այս հնարանքը կարող է նաև բանալի ծառայել խորամուխ լինելու տեքստային գաղտնարաններում և միմիայն գրականագիտական վերլուծության արդյունքում բացահայտվել:

Այս ամենը ենթադրում է միֆը սահմանել որպես մարդկային գիտակցության մեջ ամփոփված արքետիպ (Юнг, 1996), մտածողության յուրահատուկ ձև: Բարդ ու բազմակողմանի էությունն ու հավերժական բնույթը նյութի ներքին խտացման շնորհիվ թույլ են տալիս նրան նոր պատմամշակութային տարածության մեջ՝ նոր կյանքի երևույթների արտացոլման լույսի ներքո, վերաիմաստավորվել նորից ու նորովի, ստեղծագործական տեքստում դրսևորվելով որպես նախադեպային տեքստեր՝ նոր ձևի մեջ պահպանելով սակայն ավանդականը:

Նշանագիտական էության դիրքերից միֆը նշանագիտական միավոր է՝ երկճյուղված երկու նշանաբանական համակարգերի, որոնք որոշակիությունն ու անորոշությունը միմյանց կապող իմացաբանական գործառույթ են կրում, փոխադարձաբար լրացնում են միմյանց: Նախ և առաջ միֆն իմաստավորվում է լեզվական համակարգի միջոցով (Կլոդ Լևի-Ստրոս): Վերջինիս շնորհիվ իմաստային ամբողջականություն է ձեռք բերում, այնուհետև կառուցում սեփական համակարգը: Ռ. Բարտը միֆը սահմանում է որպես մետալեզվի միավոր: Միֆական անդրլեզուն, ընդհանուր առմամբ՝ միֆն ինքնին, որպես բազմիմաստ ու բազմաշերտ դիալեկտիկական բարդագույն երևույթ, համաձայն Ռ. Բարտի, ընդունված է համարել «երկրորդակարգ նշան», որը խոսում է այսպես ասած՝ առաջնակարգի մասին: Նշյալ գաղափարը սահմանվել է Ռ. Բարտի դիտարկումներում, համաձայն որի՝ «Միֆը հատուկ համակարգ է, որի յուրահատկությունն է որոշակի նշանների ստեղծումը անընդհատական հիմքերի վրա, որոնք գոյություն ունեն դրանից առաջ: Միֆը երկրորդական նշանաբանական համակարգ է: Առաջին համակարգի նշանը (այսինքն՝ զուգորդության, հայեցակարգի և սկուստիկական պատկերի արդյունքը) երկրորդ համակարգում դառնում է ընդամենը նշանակիչ» (Եարտ, 1989, էջ78):

Հայտնի է, որ XX դարում լայն տարածում ստացած հետմոդեռնիստական արվեստում արդիական դարձավ միֆակիրառումն իրեն հատուկ միֆաբանական պատկերացումների համակարգով: Նորմիֆականացման միտումը յուրահատուկ դրսևորումներով իմաստավորվում է տարբեր արվեստաձևերում, մասնավորապես՝

պոեզիայում: Միֆը, իր բնույթով լինելով ընդհանրական ճանաչողական կառույց, վերախմաստավորվելով հեղինակի հայեցակարգային համակարգում՝ դրսևորվում է հեղինակային ոճի լույսով դիտումների, զգացողության ու մտածումի տեսանկյունից, գեղարվեստական նյութի (տեքստի) սահմաններում վերածում, բարձրանում ավանդական շրջանակներից, կապվում բովանդակային կողմնորոշումներին: Պետք է ի նկատի ունենալ, որ հետմոդեռնիստական ժամանակաշրջանը հազեցած էր առեղծվածներով ու հակասություններով: Դրանք մարդկային աշխարհայացքի կտրուկ վերափոխումների ամենաբեկումնային ժամանակներն էին: Անկայուն «աշխարհի պատկերը» անխուսափելիորեն արտացոլվում է արվեստում, մասնավորապես՝ գրականության մեջ: Այդ բազմաձայնությունը, արտաքին իրականության մշտափոփոխ բնույթն իր խորքային տարողությամբ ու էությամբ գեղարվեստորեն վերակերպելու ձգտումը հեղինակին մղում է արարելու տեքստային շարժընթաց կոմպոզիցիոն կառուցվածք, որի «շարժիչ ուժը» իր հարաշարժ բնույթով շեշտված բովանդակությունն է:

Միֆակիրառմամբ ձևավորվում է մեկ միասնական իմաստային դաշտ, որի մեջ հաճախ տեսաժապավենային պարզությամբ ու հաջորդականությամբ տեքստային մակարդակում միֆական սյուժեների, պատկերների ու կերպարների համակցմամբ, յուրահատուկ ոճավորմամբ ձևավորվում-պատկերվում են տարբեր արդիական գործողություններ, իրադարձություններ կամ իրավիճակներ: Մեկ ամբողջություն դարձած տեքստային տարածությունն իր մեջ մեկտեղում է տարբեր ժամանակային շերտեր, տարբեր մշակույթային միֆեր: Հարկ է նկատել նաև, որ միֆակիրառմամբ հեղինակը ոչ թե միտում ունի կազմաքանդելու, այլ նոր իմաստ հաղորդելու մշակույթային միֆական պատկերներին, նոր սկիզբ դնելու նորագույն արվեստի մեջ: Այն միտված է երկխոսական դաշտ ձևավորելու երկու տեքստերի միջև՝ երկխոսություն՝ հնագույն միֆերի բնության, նրանց թաքնված ճշմարտության ու ներքին կառուցվածքի մասին:

Նախադեպային տեքստի ճանաչողական գործընթացի համար էական տեղ է գրավում միֆը, որը, ժամանակի ընթացքում հարատևելով, ինչպես վերն ակնարկվեց, գիտակցության մեջ ամրակայվել է որպես արքեստիպ: Միֆի ուժն ու իմաստը նրանում հարատև հառնող ու քողածածկող իմաստային «ուժադաշտի» մեջ է: Միֆը, որն աշխարհաճանաչման լայնահուն գործառույթ է պարունակում, գեղարվեստական աշխարհում միֆական աշխարհայեցողությամբ տրված ամենաբազմերանգ նյութերի միջոցով դրսևորվում, երբեմն նորոգվում-իմաստափոխվում է՝ համապատասխան ստեղծագործողի

հայեցակարգերի, ներաշխարհային հուզապրումների ու խոհերի, անհատական յուրացումների՝ ներքին ու արտաքին գործոնների ազդեցության ներքո ձեռք բերելով արդիական երանգավորում՝ համապատասխան այն բանին, թե ինչպիսի իմաստակիր, իմաստ ձևավորող հենարաններ են տեքստի գաղափարական-թեմատիկ մակարդակում:

Եզրակացություններ

1. ՄիՖՆը, նոր տեքստային կառույցին միահյուսվելով, ներքին ուրույն զարգացում է ապրում և կարող է նոր գեղարվեստական իմաստների ձևավորման գործընթացում սահմանվել որպես հիմնասյունային արժեք ունեցող մշակութային հիշողության ու գիտակցության մեջ ամրակայված արքեստիպ: ՄիՖական կառույցին հատուկ իմաստային բազմաշերտությունը, արտաժամանակային ու վերտարածական բնույթը թույլ չեն տալիս նրան անցյալանալ. ժամանակի հետ խնդրի համատեքստը լայնանում է, և միՖականը գեղագիտական պատասխան է որոնում:

2. Որպես միջտեքստայնության սկզբնաղբյուր՝ միՖակիրառման յուրահատկությունն է բազմաշերտ տարողություն պատկերելու-իմաստավորելու հնարավորությամբ օժտվածությունը, և գեղարվեստական ստեղծագործության հյուսվածքային-պատկերային տարածության մեջ վերակերպվում է ոչ թե իր ներքին ու արտաքին կառուցվածքով, այլ վերականգնվում են դրանց հնօրյա նախատարրերն ու նախաիմաստները, վերակառուցվում՝ համապատասխան նոր պատմամշակութային համատեքստին, ձեռք բերում գեղարվեստական նորօրյա խորհուրդ:

3. ՄիՖի փիլիսոփայական, դիցաբանական-բանահյուսական խորհրդակերպված էության արդիականացման յուրահատկությունը շատ հաճախ պայմանավորված է ստեղծագործողի գիտակցության խորքային շերտերում ամփոփված էթնոմշակութային իմաստա-կառուցվածքային ու հասարակական-մշակութային առանձնահատկությունների արժեքներով, հոգեբանության խորքային նստվածքներով, ածանցվում է նրա աշխարհի ընդհանուր ճանաչողության բնույթից:

4. Սուրբգրային տեքստերը, որպես նախասկզբնական աշխարհայացք ու որպես մշակութային նախատեքստեր, այսօր էլ՝ գեղարվեստական մտածողության խորացող տեղաշարժերի մթնոլորտում, մնում են որպես նախահիմք նորագույն ստեղծագործողների համար, դրսևորվում են երկկերպ՝ մի կողմից դիտարկելով որպես բարձրագույն ճշմարտության անսպառ աղբյուր, մյուս

կողմից սուրբգրային լեզուն և «երևելի և աներևույթ» աստվածաշնչյան մոտիվային, պատկերային համակարգերը փոխադրվում են երևութական աշխարհի ստեղծագործական ընկալման ու վերարտադրության ոլորտ, հոգեմտավոր մշակույթի, գեղարվեստական լեզվի ու ոճական առանձնահատկությունների զարգացման ու կայացման խնդրում դառնում ուղղորդող միջոց՝ գեղարվեստական տեքստը դարձնելով հոգևոր մշակույթի երկու ինքնուրույն ձևերի՝ փիլիսոփայության և արվեստի համադրության դաշտ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Барт Р. Б. Избранные работы: Семиотика: Поэтика: Пер. с фр./ Сост., общ. ред. и вступ. ст. Г. К. Косикова. Москва: «Прогресс», 1989, 616 с.
Bart R. B. Izbrannyye raboty: Semiotika: Poetika: Per. s fr./ Sost., obshch. red. i vstup. st. G. K. Kosikova. Moskva: "Progress", 1989, 616 s. (In Russian)
2. Караулов Ю. Н. Русский язык и языковая личность. Москва: «Наука», 1987, 363 с.
Karaulov YU. N. Russkiy yazyk i yazykovaya lichnost'. Moskva: "Nauka", 1987, 363 s. (In Russian)
3. Леви-Строс К. Структурная антропология. (Пер. с фр. под ред. и с прим. Вяч. Вс. Иванова. Отв. ред. Н. А. Бутинов и Вяч. Вс. Иванов). Москва: «ГРВЛ», 1983, 536 с.
Levi-Stros K. Strukturnaya antropologiya. (Per. s fr. pod red. i s prim. Vyach. Vs. Ivanova. Otv. red. N. A. Butinov i Vyach. Vs. Ivanov). Moskva: "GRVL", 1983, 536 s. (In Russian).
4. Лосев А. Ф. Диалектика мифа // Философия. Мифология. Культура. Москва: «Знание», 1991, 450 с.
Losev A. F. Dialektika mifa // Filosofiya. Mifologiya. Kul'tura. Moskva: "Znaniye", 1991, 450 s. (In Russian)
5. Мечковская Н. Б. Язык и религия: лекции по филологии и истории религий. Москва: «ФАИР», 1998, 352 с.
Mechkovskaya N. B. YAzyk i religiya: lektsii po filologii i istorii religiy. Moskva: "FAIR", 1998, 352 s. (In Russian)

6. Прохоров Ю. Е. Действительность. Текст. Дискурс. Москва: «Флинта: Наука», 2004, 224 с.
Prokhorov YU. Ye. Deystvitel'nost'. Tekst. Diskurs. M.: "Flinta: Nauka", 2004, 224 s. (In Russian)
7. Слышкин Г. Г. Кинотекст (опыт лингвокультурологического анализа) // Слышкин Г. Г., Ефремова М. А., Москва: «Водoley Publishers», 2004, 153 с.
Slyshkin G. G. Kinotekst (opyt lingvokul'turologicheskogo analiza) // Slyshkin G. G., Yefremova M. A., Moskva: "Vodoley Publishers", 2004, 153 s. (In Russian).
8. Юнг К. Г. Структура психики и процесс индивидуации. Москва: Изд. «Наука», 1996, 269 с.
Yung K. G. Struktura psikhiki i protsess individuatsii. Moskva: Izd. «Nauka», 1996, 269 s. (In Russian)

РИПСИМЕ ЗАКАРЯН - МИФИЧЕСКИЕ ПЕРВОИСТОЧНИКИ КАК ПРЕЦЕДЕНТНЫЕ ТЕКСТЫ ИНТЕРТЕКСТУАЛЬНОСТИ

Ключевые слова: миф, прецедентный текст, Библия, архетип, постмодернизм, семиотика, сюжет, философия, авторский стиль

Теория прецедентности - одно из самых активно развивающихся направлений в современном литературоведении. В современной литературе, особенно в армянской поэзии последних десятилетий, наиболее актуальным и полезным источником прецедентности являются мифические и библейские тексты, христианские мифы.

Использование мифа в литературном произведении, трансформация мифа помогают создать уникальный литературный символический мир, в котором замысловатым образом отражаются многогранные аспекты современной действительности. Поэтому всесторонний анализ применения мифа в художественном тексте становится тем ключом, посредством которого можно раскрыть тайну обобщающей силы произведения, охарактеризовать философскую природу и дух того или иного исторического периода.

Использование мифа в литературном произведении проявляется по-разному. В одном случае оно заключается в тождественных повторениях мифических сюжетов, в другом имеет

формоструктурную функцию средства завершения художественного повествования.

Все виды мифа, как древнего, так и современного, представляя собой идейную составляющую, построены на коллективных эмоциях, чувствах, тесно переплетаются в сознании, образуя по своей природе сложную многослойную систему. Миф, являясь продуктом воображения, проникая в художественную структуру в качестве прецедентного текста, отражает своеобразие мысли автора, тот первоначальный мир, концептуальный строй, на которых базируется художественное произведение.

Выстраивая свой художественный мир на мифологических основах, переплетая мифические источники с художественной структурой и обобщениями, автор трансформирует миф. В результате этого в атмосфере идейно-психологического осмысления мифа выстраивается художественная структура с ее уникальными выразительными, языковыми, структурными, смысловыми особенностями.

HRIPSIME ZAKARYAN - MYTHICAL PRIMARY SOURCES AS PRECEDENT TEXTS OF INTERTEXTUALITY

Keywords: *myth, precedent text, Bible, archetype, postmodernism, semiotics, plot, philosophy, author's style*

The theory of precedent is one of the most actively developing areas in modern literary criticism. In modern literature, especially in Armenian poetry of recent decades, the most popular and frequent sources of precedent are mythical and biblical texts, Christian myths.

The use of myth in a literary work and the transformation of myth help create a unique literary symbolic world in which the multifaceted aspects of contemporary reality are intricately reflected. Therefore, a comprehensive analysis of the application of myth in a literary text becomes the key through which one can unveil the mystery of the work's unifying power and characterize the philosophical nature and spirit of a particular historical period.

The use of myth in a literary work manifests in different ways. In some cases, it involves identical repetitions of mythic plots, while in others, it serves a formal-structural function as a means of completing the artistic narrative.

All types of myth, whether ancient or modern, serve as an ideological fabric built on collective emotions and feelings, intricately intertwined in the consciousness, forming a complex, multilayered system by their nature. Myth,

being a product of imagination, enters the artistic structure as a precedent text, reflecting the originality of the author's thought and the original world and conceptual system that is uniquely manifested in a work of art.

By building his artistic world on mythological foundations and intertwining mythological sources with artistic structure and generalizations, the author transforms myth. As a result, within ideological and psychological interpretation of myth, an artistic structure emerges with its unique expressive, linguistic, structural, and semantic features.

Ներկայացվել է՝ 14.02.2024 թ.
Գրախոսվել է՝ 14.05.2024 թ.

**COMPARATIVE ANALYSIS OF THE FUNCTIONAL ROLES OF
PRAGMATIC MARKERS IN DOCUMENTING THE KOSOVO
AND NAGORNO-KARABAKH CONFLICTS
ANI TAMAZYAN**

Abstract

This article presents a comparative analysis of the functional roles of the pragmatic markers utilized in the documentation of the Kosovo and Nagorno-Karabakh conflicts. Grounded in the postulate that the pragmatic markers employed in Kosovo's documentation were stronger and contributed to a favorable outcome, namely the attainment of Kosovo's independence, the study contrasts this with the case of Nagorno-Karabakh. According to our postulate, similar markers in Nagorno-Karabakh were less effective and were one of the reasons for the inability to achieve peace through diplomatic negotiations. The disparity in the utilization and effectiveness of pragmatic markers in the documentation of two conflicts, underscores their significance in influencing international recognition, support, and ultimately, the success of diplomatic negotiations.

Keywords: *pragmatics, pragmatic markers, discourse, diplomatic discourse, international documentation, Nagorno-Karabakh, OSCE Minsk Group*

Introduction

In the context of diplomatic discourse, language serves as a potent tool, shaping narratives, framing perspectives, and conveying subtle nuances that often escape notice. Among the various linguistic elements, pragmatic markers emerge as essential tools, reflecting the intricate interplay between language, culture, and socio-political contexts. This study aims to undertake a comparative analysis of the functional roles of pragmatic markers utilized in the documentation of the Kosovo and Nagorno-Karabakh conflicts to find out whether these markers played any role on the ultimate outcomes of the conflicts.

Our investigation conducts a thorough analysis of the multifaceted nature of pragmatic markers, which encompass a diverse range of linguistic units such as adverbs, discourse particles, interjections, filler words, and phrases used in diplomatic discourse. These markers play important roles in conveying nuanced messages, signaling diplomatic positions, and framing narratives within diplomatic discourse. By scrutinizing the utilization of pragmatic markers across the documentation of Kosovo and Nagorno-Karabakh conflicts, particularly official statements and resolutions, we aim to uncover patterns, nuances, and divergences in their implementation.

Preceding the start of our analysis, it is essential to provide context about the conflicts and the mediating organizations involved. The Kosovo conflict and the Nagorno-Karabakh conflict share similarities that weave a common tale of struggle and complexity. Both stories are marked by deep-seated ethnic and national tensions, with Kosovo dealing with Albanians and Serbs, and Nagorno-Karabakh being a territorial dispute between Armenians and Azerbaijanis. Kosovo is a disputed territory between Serbia and its former province, while Nagorno-Karabakh is a focal point of contention between Armenia and Azerbaijan. Both stories feature aspirations for independence or autonomy, as Kosovo declared independence from Serbia and over hundred countries recognized its independence (Foreign Ministry of Kosovo), and Nagorno-Karabakh asserted itself as an independent republic, though it faced no international recognition.

In the case of the Nagorno-Karabakh conflict, the Minsk Group, a mediation body established by the Organization for Security and Cooperation in Europe (OSCE) in 1992, has been instrumental in addressing this territorial dispute between Armenia and Azerbaijan over the Nagorno-Karabakh region. Despite the efforts of the Minsk Group, the conflict did not reach a peaceful resolution. Moreover, between September 19 and 20, 2023, Azerbaijan launched a large-scale military offensive against Nagorno-Karabakh, which violated the ceasefire agreement signed in the aftermath of the Second Nagorno-Karabakh War in 2020.

In contrast, the conflict in Kosovo saw successful and peaceful regulation through implemented discourse. Although there is no direct equivalent to the OSCE Minsk Group for the Kosovo issue, various international bodies have been involved in managing the Kosovo conflict, such as the United Nations (UN), European Union (EU), and North Atlantic Treaty Organization (NATO). Following NATO's military campaign against the Federal Republic of Yugoslavia (FRY) on June 10, 1999, the United Nations Security Council adopted Resolution 1244, authorizing the United Nations Interim

Administration Mission in Kosovo (UNMIK) to start an extensive process of peace building, democracy, stability, and self-government in Kosovo.

Our research is driven by the postulate that the use of pragmatic markers, when inappropriate, were one of the reasons in the failure to achieve a peaceful resolution of the Nagorno-Karabakh conflict. We aim to investigate and validate this postulate, which is intrinsically linked to the imprecise implementation of pragmatic tools, leading to the aforementioned unfavorable outcome. By identifying and clarifying these markers, we seek to contribute to the prevention of similar mistakes in future diplomatic endeavors. During our analysis of the article, comparative and analytic methods have been used based on studies of international linguists.

Thus, it is crucial to provide theoretical insights into the concepts of pragmatic markers in diplomatic discourse, offering a comprehensive understanding of their interplay and implications in the comparative analysis of the documentation of Kosovo and Nagorno-Karabakh conflicts.

Theoretical Approaches to the Functional Roles of the Pragmatic Markers

In recent decades, there has been a noticeable increase in the number of articles and books discussing pragmatic markers. These publications explore different theoretical perspectives and approaches to the understanding of pragmatic markers. The various terms used to refer to these features highlight the diverse functions they serve in communication. There is not a consensus on what to call these linguistic elements, and researchers have used different labels. For example, they are referred to as pragmatic marker (as in Brinton, 1996, and Fraser, 1996, the term used in this study), discourse markers (Schiffrin, 1987), Discourse Connectives (Blakemore, 1989), Discourse Operators (Redeker, 1991), cue phrases (Knott, 1993), discourse particles (Abraham, 1991; Kroon, 1995; Schourup, 1985), pragmatic particles (Ostman, 1983), and pragmatic expressions (Erman, 1987), (Alami, 2015, p. 1).

According to Cambridge dictionary pragmatic markers as lexical items, comprise words or phrases such as "anyway," "right," "okay," "as I say," and "to begin with." These markers serve the purpose of facilitating the coherence and management of discourse, whether oral or written, while also conveying attitudinal nuances. It is notable that pragmatic markers often transcend conventional lexical definitions, thus necessitating an understanding of their functional roles. For instance, the multifaceted employment of pragmatic markers like "well" underscores their diverse functionalities within communicative contexts.

The above-mentioned points from the Cambridge dictionary clarify pragmatic markers as essential components of discourse, delineating their diverse functions in organizing, managing, and conveying attitudes within communication.

The increasing discussion on pragmatic markers, evident in the expanding literature over the past decades, corresponds with Schiffrin's (1987) view that these elements depend on specific sequences and play a role in structuring discourse. Thus, according to Schiffrin (1987, p. 31), pragmatic makers are “sequentially dependent elements which bracket units of discourse”. These elements include sets of linguistic expressions, such as conjunctions (and, but, or), interjections (oh), adverbs (now, then), and lexicalized phrases. Schiffrin (1987) further adds that perception verbs (see, look, listen), deictic (here and there), interjections (gosh and boy), metatalk (this is the point and what I mean is), and quantifier phrases (anyway, anyhow, and whatever) can also be accounted as pragmatic makers. Schiffrin (1987) claims that these pragmatic makers usually function to establish discourse coherence. However, pragmatic markers do not necessarily have to always be linguistic items, since paralinguistic features and non-linguistic gestures are likely to be included, as long as they indicate the relation between speaker and discourse and the function to which they are assigned (Schiffrin, 1987). Therefore, pragmatic markers may contain “core meaning” based on these patterns of use within particular discourse (Maschler & Schiffrin, 2015, p. 197):

- Distributional pattern: When in interaction are pragmatic markers employed?
- Functional pattern: What types of function do pragmatic markers fulfill?
- Structural pattern: What structural properties do they exhibit? (Rosaria, Citraresmana, Nurul, 2021)

Based on their use, pragmatic markers primarily function to establish discourse coherence through their relations with other adjacent units within the discourse (Fraser, 1999). Schiffrin (1994) proposes that pragmatic markers may typically contribute to discourse coherence by determining the utterance function, indicating the utterances to the speaker, audience, or both, and indicating the utterances, which precede or follow.

Whereas, Fraser (1999) provides a relatively comprehensive definition of pragmatic markers: “A class of lexical expressions that signal a relationship between the interpretation of the segment they introduce. They have a core meaning which is procedural, not conceptual and their more specific interpretation is “negotiated” by the context both linguistic and conceptual”

(Fraser, 1999, p. 831). From this definition, it becomes clear that pragmatic markers serve to indicate a connection or relationship between how the segment of discourse they introduce is interpreted. This highlights the dynamic nature of pragmatic markers and their sensitivity to context.

Both Schiffrin's and Fraser's definitions of pragmatic markers share some commonalities, such as recognizing these markers as elements that contribute to discourse coherence and understanding. However, they also diverge in certain aspects.

Schiffrin's definition emphasizes the sequential dependency of pragmatic markers within discourse units and their role in structuring discourse. She highlights a wide range of linguistic expressions, including conjunctions, interjections, adverbs, and lexicalized phrases, as pragmatic markers. Additionally, Schiffrin suggests that pragmatic markers can extend beyond linguistic items to encompass paralinguistic features and non-linguistic gestures, as long as they serve the function of indicating the relation between speaker and discourse. She further categorizes pragmatic markers based on their distributional, functional, and structural patterns, emphasizing their role in establishing coherence within discourse.

Fraser's definition also acknowledges pragmatic markers as signaling relationships within discourse segments, but he places greater emphasis on the procedural nature of their core meaning. He highlights the negotiation of specific interpretations of pragmatic markers within both linguistic and conceptual contexts, underscoring their sensitivity to context. Fraser distinguishes between content meaning (literal interpretation of the sentence) and pragmatic meaning (speaker's communicative intention), emphasizing that pragmatic markers convey the latter. He categorizes pragmatic markers into four sets based on their communicative functions, providing a framework for understanding their diverse roles within discourse.

In fact, while both definitions recognize pragmatic markers as important elements of discourse, they offer slightly different perspectives on their nature, functions, and categorization. Schiffrin's approach emphasizes the structural and functional aspects of pragmatic markers within discourse units, while Fraser's approach focuses more on their procedural core meaning and communicative functions within broader linguistic and conceptual contexts. Thus, based upon the above mentioned information we offer our definition to the term of pragmatic markers which are elements of language that do not change the fundamental meaning of a sentence but convey additional information about the speaker's attitude, the conversational flow, or the organization of discourse. These linguistic features help listeners

or readers infer the speaker's intentions, attitudes, or the contextual implications of what is being said. Pragmatic markers can include a wide range of language components such as *adverbs, discourse particles, interjections, filler words, and phrases that perform various functions in communication.*

In the context of diplomatic discourse, understanding pragmatic markers is crucial, as they contribute to establishing coherence, conveying communicative intentions, and determining utterance function.

Pragmatic markers perform a variety of functions in discourse. The most common functions of the pragmatic markers as:

- Pragmatic markers initiate discourse.
- Pragmatic markers mark a boundary in discourse (shift/partial shift in topic).
- Pragmatic markers preface a response or a reaction.
- Pragmatic markers serve as fillers or delaying tactics.
- Pragmatic markers affect an interaction or sharing between speaker-hearer.
- Pragmatic markers mark either fore-grounded or back-grounded information
- Pragmatic markers index propositional relations (Schiffrin et al., 2003).

In the context of the functional roles of pragmatic markers, we can also state Croucher (2004, p. 40) who asserts that pragmatic markers serve both formal and informal functions. The formal functions include indicating a turn in the conversation, identifying digressions, expressing the speaker's attitude, and framing general conversation. On the other hand, the informal functions encompass filling pauses, serving as nervous glitches in speech, and contributing to our collective lexicon. Understanding these functions becomes crucial in the examination of how pragmatic markers operate in the documentation of complex geopolitical conflicts (Croucher, 2004). In diplomatic discourse, the formal functions of pragmatic markers would be more prevalent.

Moreover, within the complex realm of diplomatic discourse, the prevalence of formal functions in pragmatic markers underscores their critical role as indispensable tools meticulously integrated into international interactions. In diplomatic discourse, where precision, tact, and effectiveness are paramount, diplomats leverage these linguistic devices to foster understanding, negotiation, and collaboration across diverse cultural and linguistic landscapes.

Having considered the above-mentioned theories, we offer the following functional roles of pragmatic markers in the diplomatic discourse.

Politeness and face-saving take center stage in diplomatic discourse, necessitating a delicate balance of courtesy and respect. Pragmatic markers like "please," "could you," and "may I suggest" serve as linguistic nuances, softening statements, and requests to maintain a respectful tone (Holmes, 1995)

Hedging and ambiguity find their place in diplomatic negotiations, where leaving statements open-ended or non-committal is often strategic. Markers such as "perhaps," "possibly," and "it seems" allow diplomats to express flexibility and uncertainty, facilitating open negotiation pathways (Brown, Levinson, 1987).

Indicating agreement or disagreement involves a careful dance of diplomacy, where markers like "indeed," "of course," and "however" serve as tools for clear expression while retaining expected decorum (Blum-Kulka, 1989).

Clarification and emphasis become essential in the face of complex diplomatic issues. Markers such as "in other words," "to clarify," and "emphasize" ensure accurate understanding and highlight key points (Heritage, 2012).

Managing turn taking and pauses requires finesse, and phrases like "if I may" or "allow me to interject" help diplomats navigate conversational dynamics without disruption (Jacks, Schegloff, & Jefferson, 1974).

Expressing concession and contrast involves acknowledging opposing viewpoints gracefully. Markers like "nevertheless," "despite this," and "on the other hand" facilitate the presentation of alternative perspectives (Schegloff, 1987).

Facilitating diplomatic fallbacks becomes crucial when discussions hit an impasse. Phrases like "let's consider" introduce options constructively, ensuring a non-confrontational approach to finding alternatives (Gumperz, 1982).

Signaling closure or conclusion marks the end of diplomatic discussions. Markers such as "in conclusion," "to sum up," or "finally" aid in summarizing agreements and clarifying next steps. The strategic use of pragmatic markers in diplomatic discourse masterfully balances assertiveness and sensitivity, enabling diplomats to navigate the intricate web of international relations (Schiffrin, 1987).

Structured discourse, marked by transitions, conclusions, or shifts in topic, relies on pragmatic markers such as "first," "on the other hand," and "in conclusion" (Schiffrin, 1987).

Turn-taking in conversations is managed through markers like "you know" or "right?" signaling speaker intentions (Sacks, Schegloff, Jefferson, 1974).

Expressing attitudes and emotions finds its voice in pragmatic markers like "actually," "frankly," and "obviously," conveying subtle emotional nuances (Tannen, 1989).

Modifying Speech Acts is achieved through the judicious use of markers like "just," "please," and "really," adapting requests, orders, or suggestions (Clark, Gerrig, 1990).

Conversational implicature, where meanings are offered indirectly, thrives on markers like "well" and "I mean," relying on shared context and knowledge (Grice, 1975).

Thus, in diplomatic discourse, the importance of pragmatic markers is huge. These linguistic devices play a crucial role in enhancing communication effectiveness, fostering understanding, and maintaining diplomatic relations. The study of pragmatic markers as well as their functional roles is crucial for comparative analysis, specifically in the documentation of conflicts like Kosovo and Nagorno-Karabakh.

Analysis

In the analysis section, we will study the pragmatic markers utilized within the documentation of both the Kosovo and Nagorno-Karabakh conflicts. Through a comparative examination of two documents from each conflict, we will unravel how the differential strength and efficacy of pragmatic markers contributed to disparate outcomes: the successful attainment of Kosovo's independence contrasted with the ongoing challenges in achieving peace in Nagorno-Karabakh through diplomatic negotiations.

The following resolution is taken from the UNSC Resolution 1244 (1999) (excerpts) adopted by the Security Council at its 4011th meeting on 10 June 1999:

“Regretting that there has not been full compliance with the requirements of these resolutions, Determined to resolve the grave humanitarian situation in Kosovo, Federal Republic of Yugoslavia, and to provide for the safe and free return of all refugees and displaced persons to their homes,

Condemning all acts of violence against the Kosovo population as well as all terrorist acts by any party.

Determined to ensure the safety and security of international personnel and the implementation by all concerned of their responsibilities under the present resolution, and acting for these purposes under Chapter VII of the Charter of the United Nations. Decides that a political solution to the Kosovo crisis shall be based on the general principles in annex 1 and as further elaborated in the principles and other required elements in annex 2; Demands in particular that the Federal Republic of Yugoslavia put an immediate and verifiable end to violence and repression in Kosovo, and begin and complete verifiable phased withdrawal from Kosovo of all military, police and paramilitary forces according to a rapid timetable, with which the deployment of the international security presence in Kosovo will be synchronized. Authorizes the Secretary-General, with the assistance of relevant international organizations, to establish an international civil presence in Kosovo in order to provide an interim administration for Kosovo under which the people of Kosovo can enjoy substantial autonomy within the Federal Republic of Yugoslavia, and which will provide transitional administration while establishing and overseeing the development of provisional democratic self-governing institutions to ensure conditions for a peaceful and normal life for all inhabitants of Kosovo (S/RES/1244 (1999))”.

The provided resolution expresses regret for non-compliance with previous resolutions and aims to address the humanitarian crisis in Kosovo. It emphasizes the need for a political solution based on specified principles and demands an immediate end to violence and the withdrawal of military forces. The resolution authorizes the establishment of an international civil presence in Kosovo to provide interim administration, ensuring autonomy and transitional governance. Analyzing this within the framework supporting Kosovo's independence and opposing Serbia, the resolution aligns with efforts to protect Kosovo's population, condemning violence and advocating for self-governance, implying a stance favoring Kosovo's independence.

It is also worth mentioning that it conveys a stance in favor of Kosovo's independence and against Serbia, emphasizing the need for a political solution and condemning violence. For example, the use of "*Regretting*" conveys a negative sentiment about the lack of compliance with resolutions, suggesting disappointment or disapproval.

The phrase "*Determined to*" expresses a strong commitment to resolving the humanitarian situation in Kosovo, conveying a sense of resolve and urgency. The repetition of the phrase "*Determined to*" emphasizes the resolve to address the humanitarian situation and ensure the safety and

security of international personnel. It underscores the commitment to these goals.

Another sentence "*Decides that a political solution to the Kosovo crisis shall be based on*" signals the intention to conclude the passage by outlining the basis for a political solution, suggesting a decisive stance.

The use of "*substantial autonomy within the Federal Republic of Yugoslavia*" introduces a degree of ambiguity regarding the level of autonomy for Kosovo. This ambiguity allows for flexibility in interpretation and potential compromise.

If we provide the analysis of some sentences trying to find out what implicature the pragmatic markers have, we will see that these sentences contribute to a narrative that advocates for the independence of Kosovo and condemns actions taken by the Federal Republic of Yugoslavia, particularly emphasizing the need for a political solution and international intervention in support of Kosovo.

This sentence "*Condemning all acts of violence against the Kosovo population as well as all terrorist acts by any party*" strongly opposes violence against Kosovo and condemns terrorism, positioning Kosovo as a victim.

Another sentence "*Provide transitional administration while establishing and overseeing the development of provisional democratic self-governing institutions,*" suggests a shift toward democratic self-governance in Kosovo, emphasizing a departure from the existing Yugoslav administration.

In addition, it is worth mentioning the implemented verbs such as "*Regretting*", "*Determined*", "*Authorizes*", and "*Condemning*" which act as strong pragmatic markers to convey a clear stance against acts of violence and terrorism, particularly those directed at the Kosovo population.

Therefore, the pragmatic markers in the passage help to convey a strong stance against the actions of the FRY and support for Kosovo's independence, framing the narrative with urgency, commitment, and specific demands for change.

Another document that is worth analyzing is taken from the Report of the Security Council mission on the Kosovo issue on May 4, 2007. "*The return of internally displaced persons remains a critical element in the implementation of resolution 1244 (1999). The number of sustainable returns continues to be very low. Although structures for the return of internally displaced persons are in place and despite the role played by international organizations, complicated return procedures, the lack of economic prospects, difficulties associated with freedom of movement and security-related concerns were mentioned as defining reasons why returns remained*

limited. Opposing points of view exist on whether a solution to the status of Kosovo would facilitate or hinder the returns process. The positions of the sides on the Kosovo settlement proposal remain far apart. The Belgrade authorities and the Kosovo Serb interlocutors who expressed themselves on this issue remained firmly opposed to the Kosovo settlement proposal and rejected a solution that would entail any form of independence. All called for a solution based on genuine compromise, to be reached through further negotiations between the sides. There was recognition, however, that the current status quo was not sustainable. Kosovo Albanian representatives and representatives of non-Serb communities, on the other hand, expressed clear and unambiguous support for the Kosovo settlement proposal and recommendation on Kosovo's future status. Expectations among the majority Kosovo Albanian population for an early resolution of Kosovo's future status were very high. The representatives looked to the Security Council to move rapidly towards a solution, without any further need for negotiations between the sides. The mission noted the importance, stressed by many, of promoting a European perspective for the region, including for Kosovo. This European prospect can provide direction for future political and economic development and thus contribute to consolidating stability in Kosovo and, by extension, in the region as a whole (1244 (1999))."

The document underscores strong support from Kosovo Albanian representatives and non-Serb communities for the proposed settlement and future status of Kosovo, indicating a favorable inclination towards independence. Additionally, there are heightened expectations for a prompt resolution, particularly among the majority Kosovo Albanian population, hinting at a preference for independence. Moreover, the acknowledgment of the unsustainable nature of the current status quo indirectly implies criticism of Serbia's stance or the lack of progress in the region, highlighting the need for change.

This document uses phrases like "*complicated return procedures*," "*lack of economic prospects*," and "*difficulties associated with freedom of movement and security-related concerns*" to acknowledge the challenges in the region. While not explicitly for or against independence, these phrases express a pragmatic recognition of difficulties.

We can find pragmatic markers in the resolution to convey both support for the independence of Kosovo and opposition to Serbia's stance, particularly from the Kosovo Albanian representatives. It also recognizes challenges in the region and emphasizes the need for a comprehensive solution, potentially through a European perspective.

The repetition of the term "Kosovo settlement proposal" emphasizes the central focus of the passage and clarifies that the divergent positions relate to this specific proposal.

The phrase "*Opposing points of view exist on whether a solution to the status of Kosovo would facilitate or hinder the returns process*" introduces a degree of ambiguity regarding the relationship between the status of Kosovo and the return process, allowing for diplomatic flexibility and interpretation.

Thus, this resolution passage explicitly states that Belgrade authorities and Kosovo Serb interlocutors remained firmly opposed to the Kosovo settlement proposal and rejected any solution that would entail any form of independence. This indicates a clear stance against the independence of Kosovo.

Among the conjunctions, interjections, adverbs, and other lexicalized phrases found in the statement we could identify the following ones: conjunctions (although, despite, however, on the other hand, which introduce contrasts or exceptions, indicating opposing viewpoints or conditions. They are used to present arguments or perspectives that may challenge or contradict the idea of independence for Kosovo or the stance against Serbia) and adverbs (very which adds emphasis to the statement "*the lack of economic prospects*," highlighting the severity of the situation and potentially implying the negative impact on the quest for independence) and lexicalized phrases (In place, based on, recognition, however which contribute to the structure and coherence of the discourse. They help transition between ideas, provide context, or emphasize specific points related to the independence of Kosovo and opposition to Serbia).

In summary, the passage employs pragmatic markers to convey concerns, acknowledge challenges, and emphasize the opposing perspectives on the status of Kosovo. It recognizes the need for negotiation, expresses a clear opposition to Kosovo's independence from Belgrade authorities, and underlines the importance of promoting a European perspective for regional stability.

To conduct a comparative analysis, let us examine the "Statement of the Co-Chairs of the OSCE Minsk Group Baku/Yerevan – January 29, 2007," focusing on the pragmatic markers utilized within the document.

"After four days of meetings, the OSCE Minsk Group Co-Chairs (Ambassador Yuri Merzylakov – Russian Federation; Ambassador Bernard Fassier – France; Deputy Assistant Secretary of State Matthew Bryza – United States) are encouraged by the constructive approach of the leaders of

Armenia and Azerbaijan as they seek to finalize a set of basic principles for the resolution of the Nagorno-Karabakh conflict. Russian Federation Foreign Minister Sergei Lavrov hosted Armenian Foreign Minister Vartan Oskanian and Azerbaijani Foreign Minister Elmar Mammadyarov for talks facilitated by the Co-Chairs in Moscow on Tuesday, January 23. The Co-Chairs met with Azerbaijani President Ilham Aliyev in Baku on Wednesday, January 24. On Thursday, January 25, they traveled to Nagorno-Karabakh to meet with NK leader Arkady Ghukasian. They met with Armenian President Robert Kocharian in Yerevan on Friday, January 26. The Co-Chairs appreciate the efforts of all the interlocutors they met during the week. It is the responsibility of the presidents of Armenia and Azerbaijan, with the assistance of the Co-Chairs, to find a lasting, peaceful resolution of the Nagorno-Karabakh conflict. The presidents are defending their national interests vigorously, and they are doing so in a way that allows the peace process to continue moving forward. The Co-Chairs urge all parties to sustain this momentum in the negotiations and to prepare their publics for the necessary compromises. At the same time, the Co-Chairs urge continued pursuit of confidence-building measures and maintenance of the ceasefire to increase the level of trust and understanding between the sides”

While this statement does not explicitly express sentiments against Nagorno-Karabakh or the Republic of Armenia, there are pragmatic markers that may imply positions that could be perceived as unfavorable to the interests of Nagorno-Karabakh. Analyzing the pragmatic markers in the given statement, we can identify the pragmatic markers expressing attitudes and emotions, signaling closure or conclusion, facilitating diplomatic fallbacks, expressing concession and contrast, hedging and ambiguity as well as clarification and emphasis.

Let us analyze each of them.

“Encouraged by the constructive approach” - Indicates a positive sentiment towards the actions taken by the leaders of Armenia and Azerbaijan in seeking resolution. This marker Expresses Attitudes and

"It is the responsibility of the presidents of Armenia and Azerbaijan... to find a lasting, peaceful resolution" -conveys a sense of obligation or conclusion regarding the roles of the presidents in resolving the conflict, emphasizing the need for closure and resolution. This sentence signals closure or conclusion.

"With the assistance of the Co-Chairs" - acknowledges the role of the Co-Chairs in facilitating the peace process, potentially aligning with

Azerbaijan's stance on international mediation. We can say that this idea facilitates diplomatic fallbacks.

"The presidents are defending their national interests vigorously," acknowledges the interests of both sides, potentially aligning with Azerbaijan's perspective on sovereignty and territorial integrity. This marker might be perceived as against Nagorno-Karabakh and Armenia if it implies a stronger support for Azerbaijan's stance. This marker expresses concession and contrast.

"In a way that allows the peace process to continue moving forward" emphasizes the importance of actions that support the peace process, providing clarification on the intent behind defending national interests. This indicates clarification and emphasis.

"The Co-Chairs urge all parties to sustain this momentum in the negotiations" introduces ambiguity by not specifying the exact actions needed to sustain momentum, potentially aligning with Azerbaijan's diplomatic stance. This pragmatic marker may be perceived as hedging and ambiguity.

In the statement, we can recognize various conjunctions, interjections, adverbs, and other lexicalized phrases: conjunctions ("and" connects various actions and events in the statement, such as meetings between the Co-Chairs and the leaders of Armenia and Azerbaijan, potentially portraying a unified effort towards resolution. "But" contrasts the vigorous defense of national interests by the presidents with the need for the peace process to continue, implying a potential conflict of interests), adverbs, (e.g. "vigorously" which describes how the presidents are defending their national interests, potentially emphasizing a strong stance that aligns with Azerbaijan's perspective), lexicalized phrases ("*constructive approach*" which expresses the leaders' attitude towards finalizing basic principles for resolution, indicating a positive sentiment and potentially supporting Azerbaijan's stance, "*lasting, peaceful resolution*" which shows the desired outcome of the conflict, emphasizing the need for a resolution that aligns with Azerbaijan's goals).

Thus, while the statement maintains a diplomatic tone, the pragmatic markers used may lean towards supporting Azerbaijan's perspective on the Nagorno-Karabakh conflict. The emphasis on finding a peaceful resolution, the acknowledgment of national interests, and the role of international mediation could be interpreted as supportive of Azerbaijan's goals in the negotiation process.

It is also necessary to mention that there are not explicit linguistic units or pragmatic markers that directly express opposition against Artsakh or

Armenia. The passage lacks discourse markers or fillers that typically signal negative sentiment or opposition.

The tone of the statement is neutral. However, the neutrality of the statement can indeed be considered as a pragmatic marker, especially when contrasted with other documents or statements where stronger pragmatic markers are present, as in the case of Kosovo.

If we analyze another statement of the OSCE Minsk Group Co-Chairs from July 20, 2012, we can identify that the above-mentioned situation also exists in this statement.

“MOSCOW/PARIS/WASHINGTON, 20 July 2012 – The OSCE Minsk Group Co-Chairs (Ambassadors Robert Bradtke of the United States, Igor Popov of the Russian Federation, and Jacques Faure of France) have noted reports about the conduct of “elections” that took place in Nagorno-Karabakh on July 19, 2012. The Co-Chairs acknowledge the need for the de facto authorities in NK to try to organize democratically the public life of their population with such a procedure. However, the Co-Chairs note that none of their three countries, nor any other country, recognizes Nagorno-Karabakh as an independent and sovereign state. The Co-Chairs stress that the procedures of July 19 in no way prejudice the final legal status of Nagorno-Karabakh or the outcome of the ongoing negotiations to bring a lasting and peaceful settlement to the Nagorno-Karabakh conflict.”

The pragmatic markers used in the statement appear to lean towards supporting Azerbaijan's perspective on the Nagorno-Karabakh conflict. The acknowledgment of the need for democratic procedures, the emphasis on non-prejudgment of Nagorno-Karabakh's legal status, and the lack of recognition of its independence align with Azerbaijan's stance on sovereignty and territorial integrity. Particularly, in the statement we can identify pragmatic markers expressing attitudes and emotions e.g. *“The Co-Chairs' acknowledgment of the need for democratic procedures in Nagorno-Karabakh”* indicates a neutral stance but aligns with Azerbaijan's preference for governance processes that acknowledge its territorial integrity. This sentence *“The procedures of July 19 do not prejudice the final legal status of Nagorno-Karabakh”* functions as a conclusion or closure to a particular aspect of the diplomatic discourse. It serves to summarize the position of Azerbaijan regarding the legal implications of the procedures enacted on July 19 in relation to Nagorno-Karabakh. We can also identify statements expressing hedging and ambiguity. The mention of *“de facto authorities”* introduces ambiguity regarding the legitimacy of the authorities in Nagorno-Karabakh, potentially aligning with Azerbaijan's perspective on the disputed

status of the region. Additionally, the statement's lack of explicit endorsement or recognition of Nagorno-Karabakh's independence creates further ambiguity, leaving room for interpretation in line with Azerbaijan's stance.

Among the conjunctions, interjections, adverbs, and other lexicalized phrases found in the statement we can identify the following ones: conjunctions ("however" which introduces a contrast between acknowledging the need for democratic procedures in Nagorno-Karabakh and the lack of recognition for its independence, potentially supporting Azerbaijan's stance on territorial integrity), deictic ("none of their three countries, nor any other country" which broadens the scope of non-recognition without specifying individual countries, potentially aligning with Azerbaijan's diplomatic attitude), lexicalized phrases ("de facto authorities" introduces ambiguity regarding the legitimacy of the authorities in Nagorno-Karabakh, potentially aligning with Azerbaijan's perspective on the disputed status of the region), metatalk ("stress that" emphasizes a particular point, indicating the Co-Chairs' emphasis on the non-prejudgment of Nagorno-Karabakh's legal status, which may support Azerbaijan's diplomatic efforts).

Hence, in documents related to Kosovo, pragmatic markers strongly supporting its independence were evident. These markers include expressions of support, encouragement for self-determination, or the use of assertive language advocating for Kosovo's sovereignty. These markers contributed to shaping a narrative that favored Kosovo's independence and framed discussions around that goal.

In contrast, the lack of appropriate pragmatic markers supporting the independence of Nagorno-Karabakh in the statements related to it can be seen as a hindrance to the peaceful regulation of the conflict. Without clear expressions of support for specific parties or positions, the document may fail to provide the necessary impetus for resolution. The absence of strong pragmatic markers supporting either side could maintain a status quo or impasse in negotiations, making it challenging to achieve meaningful progress towards peace.

Therefore, the presence or absence of appropriate pragmatic markers plays a crucial role in shaping the discourse and influencing the outcomes of conflicts such as those in Kosovo and Nagorno-Karabakh. In the absence of supportive pragmatic markers, the likelihood of achieving a peaceful resolution may be diminished, as seen in the case of Nagorno-Karabakh.

Conclusion

After analyzing two resolutions concerning Kosovo, it becomes apparent that pragmatic markers were notably robust, expressing strong support for Kosovo's independence. These markers likely included overt endorsements of Kosovo's sovereignty, unambiguous calls for international recognition, and expressions of solidarity with Kosovo's aspirations for self-determination. Such markers would have contributed to shaping a narrative favoring Kosovo's independence and depicting clear pathways for its attainment.

Contrastingly, after studying two statements regarding Nagorno-Karabakh, we observed an apparent absence or diminished presence of pragmatic markers supporting the independence of Nagorno-Karabakh. The language used may lack a firm endorsement of Nagorno-Karabakh's self-determination. Moreover, there was a notable absence of calls for international recognition or explicit statements advocating for Nagorno-Karabakh's independence.

This contradiction in the implementation of pragmatic markers between the two contexts may have significant implications for the peaceful resolution of the conflicts. The robust support expressed in the Kosovo documentation could likely facilitate international recognition and support Kosovo's position in negotiations. Conversely, the lack of appropriate pragmatic markers in the case of Nagorno-Karabakh may have hindered progress toward a peaceful resolution by failing to provide sufficient support and legitimacy to its claims.

In conclusion, the analysis of pragmatic markers in the respective documents underscores the importance of language and rhetoric in shaping perceptions and outcomes in conflict resolution processes. The divergence in the implementation of pragmatic markers between Kosovo and Nagorno-Karabakh documents highlights the nuanced role of language in influencing the path of peace negotiations and the attainment of self-determination goals.

REFERENCES

1. Blum-Kulka S., *Playing it safe: The role of conventionality in indirectness*, 1989
2. Brown, P., Levinson, S. "Politeness: Some Universals in Language Usage." Cambridge University Press, 1987
3. Grice, H. P., *Logic and conversation*, In P. Cole & J. L. Morgan (Eds.), "Syntax and Semantics: Vol. 3, Speech Acts", Academic Press. 1975, pp. 41-58.

4. Cambridge Dictionary: Discourse Markers
<https://dictionary.cambridge.org/grammar/british-grammar/discourse-markers-so-right-okay?q=Discourse+markers+%28+so%2C+right%2C+okay+%29> 15/03/2024
5. Clark, H. H., Gerrig, R. J., Quotations as Demonstrations Language, 66(4), 1990, pp. 764-805,
6. Croucher, S.M., Like, you know, what I'm saying: A Study of discourse marker frequency in extemporaneous and impromptu speaking. National Forensic Journal, 22(2-3), 2004, pp. 38-47
7. Gumperz, J. J., "Discourse Strategies." Cambridge University Press, 1982
8. Foreign Ministry of Kosovo: List of Acknowledgments <https://mfaks.net/lista-e-njohjeve/15.03.2024>
9. Fraser B., What are discourse markers? Journal of Pragmatics. 31(7), 1999, pp. 931-952
10. Fung L., Carter R., Discourse markers and spoken English: native and learner use in pedagogic settings., Applied Linguistics, 2007
11. Holmes, J., Women, Men and Politeness, London: Longman, 1995
12. Manizheh A., Pragmatic Functions of Discourse Markers: A Review of Related Literature, International Journal on Studies in English Language and Literature (IJSELL) Volume 3, Issue 3, 2015, p. 1
https://www.researchgate.net/publication/283498166_Pragmatic_Functions_of_Discourse_Markers_A_Review_of_Related_Literature 15/03/2024
13. Maschler Y. , Schiffrin D., Discourse markers: Language, meaning, and context, The Handbook of Discourse Analysis, Second edition. Chichester, UK: John Wiley & Sons, 2015, pp. 189 – 221,
14. Rosaria M. A., Citraresmana E., Nurul H. S., Discourse Markers in Diplomatic Settings: Ministerial Dialogue between Australia and Indonesia, Studies in English Language and Education, 8(1),pp. 346-359, 2021
<https://pdfs.semanticscholar.org/f95b/4f619dccecfbdf4a2716d43534b0f46d99d0.pdf> 15/03/2024
15. Sacks H., Schegloff E., Jefferson G., A simplest systematics for the organization of turn-taking for conversation, Language, 50(4), 1974 pp. 696-735
16. Schegloff E.A., Analyzing single episodes of interaction: An exercise in conversation analysis, Social Psychology Quarterly, 50(2), 1987. p. 101-114

17. Schiffrin D., Discourse Markers. Cambridge: Cambridge University Press, 1987, p. 37
18. Schiffrin, D. Tannen, D., Hamilton, H.E., the Handbook of Discourse Analysis. London: Blackwell, 2003
19. Shkëndije G., Kosovo's Final Status Negotiation Process: A Way Out or Cul-de Sac, 2008, p. 20 https://www.diplomacy.edu/wp-content/uploads/2021/06/23082010103117_Geci_28Library29.pdf 15/03/2024
20. Tannen D., Talking Voices: Repetition, Dialogue, and Imagery in Conversational Discourse, Cambridge University Press. 1989

ANALYZED DOCUMENTS

1. UNSC Resolution 1244 (1999) (excerpts) Adopted by the Security Council at its 4011th meeting on 10 June 1999 <https://digitallibrary.un.org/record/274488?ln=ru> 12/02/2024
2. Report of the Security Council mission on the Kosovo issue (S/2007/256) <https://reliefweb.int/report/serbia/report-security-council-mission-kosovo-issue-s2007256> 15/03/2024
3. Statement of the Co-Chairs of the OSCE Minsk Group Baku/Yerevan – January 29, 2007 <https://www.osce.org/files/f/documents/7/2/23865.pdf> 10/03/2024
4. Statement of the OSCE Minsk Group Co-Chairs - July 12, 2012 <https://www.osce.org/mg/92313> 15/03/2024

ԱՆԻ ԹԱՄԱԶՅԱՆ - ԿՈՍՈՎՈՅԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԳՈՐԾԱՔԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԵՐԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր՝ գործաբանություն, գործաբանական ցուցիչներ, խոսույթ, դիվանագիտական խոսույթ, միջազգային փաստաթղթեր, Լեռնային Ղարաբաղ, ԵԱՀԿ Մինսկի խումբ

Սույն հոդվածը ներկայացնում է Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների փաստաթղթերում օգտագործված գործաբանական ցուցիչների գործառնական դերերի համեմատական վերլուծությունը: Հիմք ընդունելով այն կանխադրույթը, որ Կոսովոյի փաստաթղթերում կիրառված գործաբանական ցուցիչներն ավելի ուժեղ են և նպաստել են հաջող արդյունքի, այն է՝ Կոսովոյի անկախության ձեռքբերմանը, մեր

ուումնասիրությունը այս ամենը հակադրում է Լեոնային Ղարաբաղի դեպքին: Մեր կանխադրույթի համաձայն, Լեոնային Ղարաբաղի շուրջ փաստաթղթերում նմանատիպ ցուցիչներն ավելի քիչ արդյունավետ էին և եղել են դիվանագիտական բանակցությունների միջոցով խաղաղության հասնելու անկարողության պատճառներից մեկը: Երկու հակամարտությունների փաստաթղթերում գործաբանական ցուցիչների կիրառման և արդյունավետության անհավասարությունն ընդգծում է վերջիններիս կարևորությունը նշված հակամարտությունների միջազգային ճանաչման, աջակցության և դիվանագիտական բանակցությունների հաջողության մեջ:

АНИ ТАМАЗЯН - СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ФУНКЦИОНАЛЬНЫХ РОЛЕЙ ПРАГМАТИЧЕСКИХ МАРКЕРОВ В ДОКУМЕНТИРОВАНИИ КОСОВСКОГО И НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТОВ

***Ключевые слова:** прагматика, прагматические маркеры, дискурс, дипломатический дискурс, международная документация, Нагорный Карабах, Минская группа ОБСЕ*

В статье представлен сравнительный анализ функциональных ролей прагматических маркеров, используемых в документировании косовского и нагорно-карабахского конфликтов. Основываясь на постулате о том, что прагматические маркеры, используемые в документации по Косово, были более сильными и способствовали благоприятному результату, а именно достижению независимости Косово, исследование противопоставляет косовский дискурс документированию нагорно-карабахского конфликта. Прагматические маркеры в нагорно-карабахском конфликте обнаруживали меньшую эффективность, что стало одной из причин невозможности достижения мира путем дипломатических переговоров. Разница в функциональной эффективности прагматических маркеров при документировании двух конфликтов подчеркивает влияние данных маркеров на международное признание, поддержку и, в конечном итоге, успех дипломатических переговоров.

Ներկայացվել է՝ 21.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 07.05.2024 թ.

ԱՊԱՍՐԲԱՅՆԱՑՈՒՄ ԵԶՐՈՒՅԹԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՄԱՐԳՈՒՇ ՄԻՐՈՒՄՅԱՆ**

Համառոտագիր

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում իմաստափոխության դրսևորումներից մեկի՝ ապասրբայնացման իրողությանը, ցույց են տրվում այն գործոնները, որոնք նպաստում են հատկանունների հասարակացմանը, մասնավորապես քննարկվում է աստվածության անվանումների իմաստափոխությունը, որի դեպքում բառերը նեղ իմաստային նշանակություններից անցնում են առավել ընդհանրական նշանակությունների:

Դիտարկվում են այդ դեպքերը, երբ լեզվի բառային կազմում որոշակի շերտի բառեր, ձերբազատվելով նախնական՝ սրբայնացած իմաստից, ենթարկվել են ապասրբայնացման և հատուկ անուններից անցնելով հասարակ անվան՝ ընդլայնել են իմաստային ծավալի շրջանակները: Լեզվում ապասրբայնացումը կապվում է կրոնադիցաբանական ոլորտի հասկացությունների հետ, որոնք (հասկացությունները), տարբեր գործոններով պայմանավորված, կարող են հեռանալ նախնական՝ ստուգաբանական իմաստներից, ձերբազատվելով սրբայնացած նշանակություններից:

Ապասրբայնացումը, որպես իմաստափոխության գործոն, նպաստում է բառիմաստի ընդլայնման իրողությանը:

Հիմնաբառեր՝ իմաստափոխություն, ապասրբայնացում, բովանդակային պլան, կոչական, ծայնարկություն, դիցաբանական համակարգ, ստուգաբանական իմաստ:

Ներածություն

Լեզվի բառային կազմի զարգացումը տեղի է ունենում երկու ուղով՝ ներքին և արտաքին: Ներքին ուղու էությունն այն է, որ լեզվում ստեղծվում են նոր բառեր նրա բառակազմական եղանակներով ու միջոցներով, իսկ արտաքին ուղու դեպքում կատարվում են միջլեզվային փոխառություններ: Լեզվի բառային կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն (բառային կազմը) կարող է համարվել նաև այլ

միջոցներով, որոնցից են տարբեր գիտություններից և տարբեր գիտակարգերից կատարված «փոխառությունները»: Այդ ճանապարհով լեզվի տերմինաբանական համակարգ են թափանցել որոշ տերմիններ, որոնք իրենց հասկացական նոր նշանակություններով տարբերվում են նախնական բառիմաստներից և անկախացել են տերմինային նշանակություններով:

Հայերենում (և այլ լեզուներում) այդ կարգի եզրույթներ են *սրբայնացում* և *ապասրբայնացում* բառերը, որոնք իմաստաբանորեն աստվածաբանական (կրոնական) բնագավառի հասկացություններ են՝ իրենց բնորոշ կրոնատեղեցական ոլորտի իմաստներով ու նշանակություններով, իսկ ստուգաբանորեն պատճենված են համապատասխանաբար *сакрализация* և *десакрализация* տերմիններից, որոնք իրենց հերթին լատինական փոխառություններ են:

Նկատենք, որ դրանք՝ որպես լեզվաբանական եզրույթներ, տեղ չեն գտել Վ.Դավլի, Պ.Չերնիխի, Օ.Ախմանովայի, Վ.Ստարիչյոնկի, Ի.Բոգատիրևայի և Օ.Վոլոշինայի, Տ.Մատվենայի, Հ.Պետրոսյանի և Ս.Գալստյանի, Ա.Նազարյանի կազմած մասնագիտական բառարաններում, թեև, այնուամենայնիվ, հանդիպում են որոշ աշխատանքներում (Бенвенист, 2007, Казаков, 2013, էջ 142-151):

Այդ տերմիններն ընդգրկված են մեր կազմած լեզվաբանական բառարանում՝ իմաստաբանության բաժնում՝ բնորոշելու բառերի բովանդակային պլանի նեղացման և ընդլայնման (իմաստափոխական) դրսևորումները (Խաչատրյան, 2021, էջ 116): Ռուսերեն մեկ այլ բառարանում որպես օտար բառ տրված է միայն СакральныӀ բառահոդվածը՝ միայն «սրբազան, կրոնական պաշտամունքին և ծիսակարգին վերաբերող, ծիսական» իմաստներով (Словарь иностранных слов, 1988, էջ 441):

Բառերը և նրանց իմաստները հասարակության գիտակցության փոփոխությունների պատճառով կարող են ենթարկվել փոփոխությունների: Այդ փոփոխություններով են պայմանավորված՝ *սակրալիզացիա* (սրբայնացում) և *դեսակրալիզացիա* (ապասրբայնացում) եզրույթները կրոնական դաշտից անցել են լեզվաբանության բնագավառ՝ արտահայտելով նոր հասկացական նշանակություններ:

Բովանդակություն

Լեզվում ապասրբայնացումը տեղի է ունենում տարբեր ուղիներով, ինչպես՝ իմաստազրկման, բառի «մաշվածության», դիցաբանական համակարգից դուրս գալու միջոցով և այլն:

Ա. *Իմաստագրկման հեղևանքով* բառերը ենթարկվում են բովանդակային պլանի ընդլայնման. այդ դեպքում բառերը զրկվում են իրենց հիմնական նշանակությունից և անցնում են համագործածական բառերի շարքը: Իմաստագրկման հիմքում ընկած է, այսպես կոչված, բառի «մաշվածությունը», որ առաջանում է առօրյա խոսքում վերջինիս հաճախակի կիրառության հետևանքով: Օրինակ՝ ռուսերենում «*снаобо*» (*շնորհակալություն*) բառը առաջացել է «*снаому бою*» (*փրկի՛ր, Աստված՛*) կապակցությունից, անգլերեն «*good-bye*» (*ցրեսություն*) բառն առաջացել է «*God be with you*» (*Աստված ձեզ հետ*) կապակցությունից. երկու դեպքում էլ առկա է բառի «մաշվածության» հանգամանքը:

Նման դեպքերում սրբայնացած բառերն ու կապակցությունները գործածվում են իբրև ձայնարկություններ: Համեմատենք *Աստված* բառը «աստվածություն» իմաստով (սրբայնացած նշանակությամբ) և կոչականի կամ ձայնարկության արժեքով հետևյալ կապակցություններում (ապասրբայնացած նշանակությամբ). *աստված, փեր աստված, ի սեր աստծո, աստված մեզ (ձեզ) հետ, աստված գիտե, ռուս. «боже», «ради бога», «бог знает (его, что)»* և այլն:

Աստուած - Սրբայնացած նշանակություններով գործածվում է լեզվի տարբեր գոյավիճակներում հետևյալ նշանակություններով:

Հին հայերենում.

1. «Քրիստոնեական կրոնական մշակույթում՝ աշխարհն ու տիեզերքն ստեղծող գերագույն էակ կամ ոգի. արարիչ, ստեղծիչ». Հմմտ. Ի սկզբանէ արար *Աստուած* զերկին և զերկիր (Ծնն., Ա, 1): Հոգի *Աստուծոյ* շրջէր ի վերեայ ջուրց (Ծնն., Ա, 2): Յայնժամ կարդասցես, եւ *Աստուած* լուիցէ քեզ (Եսայ., ԾԸ, 9): Զի կարող է *Աստուած* ի քարանցս յայցսնէ յարուցանել որդիս Աբրահամու (Մատ., Գ, 9):

2. «Բազմաստվածության մեջ՝ այդպիսի էակներից յուրաքանչյուրը. չաստված. կուռք»: Հմմտ. Այլ կամ զհուր, կամ զհողմ կամ զաւօ երագ, կամ զաստեղաց շրջանս... կամ զլուսաւորս երկնաւորս... *աստուածս* համարեցան (Իմաս., ԺԳ, 2): Պաւղոսս այս հաւանեցուցեալ շրջեաց բազում ժողովս ասել թէ՛ Ոչ են *աստուածք* ձեռագործք (Գործ., ԺԹ, 26-27):

Արդի հայերենում. 1. Ողջույն մեծագոր Սասնա հսկային, Քո ձայնը հասավ *աստծո* գահին (ՀԹ): 2. Վահագն է վեհ *աստված* վիշապաքաղ (ՆԶ):

Ժամանակի ընթացքում Աստված (Աստուած) բառը, հեռանալով իր սրբային նշանակությունից, ինչպես նշեցինք, հանդես է գալիս զանազան կապակցություններում կոչականի և ձայնարկության արժեքներով, ինչպես նաև դառնում է կայուն կապակցությունների և դարձվածքների

բաղադրիչ՝ զրկվելով նախնական՝ ստուգաբանական իմաստից, ենթարկվելով ապասրբայնացման:

Հմմտ. *Աստված* բաղադրիչի գործածությունը *կոչականի* և *ծայնարկության* արժեքներով հետևյալ կապակցություններում¹:

Մարդ աստծո - որևէ հորդորով՝ խնդրանքով մեկին դիմելու արտահայտություն:

Տե՛ր աստված - զարմանքի արտահայտություն:

Տա՛ Աստված - աստծուց հաջողություն ակնկալել:

Աստված մեզ // ձեզ // քեզ հետք - ամենակարող ուժերը մեզ // ձեզ զորավիզ:

Աստված նրա // նրանց հետք - ամենակարող ուժերը նրան // նրանց զորավիզ:

Աստված վկա - իր ասածը հաստատելու համար տրված երդում:

*Աստված գիտե՞*² - հայտնի չէ, անհայտ է, ո՞վ գիտե:

Աստված հոգին լուսավորի - բարեմաղթություն հանգուցյալի հասցեին:

Աստծու կրակը թափվի գլխիդ - չարիքի՝ դժբախտության հանդիպելու անեծք:

Աստված հեռու փանի // պահի - վտանգից հեռու լինելու (մնալու) օրհնանք:

Աստծու մարդ խառն է - ամեն ինչ կանխորոշված է (ի վերուստ):

Օրինակներ.

Համբերիր, *մա՛րդ աստծո*, համբերիր, լավ մտածիր՝ ինչ ես անում (ԱՇ, «Պատվի համար»): *Տե՛ր իմ Աստված*, կարծես անապատ էր ու ծաղկեց (ԴԴ., «Կոորդինատներ»):

- Դրանով միայն կհաղթենք, կհաղթենք:

- *Տա՛ աստված, փա՛ աստված* (ԴԴ, «Վարդանանք»):

Հայրս է, բայց *աստված հեռու պահի* ամեն մի որդու այդպիսի հայրերից (Նար-Դոս, «Սպանված աղավնին»): Երթաս բարով, *Աստված քեզ հետք*, Ոտդ քարի թող չգա (ԱԻ, «Մայրը»): Քո հանգուցալ եղբայրը շատ լավ մարդ էր. թող *աստված* իր *հոգին լուսավորե* (Բ, «Ոսկի աքաղաղը»):

¹ Առանձին գործածությամբ նույնպես կարող է հանդես գալ ապասրբայնացած նշանակությամբ: Հմմտ. *Աստված*, դու պահպանես Խանդութ խանում Դավթի համար:

² Այս օրինակում առկա է էլիպսիսի երևույթը, որը բառակապակցության որևէ բաղադրիչի բացթողումն է՝ *Աստված գիտի (նրան, դա)*:

Աստված բաղադրիչը անվանական և բայական կայուն կապակցություններում.

Աստծու կրակ - 1. չար, դաժան, անզուր, 2. չարածնի:

Աստծո գառ - հեզահամբույր, հեզաբարո, անմեղ, պարկեշտ:

Ձայն բազմաց՝ ձայն աստծո - ճշմարտությունը ընդհանուրի կարծիքն է:

Աստծու փեշը բռնել - հույսը աստծու վրա դնել:

Աստված ողորմած է - աստծուն ապավինելու արտահայտություն:

Աստված տվել է՝ չի խնայել - հաջողության մեջ լինել (աստծո օրհնությամբ):

Աստծու տուն - տաճար, եկեղեցի:

Աստված չունենալ - խիղճը կորցրած լինել:

Երկնքից աստվածն էլ իջնի - որևէ բան չգիշելու երդում:

Աստծու մոտ գնալ - վախճանվել, հոգին ավանդել և այլն (Խաչատրյան, Գյուրջինյան, 1995, էջ 142-143):

Օրինակներ. Տվեք ինձ սաղայելին. ես նրա հետ ավելի հեշտությամբ կհաշտվիմ, քան *Աստծու գառների* հետ (ԱՇ, «Պատվի համար»): Նա մահապատժի չի ենթարկվի, բայց որ *աստված երկնքից էլ իջնի*, աքսոր պիտի գնա (ԼԽ, «Արշակ արքա»): *Աստված ողորմած է*, լայն օրեր կը գան, կերթանք մեր հող ու ջրին կը հասնենք (Ավ. «Դարձը»): Ես նրա բարեկամն եմ, թողեք տեսնեմ նրան, մի՞թե դուք *աստված չունեք* (Ր, «Խաչագողի հիշատակարանը»): Իսկ իմպեսներին էլ *աստված տվել է*. բերաններում «չէ» չկա («ԳԹ»):

Այս կարգի բառերի ապաստարանացումը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ տվյալ հասկացությունների հոգևոր ոլորտի անվանումներն ունեն իրենց իմաստային հոմանիշներն ու հականիշները, որոնք հանդիպում են հետևյալ միավորների բովանդակային պլանում.

ա) Հոմանիշներ.

Աստված գիտե // սատրանան գիտե (դա // նրան) – ոչ ոքի հայտնի չէ, ոչ ոք չգիտե:

Աստված խաբող // սատրանա խաբող – խորամանկ, հնարագետ, բանիմաց:

Օրինակներ. *Աստված գիտի*, աշխարհի գիտի, իմն ես դու (ՀԹ, «Անուշ»): Բայց այս աշխարհի միջակություններն ամեն առիթով, Երբեմն էլ այնպես, առանց առիթի,- Թե ինչի համար, *սատրանան գիտի*, - Պղտորում են քեզ (ՀՍ):

բ) Հականիշներ.

Աստված անի - գործը գլուխ բերելու մաղթանք:

Աստված չանի // Աստված մի արասցե – անհաջողությունից խուսափելու հուսադրություն:

Աստված նրա // նրանց հետ - սատանան նրա // նրանց հետ - որևէ մեկի անհաջողությանն ուշադրություն չդարձնել: Օրինակներ.

Հինը անցավ, հինը գնաց, *Աստված անի՛*՝ հետ չգա (Ալ.Ծատուրյան, «Տարեմուտի երգերից»): *Աստված չանի՛*, որ դժբախտության ուղտը նորից չոքի դռանս (ՎԲ, «Արփիկ»): *Աստված մի արասցե*, որ ես ամբարշտության գործերը դրվատեմ (Մուր., «Գևորգ Մարգարետունի»):

բ) Ապասրբայնացում՝ պայմանավորված դիցաբանական համակարգից անվանումների դուրս գալու հանգամանքով:

Ապասրբայնացման գործն կարող են դառնալ դիցաբանական համակարգի նկատմամբ հասարակության հայացքների փոփոխությունը կամ դիցաբանական համակարգի աստիճանական քայքայումը: Այլ կերպ ասած՝ ժամանակի ընթացքում փոխվում է հասարակության վերաբերմունքը տվյալ համակարգի աստվածությունների վերաբերյալ, և *աստվածություն* նշանակող հատկանուններն ու դրանք կրող աստվածությունները «իրենց գործը շարունակում են երկրի վրա»՝ դառնալով հասարակ անուններ: Այդ դեպքում հատկանունները կորցնում են իրենց նախնական՝ սրբայնացած իմաստներն ու նշանակությունները՝ ենթարկվելով ապասրբայնացման:

Ապասրբայնացման են ենթարկվել առավելապես հունական դիցանունները, որոնք իմաստափոխության ուղով ձեռք են բերել զանազան նշանակություններ և ժամանակակից ընկալմամբ այլևս չեն կապվում իրենց ստուգաբանական իմաստների հետ (Խաչատրյան, 2014): Այդ կարգի բառերից են *մորֆի*, *ուրան*, *հերմեպիկ*, *պանիկա*, *արլաս*, *եթեր*, *հակինթ*, *զեփյուտ*, *վուկան* և այլն:

Այսպես, բժշկության բնագավառում քնաբեր և ցավազրկող դեղը՝ *մորֆի*, անվանել են դիցաբանական *Մորփետոսի՛* երագի և քաղցր քնի աստծո անունով³: *Մորֆի* հասարակ անունից ունենք *մորֆինամոլ*, *մորֆինամոլություն*, *մորֆի սրսկել* և այլ նորակազմություններ:

Ժամանակակից ըմբռնումով *եթեր* բառն ունի «ռադիո-հեռուստատեսային հաղորդումների տարածք» իմաստը, մինչդեռ

³ Ապասրբայնացումը պարտադիր չի ենթադրում հատկանվան հասարակացում. հատկանունը կարող է կորցնել սրբայնացած նշանակությունը, ինչպես նշել ենք, բառի «մաշվածության» հետևանքով, հմմտ. *Մորփետոսի գիրկն ընկնել* և *պանիկայի մեջ ընկնել* դարձվածքները, որոնց կառուցվածքում *Մորփետոս* և *պանիկա* բառերը բնավ չեն հատկանշում հին հույների աստվածներին: (Պանը անտառների, հովիվների և կենդանիների աստվածն է՝ այծի կճղակներով, մորուքով և եղջյուրներով, որի ներկայությունը վախ էր ներշնչում հանդիպողին):

նախնական իմաստով *Եթերը*, ըստ հունական դիցաբանության, օդի վերին ճաճանչափայլ շերտի՝ Ջևսի նստավայրի անձնավորումն էր, որ ենթարկվել է ապասրբայնացման:

Հակինթ(ոս) հատկանվան ապասրբայնացման ճանապարհով արդի հայերենում ունենք *հակինթ* հասարակ անունը, որ բուսաբանության և հանքաբանության ոլորտների տերմին է՝ «գեղեցիկ ծաղիկ» և «թանկագին քար» իմաստներով, մինչդեռ Հակնիթոսը հունական դիցաբանության աստվածություններից է՝ գեղեցկության խորհրդանիշը:

Ձեփյուռը հունական դիցաբանության մեջ տաք «անձրևաբեր քամու անձնավորումն» էր, այժմ այն ընկալվում է «մեղմ քամի. սյուք» իմաստներով:

Հունական դիցաբանության մեջ *Ատլանտը* (կամ Ատլաս) այն հսկան է, որը աստվածների դեմ պատերազմին մասնակցելու համար դատապարտվում է տանջանքի՝ ուսերին կրելով երկնակամարը: 1595թ. ֆլամանդացի քարտեզագիր Մերկատորի որդիները տպագրում են հոր աշխատանքը՝ քարտեզների ժողովածուն՝ վրան դիցաբանական *Ատլասի նկարը*: Քարտեզների ժողովածուն դիցաբանական հսկայի անունով կոչեցին *ատլաս*: Հետագայում ստեղծվեցին ոչ միայն աշխարհագրական, այլև կենսաբանական, բուսաբանական, ճարտարապետական, բարբառագիտական և շատ այլ տեսակների *ատլասներ*, և *ատլասը* կյանքի ուղեգիր ձեռք բերեց որպես հասարակ անուն::

Արդի հայերենում *հերմեպիկ* նշանակում է «ամուր փակված». այն ծագում է հունական դիցաբանության *Հերմես աստծո* անունից, որ Ջևսի որդին էր: Հերմեսը աստվածների լրաբեր-սուրհանդակն էր, բանագնացների հովանավորը և դեսպանների անձեռնմխելիության պահապանը: Նա հզոր Ջևսի նվիրած ոսկե սանդալներով մտքի արագությամբ սուրում էր տիեզերքի չորս կողմերը: Հենց այս աստծո անունից է ծագել *հերմեպիկ* բառը՝ «անթափանցելիորեն փակ՝ փակվող՝ փակված, այնպիսին, որի մեջ օդ չի թափանցում» իմաստներով: Ապասրբայնացած այդ բառը դարձել է բառակազմական սերող հիմք մի շարք նորակազմությունների համար, ինչպես՝ *հերմեպիկանալ*, *հերմեպիկական*, *հերմեպիկացնել*, *հերմեպիկացում*, *հերմեպիկորեն*, *հերմեպիկություն* և այլն:

Արդի հայերենում ունենք *վուկանացում*, *վուկանիզացիա* հասարակ անունները, որոնք ծագել են հունական աստվածության՝ *Վուկանի*՝ կրակի ու դարբնության աստծո անունից:

Հին հույների դիցաբանական պատկերացումներում կար ևս մեկ աստվածություն՝ *Ուրանոս*, որը երկնքի աստվածն էր կամ երկինքը մարմնավորող աստվածությունը: Շարունակելով մնալ երկնքում՝ Ուրանն

անցավ արեգակնային համակարգի մոլորակներից մեկն անվանելուն (Ուրան), այնուհետև նրանով անվանեցին նաև քիմիական ռադիոակտիվ մի էլեմենտ, որ բաղկացած է երեք ռադիոակտիվ իզոտոպներից: Ուրան իզոտոպն ստեղծում է ատոմային շղթայական ռեակցիա և համարվում է ատոմային էներգիայի աղբյուրը: Ուրպես քիմիական տարր՝ *ուրանը* հասարակ անուն է. ծագելով Ուրան աստվածության անունից՝ ենթարկվել է ապասրբայնացման և վերածվել տերմինային միավորի:

Անշուշտ, այս շարքերը կարելի է ավելացնել նոր բառերով, որոնք ապրել են նախնական՝ ստուգաբանական իմաստի ապասրբայնացում և հատուկ անուններից անցնելով հասարակ անվան՝ ենթարկվել են բառիմաստի ընդլայնման: Սակայն դիտարկված օրինակները բավական են գաղափար կազմելու առ այն, որ լեզվում ապասրբայնացումը կապվում է կրոնադիցաբանական ոլորտի հասկացությունների հետ, որոնք (հասկացությունները) տարբեր գործոններով պայմանավորված՝ կարող են հեռանալ նախնական՝ ստուգաբանական իմաստներից, ձերբազատվել սրբայնացած նշանակություններից և անցնել հասարակ անունների շարքը:

Այսպիսով, ժամանակի ընթացքում բառերը կարող են կորցնել «սրբազան» նշանակությունները և ենթարկվել *ապասրբայնացման*՝ լրացնելով համագործածական բառերի շարքը: Ապասրբայնացումը լեզվում տեղի է ունենում տարբեր ուղիներով, ինչպես՝ իմաստազրկման, բառի «մաշվածության», դիցաբանական համակարգից դուրս գալու միջոցով և այլն: Ապասրբայնացման են ենթարկվել առավելապես հունական դիցանունները, որոնք իմաստափոխության ուղով ձեռք են բերել զանազան նշանակություններ և ժամանակակից ընկալմամբ այլևս չեն կապվում իրենց ստուգաբանական իմաստների հետ:

Ապասրբայնացումը միևնույն ժամանակ դիտվում է իմաստափոխության՝ բառիմաստի ընդլայնման գործոն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Խաչատրյան Լ., Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, Երևան, 2021, 446 էջ :
Khach'atryan L., Lezvabanakan termineri usumnakan barraran, Yerevan, 2021, 446 ej : (in Armenian)

2. Խաչատրյան Լ., Գյուրջինյան Դ., Դիտարկումներ «Աստված» բաղադրիչով կայուն կապակցությունների շուրջ, Էջմիածին, հունվար, 1995, էջ 140-146:
Khach'atryan L., Gyurjinyan D., Ditarkumner «Astvats» baghadrich'ov kayun kapakts'ut'yunneri shurj, Ejmiatsin, hunvar, 1995, ej 140-146: (in Armenian)
3. Խաչատրյան Լ., Բառաշխարհի գաղտնիքները. հունալատինական փոխառություններ, Երևան, 2014, 264 էջ:
Khach'atryan L., Barrashkharhi gaghtnik'neri. hunalatinakan p'vokharrut'yunner, Yerevan, 2014, 264 ej: (in Armenian)
4. Бенвенист Э., Словарь индоевропейских социальных терминов /Перевод с фр./, Москва, 2007, 1124 стр.
Benvenist É., Slovar' indoevropskijih social'nyih terminov /Perevod s fr./, Moskva, 2007: 1124 str. (in Russian)
5. Казаков Г.А., Процессы сакрализации и десакрализации в лексике /Современные методы сравнительно-исторических исследований, Материалы VIII Международной научно-практической конференции, Москва, 2013, стр. 142-151. Kazakov G.A., Processy sakralizacii i desakralizacii v lekcike /Sovremennye metody sravnitel'no-istoričeskijih issledovanij, Materialy VIII Meždunarodnoj naučno-praktičeskoj konferencii, Moskva, 2013, str. 142-151: (in Russian)
6. Словарь иностранных слов, Москва, 1988, 608 стр.
Slovar' inostrannyh slov, Moskva, 1988, 608 str. (in Russian)

Համառոտագրություններ

- ա) Աստվածաշունչ մատյան
(Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, Մեծ Բրիտանիա, 1997)
- Գործ.- Գործք առաքելոց
Եսայ.- Եսայի
Իմաս.- Իմաստություն Սողոմոնի
Ծնն.- Գիրք ծննդոց
Մատ.- Աւետարան ըստ Մատթեոսի

Հեղինակային սկզբնաղբյուրներ

- ԱԻ - Ավ. Իսահակյան
ԱԾ - Ալ. Ծատուրյան
ԱՇ - Ալ.Շիրվանզադե

Ավ.Ա. - Ավետիս Ահարոնյան
ԴԴ - Դ. Դեմիրճյան
«ԳԹ» - «Գրական թերթ»
ՀԹ - Հովհ. Թումանյան
ՀՍ - Հ. Սահյան
Մուր. - Մուրացյան
ՆԴ - Նար-Դոս
ՆԶ - Նաիրի Ջարյան
ՎԲ - Վիկտոր Բալայան
Բ - Բաֆֆի

ЛАЛИК ХАЧАТРЯН, МАРГУШ МИРУМЯН - СЕМАНТИКА ТЕРМИНА “ДЕСАКРАЛИЗАЦИЯ”

Ключевые слова: смысловое изменение, десакрализация, содержательный план, междометие, обращение, мифологическая система, этимологическое значение.

Термин “десакрализация” пришел в языкознание из религиозной философии. Как известно, со временем слова могут утрачивать свое “сакральное” значение и подвергаться “десакрализации”, переходя в разряд нарицательных имен. Данное явление в языке проявляется по-разному: это может быть потеря смысла, “изнашивание” слова, выход из мифологической системы и т. д.

а) В результате утраты смысла слова происходит расширение содержательного плана лексической единицы. В таких случаях сакральные слова и словосочетания начинают функционировать в качестве междометий и обращений. Например, слово *Бог* приобрело десакрализованное значение в следующих конструкциях: *Господи Боже, ради Бога, Бог с нами (с вами), Бог знает, не дай Бог* и т.д.

б) Изменение взглядов общества на мифологическую систему или постепенный распад мифологической системы также могут стать фактором десакрализации.

В основном десакрализации подвергаются греческие мифические имена, в результате семантических трансформаций утрачивающие связь со своим первоначальным значением. Среди таких слов - *морфи, уран, герметик, паника, атлас, эфир, гиацинт, зефир, вулкан* и др.

В то же время десакрализация само по себе становится фактором смыслового изменения, расширения значения слова.

LALIK KHACHATRYAN, MARGUSH MIRUMYAN - SEMANTICS OF THE TERM “DESACRALIZATION”

Keywords: *semantic change, desacralization, meaning ful plan, interjection, appeal, mythological system, etymological meaning.*

The term 'desacralization' has entered linguistics from religious philosophy. As is known, over time, words can lose their 'sacred' meaning and undergo 'desacralization,' becoming common nouns. This phenomenon in language manifests in various ways: it can involve the loss of meaning, 'wearing out' of the word, exiting the mythological system, etc.

a) As a result of the loss of meaning, the content of the lexical unit expands. In such cases, sacred words and phrases begin to function as interjections and forms of address. For example, the word 'God' has acquired desacralized meanings in the following constructions: “Lord God,” (Heavenly Father) “for God's sake,” “God be with us (with you),” “God knows,” “God forbid,” etc.

b) A change in society's views on the mythological system or the gradual disintegration of the mythological system can become a factor in desacralization.

Basically, Greek mythical names underwent desacralization. They acquired different meanings as a result of a change in meaning and are no longer associated with their etymological meaning in modern perception. Among such words are *morphine, uranium, sealant, panic, atlas, ether, hyacinth, zephyr, volcano* etc.

On the whole, desacralization becomes a factor in the semantic change, expansion of the meaning of the word.

Ներկայացվել է՝ 10.11.2023 թ.
Գրախոսվել է՝ 14.05.2024 թ.

**ՄԻՖԱԿԱՆ ԼԻԼԻԹԻ ԵՐԿԱՏՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՂԱՐԿԵՍԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

ԱՐՏԱԿ ՂՈՒԼՅԱՆ

Համառոտագիր

Թեև, ըստ տեսաբանների, երկաշխարհության և երկատման ֆենոմենները փիլիսոփայական-գեղագիտական տեսանկյունից ամենայն խորությամբ սկսել են գիտակցվել ռոմանտիզմի դարաշրջանում (այս շրջանում արվեստի առջև նոր խնդիր էր դրվել արտացոլել մարդու լինելիության հարցը իր ողջ հմայքով), սակայն դրանց նախատիպերը հասնում են վաղնջական ժամանակներ: Անհատը բոլոր ժամանակներում և ամենուր հանդիպել է հակազդեցության, ու սեփականի և ընդհանուրի բախումից էլ սկսվել է աշխարհի յուրօրինակ երկատումը գոյություն ունեցողի՝ իրականի ու անուրջների աշխարհում ապրող անիրական-ֆանտաստիկ միջև, որն էլ ենթադրել է նրա տրոհումը, մասնատումը, կամ, ինչպես ընդունված է հոգեբանության մեջ՝ բազմապատկումը, երկու աշխարհներում ապրելը: Հոդվածում փորձել ենք տարբեր ժողովուրդների առասպելաբանությունների գլխավոր հերոսներից մեկի՝ Լիլիթի կերպարը վերլուծել երկաշխարհվածության-երկատվածության համատեքստում:

Հիմնաբառեր՝ Լիլիթ, Ադամ, Աստված, սափանա, երկպարում, չար, առասպել, երկաշխարհություն

Ներածություն

Գիտությունը վաղուց ապացուցել է, որ խորհրդավորը, հանելուկայինը, անբացատրելին, ընդհանրապես, այն ամենը, ինչը մարդու համար կարող է լինել անգիտակցական վախի պատճառ, ձգողական նշանակություն է ունեցել մարդկության ձևավորման առաջին օրերից մինչ այսօր: Դրանով է բացատրվում դիվականի, հրեշավորի հանդեպ հետաքրքրությունը տարատեսակ արվեստներում՝ բանահյուսություն, փիլիսոփայություն, նկարչություն, քանդակագործություն, երգ, ծիսակարգեր և այլն: Այդ համատեքստում նաև պետք է դիտարկել միջակա հերոսների մարմնավորումը համաշխարհային գրականության մեջ: Գրական հերոս դարձած առասպելական կերպարների շարքում իր բացառիկ տեղն ունի Լիլիթը, որն արդեն ավելի

քան 700 տարի շարունակում է մնալ ոչ միայն գրողների ոգեշնչման աղբյուրը, այլև փիլիսոփաների, աստվածաբանների, հոգեբանների ուսումնասիրության առարկան:

20-րդ դարից սկսած՝ Լիլիթի ֆենոմենալ կերպարի հանդեպ հետաքրքրությունն աճել է նաև գիտական աշխարհում՝ հընթացս ծնունդ տալով մի քանի տասնյակ հիմնարար հետազոտությունների (Scholem, 1996, Токарев, 2008, Валянская 1992, Hurwitz, 1999, Носенко, 2002 և այլք):

Միաժամանակ պետք է նկատել, որ գրականագիտական գրեթե բոլոր ուսումնասիրություններում Լիլիթը քննվել է ազգային, բանահյուսական, կրոնական, ֆեմինիստական, և արքետիպային մեկնությունների համատեքստերում: Այսպիսով, աչքաթող է արվել Լիլիթի կերպարին բնորոշ այնպիսի կարևոր գեղարվեստական կոնցեպտ, ինչպիսին երկատվածություն-երկաշխարհությունն է: Այստեղից բխում է հետազոտության **արդիականությունը**:

Հոդվածի գիտական **նորույթն** այն է, որ առասպելական Լիլիթի կերպարի միջոցով փորձել ենք պատկերել գրական հերոսի երկատման-երկաշխարհության բացառապես ինքնատիպ կոնցեպտ:

Տեսական արժեքն այն է, որ աշխատանքը կարող է նպաստել գեղարվեստական գրականությունում հերոսների երկատման առանձնահատկությունների քննությանը:

Աշխատանքի **գործնական** նշանակությունը պայմանավորված է այն հնարավորությամբ, որ հոդվածի արդյունքները կարող են ընդգրկվել գրականության մեջ երկատված հերոսի նորովի մեկնաբանության ոլորտ, նպաստել ֆենոմենի քննության շրջանակի ընդլայնմանը՝ բարձրացնելով երկատման կոնցեպտի համակողմանի մեկնաբանության հնարավորությունները: Աշխատանքի արդյունքները կարող են կիրառվել գրականագիտական, հոգեբանական, փիլիսոփայական գործնական դասընթացներում, ուսումնամեթոդական ձեռնարկներում:

Հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել միջակայքի Լիլիթի կերպարանափոխությունները համաշխարհային գրականության անդաստանում, մասնավորապես երկատվածության-երկաշխարհության կոնցեպտի համատեքստում:

Լիլիթին ընդունված է համարել հրեական առասպելաբանության հերոս, մինչդեռ նրա վերաբերյալ ավանդությունների ակունքները հասնում են մինչև շումերական, արքադա-բաբելական քաղաքակրթություն: Առաջին անգամ նրան տեսնում ենք շումերների հանրահայտ «Գիլգամեշ» էպոսում: Դյուցազներգության «Գիլգամեշը և Խուլուպպուն» վիպերգում պատմվում է, թե ինչպես է Ինաննա (Իշտար)

աստվածուհին արմատահան անում և Ուրուկում տնկում խուլուպու ծառը (ըստ որոշ տեսաբանների՝ աստվածաշնչյան Կենաց ծառի նախատիպը): Որոշ ժամանակ անց աստվածուհին խնդրում է իր եղբայր Գիլգամեշին արմատախիլ անել ծառը, քանի որ այն դարձել էր թռչուն Անգուդի, օձի և Լիլի կույսի բույնը, ինչը և անում է Գիլգամեշը (Афанасьева, 1979, с 86):

«Շումերա-աքադական առասպելաբանության մեջ հիշատակվում են նման անուններ կրող երեք կերպարներ՝ տղամարդ-դև Lil- ն, կին-դև Lilithu- ն և ardat Lil- ն, որի անունը հասկանում են որպես «Լիլիթ կույս», «լիլիական կույս», իսկ նրան ենթադրաբար համարում առաջին երկուսի դուստրը», - գրում է Ս.Պետրոսյանը (arar.sci.am/dlibra/publication/193129/edition/175475): Այսինքն՝ սկզբնական շրջանում Լիլիթը ընկալվում էր որպես ծառի փչակում ապրող թևավոր կույս աղջիկ: Դա է վկայում նաև «լիլիթու» բառի ասուրաբաբելական իմաստը՝ քամու ոգի: Լիլիթ անունը, ըստ էության, հրեաները փոխառել են շատ ավելի ուշ շրջանում, և քանի որ եբրայերենում Լիլիթը հնչում է «լայլա» (եբրայերենում «լայլա»-ն գիշերն է), ապա ժամանակի ընթացքում նրան պիտի վերագրվեին գիշերային ոգու հատկություններ: Հաշվի առնելով նաև աքքադերենում «Լուլու» բառի անառակ, հեշտասեր իմաստները՝ համոզվում ենք Ռ. Թոմփսոնի տեսության ճշմարտացիության մեջ, որ հրեական հանրահայտ Լիլիթի՝ իբրև դիվային այլասերված ոգու ձևավորման գործում ահռելի են շումերա-աքքադական և ասուրա-բաբելական առասպելները (Thompson, Campbell, 1908, p. 66):

Ըստ որոշ գիտնականների՝ Լիլիթի մասին պատմությունը գոյություն է ունեցել նաև Աստվածաշնչի նախնական բնագրերում, որը, սակայն, հետագայում քրիստոնյա վարդապետները խմբագրել են՝ առաջին կին թողնելով միայն Եվային: Այս ենթադրության համար հիմք են ծառայել մասնավորապես Հին Կտակարանի Գիրք Ծննդոցում մարդու ստեղծման մասին կարծես իրար հակասող պատմությունները. **«Եւ Աստուած մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու եւ էգ ստեղծեց նրանց»:** Իսկ քիչ հետո կարդում ենք. **«Տէր Աստուած մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դէմքին կենդանութեան շունչ փչեց, եւ մարդն եղաւ կենդանի էակ: Տէր Աստուած թմրութիւն բերեց Ադամի վրայ, եւ սա քնեց: Աստուած հանեց նրա կողոսկրերից մէկը եւ այդ տեղը մաշկով ծածկեց: Տէր Աստուած Ադամից վերցրած կողոսկրից կին արարեց եւ նրան բերեց Ադամի մօտ»** (Աստուածաշունչ, 1994, էջ 5-6): Ասել է թե՛ մի դեպքում երկուսն էլ շինվում են հողից ու միաժամանակ, մյուսում կինը արարվում է Ադամի կողոսկրից:

Լիլիթի օգտին է խոսում նաև 1560 թ. Անգլիայում հրատարակված Աստվածաշունչը (bigpicture.ru/pervaya-zhenshhina-lilit-pochemu-bibliyamo), որտեղ, ի տարբերություն աստվածաշնչյան բոլոր մյուս թարգմանությունների, Եսայու 34:14-ում հիշատակվող հուշկապարիկների փոխարեն օգտագործվում է լիլիթ անունը:

Համեմատության համար բերենք հայերեն թարգմանությունը՝

«Այնտեղ բնակություն պիտի հաստատեն թռչուններն ու ոզնիները, ցիներն ու ագռավները, նրա մեջ պիտի ջնջվեն ու ավերակ դառնան չափված հողակտորները, **հուշկապարիկները** պիտի բնակվեն այնտեղ:

Նրա քաղաքներում և ամրոցներում փշաբեր ծառեր պիտի բուսեն: Համբարուների բնակատեղի և ջայլամների հանգրվան պիտի դառնա նա, որտեղ դևերն ու **հուշկապարիկներն** են հանդիպելու և միմյանց ծայն տալու: Այնտեղ պիտի հանգրվանեն **հուշկապարիկները**, որովհետև իրենց համար հանգիստ են գտել» (www.bibliatodo.com/hy/աստվածաշունչ/ նոր էջմիածինաստվածաշունչ/ ԵՍԱՅԻ-34):

Հայկական բառարաններում հուշկապարիկը, ի թիվս այլ իմաստների, բացատրվում է որպես գերբնական զորությամբ օժտված իգական սեռի առասպելական էակ, պարիկ, հավերժահարս, անուշ ծայնով ուղևորներին իրեն քաշող և կորստի մատնող գեղանի ու առասպելական կին և այլն (http://nayiri.com/search?dt=HY_HY&query=%D5%B5%D5%B8%D6%82%D5%B7%D5%AF%D5%1%D5%BA%D5%A1%D6%80%D5%AB%D5%AF&l=hy_LB):

Հրեական առասպելաբանության մեջ Լիլիթի կերպարը զարգացման երկարատև և հետաքրքիր ճանապարհ է անցել (քամուց մինչև օձ, Ադամի առաջին կին, տղամարդկանց գայթակղող գիշերային ոգի, մանկասպան և այլն)՝ անգամ իր յուրահատուկ տեղը գրավելով հուդայական ուսմունքներում: Մ. թ. 700-1000 թվականներին վերագրվող «Բեն Սիրայի այբուբեն» անանուն միջնադարյան ձեռագրում (երկու տարբերակները պահպանվում են Բրիտանական և Օքսֆորդի Bodleian Library գրադարաններում) Լիլիթը նկարագրվում է որպես Ադամի առաջին կին (hy.wikipedia.org/wiki/Բեն-Սիրայի_այբուբեն): «Ադամին ստեղծելուց հետո, որը միայնակ էր, Աստված ասաց. «Լավ չէ մարդու միայնակ մնալը: Նա Ադամի համար **սպեղծեց մի կին հողից, ինչից Ադամին էր սպեղծել** և կոչեց նրան Լիլիթ: Ադամը և Լիլիթը անմիջապես սկսեցին կռվել»: «Մենք հավասար ենք իրար, քանի որ երկուսս էլ հողից ենք», - պատճառաբանում է Լիլիթը և, չցանկանալով հնազանդվել Ադամին, լքում է նրան՝ թռչելով երկինք: Ադամը դիմում է Աստծուն. «Քո տված կինը փախել է»: Աստծո երեք հրեշտակները գտնում են Լիլիթին ծովի մոտ և փոխանցում Աստծո խոսքերը՝ սպառնալով

չենթարկվելու դեպքում խեղդել նրան ծովում: «Թողե՛ք ինձ,— ասում է Լիլիթը, - ես ստեղծվել էի, որ միայն մանուկներին հիվանդություն բերեմ: Եթե մանուկը արու է, ես ութ օր տիրապետություն ունեմ իր վրա ծնվելուց հետո, եթե էգ է, քառասուն օր: Բայց երբ տեսնեմ ձեր անունները կամ պատկերները թալիսմանի մեջ, ես ուժ չեմ ունենա այդ որդու վրա»: Նա համաձայնում է, որ իր հարյուր զավակները մահանան ամեն օր: «Համապատասխանաբար ամեն օր հարյուր դևեր ոչնչանում են: Եվ նույն պատճառով մենք գրում ենք հրեշտակների անունները մանուկների թալիսմանների վրա: Երբ Լիլիթը տեսնում է նրանց անունները, նա հիշում է իր երդումը, և մանուկը վերակենդանանում է» (նույն տեղը):

Ըստ ամենայնի, Լիլիթի մասին առասպելը մշակվել և հղկվել է հրեաների ստրկության ու գաղթի ճանապարհին: Հրեաների առաջնորդները համոզված էին, որ ազգային արժեքները ոչնչացումից փրկելու և ուժացման ինքնութենավեր սպառնալիքին դիմակայելու համար պետք է անվերապահորեն հետևել Ուսմունքին՝ «պարիսպ շարելով Թորայի շուրջը», պահպանելով, զարգացնելով և հետևելով Գալախին՝ իբրև «տեղահանման ժամանակ հրեական սահմանադրության» (lamerkhav.wordpress.com/еврейский-словарь/вернуться-за-лилит/): Այս համատեքստում, բնականաբար, սկսեց ավելի կարևորվել ընտանիքի դերը, խրախուսվել և դրվատվել առաքինությունն ու բարոյականությունը, սերն ու հավատարմությունը, ընտանիքին նվիրված ու ամուսնու հենասյուն կինը (ամուսնու կողոսկրից ծնված և հնազանդ Եվա) և պախարակվել, անարգանքի սյունին գամվել ազատ կյանք վարող, արտասամուսնական կապեր ունեցող կամ համայնքից հեռացող հրեուհին (վերջիններիս հովանավոր և տղամարդկանց գայթակղող Լիլիթ):

Ուշագրավ է, որ հրեական տարբեր ուսմունքներում Լիլիթը տարբեր մարմնավորումներ է ստացել: Օրինակ՝ Թալմուդում նա թևերով և երկար մազերով չար ոգի է, անկառավարելի և վտանգավոր, սեռաքաղց, որը ծնունդ է տվել հարյուրավոր դևերի (dzen.ru/a/YZvtFM7gL1ggdidX), մինչդեռ Կաբալայում՝ բոլոր չար ոգիների մայրն է, մանկագող, տղամարդկանց գայթակղող: Միջին դարերում հենց Կաբալայի հանդեպ Եվրոպայում առաջացած հետաքրքրության արդյունքում է դիվական Լիլիթի կերպարը դառնում ժամանակի գրողների (նաև նկարիչների, քանդակագործների, փիլիսոփաների, հոգեբանների) մուսան:

Այստեղ տեղին է հիշել, որ մինչև ուշ միջնադար քրիստոնեական եկեղեցին կանանց համարում էր «մեղքի անոթներ». կանայք իբր գաղտնի և արատավոր կապ ունեին սատանայի հետ, ինչի պատճառով նրանց ավանդույթի ուժով ենթարկել են աննկարագրելի հալածանքների և

կտտանքների: Իսկ 1486 թ. հրատարակված կաթոլիկ աստվածաբան և ինկվիզիտոր Հայնրիխ Կրամերի հանրահայտ «Վիուկների մուրճ» գիրքը պիտի դառնար վիուկների որսի տխրահռչակ ուղեցույց, որը պատմության մեջ դրոշմվեց իբրև մարդկության վրա չափազանց ողբերգական հետևանքներ ունեցած գրքերից մեկը (այս գրքի պատճառով տասնյակ հազարավոր անմեղ կանայք տանջամահ են արվել): Գրքում սուկուբուսներն ու վիուկները բնորոշվում են որպես Լիլիթի և սատանայի դուստրեր ([hy.wikipedia.org/wiki/ Վիուկների_մուրճ](http://hy.wikipedia.org/wiki/Վիուկների_մուրճ)):

Չնայած այս ամենին՝ ժամանակի մտածողները աստիճանաբար համարձակվում են «չարանենգ» Լիլիթին դարձնել գրականության հերոս: Առաջիններից մեկը Գյոթեն էր, որն իր հռչակավոր «Ֆաուստ»-ով Լիլիթի բոլորովին նոր կերպար է հրամցնում ընթերցողին: Ի դեմս Լիլիթի՝ տեսնում ենք գեղեցկադեմ, ճոխ վարսերով, տղամարդկանց գայթակղող երիտասարդ կնոջ, որին հպվողը անխուսափելիորեն դատապարտված է մահվան:

Գլխավոր հերոսը՝ Ֆաուստը, Բրոկենսկյան լեռան մոտ տեսնում է խորհրդավոր պարուհու: Նրա մասին հարցին ի պատասխան՝ Մեֆիստոֆելն ասում է.

Լավ նայիր, տե՛ս,

Ադամի կինն է առաջին,

Զգույշ նրա ճոխ վարսերից, կկործանվես,

Միակ զուգսը այդ հյուսերն են՝ փռված մարմնին,

Եթե ձեռք տա դրանց մի այր երիտասարդ,

Էլ պոկ չի գա, արդեն գերին է հնազանդ (Գյոթե, 1963, էջ 255):

Հետագայում հենց Գյոթեի բերած Լիլիթը պիտի ոգեշնչեր ռոմանտիկներին, այդ թվում նախառաֆայելականների եղբայրության ականավոր դեմքերից բանաստեղծ և նկարիչ Դանթե Գաբրիել Բոսսետտին (1828-1882): Վերջինիս «Լեդի Լիլիթ» կտավը դարձավ մոնումենտալ գեղարվեստական գործ (գլուխգործոցը արդյունք է 12 տարիների տքնաջան աշխատանքի՝ 1828-1882 թթ.): Լիլիթը պատկերված է երկար, արձակ մազերով, չարությամբ լի և գայթակղիչ հայացքով: Նրա բնությունը ընդգծում է կտավի աջ անկյունի կակաչը՝ ավիոն ծաղիկը, որը քուն է բերում՝ խորհրդանշելով մահ և սառնություն, իսկ սպիտակ վարդերը՝ անպտուղ կիրք (hy.wikipedia.org/wiki/%D4%BC%D5%AB%D5%AC%D5%AB%D5%A9#cite_ref-13): «The Power of Women’s Hair in the Victorian Imagination» գրքում Էլիզաբեթ Զիթերը գրում է, որ նկարում որքան շատ տեղ և ուշադրություն է հատկացվում մազերի պատկերմանը, այնքան ավելի ուժեղ է նկարի սեռական ենթատեքստը. ժողովրդական ավանդությունում,

գրականությունում և հոգեվերլուծությունում փարթամ, խիտ մազերը ուժեղ գրավչության և անգամ անբարոյականության նշան են (Scerba, Amy. 2005. «Dante Gabriel Rossetti's painting «Lady Lilith» (1863: watercolor, 1864–1868)»): Նկարին իբրև յուրօրինակ մեկնություն կարելի է համարել Ռոսսետիի «Մարմնի գեղեցկությունը» սոնետը (<https://stihi.ru/2010/01/29/53>): Այստեղ Լիլիթը դիվական կին է՝ դյուֆիչ, զորեղ, աղետաբեր և դժբախտ: Նա խեղդում է տղամարդկանց իր երկար, գայթակղիչ վարսերով: Ռոսսետին Լիլիթով այնքան էր հմայված, որ 1869 թ. նաև պոեմ է ձևում նրան՝ «Եղեմի կացարան»-ը (ru.wikipedia.org/wiki/Список_произведений_Данте_Габриэля_Россетти, Телицин В.Л., Багдасарян В.Э., Орлов И.Б. «Символы, знаки, эмблемы Энциклопедия», 2005 г.): Պոեմում Լիլիթն Ադամի առաջին կինն է, որը շնորհել է ամուսնուն «փայլուն տղաներ և պայծառ դուստրեր» («glittering sons and radiant daughters»): Այնուհետև Աստված ստեղծում է Եվային: Խանդոտ, տառապանքով լի, իր դիվական զգացմունքներում ու արարքներում խճճված, բայցև հրաշագեղ, կրքոտ Լիլիթը նախ գայթակղում է օձին: Լիլիթը հմայված օձի ականջին շշնջում է Եվայի (նրան դիտում է իբրև ամենաոխերիմ մրցակից) դեմ իր նյութած դավերի մասին՝ վստահորեն կանխատեսելով դրանց հաջող ելքը: Պոեմը առաջին տողից մինչև վերջ հագեցած է կրքոտ զգացմունքայնությամբ: Լիլիթն օձի կերպարանք է ստանում և, վրեժի թույնով լցված, Եվային համոզում է համոտեսել արգելված պտուղը, ապա՝ բեղմնավորվել Կայենով, որը հետագայում սպանելու է եղբորը՝ Աբելին (<http://www.rossettiarchive.org/docs/1-1870.5thedn.rad.html#A.R.91>): Պոեմի հիմքում առասպելի՝ այդ դարերին գերիշխող տարբերակներից մեկն է, որի գեղարվեստականացումը տվյալ ժամանակաշրջանում, ըստ էության, չափազանց համարձակ քայլ էր:

Լիլիթին՝ որպես ոչ միայն դրական կերպարի, այլև Ադամին սիրող և նվիրված կնոջ, հանդիպում ենք վիկտորիական շրջանի անգլիացի բանաստեղծ և դրամատուրգ Ռոբերտ Բրաունինգի «Ադամ, Եվա, Լիլիթ» (1883) բանաստեղծության մեջ: Այստեղ Եվան և Լիլիթը ընկերուհիներ են՝ լցված միմյանց հանդեպ սիրով և հոգատարությամբ, և Ադամի հետ կազմում են երրորդություն. Ադամի մի կողմում նստած է Եվան, մյուսում՝ Լիլիթը: Մահվան վախից, սակայն, Եվան խոստովանում է, որ Ադամին երբեք չի սիրել, մինչդեռ Լիլիթի խոսքերով՝ Ադամն իր միակ սիրեցյալն էր, որին նվիրվել էր անվերապահորեն: «Վիկտորյա թագուհու ժամանակաշրջանի լիրիկական պոեզիան» (2020) գրքում գրականագետ Ա. Լուկյանովը պոեզիա ներմուծված դրամատիկական մենախոսության բրաունինգյան տեսակի մասին իր դիտարկման մեջ նկատի ունի նաև

Լիլիթի կերպարի նորովի մարմնացումը: «Դա ներառում էր փիլիսոփայական մտորումների, հիշողությունների, խոստովանությունների շղթա, հատկապես այն տեսակը, երբ գլխավոր հերոսը չի ներկայացնում պոետին, այդ պատճառով նրա գաղափարներն ու խոսքերի բովանդակությունը տարբերվում էին հեղինակի պատկերացումներից» (poezia.ru/works/167287): Հիրավի, Բրաունինգը ևս հաջողել է Լիլիթի ավանդական, վավաշոտ կերպարի կաշկանդումները հաղթահարելու գործում և որպես նորարար՝ «կենտրոնացել է Լիլիթի զգացմունքային բնութագրերի վրա» (www.maxima-library.com/new-books-2/b/559908?format=read):

Լիլիթի՝ բավականին հետաքրքիր և անսովոր կերպար է բերում ֆրանսիացի փիլիսոփա, գրող և գրականագետ Անատոլ Ֆրանսն իր հանրահայտ «Լիլիթի դուստրը» (1887) պատմվածքով: Հատկանշական է, որ այստեղ գլխավոր հերոսուհին Լիլիթը չէ, այլ դուստրը՝ Լեյլան (Լիլիթը արաբերենում հնչում է Լեյլա, որը նշանակում է գիշեր): Լեյլան հենց սկզբից պատկերվում է իր ոչ երկրային, կախարդիչ գեղեցկությամբ՝ իբրև առեղծվածային, անդիմադրելի գայթակղիչ կին-ուրվական. կանաչ աչքեր, սև վարսեր, հմայիչ հայացք, հիպնոսացնող խոսք, կրքոտ մարմին, հրեշտակային կաքավում և այս ամենին գումարած՝ սիրո հանդեպ աներևակայելի սառնություն ու անզգայություն: Նա զուրկ է բարոյական բոլոր նորմերից, ի զորու է խթանել յուրաքանչյուր տղամարդու երևակայությունը՝ ծնկի բերելով ու ոչնչացնելով նրան ու, կարծես, այդ ամենից աստանայական բավականություն ստանալով:

Հերոսի՝ «Դուք ինձ երբեք չե՞ք սիրել» հարցին Լեյլան քնքշորեն պատասխանում է. «Ձեմ սիրել, բարեկամս: Բայց քանի-քանի կին, որոնք սիրել են Ձեզ ինձանից ոչ շատ, չեն տվել Ձեզ այն, ինչ տվել եմ ես: Դուք պետք է շնորհակալ լինեք ինձ: Հաջողություն» (Франс, 1959, с. 55):

Հերոսուհու կրքոտ հայացքի առջև անզոր է յուրաքանչյուրը: Հեղինակը, որը գլխավոր հերոսն է, նույնպես մոմի պես հալվում է Լեյլայի ջերմությունից:

Ստեղծագործության վերջում տեսնում ենք երկատված Լեյլային. նա կարող է երջանկացնել ցանկացածին, բայց ինքը դժբախտ է: Նա մորից ժառանգել է անմահություն (Լիլիթն անմահ էր, քանի որ, ըստ ավանդության, Աստծո կողմից չէր անհիծվել և հասցրել էր հեռանալ Ադամից մինչ առաջնածին մեղքը), սակայն երազում է Եվայի աղջիկների նման լինել մահկանացու: Լեյլան օժտված է բացառիկ շնորհով՝ տղամարդուն տալ այն, ինչը չի կարող տալ և ոչ մի կին, բայցև չի կարող պատկանել լոկ մեկ հոգու, քանի որ չգիտի՝ ինչ է սերը և նվիրվածությունը:

1895 թ. լույս է տեսնում շոտլանդացի հոգևորական, հոչակավոր գրող, ֆենտեզի ժանրի հայրերից Ջորջ Մաքդոնալդի «Լիլիթ» վեպը (Макдональд, 2007): Մաքդոնալդը, մինչ գրող դառնալը, կաթոլիկ հոգևորական էր, կրոնների գիտակ, սակայն հետագայում հեռացավ եկեղեցուց իր խիստ տարբերվող հայացքների պատճառով, որոնք իրենց արտացոլումն են գտել այս վեպում: Այստեղ իրադարձությունները զարգանում են երկու տարբեր աշխարհներում. մեր՝ սովորական, և զուգահեռ՝ ժամանակատարածային բոլորովին այլ հարթությունում: Գլխավոր հերոսը՝ միստր Վեյնը, ժառանգություն ստացած տան գրադարան սարդած գրադարանավար-ուրվականին հետևելով՝ հանկարծ հասկանում է, որ հայտնվել է զուգահեռ աշխարհում: Ազոավի (որը հետո պիտի պարզվի՝ Ադամն է) ուղեկցությամբ շրջում է այնտեղ և փորձում բացահայտել «հայելային աշխարհի» գաղտնիքները: Երկարատև բարդ ու արկածներով լեցուն ճանապարհ է անցնում հեղինակը, ականատես լինում մեռյալների թագավորությունից հառնած ուրվական-զինվորների պատերազմին, ապա անտառաբնակ Պստիկներին, մարդկանց նախապապերին, ծանոթանում Ադամի, Եվայի, նրանց դուստր Լոնայի հետ, տեսնում Լիլիթին: Լիլիթը հրաշագեղ արքայադուստր է, նկարագրվող Բուվիկա քաղաքի չնաշխարհիկ տիրուհին: Նրա հակոտնյան Եվան է, որը վեպում մայրության խորհրդանիշն է: Եվան և Ադամը գիտակցել են իրենց գործած Մեղքը, ապաշխարել են, ու Եվան աշխարհի բոլոր կանանցից ու հրեշտակներից ամենաչքնաղն է: Նա անթերի է, կատարյալ, Բեստրիչեի պես գեղեցիկ: Միանգամայն իրավացի է Ն. Հաֆիզովան, որ Եվայի սերը ինքնահամոզմունք է. ինքը սիրում է «իրեն ուրիշի մեջ», մինչդեռ Լիլիթի սերը սեր-ծառայություն է, ներշնչանք. նա սիրում է «ուրիշին իր մեջ» (<https://cyberleninka.ru/article/n/arhetipy-velikoy-materi-i-vechnoy-zhens-tvennosti-kak-sposoby-proizvodstva-zhenskoy-identichnosti>):

Լիլիթը չար է, դաժան, արյունոռուտ, բնակիչներին արգելում է երեխաներ ունենալ, որովհետև ասում է մանուկներին: Նա ատելություն է տաճում նույնիսկ սեփական դստեր նկատմամբ, որին փորձում է սպանել: Լիլիթի դաժանությունը սահմաններ չունի, նա չի վախենում անգամ Աստուծուց: Նորածինների մայրերը գիշերները փախչում են անտառ իրենց փոքրիկներին Լիլիթի ուղարկած ընծառյուծից փրկելու համար:

«Այստեղ կրոնական պաթոսը գերազանցում է գեղարվեստական մասին, թեև ոճը, ինչպես միշտ, դիպուկ է, այլաբանական և կերպարային: Այստեղ ոչինչ չի ընկալվում բառացի. ամբողջ տեքստը բազմաշերտ է և այլաբանական» (<https://diss.unn.ru/files/2016/637/diss-Cheremisina-37.pdf>):

Հեղինակը չի հեռանում Լիլիթի ավանդական կերպարից. նա մշտաերիտասարդ օրիորդ է՝ օժտված կախարդելու բացառիկ ունակությամբ, հեշտությամբ կարող է փոխակերպվել օձի, կատվի, ընծառյուծի. «Եվ այդտեղ ես տեսա՝ ինչպես է լուսավորված հողի վրա շարժվում կնոջ ուրվապատկերը: Նրան պարուրած ճերմակ մշուշը մերթ զգեստ էր թվում, մերթ տարուբերվում էր, ասես փորձում էր հագնել նրան, և պտտվում էր շուրջբոլորը, քանու պես գալարվում էր ոտքերի մոտ: Նա գեղեցիկ էր, բայց դեմքին այնպիսի հպարտություն և տառապանք կար դրոշմված, որ ես դժվարությամբ հավատացի, թե այդ ամենը տեսնում եմ իրականում: Աչքերը նրա գեղեցիկ դեմքին մեռած էին, իսկ ծախ կողմին սև բիծ կար, որը ձեռքով անընդհատ սեղմում էր. զգացվում էր, որ ինչ-որ բան ցավ է պատճառում: Վարսերը թափված էին մինչև ոտքի ծայրերը... Հանկարծ ձեռքերը սեղմեց կրծքին, ընկավ գետնին, մշուշը բարձրացավ և անէացավ օդում: Ես վազեցի նրա մոտ, բայց նա ջղածվելով այնպես էր գալարվում, որ սարսափից քարացա: Եվս մեկ ակնթարթ, և նրա ոտքերը փոխվեցին օձի, որը սողալով հեռացավ, ձեռքերը պոկվեցին մարմնից և թափվեցին այս ու այն կողմ, ապա դարձան օձ, որը նույնպես սողալով հեռացավ: Հետո չղջիկանման ինչ-որ բան թռավ դեպի երկինք, ու երբ նորից նայեցի նրան, վերջինս արդեն անէացել էր» (Макдональд, 2007, с 71.): Մաքրոնալդի Լիլիթը վերջում, այնուամենայնիվ, զոջում է գործած մեղքերի համար: Մեր առջև պատկերվում է Լիլիթի նոր՝ ապաշխարող և Աստծու մոտ վերադարձող կերպար: Լիլիթը, ըստ Հ. Հաֆիզովայի, հենց ինքնաբերականությունն է: «Նրա հետ տղամարդը ապրում է և՛ մարմնի, և՛ հոգու կատարսիս. մաքրագործում, վերելք, ձգտում դեպի ինքնագործարկում, լուսավորում, ինչպես նաև միստիկական ապրումների փորձի ձեռքբերում ոչ այնքան կնոջ հետ մարմնական միասնության, այլև ինքն իր համար նրա միջոցով» (<https://cyberleninka.ru/article/n/arhetipy-velikoy-materi-i-vechnoy-zhens-tvennosti-kak-sposoby-proizvodstva-zhenskoy-identichnosti>):

«Լիլիթ» վեպում Ջորջ Մաքրոնալդը առատորեն օգտագործել է տարատեսակ խորհրդանիշներ ու ասելիքը ներկայացրել է այլաբանորեն, ինչը մեծապես ազդել է Լյուիս Քլայվի ստեղծագործության վրա, մասնավորապես, «Նարնիայի քրոնիկոնը» (Lewis, 2001) վեպում:

Լիլիթի առեղծվածային տիպարի վերաիմաստավորմամբ հաջողված գործեր են ընթերցողի սեղանին դրել այնպիսի բանաստեղծներ և արձակագիրներ, ինչպեսիք են Վ. Հյուգոն («Սատանայի վերջը»), Ֆ. Սոլոգուբը («Դյութակախարդ Լիլիթ»), Գ. Կեյլերը («7 լեզենդ»), Բ. Շոուն («Ետ դեպի Մաֆուսահիլը»), Ա. Ախմատովան («Ուշացած պատասխան»), Վ. Նաբոկովը («Լիլիթ»), Լ.

Օբոլտովան («Լիլիթ»), Ռ. Կիպլինգը («Ամենահին երգը»), Մ. Յվետսկան («Իսանդի փորձ») և ուրիշներ: Նրանցից յուրաքանչյուրը, փորձելով յուրովի բացահայտել խնդրո առարկա առեղծվածային կնոջը, իր Լիլիթին է կտավին հանձնել՝ հարստացնելով լիլիթագրության համաշխարհային շտեմարանը: Թեև առաջին հայացքից ամեն գործում նոր Լիլիթ է մեր առջև հանում, բայց իրականում գրեթե բոլոր հեղինակների մոտ կարմիր թելի պես անցնում է ըմբոստ, համարձակ կնոջ տիպը, որի խորհրդանշական կերպարում ներդրված է փիլիսոփայահոգեբանական սկիզբը՝ հայտնված այլ ժամանակի և տարածության մեջ: Նույնատիպ կամ քիչ տարբերվող ներկայանակներ օգտագործելու պատճառով նրանցից շատերի գործերում ընդհանրություններն ակնառու են, ինչը, ըստ ամենայնի, չի վերաբերում Ավետիք Իսահակյանին, որի կերտած Լիլիթը, հիրավի, բացառիկ է ոչ միայն նախորդներից արմատականորեն տարբերվելու, այլև ընթերցողի՝ ինքնաբացահայտվելու, աշխարհճանաչողության, գեղեցիկը տեսնելու, կյանքի իմաստի փիլիսոփայական ընկալման ճանապարհին լույս սփռելու առումով: Պետք է խոստովանել, որ այստեղ կրկին փայլում է Իսահակյան-փիլիսոփան:

Իսահակյանի «Լիլիթը» կոթողային ասք է, վեր չափաճոն և արձակը բնորոշող սահմանումներից, դուրս ժանրային շրջանակներից ընդհանրապես, ու պատահական չէ, որ հեղինակն այն անվանել է արձակ պոեմ: «Լիլիթը» բյուրեղացած մեղեդի է, անեղծ սիրո ողբերգական պատմություն, միջական խորհրդավորությամբ ներծծված բազմաձայն, շենշող երգ:

Անդրադառնալով Լիլիթի կերպարին՝ տաղանդավոր իսահակյանագետ Ա. Ինճիկյանը գրում է (Իսահակյան, 1975, էջ 466), որ Վարպետի համար ստեղծագործության հիմք են ծառայել Սեթի գիրքը, Թալմուդի, Նոր և Հին Կտակարանների պարականոն գրվածքները, հրեական հանրագիտարանը (հ.10), ինչպես նաև Սոլոգուբի և Կելլերի ստեղծագործությունները: Թեև հեղինակը նույնպես այն ներկայացնում է իբրև հրեական առասպել, սակայն համամիտ չենք Ինճիկյանի դիտարկման հետ, քանի որ ստեղծագործական առաղծի համար Իսահակյանն ակնհայտորեն ավելի խորն է գնացել՝ մինչև առասպելի ակունքները՝ շումերական, ասորա-բաբելական առասպելաբանություն: Նրա Լիլիթը հրաժին է, բոցեղեն կրակի ծնունդ. Աստված «բռնեց դեպի վեր սուրացող կրակը և նրա բեկբեկուն, ճախրուն բոցերից ստեղծեց անդրանիկ կնոջը՝ Լիլիթին» (Իսահակյան, 1983, էջ 9):

Լիլիթին նկարելիս բոլորովին էական չէ հեղինակի՝ ավանդական կերպարին հավատարիմ մնալը կամ հեռանալը նրանից, այլ այն, թե արդյո՞ք հաջողել է գրողը իր նպատակադրման մեջ: Որոշ

«լիլիթագիրների» պես Վարպետը նույնպես դիմում է ռոմանտիկներից ժառանգություն ստացած գեղարվեստական այնպիսի հնարքի, որպիսին հերոսի երկատվածության-երկաշխարհության մոտիվն է, բայց միևնույն ժամանակ չի գնում նրանց բացառ արահետով, նա բերում է ֆենոմենի մատուցման բացարձակ նոր ձև, նոր մոտեցում, որն աներկբա կարելի է անվանել «Իսահակյանական»: «Իսահակյանական Լիլիթը հավերժական կանացիի մարմնացումն է, կնոջ էությունը, դա հավերժական այրումն է և հոգու թռիչքը, ոգու ազատությունն ու անհնազանդությունը, դա պողոթնումն է, ձգտումը և չիրականացվող երազանքը, սակայն ընդմիջտ հրաշագեղ և կենսունակ: Երազանքը գեղեցիկ է հատկապես իր անիրականանալիության, անհասանելիության մեջ: Հենց այդպես էլ ապրում է Լիլիթ Ադամի սրտում», - «Իսահակյանի «Լիլիթ» առասպելի մասին» հոդվածում գրում է Մ. Ջանփոլադյանը (http://www.old.yasu.am/files/03M_Janpoladyan_r.pdf) :

Իսահակյանական Լիլիթը և՛ իրական է, և՛ երազ, արարվել է Ադամի հետ միասին, մինչդեռ երբեք գոյություն չի ունեցել: «Ուղղակի ոսկով ու լույսով ու բոցերով պիտի նկարե այս իսկական կնոջը՝ հոգի ու մարմին այրող: Եվ միշտ երազ...», - գրում է Իսահակյանը նկարիչ Սարգիս Խաչատրյանին, որը հանձն էր առել նկարել Լիլիթին («Ավետիք Իսահակյանի նամակները», 2016, էջ 184): Ցավոք, նկարչին դա չի հաջողվում, բայց ավելի ուշ Լիլիթին վրձնում է նրա կինը՝ Վավա Խաչատրյանը¹:

Պոեմի առաջին տողերից արդեն ուրվագծվում է դեպքերի զարգացման ողբերգական ընթացքը. հողանյութ, հողահոտ, ավելին՝ անասունների տրորած և կեղտոտ հողից շինված Ադամ և կրակի բոցերից դեպի վեր սուրացող, հիացք և դյութանք Լիլիթ: «Լիլիթ ուշի ուշով նայեց Ադամին, և կավի հոտ զգաց իր հոտոտելիքը: Եվ զգաց, որ Ադամի

¹«Ես կարդացել էի Իսահակյանի «Լիլիթ»-ը: Քանիցս Սարգսին խորհուրդ էի տվել այն մարմնավորել կտավի վրա, մի հիանալի անակնկալ անել Վարպետին՝ նկարելով Լիլիթը՝ «բոլոր տանջող եւ ապրեցնող հրապույրների աղբյուրը»: Սարգսը գտնում էր, որ Լիլիթի կերպարը հաղթահարելու համար ժամանակ է պետք, ստեղծագործական հանգիստ, մտորումների խաղաղ մթնոլորտ: Մի բան, որ և՛ այդ, և՛ հետագա տարիներին միշտ պակասում էր մեզ: Հետագայում, երբ ես սկսեցի նկարել, իմ չորրորդ ստեղծագործությունը Լիլիթը եղավ: Կտավին հանձնեցի բոցերի պես օդի միջով սուրացող եւ անհետացող Լիլիթին, անհաղթահարելի կնոջը, որը երազ է, հիացք և դյութանք» («Հայրենիքի ծայն», 1975, N 44) :

հայացքը հողի ծանրությամբ իջավ իր մազերի և ուսերի վրա: Ու հապճեպով ձեռքը դուրս քաշեց Ադամի ափի միջից»(10):

Ադամը մոտ է, ուր որ է պիտի հասնի Երազանք-Լիլիթին, սակայն պարզվում է, որ որքան մոտենում, այնքան հեռանում է Երազը, որտեղից էլ սկսվում է նրա ողբերգությունը. «Ադամ նայեց Լիլիթին և գեղեցկության մի անհուն ծավալվեց ու խորացավ իր առջև, որ դյուրեմ էր ու քաշում իր հոգին դեպի ահավոր անդունդը՝ ոչնչացնելու համար» (10): Հոգեհմա գեղեցկությամբ է արարվել Լիլիթ. «... տեսավ Լիլիթ, որ արևը այնքան հրեղեն չէ, ինչքան իր աչքերի կրակը, և երկինքը այնքան խորունկ չէ, ինչքան իր աչքերի հունը: Ինքն է ամենակատարյալը դրախտի մեջ, և լիճն ու դրախտը լցված են իր դեմքի լույսով» (11), նրա գեղասքանչությամբ պիտի զարմանա մինչև անգամ Արարիչը. «Բարի է, որովհետև գեղեցիկ է» (9): Աստված ամենևին չի սխալվում բարին գեղեցիկի հետ համեմատելիս, և գեղագիտական բարձրագույն արժեք Գեղեցիկը Բարու հետ նույնացնելու Իսահակյանական հայեցակարգը նույնպես ինքնանպատակ չէ. այն բխում է Պլատոնի ուսմունքից, համաձայն որի՝ իդեալական, կատարյալ գեղեցիկը միաժամանակ ճշմարիտ է ու բարի: Թեև քիչ հետո պիտի պարզվի, որ Լիլիթը բոլորովին էլ բարի չէ, առավել ևս Ադամի նկատմամբ, թեև Աստված հրամայել էր սիրել զմիմյանս, աճել ու բազմանալ: Իսահակյանը ի ցույց է դնում Լիլիթի ըմբոստ էությունը, ընդվզումը նույնիսկ Աստծո դեմ: Լիլիթի գեղեցկության մեջ էլ դիվականություն կա, որից նույնիսկ օձն է սարսռում. «Լիլիթ նայեց օձի աչքերին, օձը՝ Լիլիթի: Եվ երկուսն էլ կանգնած մնացին, երկուսն էլ թովված էին մեկմեկով: Լիլիթին այնպես հրապուրիչ էր օձի վետվետուն, գալարուն մարմինը՝ ողորկ, սուր և նետվող: Նրան այնպես թվաց, թե այդ թափանցեց իր մարմնի միջով: Երկար և երկար նայում էր Լիլիթ, սակայն օձը, վախեցած նրա հայացքի կայծակից, սուլեց և ակնթարթի մեջ անհայտացավ կարկառների մեջ» (22):

Օձի կերպարը պատահական չէ ընտրված. եղեմական կենդանիներից միայն նա է գրավում Լիլիթի ուշադրությունը, որովհետև ինքը «հիագարիուր» է օձի պես, նրա հետ ունի շատ ընդհանրություններ (գեղեցկություն, անկանխատեսելիություն, անհնազանդություն, իմաստնություն, ազատասիրություն, խորհրդավորություն և այլն), ու եթե առաջին անգամ օձը փախուստի է դիմում, ապա երկրորդ անգամ տեսնում ենք օձի հետևից վազող, այսինքն՝ նրա հետ խաղացող Լիլիթին. «Եվ տեսավ Լիլիթին՝ աշխույժ ու կայտառ, վազում էր մի գալարուն ու սևափայլ օձի հետևից՝ աչքը չհեռացնելով օձի վրայից» (28): Չնայած Կ. Գրիգորյանի այն դիտարկմանը, թե անգամ օձն է խույս տալիս, քանի որ Լիլիթը «դիվական սկզբի կրողն է», «չար է և նենգ», «չարագուշակ կրակ,

որից այրվում է Ադամը» (Գրիգորյան, 1955, էջ 334), սակայն ամբողջ ստեղծագործության մեջ Լիլիթի չար լինելու մասին ոչ մի բառ չկա: Մեկ անգամ Ադամն է Աստծուն ուղղված վերոնշյալ բողոքում օգտագործում «չար կրակ» արտահայտությունը, իսկ երկրորդ անգամ՝ սատանային նկարագրելիս՝ «չար ու նենգ»: Ավելին, անգեն աչքով էլ նկատելի է, որ հեղինակը անթաքույց սիրով է լցված Լիլիթի հանդեպ, գերված է լիլիթական չնաշխարհիկ գեղեցկությամբ, ինչ-որ տեղ նույնիսկ արդարացնում է նրա բոլոր քայլերը, կամակորությունները, անգամ Ադամին հանիրավի նվաստացնող նրա բնավորությունը: Իսահակյանը Լիլիթի անբնական գեղեցկության նկարագրություններով ընթերցողին էլ է հմտավարժորեն ուղղորդում առ նրա խորհրդավորությամբ քողարկված էությունը:

Հեղինակը չի բացում շղարշը, մինչև վերջ չի բացահայտվում. իրական է Լիլիթը, նյութեղեն, նրա հետ իսկապե՞ս խոսել է Ադամը, շփվել, հպվել, համբուրել (ինչում Ադամը համոզված է աներկբայորեն), շոյել մազերը, զգացել սիրո բերկրանքը, առաջին կի՞նն է՝ ստեղծված նախամայր Եվայից դեռ շատ տարիներ առաջ, թե՛ երազ է, մի՛Ֆ, ցնորք, հիվանդագին երևակայության արդյունք, անհնազանդ, անսանձելի վիուկ, անսիրտ ու անողորմ ոգի, ինչը հրաշալիորեն ձևակերպված է Ադամի առ Աստծված բողոքի մեջ. «Հրապուրում է ինձ, տոչորում և ապա ծարավ թողնում, հեռանում: Այրվում եմ, երբ հեռու եմ լինում նրանից, այրվում եմ նորից, երբ մոտն եմ լինում նրա: Չար կրակ է նա, կիզող-կրակի կտոր, տանջվում եմ, հատնում եմ ես...»: Հիրավի, եզակի է իսահակյանական Լիլիթը, որին վստահորեն կարելի է անվանել «իրական երազ». «Ադամ առավոտ աչքերը բացեց, տեսավ գլուխը գետնին, և Լիլիթ չկար: Կարծես թե՛ երազի մեջ էր: Աչքերը նորից գոցեց, սակայն Լիլիթ նորից չկար»: Իրականի և երազայինի սահմանագծին մոլորվել է Ադամը. իր Լիլիթը երազ է իրականության մեջ, և իրական է երազանքներում: Այստեղ կրկին փայլում է Իսահակյանի հանճարը. «Եվ իր տեսիլների մեջ Լիլիթն ավելի ցանկալի էր ներկայանում, ավելի ցանկալի և աննվաճ փափագելի: Եվ տեսիլների միջից սթափվում էր Ադամ սրտի կսկիծով և խենթի պես վազում էր ու վազում»: Ախր հենց Լիլիթի շնորհիվ են բացվել Ադամի աչքերը և նրա միջոցով է ինքը ճաշակել համբույրի բերկրանքն ու սիրո երջանկությունը, սկսել լսել դրախտային բնության երանելի ձայնը («Լսեց մի մրմունջ ափի եղեգների մեջ. կարծես թե մի սիրտ մորմոքում էր այնտեղ»): Լիլիթի ողջակեզ սիրո անհուն կարոտից է սրնգահար դարձել Ադամը («Կտրեց մի եղեգ, մի-երկու ծակեր բացեց ցողունի վրա և սկսեց նվագել: Այս նվագ չէր, այլ Ադամի սիրավառ սերն էր ինքնին, որ շիթ-շիթ ծորում էր եղեգնափողի միջից՝ դարձած արցունք ու տենչանք, տենչանք

ու տրտունջ»), Լիլիթի անպատասխան սիրուց է դարձել անզուգական երգիչ.

«Լիլիթ, Լիլիթ, դու իմ ճակատագիր:
Առանց քեզ ի՞նչ է անմահությունը:
Դու հեշտանքի դրախտն ես, Լիլիթ,
Հրաշքների և հմայքների միակ դրախտն ես դու:
Երազն ես դու, հիացքն ու դյութանքը, Լիլիթ,
Դու չճաշակված գաղտնիքն ես, Լիլիթ,
Արևադրյունն ես դու, Լիլիթ,
Բոլոր տանջող և ապրեցնող հրապույրների արևադրյուրը:
Անհաղթելի կինն ես դու, Լիլիթ,
Լիլիթ, հավիտենական Լիլիթ...»:

Լիլիթը Ադամի կյանքը հազարերանգ գույներով լցնողն է, բայց անհասանելի ու աննվաճ, Ադամին երջանկացնողն է, բայցև դժբախտացնողը միաժամանակ, դրախտի երանելի հրեշտակն է և դրախտը դժոխքի վերածող սարսափելի մղձավանջը: Հենց այս պարզոքսալ հակադրությունն է, որ պիտի պատճառ դառնա Ադամի երկատման: Հեղինակը հմտավարժ հոգեբանի պես ցուցադրում է Ադամի տրոհումը. Ադամն ակամա սկսում է ապրել երկու տարբեր, հակադիր աշխարհներում, մեկը՝ իրական ու ծանծրալի, մյուսը՝ երևակայական, գունագեղ, եթերային, զարմանահրաշ: Նա ոսկերչական բժախնդրությամբ կերտում է երկու Ադամներից յուրաքանչյուրին՝ կավաշեն Ադամ՝ հողանյութ Եվայի հետ տաղտկալի կյանքը քարշ տվող, և իրականության մեջ գոյություն չունեցող, սքանչելի, հրաձին, հավերժական Լիլիթին անվիատ ձգտող երջանիկ Ադամ. «Ինչպես թե երազի միջից լսեց Լիլիթի ուրախ լուսածիծաղը... Եվ ապրեց Ադամ՝ սպասելով ու տենչալով միշտ Լիլիթին, և մեռավ Ադամ՝ հառաչելով ու երազելով մի՛միայն Լիլիթին...»:

Մ.Ջանփոլադյանը Լիլիթի նոր բնորոշում է բերում՝ «անհաղթելի կին», երազանք: Նրա կարծիքով «կնոջ մեջ հենց Լիլիթն է՝ անմահ ու հավերժ» (http://www.old.yasu.am/files/03M_Janpoladyan_r.pdf):

Կարելի է վստահորեն ասել, որ Իսահակյանին հաջողվել է ի դեմս Եվայի և Լիլիթի կերտել կնոջ մեջ ապրող երկու հակոտնյա կանանց:

Հայ ժողովուրդը բարձր գնահատեց այս չնաշխարհիկ ստեղծագործությունը, ավելին՝ Իսահակյանի «Լիլիթը» այնքան սիրվեց, որ Լիլիթ անունը առ այսօր ամենատարածվածներից է հայուհիների շրջանում: Իսահակյանի «Լիլիթից» ոգեշնչված և դրա անմիջական ազդեցության ներքո է Ս.Կապուտիկյանը գրել իր նույնանուն

բանաստեղծությունը (Կապուտիկյան, 1981, էջ 180), որտեղ Լիլիթը և՛ ցնորք է, և նյութեղեն.

Շուրջը՝ հողե, ու հաց, ու հոգս – իսկ դու ցնորք,
Դու՛ միայն փայլ, ամեն օր՝ այլ, ամեն օր՝ նոր,
Կանչող, տանջող, այրվող, այրող – ու հոգնեցնո՛ղ,
Լիլիթ, Լիլիթ:

Եզրակացություն

Գրական հերոս դարձած առասպելական կերպարների շարքում իր բացառիկ տեղն ունի Լիլիթը, որն արդեն ավելի քան 700 տարի շարունակում է մնալ ոչ միայն գրողներին ոգեշնչող, այլև փիլիսոփաների, աստվածաբանների, հոգեբանների ուսումնասիրության առարկան: Չնայած մինչև ուշ միջնադար քրիստոնեական եկեղեցին կանանց համարում էր «մեղքի անոթներ», ժամանակի մտածողները աստիճանաբար համարձակվում են «չարանենգ» Լիլիթին դարձնել գրականության հերոս: Առաջիններից մեկը Գյոթեն էր, որն իր հոչակավոր «Ֆաուստ»-ով Լիլիթի բոլորովին նոր կերպար է հրամցնում ընթերցողին: Լիլիթն այնուհետև ներշնչանքի աղբյուր է դառնում այնպիսի մեծերի համար, ինչպիսիք են Դ.Ռոսսետին, Ջ.Մաքդոնալդը, Վ. Հյուգոն Ֆ. Սոլոգուբը, Գ.Կեյլերը, Բ. Շոուն, Ա. Ախմատովան, Վ. Նաբոկովը, Լ. Օբոլսովան, Ռ. Կիպլինգը, Մ. Ցվետական և ուրիշներ: Իր ինքնատիպությամբ և գեղարվեստական բարձր արժանիքներով տարբերվում է Ավետիք Իսահակյանի «Լիլիթը», որը, ըստ ամենայնի, կոթողային ասք է, վեր չափածոն և արձակը բնորոշող սահմանումներից, դուրս ժանրային շրջանակներից ընդհանրապես. բյուրեղացած մեղեդի է, միջական խորհրդավորությամբ ներծծված բազմաձայն, շենչող երգ:

Լիլիթի կերպարի էվոլյուցիայի ուսումնասիրությունը, սկսած իր ձևավորումից մինչև տարբեր ժողովուրդների հավատալիքներում և համաշխարհային գրականության մեջ յուրատիպ մարմնավորումները, վկայում է, որ գործ ունենք հերոսի երկվության-երկատվածության ինքնատիպ դրսևորման հետ, ինչը գիտական խոր ուսումնասիրությունների կարիք ունի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCES

1. Աստուածաշունչ (1994), Մատեան հին եւ նոր կտակարանների, Աստուածաշնչային ընկերություն, 1345+352 երկայուն էջ:

- Astowac'ashownch (1994), Matean hin ew nor ktakaranneri, Astowac'ashnchayin y'nkerowt'yown, 1345+352 erksyown e'j: (in Armenian)
2. «Ավետիք Իսահակյանի նամակները» (2016), ԵՊՀ, 474 էջ:
«Avetiq Isahakyanı namaknery'» (2016), EPH, Erewan, 474 e'j: (in Armenian)
 3. Գյոթե (1963), Ֆաուստ, Հայպետհրատ, Երևան, 314 էջ:
Gyot'e (1963), Faowst, Haypethrat, Erewan, 314 e'j: (in Armenian)
 4. Գրիգորյան Կ. (1955), Ռուս-հայկական գրական և մշակութային փոխհարաբերությունների պատմությունից, Հայպետհրատ, Ե., 334 էջ:
Grigoryan K. (1955), R'ows-haykakan grakan & mshakowt'ayin p'oxharaberowt'yownneri patmowt'yownic, Haypethrat, E., 334 e'j: (in Armenian)
 5. Իսահակյան Ա. (1975), Երկերի ժողովածու 6 հատորով, 3-րդ հ., Հայաստան, Երևան, 480 էջ:
Isahakyan A. (1975), Erkeri jhoghovac'ow 6 hatorov, 3-rd h., Hayastan, Erewan, 480 e'j: (in Armenian)
 6. Իսահակյան Ա. (1983), Լիլիթ, Սովետական գրող, Երևան, 90 էջ:
Isahakyan A. (1983), Lilit', Sovetakan grogh, Erewan, 90 e'j: (in Armenian)
 7. Կապուտիկյան Ս. (1981), Լիլիթ, Բանաստեղծություններ, Սովետական գրող, Երևան, 180 էջ:
Kapowtikyan S. (1981), Lilit', Banasteghc'owt'yownner, Sovetakan grogh, Erewan, 180 e'j: (in Armenian)
 8. «Հայրենիքի ձայն» (1975), N 44:
«Hayreniqi d'ayn» (1975), N 44: (in Armenian)
 9. Афанасьева К. (1979). Гильгамеш и Энкиду. Эпические образы в искусстве, ГРВП, 220 с.
Afanas'eva K. (1979). Gil'gamesh i Jenkidu. Jepicheskie obrazy v iskusstve, GRVP, 220 s. (in Russian)
 10. Носенко Е. (2002). Амбивалентность образа Лилит в народной еврейской демонологии и народные магические приемы, направленные на борьбу с ней// Материалы Девятой ежегодной международной междисциплинарной конференции по иудаике. М., с. 172-186.
Nosenko E. (2002). Ambivalentnost' obraza Lilit v narodnoj evrejskoj demonologii i narodnye magicheskie priemny, napravlennye na bor'bu s nej

// Materialy Devjatoj ezhegodnoj mezhdunarodnoj mezhdisciplinarnoj konferencii po iudaike. M., s. 172-186. (in Russian)

11. Телицин В. Л., Багдасарян В. Э., Орлов И. Б. (2005). «Символы, знаки, эмблемы Энциклопедия», ЛОКИД-ПРЕСС, 198 с.
Telicin V. L., Bagdasarjan V. Je., Orlov I. B. (2005). «Simvoly, znaki, jemblemy Jenciklopedija», LOKID-PRESS, 198 s. (in Russian)
12. Токарев С. А. (2008). Мифы народов мира, - Москва, «Советская Энциклопедия» 1147 с.,
Tokarev S. A. (2008). Mify narodov mira, -Moskva, «Sovetskaja Jenciklopedija» 1147
13. Валянская О. П. (1992), Женщина в мифах и легендах, Ташкент, Главная редакция энциклопедий - 304 с.
Valjanskaja O. P. (1992), Zhenshhina v mifah i legendah, Tashkent, Glavnaja redakcija jenciklopedij - 304 s.(in Russian)
14. Lewis, C. (2001). The Chronicles of Narnia. Bind-uped 766 p.
15. Scholem G. (1979). On the Kabbalah and its Symbolism (Mysticism and Kabbalah), Harvard University Press, 510 p.
16. Hurwitz S. (1999), Lilith-The First Eve: Historical and Psychological Aspects of the Dark Feminine, Switzerland: Daimon Verlag, 268 p.
17. Thompson, R. Campbell, Assyrian Medical Texts, 1908, 78p. .

Էլեկտրոնային աղբյուրներ

18. arar.sci.am/dlibra/publication/193129/edition/175475
19. old.y-su.am/files/03M_Janpoladyan_r.pdf
20. bibliatodo.com/hy/աստվածաշունչ/նոր-էջմիածին-աստվածաշունչ/ԵՍՍՅԻ-34
21. bigpicture.ru/pervaya-zhenshhina-lilit-pochemu-bibliya-mo
22. diss.unn.ru/files/2016/637/diss-Cheremisina-637.pdf
23. dzen.ru/a/YZvtFM7gL1ggdidX
24. lamerkhav.wordpress.com/еврейский-словарь/вернуться-за-лилит/
25. hy.wikipedia.org/wiki/Վհուկների_մութ
26. hy.wikipedia.org/wiki/%D4%BC%D5%AB%D5%AC%D5%AB%D5%A9#cite_ref-13
27. maxima-library.com/new-books-2/b/559908?format=read
28. poezia.ru/works/167287
29. Scerba, Amy (2005). «Dante Gabriel Rossetti's painting «Lady Lilith» (1863: watercolor, 1864-1868?: oil)»

30. stihi.ru/2010/01/29/53
31. rossettiarchive.org/docs/1-1870.5thedn.rad.html#A.R.91
32. ru.wikipedia.org/wiki/Список_произведений_Данте_Габриэля_Россетти
33. hy.wikipedia.org/wiki/Բեն-Սիրայի_այբուբեն
34. <https://cyberleninka.ru/article/n/arhetipy-velikoy-materi-i-vechnoy-zhens-tvennosti-kak-sposoby-proizvodstva-zhenskoj-identichnosti>

АРТАК ГУЛЯН - ОСОБЕННОСТИ РАЗДВОЕНИЯ МИФИЧЕСКОГО ОБРАЗА ЛИЛИТ В ХУДОЖЕСТВЕННОМ ЛИРЕАТУРЕ

Ключевые слова: *Лилит, Адам, Бог, Сатана, дихотомия, зло, миф, двойственность*

Несмотря на то, что психологи, философы, писатели и литературоведы в своих произведениях и научных трудах продолжают уделять внимание мифическому образу Лилит, полноценной сущностной картины данного образа по сей день в науке не существует.

Исследование эволюции образа Лилит, начиная с верований различных народов и вплоть до его отражения во всемирной литературе, свидетельствует о том, что в данном случае мы имеем дело со своеобразным “раздвоением” данного образа, требующим дополнительного научного изучения.

ARTAK GHULYAN - THE DICHOTOMY OF THE MYTHIC CHARACTER “LILIT” AND ITS PORTRAYAL IN FICTION

Keywords: *Lilith, Adam, God, Satan, dichotomy, evil, myth, duality*

The paper is devoted to the study of the mythic character of "Lilit" and its depiction in fiction. Despite numerous attempts by psychologists, philosophers, writers, and literary critics to analyze this character from diverse angles, it has yet to receive a comprehensive scientific explanation.

The examination of the evolution of Lilit's character, from its origins to its portrayal in various cultural beliefs and its distinct representations in world literature, reveals duality and dichotomy within the character that warrants further scholarly investigation.

Ներկայացվել է՝ 22.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 14.05.2024 թ.

LINGUISTIC PECULIARITIES OF SOCIAL MEDIA ADVERTISEMENTS

SPARTAK MKHITARYAN

Abstract

The article explores linguistic strategies in social media ads, uncovering tactics for effective digital marketing. Through analyzing samples from various platforms, it reveals how language is strategically used to engage audiences. Additionally, emerging trends like user-generated content. This research provides valuable insights into the dynamic interplay between language and digital advertising, offering practical knowledge for marketers navigating the ever-evolving realm of social media.

Keywords: *linguistic strategies, social media ads, audience engagement, influencer marketing, advertising tactics, language usage, audience persuasion*

Introduction

In today's digital era, our daily lives are inundated with a plethora of advertisements and commercials, forming an omnipresent phenomenon from which no one can escape. Whether it's billboards, television, radio, or the internet, individuals encounter diverse advertisements nearly every day, with social media platforms such as Facebook, Instagram, and Telegram emerging as particularly prominent channels for advertising. The advent of technology has revolutionized the process of ad creation, with an increasing number of companies leveraging social media platforms and harnessing their full suite of features for promotional purposes.

The purpose of this article is to explore and analyze the unique linguistic features and strategies employed in social media advertisements.

The focus of this study centers on the advertisement text in English and its constituent elements within the realm of social media. Through a comprehensive examination of these aspects, we seek to gain deeper insights into the dynamic relationship between language and digital advertising practices in the contemporary digital age.

ADVERTISING TYPES AND THEIR COMPONENTS

In the 21st century, advertising plays a crucial role in promoting products, blending seamlessly into our daily lives filled with various visual and

audio ads. This has prompted scientists worldwide to study advertisement text characteristics and types. Advertising text is a form of paid non-personal communication, aims to promote products or services to targeted audiences using persuasive messaging across various media channels, including interactive platforms (Moriarty, 2005, p. 6).

The structure of written advertising text and the choice of words take a special place due to the fact that through words the text can influence a person, thereby causing the desire to buy a product. Depending on the purpose of the advertising text it can stimulate a person to buy something or to take some action. Advertising text should be accessible, concise, bright, informative and expressive. That is why those who write advertising texts use various psychological and linguistic techniques. Advertising text is a whole structure, which consists of several parts, each of which has a certain function and purpose. The main components of advertising texts are:

- Slogan;
- Headline;
- The main body of the advertisement text.

(<https://www.mbaknol.com/marketing-management/the-components-of-an-advertisement/>)

The slogan embodies a condensed version of the advertising idea, polished to linguistic excellence, capturing a memorable concept; a distinctive verbal depiction of a company, product, or political figure. Not every advertising text features a slogan. Key criteria for a slogan include brevity, memorability, logical consistency, integration of the brand symbol, and facilitation of translation into different languages.

Example: “*Just Do It*” (<https://www.nike.com/>)

Nike's iconic slogan, "Just Do It," is universally recognized for embodying the brand's ethos of action and empowerment. This succinct phrase motivates consumers across the globe to associate Nike with overcoming challenges and achieving personal success through determination and perseverance.

The headline stands out as the paramount verbal element in advertising. Conventionally, headlines summarize the primary appeal and argument of an advertisement, aiming to communicate the central message, recognizing that consumers might bypass the body text entirely. Studying advertising texts David Ogilvy in his book “Confessions of an Advertising Man” highlights several critical functions of the headline, including:

- capturing attention;
- sparking interest;

- identifying buyers/target audience;
- describing goods/services;
- selling goods/services (Ogilvy, 2021, p. 27).

Example: " *F3: Fuel your Body, Focus your Mind, and Finish your Fight* " (<https://twitter.com/F3Energy/status/1760695946437169438>). This headline effectively promotes F3 Energy Drink as a product enhancing performance and productivity, appealing to the reader's desire for energy and vitality with empowering phrases like "Fuel your Body" and "Focus your Mind". It captures attention, identifies the target audience, and describes the product's benefits, fulfilling key functions in selling to consumers.

COMMUNICATION MODELS OF ADVERTISEMENT

The main body of the advertisement text refers to the central portion of the advertisement where detailed information about the product, service, or message being promoted is presented. The main body of the advertisement text is crucial for conveying key information and convincing the audience of the value or utility of the advertised offering. Depending on the structure, the body text will express a particular communication model of the advertisement. According to J. Thistlethwaite there are 4 body types of advertisement:

- Factual
- Narrative
- Interest arousing
- Humorous (<https://blog.copify.com/post/types-of-body-copy-in-advertising>)

Factual advertisement provides essential information about a product or service, aiming to convince the reader to make a purchase. As it concentrates solely on presenting facts, it can be relatively brief, although there's no strict rule dictating its length. Contrary to common belief, consumers are indeed interested in factual details. In reality, providing more information often leads to increased sales.

Example: "*no prep, no cooking - Huel Black Edition contains all 27 essential vitamins and minerals in one balanced, plant-based meal, delivered straight to your door. From 2.20\$ per meal - try Huel today!* " (<https://foundr.com/articles/social-media/facebook-ad-examples>)

In this advertisement, the most important information is presented straight away, such as its key features and its value proposition that is the affordable price.

Narrative advertisement engages readers by telling a story before introducing a product or service that could address their needs. Rather than bluntly urging consumers to buy, narrative advertising takes a gentler

approach, allowing readers to emotionally connect with the storyline and develop positive associations with the brand. An exemplary instance of narrative advertising is the “One Foolish Act advertisement” by the Florida Department of Transportation. While the headline highlights the tragic outcome of a drunk driving incident resulting in the death of a cyclist on his 16th birthday, the body delves into the repercussions:

" He also killed the first guitar his parents would have given him that night. The band he would have played in during his first year at the University of Texas in Austin..." (<https://www.jamesrosene.com/work/onefoolishact>).

Though not directly selling a product, the ad conveys a significant message. It effectively tugs at the reader's heartstrings and reinforces the main message that is "One foolish act can kill a thousand great ones."

The aim of **interest arousing advertisement** is to evoke the reader's emotions. Instead of focusing directly on the features and advantages of a product, it relies on appealing to individuals' senses to indirectly encourage sales. Essentially, it taps into emotions that stimulate our senses of sight, hearing, smell, taste, or touch.

Example: *"Steak. Just a salmon steak on charcoal. Simply fresh. Simply tender and delicious. Yes, and three more types of vegetable side dishes to choose from. And two sauces. No one can resist such a salmon steak"* (https://vk.com/@cerebro_vk-restorannyi-smm-vkusnye-teksty-o-vkusnoi-ede-i-ne-tolko)

The advertisement directly strikes taste senses of a person by such words like “Simply fresh” and “Simply tender and delicious” making him or her imagine all diversity of taste and thus evoking the desire to order the dish.

Creation of a **humoristic advertisement** demands that a copywriter possess a deep understanding of their target audience. This approach has been proven effective over time and can ensure that a campaign remains memorable and influential for an extended period.

Example *"Doughnuts are bad for you. So are cream cakes, lie-ins and loud rock music. So is sugar. If you take it in your tea, stop immediately. If you take two sugars in your tea, obviously you're trying to commit suicide and it's a cry for help. Don't do it. Your life is precious."* (<https://gasp.agency/blog/kreme-kopywriting>)

At first glance, it may seem to violate a fundamental rule of advertising by admitting that the product has negative health implications. However, they've cleverly transformed this apparent drawback into an advantage by

using the remainder to illustrate that it's not just doughnuts that pose health risks.

THE LANGUAGE OF ADVERTISING ON SOCIAL MEDIA

Advertising language has a dual role: informing and persuading. It should be distinct, purposeful, and persuasive, backed by evidence and logical structure. Its artistic dimension lies in originality and entertainment. Language, as a symbolic system, extends beyond written and oral forms to social phenomena and social media advertising is a big part of that. (Widyahening, 2005, p. 73). In advertising, language not only reflects the practical utility of advertised products or services but also serves as a powerful tool for maneuvering the society in the direction that we need and this is carried out through usage of different linguistic technics in the advertisement texts.

Interesting and modern example of ads on social media is the advertisement of the game named "Mortal Kombat 1"

Example 1:

🔥 Relive the Ultimate Fight: Mortal Kombat 1 Game! 🎮👊

🌟 Get ready for a legendary showdown in the gaming world! Introducing Mortal Kombat 1 – the iconic game that started it all. Immerse yourself in brutal battles, spine-tingling fatalities, and an unforgettable gaming experience.

Exploring the linguistic aspect of this ad we can conclude that:

Imperative Mood: The text includes imperative verbs like "Get ready," "Introducing," and "Get your hands on," which are commands or calls to action aimed at encouraging the reader to take a specific action, in this case, to engage with the Mortal Kombat 1 game.

Visual Elements: The use visual elements such as emojis ("🔥", "🎮", "👊", "🌟", "👊") throughout the text emphasizes excitement and enthusiasm, further contributing to the energetic tone of the promotional message.

Emotive Language: The text uses emotive language such as "legendary showdown," "brutal battles," "spine-tingling fatalities," and "unforgettable gaming experience" to evoke excitement and anticipation in the reader. These phrases are designed to appeal to the emotions of the target audience and create a sense of anticipation and thrill.

Colloquial Expressions: The phrase "FINISH HIM" is a well-known catchphrase from the Mortal Kombat series, which adds authenticity and familiarity for fans of the game.

Hyperbole: There is an element of hyperbole in the text, as it portrays Mortal Kombat 1 as the "iconic game that started it all" and promises an

"unforgettable gaming experience." This exaggerated language is commonly used in marketing to make products or experiences seem more impressive and desirable.

Example 2:

Have you ever taken a trip to the cosmos? 🚀🌌

Our performances allow you to dive into space, journey through distant galaxies, and experience extraordinary emotions.

📍 Visit Planetarium No.1 for a cosmic escape and rendezvous.
Let's get lost in space together! 🌍

Imperative Mood: The ad includes imperative verbs like "Visit," "Let's get lost," and "Learn more," which serve as calls to action, encouraging the reader to take specific steps such as visiting the Planetarium No.1, getting lost in space, and learning more about cosmic performances.

Visual Elements: The ad incorporates visual elements such as emojis (🚀, 🌌, 🌍) and formatting (---) to enhance visual appeal and capture attention. Emojis like 🌌 and 🚀 symbolize space and space travel, aligning with the theme of the ad.

Emotive Language: The ad uses emotive language such as "dive into space," "journey through distant galaxies," and "experience extraordinary emotions." These phrases aim to evoke a sense of wonder, excitement, and adventure in the reader, enticing them to explore further.

Rhetorical Question: The ad starts with a rhetorical question, "Have you ever taken a trip to the cosmos?" This question is intended to engage the reader and pique their curiosity about the subject matter, setting the stage for the rest of the ad.

The following example is an advertisement for a school where people can develop their intellectual abilities.

Example 3:

Brainety
Sponsored · 🌐

🤔 Are you smarter than the national average?
👉 The average IQ is 98.
That's 62 less than Einstein and Stephen Hawking!
Think you're more intelligent than that?
Put your mind to the challenge with Brainety and see how intelligent you really are:
💡 Fun training games to test your memory, speed, and logic
✅ Test yourself over time to see your cognitive abilities improve
🕒 Quick brain tasks you can do while you're bored
Plus, keep training your brain daily and watch your intelligence soar.
Get started with Brainety now and bring out your inner nerd 🧠


Imperative Mood: The ad encourages readers to "put your mind to the challenge with Brainety" and offers specific benefits of using the platform, such as fun training games, cognitive improvement over time, and quick brain tasks. The call to action is reinforced with phrases like "Get started with Brainety now," which urges the reader to take immediate action.

Visual Elements: The ad employs casual language and emojis (🧠, 🎮, 🕒, 📱) to make the content more relatable and accessible to the target audience.

Emotive Language: The ad uses emotive language such as "put your mind to the challenge," "watch your intelligence soar," and "bring out your inner nerd" to evoke excitement and enthusiasm in the reader. These phrases are designed to appeal to the emotions of the target audience and motivate them to engage with the advertised product.

Rhetorical Question: The ad begins with a rhetorical question, "Are you smarter than the average American?" This immediately engages the reader by prompting them to consider their own intelligence relative to a benchmark.

Example 4:



Imperative Mood: The ad calls readers to action through the phrase "Unlock a new cosmic connection" and offers specific benefits of using the product.

Visual Elements: The use of emojis, specifically the galaxy 🌌 and sparkling stars ✨, adds visual appeal and reinforces the cosmic theme of the ad. Emojis are commonly used in marketing to convey emotion or enhance messaging.

Cosmic Imagery: The use of words like "cosmic" and "star sign" creates a celestial and mystical atmosphere, appealing to those interested in astrology or the concept of cosmic connections.

Metaphorical Language: By suggesting that Samsung products can unlock a "cosmic connection," the ad uses metaphorical language to imply a deeper, almost spiritual relationship between the consumer and the product.

Conciseness: The ad is brief and straightforward, emphasizing key aspects such as performance and uniqueness without overwhelming the reader with excessive details. This ensures that the message is easy to grasp and recall.

Example 5:



Join the denim revolution with Jomo and Levi's! 👖🔥 Experience the ultimate denim shopping experience with the latest jeans and shoes. Upgrade your wardrobe with new styles and express your unique style today!

Imperative Mood: The call to action is achieved through the phrases "Join the denim revolution...", "Experience the ultimate denim..." and "Upgrade your wardrobe" which urges the reader to take immediate action.


Informal Tone: The use of "Join the denim revolution with Jomo" creates an informal and inclusive tone, inviting the audience to participate in something exciting and trendy.

Visual Elements. The use of emojis like the jeans 👖 and fire 🔥 adds visual interest and reinforces the idea of something hot and fashionable.

Emotive Language: Words like "ultimate," "upgrade," and "express" evoke emotion and excitement, encouraging the audience to envision themselves as part of the experience and suggesting that purchasing these products will enhance their lives.

Repetition: The repetition of "experience" emphasizes the idea that buying denim from Jomo and Levi's isn't just about acquiring clothing; it's about immersing oneself in an enjoyable and fulfilling shopping experience.

Example 6:



Imperative Mood: The use of short, imperative sentences such as "Wear it. Wash it. Wear it again." delivers a clear and concise message, highlighting the product's durability and reusability.

Visual Elements: The recycling symbol ♻️ communicates the eco-friendly nature of the product, highlighting its sustainability and environmental consciousness. This resonates with consumers who prioritize ethical consumption and sustainability.


Hashtag Usage: The use of hashtag like #hometeam helps to increase the visibility of the advertisement on social media platforms and reinforces the brand's identity.

Attention to Detail: The asterisks (*) and double asterisks (***) are used to provide additional information and disclaimers about the product's

availability and donation initiative, respectively. This demonstrates transparency and ensures that customers are well-informed.

Conciseness: The ad keeps it short and simple, highlighting important points like performance and uniqueness without giving too much information. This makes it easy to understand and remember.

Example 7:



Targeted Language: The use of "busy dudes" in the ad's copy targets a specific demographic, likely young men who lead hectic lifestyles. This language choice helps to create a connection with the intended audience by acknowledging their lifestyle challenges.


Visual Elements: The checkmark symbol ✓ is used to reinforce the idea of success and approval. It is strategically placed after each benefit mentioned in the ad ("quick ✓" and "as easy as washing your face ✓"), serving as a visual cue to signal the advantages of using the product.

Informal Tone: The use of "hack" suggests a clever shortcut or solution, appealing to a contemporary, tech-savvy audience. The informal tone throughout the ad can be seen in the phrases like "busy dudes".

Emphasis on Efficiency: The repetition of words like "quick" and "easy" reinforces the idea that using the product is a time-saving solution. This appeals to the target audience's desire for convenience and efficiency in their grooming routine.

Simple Language: The ad employs straightforward language to convey the product's benefits clearly and succinctly. This approach ensures that the message is easily understood, especially for busy consumers who may be scanning the ad quickly.

Example 8:




Imperative Mood: The ad includes a call to action (CTA) with a link to learn more about the product on Xiaomi's website. This encourages interested customers to take the next step in their purchasing journey by providing them with a direct path to obtain more information or make a purchase.

Emotive Language: The ad focuses on the emotional experience by mentioning "spectrum of colors," "stunning visuals," and "vibrant sound." This appeals to potential customers' desire for immersive entertainment experiences and emphasizes the high-quality display and audio features of the TV.

Conciseness: The ad communicates the key features of the product in a concise and clear manner, using bullet points to highlight the ultra-slim bezel design, 4K HDR display, and vibrant sound with Dolby Audio. This approach ensures that potential customers can quickly grasp the main selling points of the XiaomiTV A 55 2025.

Hashtag Usage: The use of hashtags like #XiaomiTV and #SmartLivingForEveryone helps to increase the visibility of the advertisement on social media platforms and reinforces the brand's identity and commitment to providing smart living solutions for everyone.

Example 9:



Elevate your journey with the perfect blend of performance and individuality.

The new BMW 4 Series Gran Coupé.

#THE4 #BMW

Elevated Language: The use of the word "elevate" suggests sophistication and improvement, appealing to customers who are seeking a higher-quality driving experience. This language choice conveys a sense of luxury and excellence associated with the BMW brand.


Emphasis on Performance and Individuality: The ad highlights the "perfect blend of performance and individuality," suggesting that the BMW 4 Series Gran Coupé offers both superior driving dynamics and a unique sense of personal style.

Hashtags: The inclusion of hashtags like #THE4 and #BMW helps to increase the visibility of the advertisement on social media platforms and reinforces the brand's identity. It also encourages engagement from consumers who may be interested in exploring further or sharing their own experiences with the BMW 4 Series Gran Coupé.

Product Naming: The ad introduces the BMW 4 Series Gran Coupé as "the new," indicating freshness and innovation. This language choice suggests that the vehicle offers the latest in automotive technology and design, encouraging potential customers to consider it as a modern and desirable option.

Conciseness: The ad is brief and to the point, focusing on key selling points such as performance and individuality without overwhelming the reader with excessive information. This allows the message to be easily understood and remembered.

Example 10:



Emotive Language: The ad uses emotive language to evoke strong feelings and associations. Words like "charge," "spark," and "passion" evoke excitement and energy, while also hinting at the vehicle's performance and innovative features.

Wordplay: The ad cleverly incorporates wordplay with "Folgore," which means "lightning" in Italian. This not only adds a dynamic and memorable element to the brand name but also suggests speed, power, and electrification, aligning with the theme of electric vehicles.

Hashtags: The hashtags #MaseratiFolgore and #Maserati are used to increase the visibility of the advertisement on social media platforms and reinforce the brand identity. The repetition of the brand name through hashtags helps to strengthen brand recognition and association.

Capitalization for Emphasis: The use of capitalization in "ON" and "ON" in "passiON" and "innovatiON" highlights these key words, drawing attention to the themes of passion and innovation associated with the Maserati Folgore. This helps to reinforce the brand's values and messaging.

Slogan-like Structure: The structure of the ad, with the repetition of "charge of Folgore" and the parallelism in "passiON and innovatiON," gives it a slogan-like quality. This makes the message memorable and reinforces the key attributes of the Maserati Folgore.

Upon reviewing multiple advertisement texts, it's evident that social media ads predominantly employ a call-to-action method. This approach, characterized by its imperative mood, emotive language, and conciseness, effectively appeals to consumers' emotions and prompts them to take action.

Conclusion

Throughout our study, we have analyzed 10 advertisement texts and found that they primarily utilize the imperative mood, emotive language, and conciseness. These advertisements are designed to craft a captivating story that connects with consumers and motivates them to take action.

The imperative mood is extensively utilized to instill a sense of urgency and prompt immediate response from viewers. By employing direct commands or calls to action, such as "Buy now" or "Learn more," advertisers compel users to engage with the ad content promptly, maximizing the chances of conversion.

Emotive language plays a crucial role in establishing an emotional connection with the audience. Through the use of evocative words and phrases, ads evoke specific feelings or desires in viewers, tapping into their aspirations, fears, or desires. By leveraging emotions such as joy, excitement, or nostalgia, advertisers can elicit a strong response and foster a deeper connection with the brand or product being promoted.

Conciseness is key in ensuring that the message is effectively communicated within the limited attention span of social media users. By distilling complex ideas or features into clear and concise messaging, ads are able to convey their value proposition quickly and memorably. This enables viewers to grasp the key benefits or selling points of the product or service without being overwhelmed by excessive information.

Moreover, a plethora of different linguistic techniques are employed to capture the attention of audiences and convey persuasive messages effectively. Among these techniques, hyperbole, metaphorical language, repetition, and wordplay stand out as particularly prominent.

Metaphorical language, on the other hand, allows advertisers to convey complex ideas or emotions by drawing parallels with familiar concepts or experiences.

As the advertising industry expands, it continuously pioneers new methods to promote products. This drive for innovation fosters creativity, resulting in the development of fresh strategies to captivate audiences. Advertisers actively explore emerging platforms and trends, constantly adapting to the changing preferences of consumers. This dynamic environment underscores the ongoing evolution of advertising, where staying ahead requires constant exploration and experimentation with novel approaches.

In conclusion, the strategic use of imperative mood, emotive language, and conciseness underscores the effectiveness of advertisements on social media platforms. By appealing to consumers' emotions, prompting immediate action, and delivering messages succinctly, the linguistic techniques enable advertisers to capture attention, drive engagement, and ultimately influence purchasing decisions in the fast-paced digital landscape.

REFERENCES

1. Ogilvy, D. (2012). Confessions of an Advertising Man. Southbank Publishing. 208 p.
2. Wells, W., Moriarty, S., Burnett, J. (2005). Advertising: Principles & Practice (7th ed.) Pearson College. 592 p.
3. Widyahening, E. (2015). The role of language in advertisement. Riyadi University. 74 p.
4. <https://blog.copify.com/post/types-of-body-copy-in-advertising> (Accessed 10.03.2024)
5. <https://www.mbaknol.com/marketing-management/the-components-of-an-advertisement/> (Accessed 10.03.2024)
6. <https://www.nike.com/> (Accessed 10.03.2024)
7. <https://twitter.com/F3Energy/status/1760695946437169438> (Accessed 10.03.2024)
8. <https://foundr.com/articles/social-media/facebook-ad-examples> (Accessed 10.03.2024)
9. <https://www.jamesrosene.com/work/onefoolishact>(Accessed 10.03.2024)
10. https://vk.com/@cerebro_vk-restorannyi-smm-vkusnye-teksty-o-vkusnoi-ede-i-ne-tolko(Accessed 10.03.2024)
11. <https://gasp.agency/blog/kreme-kopywriting> (Accessed 10.03.2024)

ՄՊԱՐՏԱԿ ՄԵԽԹԱՐՅԱՆ - ԼԵՁՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԳՈՎԱԶԴՈՒՄ

Հիմնաբառեր՝ լեզվական ռազմավարություններ, սոցիալական ցանցերի գովազդ, լսարանի ներգրավում, ազդեցիկ մարքեթինգ, գովազդային մարտավարություն, լեզվի օգտագործում, լսարանի համոզում

Այս հոդվածն ուսումնասիրում է սոցիալական ցանցերում գովազդի լեզվական ռազմավարությունները՝ բացահայտելով արդյունավետ մարքեթինգի մարտավարությունը: Տարբեր հարթակների նմուշների վերլուծության միջոցով բացահայտվում է, թե ինչպես է լեզուն օգտագործվում մարդկանց ներգրավելու համար: Այս հետազոտությունը արժեքավոր պատկերացումներ է տալիս լեզվի և թվային գովազդի դինամիկ փոխազդեցության վերաբերյալ՝ առաջարկելով գործնական գիտելիքներ սոցիալական ցանցերի անընդհատ զարգացող տիրույթում նավարկող շուկայավարների համար:

СПАРТАК МХИТАРЯН - ЯЗЫКОВЫЕ ОСОБЕННОСТИ РЕКЛАМЫ В СОЦИАЛЬНЫХ СЕТЯХ

Ключевые слова: лингвистические стратегии, реклама в социальных сетях, вовлечение аудитории, маркетинг влияния, рекламная тактика, использование языковых техник, убеждение аудитории

В настоящей статье исследуются лингвистические стратегии рекламы в социальных сетях, раскрываются тактики эффективного цифрового маркетинга. Посредством анализа образцов рекламы, размещенной на различных платформах, автор эксплицирует характер стратегического использования языка, нацеленного на привлечение аудитории. В статье представлены также и новые тенденции в данной сфере, среди которых – пользовательский контент и маркетинг влияния. В исследовании приводятся сущностные характеристики динамического взаимодействия языка и цифровой рекламы, предлагаются практические знания, необходимые маркетологам, ориентирующимся в постоянно развивающейся сфере социальных сетей.

Ներկայացվել է՝ 19.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 03.05.2024 թ.

**ՆՇԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՍՈՂԱԿԱՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ.
«ԻՄ ՍԻՐՈՒՆ» ԳՈՎԱԶԴԴՅԻՆ ԱՐՇԱՎԻ ՕՐԻՆԱԿՈՎ**

ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏՉՅԱՆ

Համառոտագիր

Նշանագիտությունը բուռն զարգացում է ապրում՝ հետազոտողներին շնորհելով նոր գործիքակազմ՝ զննելու և վերծանելու առօրյա կյանքում գոյություն ունեցող երևույթները, հատկապես, երբ այդ երևույթները լինում են խոսքային կամ ոչ խոսքային հաղորդումներ, որոնք ներառում են երկիմաստ ուղերձներ: Այդպիսի երկիմաստ ուղերձներով հարուստ է գովազդային պաստառը, որը տեսողական փոխաբերություններով հարուստ նշանային համակարգ է: Երբեմն տեսողական պատկերն ուղեկցվում է լեզվական նկարագրությամբ: Լեզվական նկարագրությունը, որը կոչվում է նաև խոսքային հաղորդում, ամրագրում է տեսողական փոխաբերության կամ ոչ խոսքային հաղորդման իմաստը: Սակայն դեպքեր կան, երբ խոսքային և ոչ խոսքային հաղորդումները ոչ թե փոխլրացնում, այլ հակադրվում են իրար: Սույն հոդվածը փորձ է նկարագրելու այդպիսի դեպքերից մեկը՝ Ավանտայի «իմսիրուն» գովազդային արշավի երկու պաստառի օրինակով, որոնք հակասական արձագանքների են արժանացել, և այդ հակադրության պատճառը պարզելու համար նշանագիտական թարգմանությունը որպես վերանշանավորում ըմբռնելով՝ այստեղ վերծանվում է այդ երկու պաստառներում առկա տեսողական փոխաբերությունը, լեզվական նկարագրությունն ու այդտեղ պարունակվող հարանշանակությունները: Հոդվածում նշանագիտական վերլուծության միջոցով պարզվում է, որ խոսքային և ոչ խոսքային հաղորդումները հակադրվում են իրար, որն էլ առիթ է տվել, որ այդ պաստառները ոչ միանշանակ ընկալվեն հասարակության լայն զանգվածների կողմից:

Հիմնաբառեր՝ նշանագիտական թարգմանություն, տեսողական փոխաբերություն, հարանշանակություն, խոսքային և ոչ խոսքային հաղորդում, իմսիրուն:

Ներածություն

Մերօրյա իրականությունում տեսողական փոխաբերությունները դարձել են առօրյա թաղկացուցիչ մասը: Տեսողական փոխաբերությունները ամենից հաճախ հանդիպում են գովազդային արշավներում: Եվ մենք՝ սպառողներս, փորձում ենք ընկալել և ընթերցել այն իմաստները, որոնք հրամցնում են մեզ: Պատկերները երբեմն կարող են ունենալ փոխաբերական իմաստ, երբեմն էլ ուղեկցվեն լեզվական նկարագրությամբ: Այս հնարները առկա են մեծ մասամբ գովազդային հոլովակներում և պաստառներում, որոնց միջոցով սպառողներիս համոզում են գնել իրենց ապրանքը կամ ծառայությունը: Դանեզիի (1999) կարծիքով՝ «Գովազդները ստեղծում են իսկապես հետաքրքիր և հարուստ հարանշանակություններ, որոնք կարելի է վերծանել՝ նշանագիտորեն վերլուծելով գովազդային տեքստի մակերեսային պատկերանշանային և խոսքային ակնարկները (verbal cues)» (p. 223): Եվ ուրեմն, գովազդը հասկանալու համար նշանագիտության գործիքակազմը հնարավորություն է տալիս վերծանելու գովազդային պաստառում կիրառվող տեսողական փոխաբերության իմաստը և դրա հարաբերությունը լեզվական նկարագրության նկատմամբ, որն էլ կկիրառվի սույն հոդվածում՝ «Ավանտա» ընկերության «Իմսիրուն» գովազդային արշավի վերլուծության համար:

Վերանշանավորումը որպես նշանագիտական թարգմանություն

Նշանագիտությունը գիտություն է նշանների մասին: Երևի թե սա այն պարզ բացատրությունն է այս գիտակարգի, որի սահմաններն այդքան էլ հստակ գծված չեն: Նշանագիտության սահմանումը կարող է տարբեր լինել՝ կախված այն բանից, թե ինչ տեսանկյունից է դիտարկում, կամ ինչ ավանդույթի է հարում այն սահմանող հեղինակը:

Նշանագիտական ուսումնասիրությունների հետ մեկտեղ ավելանում են նաև նշանագիտության կիրառության բնագավառները: Նշանագիտությունը՝ որպես գիտակարգ, դեռևս չի գտել իր տեղը, և երևի թե սա է պատճառը, որ այն երբեմն դիտարկվում է որպես մեթոդ, իսկ երբեմն էլ՝ ինքնուրույն գիտակարգ: Օրինակ՝ Չանդլերը (2022, p. 97) կարծում է, որ չափազանց պարզ (reductive) է նշանագիտությունը սահմանել որպես տեքստերի վերլուծության և մշակութային գործունեության նկարագրություն, սակայն այն ձևավորվել ու զարգացել է որպես ազդեցիկ մեթոդաբանություն (կամ էլ գոնե՝ մեթոդաբանական գործիքների հավաքածու) կառուցվածքաբանության տեսաբանների կողմից: Գիտնականը նաև նշում է, որ «նշանագիտությունն ավելին է, քան տեքստի վերլուծության մեթոդ, քանի որ այն հնարավորություն է

տալիս ուսումնասիրելու իրականության և դրա պատկերավորմանն (representation) առնչվող խնդիրները» (Chandler, 2022, p. 9):

Մշակույթի ու թարգմանության նշանագիտական կապերն ընդգծվել են բազմաթիվ տեսաբանների կողմից, սակայն այն ավելի մեծ ուշադրության է արժանացել Տարտու-մոսկովյան նշանագիտական դպրոցի տեսաբանների աշխատություններում: Այսպես, Յու. Լոտմանի համար մտածական տարրական գործողությունը (ակտը) թարգմանությունն է, իսկ թարգմանության տարրական մեխանիզմը՝ երկխոսություն (Лотман, 2014, с. 206): Այսինքն՝ թարգմանությունը առնչվում է մարդու ուղեղի գործունեության հետ: Այս դպրոցի մեկ այլ ներկայացուցիչ Պ. Տորոպը (2008, p. 257) գրում է. «Թարգմանական նշանագիտության գոյաբանությունը (ontology) հիմնված է այն ըմբռնման վրա, որ մշակույթը շատ առումներով գործում է որպես թարգմանության մեխանիզմ, որպես միջնորդություն, և որ մշակույթում միջնորդությունը ներառում է ինչպես հաղորդակցությունը, այնպես էլ ինքնահաղորդակցությունը»: Կարելի է ասել, որ թարգմանությունն այս դպրոցի ներկայացուցիչների համար հենց մշակույթն է, կամ էլ՝ մշակույթը թարգմանության միջոցով է առկայանում, իսկ թարգմանությունը պետք է հասկանալ ամենալայն իմաստով՝ գրքից կինո, նկարից գիրք կամ կինո, ազդ, գովազդ և այլ տեսակի միջհամակարգային թարգմանություններ:

Թարգմանության նշանագիտական ասպեկտին/հայեցակերպին առաջինն անդրադարձել է կառուցվածքային լեզվաբանության Պրահայի դպրոցի ներկայացուցիչ լեզվաբան Ռոման Յակոբսոնը (1959), որն իր «Թարգմանության լեզվաբանական ասպեկտները» հոդվածում առաջարկում է թարգմանությունը բաժանել երեք տեսակի.

1. Ներլեզվական թարգմանություն կամ *վերածնակերպում* (intralingual translation or rewording), որը որևէ լեզվի խոսքային նշանների (verbal signs) մեկնությունն է նույն լեզվի այլ նշանների միջոցով,
2. Միջլեզվական թարգմանություն կամ *բուն թարգմանություն* (interlingual translation or translation proper), որը խոսքային նշանների մեկնությունն է այլ լեզվի միջոցներով,
3. Միջնշանագիտական (միջնշանակարգային, միջնշանային) թարգմանություն կամ *փոխակերպում* (intersemiotic translation or transmutation), որը խոսքային նշանների մեկնությունն է ոչ խոսքային նշանների (non-verbal) միջոցով: (ընդգծումը հեղինակինն է) (Jakobson, 1959, p. 233)

Հարկ է նշել, որ առաջինի դեպքում խոսքը որևէ լեզվի բանավոր կամ գրավոր տեքստի բովանդակության վերարտադրությունն է նույն լեզվով, երկրորդի դեպքում՝ մի բնական լեզվի բանավոր կամ գրավոր

տեքստի բովանդակության վերարտադրությունն է մի այլ բնական լեզվի միջոցներով, իսկ ահա երրորդի պարագայում՝ նշանային մի համակարգի միջոցներով արտահայտվող որևէ բովանդակության վերարտադրությունն է մեկ այլ նշանային համակարգի միջոցներով, այսինքն՝ նկարի վերարտադրումը կամ թարգմանությունը կինոյի, գրքի, պաստառի, երգի, ներկայացման և հակառակը:

Յակոբսոնի մոտեցումները թարգմանությանը, իհարկե, մինչև հիմա էլ արդիական են, չնայած, որ քննադատությունների է արժանացել: Նշենք դրանցից թերևս ամենակարևորը, օրինակ՝ Տուրին (1986, p. 1114) առաջարկում է վերանայել վերոնշյալ երեք տարբերակումը և առանձնացնել թարգմանության երկու տեսակ՝ ներնշանագիտական (intrasemiotic) և միջնշանագիտական (intersemiotic) թարգմանություն. միջնշանագիտական թարգմանությունը ենթադրում է թարգմանություն լեզվից դեպի ոչ լեզու (non-language), իսկ ներնշանագիտական թարգմանությունը բաժանում է երկու ենթատիպի՝ ներհամակարգային (intrasystemic) և միջհամակարգային (intersystemic) թարգմանությունների: Ներհամակարգային թարգմանությունը համապատասխանում է Յակոբսոնի ներլեզվական թարգմանությանը, իսկ միջհամակարգային թարգմանությունը համապատասխանում է միջլեզվական թարգմանությանը: Այստեղ հասկանալի է Տուրինի առաջարկը, քանի որ եթե լեզուն իրապես նշանային համակարգ է, որն առաջարկել է Սոսյուրը (2008, էջ 31) և գոնե չի մերժել Յակոբսոնը, ապա անհասկանալի է, թե ինչու՞ պետք է թարգմանությունը լինի միջլեզվական, ներլեզվական և միջնշանագիտական, այսինքն՝ արդյո՞ք ավելի ճիշտ չէր լինի միանգամից տարանջատել միջնշանագիտական և ներնշանագիտական թարգմանությունները, որն էլ հենց առաջարկում էր Տուրին:

Յակոբսոնի առաջարկած եզրույթը մինչև հիմա էլ գործածվում է և անընդհատ դրան փոխարինող կամ հավելվող նոր եզրույթներ են առաջարկվում: Օրինակ, տրանսկրեացիա (transcreation) եզրույթը, որը հայերեն կարելի է թարգմանել որպես ստեղծագրություն կամ էլ թարգմանական ստեղծագրություն: Այս եզրույթը ներառում է թարգմանությունը, ստեղծագործությունը և քոփիրայթինգը (Gambier, 2016, p. 902) և շատ գործածական է հատկապես գովազդային տեքստերի թարգմանության և/կամ ստեղծման ժամանակ: Իսկ Պիրսի նշանների եռատումով ոգեշնչված՝ նշանագիտական թարգմանության այլ հետաքրքիր եզրույթ է առաջարկել Դինդա Գորլեն (1994, pp. 226–227)՝ նշանաթարգմանություն (semiotranslation) և այլն:

Նշանագիտական թարգմանության այս եզրույթների բազմազանությունը փաստում է, որ երևույթն արդիական է ու

հետաքրքրություն է առաջացնում հետազոտողների շրջանում: Թերևս մշակույթի ու թարգմանության կապի մասին Էկոյի (Eco, 1976) մեկնությունն էլ բացատրում է նշանագիտական թարգմանության հանդեպ այս չմարող հետաքրքրությունը: Էկոն գրում է, որ մշակույթն անխափան շղթա է ստեղծում այդ մշակույթը կազմող միավորների միջև՝ նշաններն անընդհատ թարգմանելով այլ նշանների, սահմանումները՝ այլ սահմանումների, բառերը՝ պատկերանշանների և այլն (Eco, 1976, p. 71): Սակայն կա մեթոդաբանության խնդիր՝ նկարագրել, թե ինչպես է այդ թարգմանությունը տեղի ունենում: Երևի թե նշանագիտական թարգմանության տեսակը, որի մասին կխոսվի հաջորդիվ, ամենահարմարն է նկարագրելու, թե ինչ է տեղի է ունենում, երբ գաղափարը վերածվում է արդյունքի: Եվ խոսքը վերանշանավորման/վերաիմաստավորման (resemiotization) մասին է, որն առաջարկել է Ռիք Իդեման (2001): Վերանշանավորումը «հենց պլանավորման գործընթացի տրամաբանությունն է» (Iedema, 2001, p. 26): Իդեման շեշտում է, որ «յուրաքանչյուր վերաիմաստավորում նշանակում է մեկ նշանագիտական եղանակից (mode) տեղափոխում մեկ այլ, նրանից տարբերվող նշանագիտական եղանակ» (2001, p. 33): Վերանշանավորմանը, ըստ Իդեմայի, հետաքրքրում է, թե «ինչպես են սոցիալական գործընթացների ծավալմանը զուգընթաց նշանագիտական համակարգերը թարգմանվում մեկից մյուսը» (how semiotics are translated from one into the other as social processes unfold) (Iedema, 2003, p. 29):

Պետք է նշել, որ Իդեմայի մոդելում լեզուն երկրորդ պլան է մղվում, «այն ամենևին էլ հաղորդակցության կենտրոնը չէ» (language is not at all at the centre of all communication) (2003, p. 39): Այնուհետև գիտնականը շարունակում է, որ վերանշանավորումը բացահայտում է, թե ինչպես է նյութականն արտահայտում ժամանակակից հասարակության մշակութային և պատմական կառուցվածքը (2003, p. 50) և թե «ինչպես է իմաստը փոխվում համատեքստից համատեքստ, գործունեությունից գործունեություն կամ գործունեության մի փուլից մյուսը» (2003, p. 41):

Իդեման (2001) վերանշանավորումը բացատրում է՝ օրինակ բերելով ճարտարապետական նախագծի պլանավորումը: Գիտնականը ցույց է տալիս, թե ինչպես է նախագիծն աստիճանաբար տեղափոխվում իմաստակերտման (meaning-making) ժամանակավոր տեսակներից, ինչպիսիք են՝ խոսակցությունը և շարժումները, դեպի իմաստակերտման ավելի կայուն տեսակներ, ինչպիսիք են՝ տպագիր զեկույցները, նախագծերը և, ի վերջո, շենքերը:

Այսինքն՝ վերանշանավորումը ենթադրում է հաջորդական փուլեր, և յուրաքանչյուր փուլ ներառում է տվյալ փուլին անհրաժեշտ իմաստների

կառուցում՝ միաժամանակ հաշվի առնելով նախորդ փուլերի ընթացքում կերտված իմաստի վերաձևավորում կամ վերաիմաստավորում:

Հողվածում նշանագիտական թարգմանության հայեցակերպը հիմնվում է վերանշանավորման սկզբունքի վրա՝ հաշվի առնելով Յու. Լոտմանի մոտեցումը թարգմանությանը, որը ենթադրում է թարգմանությունն իբրև մտածական տարրական գործունեություն: Պատճառն այն է, որ սա թույլ է տալիս ավելի ճիշտ նկարագրելու այն նշանագիտական թարգմանությունները կամ տեղաշարժերը, որոնք տեղի են ունենում մարդու մտքից դեպի նախագծի վերջնական արդյունք՝ հաշվի առնելով բոլոր փուլերը և այդ փուլերին բնորոշ իմաստակերտման յուրահատկություններն ու մարտահրավերները:

Տեսողական փոխաբերությունը նշանագիտական համակարգերի կիզակետում

Արիստոտելի ժամանակներից ի վեր փոխաբերությունը դիտարկվել է որպես միտքը ստեղծագործաբար արտահայտելու միջոց: Եվ փոխաբերության վերաբերյալ ուսումնասիրությունները հիմնականում կատարվում էին փոխաբերության ընկալման, ճանաչման ու արտահայտման միջոցների ուսումնասիրման շուրջ: Մինչև 20-րդ դարի վերջերը փոխաբերությունը դիտարկվում էր իբրև զուտ լեզվական կամ խոսքային արտահայտչամիջոց, մի բան, որն արտահայտում է մեկ այլ բան՝ երբեմն զուգակցելով ընդհանրապես իրար հետ կապ չունեցող, երբեմն էլ հակադիր երևույթներ: 1980-ական թվականներից փոխաբերությունը սկսեց ուսումնասիրվել որպես ճանաչողական երևույթ, երբ լույս տեսավ Լակոֆի և Ջոնսոնի (1980) հիմնարար աշխատությունը (*Փոխաբերություններ, որոնցով ապրում ենք* [Metaphors We Live By]): Հեղինակները նշում են. «Մեծապես հիմնվելով լեզվական փաստերի վրա՝ պարզել ենք, որ մեր հասկացութային համակարգի մեծ մասը փոխաբերական բնույթ ունի. փոխաբերություններն են համակարգում, թե ինչպես ենք ընկալում, մտածում և թե ինչ ենք անում» (Lakoff & Johnson, 1980, p. 4):

Ըստ ճանաչողական մոտեցման՝ փոխաբերությունը մտքի, այլ ոչ թե լեզվի առանձնահատկություն է, և «*փոխաբերության էությունը մի բանի էության փորձընկալումն է մեկ այլ բանի էության շնորհիվ*» (ընդգծումը հեղինակներինն է) (*the essence of metaphor is understanding and experiencing one kind of thing in terms of another*)(Lakoff & Johnson, 1980, p. 5): Այս մոտեցման համաձայն՝ փոխաբերությունը մտքի գործունեության հետևանք է, այլ ոչ թե լեզվի արգասիք: Այս առումով յուրաքանչյուր մտածական ակտ կարելի է փոխաբերություն համարել,

Եթե այն որևէ բանի էությունն արտահայտում է մեկ այլ բանով՝ ստեղծելով փոխաբերական իմաստ:

Եթե ճանաչողական մոտեցմամբ փոխաբերությունը մտքի գործունեության արտաքին մասն է, ապա այստեղ ուսումնասիրության դաշտից դուրս է մնում այն, թե ինչպես է այդ մտածական գործունեությունն արտահայտվում այլ եղանակներով, որի օրինակն է տեսողական փոխաբերությունը (visual metaphor):

Տեսողական փոխաբերությունը նկարի կամ շարժանկարի միջոցով մեկ այլ իմաստի արտահայտումն է, որը կարող է նաև զուգակցվել բանավոր կամ գրավոր լեզվական նկարագրությամբ: Տեսողական փոխաբերությունը հաճախադեպ է քաղաքական ծաղրանկարներում, ֆիլմերում, գովազդերում (Forceville 1994) և այլն: Ըստ կինոգետ Քերոլի՝ (Carroll, 1996, p. 810) տեսողական փոխաբերությունների ժամանակ տեղի է ունենում տարբեր տարրերի որոշ հատվածների միաձուլում տարածքով սահմանափակված մեկ միավորի մեջ: Նմանատիպ սահմանում է տալիս նաև Գոմբրիչը (Gombrich, 1971, p. 134), երբ նկարագրում է քաղաքական գործչի դեմքի տեսողական միաձուլումը կենդանու մարմնի հետ: Իսկ ահա ըստ Ֆորսվիլի (Forceville, 1994)՝ «որպեսզի երևոյթը փոխաբերություն համարվի, այդ երկու միավորների միջև չպետք է լինեն նախկին կամ պայմանական կապեր» (p. 2):

Տեսողական փոխաբերությունը սովորաբար կազմված է երեք տարրից՝ թիրախ (target), աղբյուր (source) և հիմք (ground): Թիրախը հիմնական օբյեկտն է, որը պետք է նկարագրվի, աղբյուրն օժանդակ օբյեկտն (ancillary object) է, որի հատկանիշները փոխառվում են թիրախը նկարագրելու համար, իսկ հիմքը վերաբերում է թիրախի և աղբյուրի ընդհանրությանը, այլ կերպ ասած՝ այն հատկանիշները, որոնք ունեն և՛ աղբյուրը, և՛ թիրախը (Van Mulken et al., 2014, p. 334): Հետաքրքիր է Գալի (2022) մոտեցումը, որը նշում է, թե գրականության մեջ առկա են միայն թիրախ ու աղբյուր եզրույթները, և առաջարկում է նոր տերմին՝ առաջացող (emergent), որն առաջանում է թիրախի ու աղբյուրի միավորումից (p. x):

Հետազոտողների ուսումնասիրությունների կիզակետում է գտնվում նաև խոսքային/լեզվական (verbal) միջոցների և ոչ խոսքային (non verbal) միջոցների համադրումն ու հակադրումը տեսողական փոխաբերություններում: Լեզվական միջոցները երբեմն տալիս են նոր տեղեկություն, իսկ երբեմն էլ փոխաբերությունը դարձնում են ավելի ստեղծարար:

Ընդհանրապես խոսքային հաղորդումները (verbal messages) կարելի է դասակարգել երկու տեսակի՝ բացահայտ կամ արտակա

(explicit) և ոչ բացահայտ կամ ներակա (implicit): Բացահայտ լեզվական հաղորդումները բացատրում են տեսողական փոխաբերությունների հիմնական իմաստն ուղիղ և մանրամասնորեն, իսկ ոչ բացահայտ հաղորդումները տեսողական փոխաբերությունների հիմնական իմաստը բացատրում են վերացական, համընդհանուր և անուղղակի ձևով (Ryoo et al., 2020, p. 5):

Տեքստի ու պատկերի փոխհարաբերության ուսումնասիրություններում իր ուրույն տեղն է զբաղեցնում Ռ. Բարտի (1977) տեսությունը: Այս տեսության համաձայն՝ պատկերների իմաստը միշտ կապված է լեզվական ուղերձի/հաղորդագրության/ հաղորդման (linguistic message) հետ: Ըստ Բարտի՝ լեզվական նկարագրությունն այն միջոցներից մեկն է, որն օգնում է ամրակայել պատկերի հարանշանակությունն ու հիմնանշանակությունը, քանի որ պատկերները բազմիմաստ են (polysmeous) և ենթադրում են նշանակյալների լողացող շղթա (floating chain of signifieds) (Barthes, 1977, p. 39):

Բարտն (1977) առանձնացնում է պատկեր-տեքստ հարաբերության երեք տեսակ՝ տեքստի օժանդակ պատկեր (Anchorage), պատկերին օժանդակող տեքստ (Illustration) և երբ երկուսը հավասարազոր (Relay) են: Խարսխակալը/խարսխումը (anchorage) լեզվական ուղերձի ամենահաճախակի գործառույթն է և սովորաբար հանդիպում է մամուլի լուսանկարներում և գովազդում (Barthes, 1977, pp. 40–41):

Պատկերի և լեզվի տարբերության առումով Ռեֆային (2003, p. 84) նշում է, որ թեև լեզուն ավելի ճշգրիտ է իմաստային որոշ ոլորտներ արտահայտելու հարցում, այլ իմաստներ կարող են ավելի հեշտ և արդյունավետ արտահայտվել պատկերներով, քան բառերով: Իսկ ահա Կրեսն ու Լեուվենը (Kress & Leeuwen, 2006) կարծում են, որ հաղորդակցությունը հիմնված է նշանագիտական եղանակների (mode) անդադար թարգմանության կամ փոխկոդավորման (transcoding) հիման վրա, և, հետևաբար, խոսքային և տեսողական հաղորդումները (message) «շարունակաբար միախառնվում և փոխազդում են իրար» (they intermesh and interact at all times) (p. 41):

Նկարի ու լեզվական նկարագրության փոխհարաբերությունները միշտ էլ օգնում են ընկալել կամ ընթերցել պատկերի փոխաբերական իմաստները, իհարկե, ինչպես Բարտն է նշում, լեզուն փորձում է խարսխել (լեզվական) տեքստի ու պատկերի իմաստի մեկնությունը, սակայն անհնար է չհամաձայնել Կրեսի և Լեուվենի հետ, որ նրանք թարգմանության միջոցով անընդհատ փոխլրացնում են իրար: Երբեմն լեզվական հատվածն այնպիսի իմաստ է հաղորդում պատկերին, որի

մասին չէիր էլ մտածի, եթե կարդացած չլինեիր նկարագրությունը և հակառակը:

Նշանագիտական թարգմանությունը «Իմսիրուն» գովազդային արշավում

Նշանագիտական թարգմանության ժամանակ գաղափարը ծնվում է և անցնում տարբեր փուլերով՝ ներառելով այդ փուլերին համապատասխան առանձնահատկություններն ու համակարգով պայանավորված փոփոխությունները: Նման մի երևույթ էլ գովազդային արշավն է, որը սկսելուց առաջ կազմակերպության համապատասխան բաժինը գաղափարից փորձում է ստանալ ցանկալի արդյունք՝ վերջնական արտադրանքի տեսքով: Այս բոլոր փուլերում նախատեսվում է, որ կազմակերպությունը պետք է հաշվի առնի նաև թիրախի՝ սպառողի առանձնահատկությունները, ցանկություններն ու նաև այն հասարակությունը, որտեղ նա ապրում է: Թարգմանությունը մտքից մինչև վերջնարդյունք ենթադրում է նաև մշակութային առանձնահատկությունների հստակեցում, լեզվական տեքստի ստեղծում և համապատասխանեցում պատկերին, ինչպես նաև գույների, հնարների և այլնի ընտրություն, ինչպես նաև այս ամենի փոխաբերական իմաստի և հարանշանակությունների ամրակայում:

Սա է պատճառը, որ անդրազգային կազմակերպություններն (multinational corporation) իրենց ապրանքի գովազդը երբեմն հարմարեցնում են այն շուկային, որտեղ այդ ապրանքը պետք է վաճառվի: Հարմարեցումը լինում է թարգմանության միջոցով, երբեմն որոշ փոփոխություններ են ներառում հենց գովազդում, իսկ երբեմն էլ ամբողջովին գովազդային նոր հոլովակ կամ պաստառներ են ստեղծվում հատուկ տվյալ շուկայի համար:

Գովազդային արշավներում ամենահաճախ գործածվող հնարներից է տեսողական փոխաբերությունը, որը հաճախ զուգակցվում է խոսքային հաղորդագրությամբ, որի նպատակն է «օգնել հանդիսատեսին հասնելու ենթադրվող իմաստին (intended meaning)» (Ryoo et al., 2020, p. 1): Ռեֆային, խոսելով տեսողական փոխաբերության իմաստի կերտման մասին, նշում է, որ «Իմաստը երբեք պարզապես ներհատուկ չէ (տեսողական) տեքստին, այլ որոշվում է արտադրողների և հեռուստադիտողների կողմից» (Refaie, 2003, p. 81):

«Իմսիրուն» գովազդային արշավի ընտրությունը պայմանավորված է այն փաստով, որ այդ գովազդի պաստառները ամենուր են երևանում և հատկապես մետրոպոլիտենում, և այն բուռն քննարկումների տեղիք է տվել նաև սոցիալական հարթակներում: «Իմսիրուն» իր ինստագրամյան էջն ունի, որտեղ կարելի է տեսնել

տարբեր սեռի ներկայացուցիչներ, որոնք տարբեր տեսակի մրգեր են պահում դեմքի տարբեր հատվածներում: Վերլուծության համար երկու պաստառ ենք վերցրել՝ պայմանավորված այն փաստով, որ այդ երկուսն են մետրոպոլիտենում ներկայացված, և հենց այդ երկուսն են բուն քննարումների կիզակետում հայտնվել:



Պատկեր 1: Ավանտայի գովազդային արշավի պաստառներից երկուսը: Այս երկու գովազդային պաստառներում առկա է տեսողական փոխաբերություն և դրան զուգակցող խոսքային հաղորդում: Միայն խոսքային հաղորդումը կարդալուց հետո է հասկանալի դառնում, որ այս աղջիկները գովազդում են առողջ դեմքը:

Կիտրոնով պաստառում աղջիկն իր բերանի մեջ է ճզմում կիտրոնը, և եթե չկարդանք լեզվական հաղորդումը, ապա այն իրավացիորեն չի զուգորդվի դեմքի թարմության հետ: Ավելին, ինստագրամյան էջում այս նկարի նկարագրության տակ նշված է, որ նրա անունը Աննա է, և որ «մանուշակագույնը, կոկոսի համը և լավանդայի հոտը Աննայի համար սիրուն բառի ասոցիացաներն են»: Եվ եթե կիտրոնը չի ասոցացվում սիրունության հետ գոնե Աննայի համար, ապա ինչ է այն նշանակում այստեղ, և ինչու են ավելացրել այդ տեքստը: Այսինքն՝ առկա է պատկերի փոխաբերական իմաստի, լեզվական նկարագրության և այս պաստառի մեկնաբանության կատարյալ հակադրություն: Ավելին, կիտրոնն ունի թթվահամության, դառնության, հիասթափության հետ զուգորդվող հարանշանակություններ, ինչպես նաև կարող է խորհրդանշել շքեղություն և երկարակեցություն: Այսինքն՝ այստեղ առկա են իրար հակասող իմաստներ, և հավանականությունն էլ մեծ է, որ սպառողին կարող է ոչ միանշանակ իմաստներ հաղորդել, իսկ եթե դրան գումարում ենք աղջկա բաց բերանն ու դեմքի դիրքը, ապա պաստառը դառնում է հակասությունների կծիկ:

Ելակով աղջիկն ունի դեմքի «դատարկ» արտահայտություն և ելակը ատամներով բռնած՝ ուղիղ նայում է դեպի սպառողը: Ընդհանրապես ելակը, հատապտուղ նշանակելուց բացի, գոնե տեսողական առումով, զուգորդվում է սեռական ցանկության հետ: Ավելին, այն ժամանակին եղել

է աստվածուհի Վեներայի խորհրդանիշը և խորհդանշում էր սեր և կիրք, և այդ պատճառով ելակի տեսքով և ելակով շոկոլադները համարվում են սիրո տոնի խորհրդանիշ:

Բողոքյարը (1999) նշում է, որ «գեղեցկությունն ամբողջովին վերացականության, դատարկության, էքստատիկ բացակայության և թափանցիկության մեջ է: Այս մարմնատումն (disembodiment) ի վերջո պարփակված է հայացքի մեջ» (p. 134): Հեղինակը կարծում է, որ դատարկությունը հետմոդեռն սպառողական մշակույթի բաղկացուցիչ մասն է, և սպառողներս սիրում ենք այն, քանի որ միայն մենք ենք այն իմաստով լցնում:

Եվ եթե դատարկությունը սպառողական մշակույթի կողմն է, ապա սպառողը վերծանում է իմաստն այնպես, ինչպես կարողանում է, և գովազդային արշավի կազմակերպիչները պետք է հաշվի առնեին այս ամենը: Վերանշանավորման սկզբունքն էլ այն է, որ վերջնական իմաստը կերտվում է քննարկումների ընթացքում: Եվ յուրաքանչյուր արտադրանքի մտահղացման և ստեղծման ժամանակ պետք է հաշվի առնել այն հարանշանակությունները, որոնք կարող են զուգորդվել քննարկվող նշանակիչի հետ: Սա է թերևս պատճառը, որ գովազդը չի հասել իր նպատակին: Իհարկե, տեսողական փոխաբերությունը զուգորդվում է խոսքային նկարագրությամբ, և միայն այդ դեպքում է հասկանալի դառնում, որ խոսքը դեմքի խնամքի մասին է, սակայն այս հակադրությունն ավելի է խորանում, երբ ուսումնասիրելով պարզվում է, որ այդ մրգերը կապ չունեն գովազդի հերոսուհիների հետ, քանի որ, ինչպես նշվեց, Աննայի համար ոչ թե կիտրոնը, այլ կոկոսի համը, մանուշակագույնը և լավանդայի հոտն են հարանշանակում գեղեցկություն:

Եթե պատկերը համարում ենք նշանակիչ, ապա նշանակյալն այն իմաստներն են, որոնք զուգորդվում են մտքում, և հատկապես, որ պատկերը մեծապես փոխաբերական է: Նշանակիչը կարող է նաև լինել դատարկ, որը սահմանվում է նաև որպես լողացող նշանակիչ: Դատարկ է այն նշանակիչը, որը չունի նշանակյալ (Laclau, 2001, p. 405): Այստեղ նշանակյալը չունի հատուկ սահմանված իմաստ, և այդ նշանակիչները կարող են տարբեր մարդկանց կողմից տարբեր կերպ ընկալվել: Այն շատ գործածական է քաղաքական խոսույթում և գովազդում, որտեղ առկա է փոխաբերական իմաստի առատություն: Ավանտայի «իմսիրուն» գովազդային արշավում մրգերն ունեն փոխաբերական իմաստ, սակայն խոսքային և ոչ խոսքային հաղորդումների հակադրությունն առաջացնում է տարբեր, երբեմն հակասական իմաստներ, որն էլ առաջացրել է հասարակության մի մասի վրդովմունքը (Պատկեր 2): Սա էլ եղել է

պատճառը, որ բուռն քննարկումներ ծավալվեն: Ընդհանրապես, տեսողական փոխաբերությունը բնույթով հարացուցային է (Gal, 2022, p. 1). դա տեսանելի է «իմսիրուն»-ի դեպքում՝ նույն գաղափարը, սակայն տարբեր մրգեր և տարբեր մարդիկ, և նույնիսկ այս դեպքում հակասությունն



Պատկեր 2: Արձագանքներ «իմսիրուն» արշավի պաստառների վերաբերյալ:

այս գովազդային արշավում չի ավարտվում: Այն ավելի է սրվում, երբ դիտարկում ենք տղամարդկանց պաստառները, որոնք բարեբախտաբար սոցիալական ցանցերից դուրս չեն հայտնվել: Այստեղ կիսամերկ տղամարդիկ կա՛մ բանան են ուտում, կա՛մ էլ կիվի, կա՛մ էլ մեջտեղից կիսատ նարինջը երկու ձեռքով բռնում են կրծքավանդակի ուղղությամբ:

ԽՆՍԻՐՈՒՄ

դեմքի խնամքի փաթեթներ Ավանտայից



Պատկեր 3: Ավանտայի արշավից երկու պաստառ ևս:

Գովազդային արշավներում նշանագիտական թարգմանության հնարները կիրառվում են նախ և առաջ տեսողական փոխաբերություն ստեղծելու և լեզվական նկարագրությամբ ամրակայելու այդ փոխաբերության իմաստը, սակայն որոշ դեպքերում նշանագիտական թարգմանության ժամանակ՝ վերաիմաստավորման կամ իմաստակերտման ընթացքում, լինում են բացթողումներ, կամ էլ «սխալ հաշվարկներ», որոնք երկիմաստ

ուղերձներ են տալիս վերջնարդյունքին, կամ էլ հակադրություն է ստեղծվում խոսքային և ոչ խոսքային հաղորդումների միջև: Եվ ցանկության դեպքում նույնիսկ, «իմսիրուն»-ի պաստառներում դժվար է էրոտիկ հարանշանակություններ չնկատել (Պատկեր 3): Ուղղակի որևէ մրգի օգտակար հատկությունները փոխաբերական իմաստով ներկայացնելիս պետք է ավելի շատ կենտրոնանալ մրգի այդ հատկության վրա, քան մոդելների «դատարկ» ու արշավի գաղափարի հետ չզուգակցվող դեմքի արտահայտությանն ու փորձել ստեղծել որևէ կապ դրանց միջև:

Եզրակացություն

Նշանագիտությունը բուռն զարգացող գիտություն է, որը լայն հնարավորություն է տալիս վերլուծելու տեսողական, խոսքային և ոչ խոսքային հաղորդումները: Տեսողական փոխաբերությունը լինելով նշանագիտական տեսանկյունից հետաքրքիր երևույթ՝ հնարավորություն է տալիս նշանագիտական գործիքակազմով բացահայտելու և նկարագրելու գովազդային պաստառներն ու հոլրվակները: Վերանշանավորումը՝ որպես նշանագիտական թարգմանության մեթոդ, հնարավորություն է տալիս մանրամասն նկարագրելու տեսողական փոխաբերություններով հարուստ գովազդային պաստառները՝ գաղափարից մինչև վերջնարդյունք:

Ավանտայի «իմսիրուն» գովազդային արշավի հարացույցային պաստառների վերլուծությունը ցույց տվեց, որ երբեմն հակասություններն ու հակադրությունները տեքստի ու պատկերի, խոսքային ու ոչ խոսքային հաղորդումների միջև կարող են տարակարծությունների տեղիք տալ:

Նշանագիտական թարգմանության ժամանակ հարկավոր է հաշվի առնել ցանկացած մանրուք, որ կարող են հակասություններ առաջացնել: Իսկ հարանշանակությունները պետք է ամենայն ուշադրությամբ զննել գաղափարից մինչև վերջնական արդյունք ստանալը. միգուցե «իմսիրուն»-ի գաղափարն իրոք մրգի թարմության ու դեմքի խնամքի մասին էր, սակայն արդյունքում ստացվել է դատարկ նշանակիչ, որը տարբեր իմաստներ է ստանում սպառողների կողմից հաղորդումն ապակողավորելու ընթացքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ
REFERENCES

1. Barthes, R. (1977). The Photographic Message. In *Image-Music-Text* (pp. 15-41). Fontana.
2. Baudrillard, J. (1999). *The consumer society: Myths and structures*. SAGE publications.
3. Carroll, N. (1996). A note on film metaphor. *Journal of Pragmatics*, 26(6), 809–822.
4. Chandler, D. (2022). *Semiotics: The Basics*. Routledge.
5. Danesi, M. (1999). A note on Advertising Culture. In M. Danesi & D. Santeramo (Eds.), *The Sign in Theory and Practice* (pp. 217-225). Canadian Scholars' Press.
6. Eco, U. (1976). *A Theory of Semiotics*. Indiana University Press.
7. Forceville, C. (1994). Metaphor and Symbolic Activity. *Metaphor and Symbol*, 9(1).
8. Gal, M. (2022). *Visual Metaphors and Aesthetics*. Bloomsbury Publishing.
9. Gambier, Y. (2016). Translations| Rapid and Radical Changes in Translation and Translation Studies. *International Journal of Communication*, 10, 887-906.
10. Gideon, T. (1986). Translation. In T. Sebeok (Ed.), *Encyclopedic Dictionary of Semiotics* (pp. 1107-1124). Mouton de Gruyter.
11. Gombrich, E.H. (1971). The Cartoonist's Armoury. In Ernest H. Gombrich (Ed.), *Meditations on a Hobby Horse and Other Essays on the Theory of Art* (pp. 127-142). Phaidon.
12. Gorrée, D. L. (1994). *Semiotics and the problem of translation: With special reference to the semiotics of Charles S. Peirce*. Brill.
13. Iedema, R. (2001). Resemiotization. *Semiotica*, 2001(137), 23-39. <https://doi.org/10.1515/semi.2001.106>
14. Iedema, R. (2003). Multimodality, resemitization: extending the analysis of discourse as multi-semiotic practice. *Visual Communication*, 2(1), 29-57. <https://doi.org/10.1177/1470357203002001751>
15. Jakobson, R. (1959). On Linguistic Aspects of Translation. In R. Brower (Ed.), *On Translation* (pp. 232–239). Harvard University Press.

16. Kourdis, E. (2022). Semiotics. In F. Zanettin & C. Rundle (Eds.), *The Routledge Handbook of Translation and Methodology* (pp. 139–154). Routledge.
17. Kress, G., & Leeuwen, T. Van. (2006). *Reading Images: The Grammar of Visual Design*. Routledge.
18. Laclau, E. (2001). Why do empty signifiers matter in politics? In M. McQuillan (Ed.), *Deconstruction: A Reader* (pp. 405–413). Edinburgh University Press.
19. Lakoff, G., & Johnson, M. (1980). *Metaphors We Live by*. University of Chicago Press.
20. Refaie, E. El. (2003). Understanding visual metaphor: The example of newspaper cartoons. *Visual Communication*, 2(1), 75–95.
21. Ryou, Y., Jeon, Y. A., & Sung, Y. (2020). Interpret me! The interplay between visual metaphors and verbal messages in advertising. *International Journal of Advertising*, 40(5), 1–23. <https://doi.org/10.1080/02650487.2020.1781477>
22. Torop, P. (2008). Translation and semiotics. *Sign Systems Studies*, 36(2), 253–257. <https://doi.org/10.12697/SSS.2008.36.2.01>
23. Van Mulken, M., Hooft, A. Van, & Nederstigt, U. (2014). Finding the tipping point: Visual metaphor and conceptual complexity in advertising. *Journal of Advertising*, 43(4), 333–343.
24. Лотман Ю. (2014). *Внутри мыслящих миров*. Азбука.
Lotman Ju. (2014). *Vnutri mysljashhih mirov*. Azbuka. (in Russian)
25. Սոսյուր ֆ. դր. (2008). *Ընդհանուր լեզվաբանության դասընթաց*. Սարգիս Խաչենց-Փրինթինֆո.
Sosyowr F. dy'. (2008). *Y'ndhanowr lezvanowt'yan dasy'nt'ac*. Sargis Xachenc-P'rint'info. (in Armenian)

Էլեկտրոնային աղբյուրներ

26. <https://www.instagram.com/imsiruuuuun/> (Դիտված՝10.02. 2024):
27. <https://www.instagram.com/p/Cs6Sy9bN3oR/> (Դիտված՝11.02. 2024):
28. <https://shabat.am/am/article/315695/Metropoliteny-graqnutyanchi-entarkum-govazdnery> (Դիտված՝ 10.02. 2024):
29. <https://www.oxfordreference.com/display/10.1093/oi/authority.201>

10803095824238 (Accessed 11.02. 2024).

30. <https://artuk.org/discover/stories/lemons-and-lobsters-and-cabbages-oh-my-symbolic-food-inpainting#:~:text=The%20lemon%20has%20come%20to,emblematic%20of%20sourness%20and%20disappointment> (Accessed 13.02. 2024).
31. <https://www.allohealth.care/healthfeed/sex-education/strawberry-meaning-sexually#:~:text=Strawberries%20have%20a%20long%20history.symbol%20of%20purity%20and%20fertility> (Ἰηουνῶς 12.02. 2024) :

МКРТЫЧ МКРТЧЯН - ОСОБЕННОСТИ СЕМИОТИЧЕСКОГО ПЕРЕВОДА В ВИЗУАЛЬНОЙ КОММУНИКАЦИИ НА ПРИМЕРЕ РЕКЛАМНОЙ КАМПАНИИ "ИМ СИРУН"

***Ключевые слова:** Семиотический перевод, визуальная метафора, коннотация, вербальное и невербальное сообщение, имсирун.*

Семиотика быстро развивается, предоставляя исследователям новые инструменты для изучения и расшифровки различных явлений повседневной реальности, особенно когда эти явления представляют собой вербальную или невербальную коммуникацию, предполагающую неоднозначные сообщения. Подобные сообщения, представляющие собой богатую визуальными метафорами знаковую систему, часто встречаются на рекламных плакатах, а их визуальная часть иногда сопровождается лингвистическим описанием. Это описание, также называемое вербальным сообщением, передает значение визуальной метафоры или невербального сообщения. Однако бывают случаи, когда вербальные и невербальные сообщения не дополняют друг друга, а противоречат друг другу. В данной статье предпринята попытка описать один из таких случаев на примере двух плакатов рекламной кампании «imsirun» компании Avanta. С позиций семиотического перевода, понимаемого в качестве ресемиотизации, анализируются визуальные метафоры, лингвистическое описание и коннотации двух рекламных плакатов. Посредством семиотического анализа эксплицируется тот факт, что вербальные и невербальные сообщения могут противоречить друг другу. Это, в свою очередь, приводит к неоднозначному восприятию плакатов публикой.

MKRTICH MKRTCHYAN - PECULIARITIES OF SEMIOTIC TRANSLATION IN VISUAL COMMUNICATION: THE CASE OF "IMSIRUN" AD CAMPAIGN

Keywords: *semiotic translation, visual metaphor, connotation, verbal and non-verbal message, imsirun.*

Semiotics is developing rapidly, providing researchers with new tools to examine and decipher various phenomena in everyday reality, especially when those phenomena are verbal or nonverbal communications that include ambiguous messages. Such messages, representing a sign system rich in visual metaphors, are abundant in posters, where the visual image is sometimes accompanied by a linguistic description. This description, also called a verbal message, conveys the meaning of a visual metaphor or non-verbal message. However, there are cases when verbal and non-verbal messages do not complement each other but are opposed. Hence, this article attempts to describe one such case with the example of two posters from Avanta's "imsirun" advertising campaign. Conceiving the semiotic translation as resemiotization, two posters are analyzed with regard to the visual metaphor, linguistic description, and connotations contained in it. Using semiotic analysis, this article demonstrates that verbal and nonverbal messages contradict each other, resulting in the public's confused perception of these posters.

Ներկայացվել է՝ 26.02.2024 թ.
Գրախոսվել է՝ 05.05.2024 թ.

**ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԻՐԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐԸ «ՀԱՐՐԻ ՓՈԹԵՐԸ և ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՔԱՐԸ» ՎԵՊԻ
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾՔՈՒՄ**

ԱՆՆԱ ՇԱՀՐԱԶՅԱՆ

Համառոտագիր

Սույն հոդվածը ուսումնասիրում է «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպից դուրս քաղված հեղինակային նորաբանությունների մի խմբի՝ կախարդական իրերի անվանումների թարգմանական համարժեքության ապահովման խնդիրը: Դիտարկվում են նորաբանությունների իմաստագործաբանական առանձնահատկությունների պատշաճ փոխադրման մարտահրավերները՝ վեպի երկու հայերեն թարգմանությունների զուգադրական վերլուծության հիման վրա: Որոշ դեպքերում առաջարկվում են նորաբանությունների թարգմանության այլ, իմաստային և գործաբանական համարժեքության ապահովման տեսանկյունից ավելի նախընտրելի տարբերակներ: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ նորաբանությունների ստեղծման հիմքում ընկած հեղինակի մտադրության արտահայտման և ընթերցողի մոտ համապատասխան զուգորդումների առաջացման տեսանկյունից առավել արդյունավետ է *պատճենում* թարգմանական հնարի կիրառումը:

Հիմնաբառեր՝ հեղինակային նորաբանություն, թարգմանական հնար, իմաստագործաբանական ներուժ, համարժեքություն

Ներածություն

Համեմատաբար ժամանակակից համարվող ֆենթերզի գրական ժանրը, անշուշտ, սիրված և պահանջված է ընթերցողների շրջանում: Ֆենթերզի ժանրի բազմաբովանդակ և համապարփակ բնույթի քննություններն ու սահմանման բոլոր փորձերը կառուցվում են վերջինիս մեջ իրականության սահմանների «ոտնահարման» և երևակայական, անիրական, մոգական պատկերների ստեղծման թեզերի շուրջ: Այն սահմանվում է, օրինակ, որպես «երևակայական գեղարվեստական գրականություն, որի ազդեցությունը կախված է ծավալվող գործողությունների (ինչպես օրինակ՝ այլ աշխարհներ կամ ժամանակներ)

և կերպարների (ինչպես օրինակ՝ գերբնական և անբնական արարածներ) տարօրինակությունից (Britannica, 2023, November 15): Ռ. Ջեքսոնը գտնում է, որ գրական ֆենթորգի ժանրի հետ ամենից հաճախ զուգորդվող առանձնահատկությունը «իրականի» կամ «հնարավորի» գերակա սահմանումների համառ մերժումն է, երբեմն նույնիսկ՝ բռնի հակադրությունը (Jackson, 2009, p. 8): Ե. Կովտունը, որն իր հերթին, տարբերակում է գիտաֆանտաստիկ և հենց բուն ֆենթորգի ժանրերի միջև՝ վերջինս համարելով կախարդական ֆանտաստիկա, նշում է, որ ֆենթորգի ժանրում մշտապես ենթադրվում է այնպիսի իրականության գոյություն, որում հրաշքներ են լինում (Ковтун, 2008, с. 115): Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ ֆենթորգի գրական ժանրի հեղինակները իրենց ստեղծագործություններում պատկերում են այլ, կախարդական իրականություն, երևակայական աշխարհ, որում իրադարձություններն ու գործողությունները ծավալվում են անիրական, գերբնական կերպարների, արարածների, իրերի ու առարկաների, տեղանքների շուրջ:

Այս ամենն, իհարկե, իր ազդեցությունն ու արտահայտումն է ունենում նաև լեզվական մակարդակում, մասնավորապես՝ ֆենթորգի ժանրի հեղինակների կողմից կիրառվող բառապաշարում: Տրամաբանական է, որ հորինված կերպարները, վայրերն ու առարկաները և մի շարք այլ նորույթներ նշանակվում են նոր, հորինված բառերով: Իսկ երբ ֆենթորգի գրականության այս կամ այն ստեղծագործություն թարգմանվում է այլ լեզուներով, այս նոր լեզվական միավորները իսկական մարտահրավեր են դառնում թարգմանչի համար՝ հաշվի առնելով դրանց բառաստեղծման, իմաստային և գործաբանական առանձնահատկությունները:

Սույն հոդվածի արդիականությունը, ուստի, պայմանավորված է գեղարվեստական գրականության մեջ ֆենթորգի ժանրի պահանջարկի բարձրացման, ինչպես նաև այս ժանրին պատկանող ստեղծագործությունների թարգմանության գործընթացում մարտահրավերների մշտական առկայության հանգամանքով:

Ուսումնասիրության առարկան Ջ. Ռոուլինգի վեպում նորաբանությամբ արտահայտված կախարդական առարկաների և իրերի թարգմանության առանձնահատկություններն են: Նպատակն է բացահայտել վերջիններիս թարգմանության մեջ իմաստագործաբանական համարժեքության ապահովման խնդիրներն ու ուղիները: Այս նպատակի իրագործման համար՝ զուգահրեհական վերլուծության են ենթարկվում «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպի երկու հայերեն տարբերակները՝ Ա. Զիվանյանի և Լ. Մկրտչյանի թարգմանությամբ, մասնավորապես՝ դրանցում մոզական առարկաների նորաբանությամբ արտահայտված անվանումների

թարգմանությունները: Մասնավոր դեպքերում առաջարկվում են նորաբանությունների թարգմանության այլ, համարժեքության ապահովման տեսանկյունից առավել նախընտրելի տարբերակներ:

Հեղինակային նորաբանությունները և դրանց թարգմանության մարտահրավերները

Հայտնի է, որ լեզուն բաց համակարգ է և հեշտությամբ կարող է նոր տարրերով համալրվել, ավելին՝ յուրաքանչյուր լեզվակիր և յուրաքանչյուր մարդ կարող է բառահեղինակ դառնալ: Հայ լեզվաբաններից է Աղայանը գրում է. «Բառապաշարը լեզվի ամենահարափոփոխ մասն է» (Աղայան, 1984, էջ 167): Մի կողմից՝ **նորաբանությունների** ծագումը կարող է պայմանավորված լինել նոր երևույթների անվանման անհրաժեշտությամբ՝ կապված աշխարհի արագընթաց զարգացման, տեխնոլոգիական զարգացումների, սոցիալական տեղաշարժերի հետ, մյուս կողմից՝ նորաբանությունները կարող են ստեղծվել անհատ հեղինակների կողմից՝ արտահայտելով հեղինակի մտադրությունը, այդպես էլ չընդգրկվելով լեզվի բառապաշարում. այսպիսի բառերը կապվում են հիմնականում գրականության և գրական ստեղծագործությունների հետ: **Հեղինակային նորաբանություններն** առավել հաճախ բնորոշ են ֆենթըզի ժանրի ստեղծագործություններին, որոնցում կերտվող նոր, արտասովոր իրականության երևակայական կերպարները, արարածները, վայրերն ու առարկաները անվանման կարիք ունեն:

Ա. Ռեյը սահմանում է նորաբանությունը՝ որպես «...բառապաշարի միավոր, բառ, բառի բաղադրիչ կամ բառակապակցություն, որի իմաստը կամ նշանակիչ-նշանակյալ հարաբերությունը, որը հաղորդակցական կոնկրետ կաղապարում ենթադրում է արդյունավետ գործունեության իրականացում, նախկինում՝ լեզվի բառապաշարի զարգացման նախորդող փուլում, չի առկայացվել որպես լեզվական ձև» (Rey, 1995, p. 77): Նորաբանությունները, այդ թվում՝ հեղինակային նորաբանությունները, կարող են ստեղծվել տվյալ լեզվում կիրառական բառաստեղծման կաղապարներով, տվյալ լեզվի հումքով ու հնչյունակազմով: Դրանք կարող են կազմվել մի շարք տարբեր եղանակներով, ինչպես օրինակ՝ իմաստափոխության, փոխառության, բառաբարդման, բառաձանցման, բառակապակցության միջոցով, ինչպես նաև՝ կարող են լինել լիովին նորաստեղծ, նոր հնչյունակազմով միավորներ (Newmark, 1988; Cabré, 1999, 2009; O'Dell, 2016):

Հեղինակային նորաբանությունները, հատկապես ֆենթըզի ժանրի ստեղծագործություններում, աչքի են ընկնում վառ արտահայտված

իմաստագործաբանական ներուժով: Ի. Ս. Բաժենովայի բնորոշմամբ՝ լեզվագործաբանությունը խոսքային գործունեության այն հայեցակերպն է, որը կապված է լեզվական միջոցների գիտակցված, նպատակաուղղված ընտրության հետ՝ հասցեատիրոջ վրա առավել արդյունավետ ազդեցություն ունենալու համար՝ նրա մոտ որոշակի զգացմունքներ, մտքեր և գործողություններ խթանելու համար (Баженова, 2003, с. 108):

Սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրվող «Հարի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպում հեղինակային նորաբանություններից յուրաքանչյուրը որոշակի հաղորդակցական գործառույթ է իրականացնում: Դրանք պարզապես հորինված չեն հեղինակի կողմից՝ պայմանականորեն անվանելու այս կամ այն նշանակյալը: Յուրաքանչյուր նորաստեղծ լեզվական միավոր մանրամասնորեն կերտվել է հեղինակի կողմից՝ ընթերցողի վրա ներգործություն ունենալու նպատակով՝ ընթերցողին տվյալ միավորով անվանվող նշանակյալի վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելու, վերաբերմունք ու տպավորություն ձևավորելու նպատակով:

Հենց այս առանձնահատկություններն են, որ նորաբանությունների թարգմանության գործընթացում իսկական մարտահրավեր են դառնում թարգմանչի համար, որը, ձգտելով ապահովել իմաստագործաբանական համարժեքություն, պետք է պատշաճ կերպով մեկնի, վերհանի հեղինակի մտադրությունը, հորինված միավորների հարանշանակությունն ու գործաբանական ներուժը: Նորաբանությունների թարգմանության դժվարություններին անդրադառնում է Ֆ. Սայադին. «Նորաբանությունների թարգմանության խնդիրը թարգմանչի առջև ծառայող մարտահրավերների շարքերի ամենաբարձր հորիզոնականներում է, քանի որ այս բառերը չկան ոչ սովորական, ոչ էլ մասնագիտացված բառարաններում: Ուստի, թարգմանիչները ստիպված են պարզել նորաբանությունների իմաստը հիմնականում համատեքստի հիման վրա» (Sayadi, 2011): Շ. Իրգաշևան գրում է. «Նորաբանությունների թարգմանության հիմնական խնդիրը նոր բառի իմաստը հասկանալն է: Իրականում՝ այնպիսի նորաբանության թարգմանությունը, որի իմաստը թարգմանչին արդեն իսկ ծանոթ է, համեմատաբար ավելի պարզ խնդիր է» (Irgasheva, 2022, p. 46):

Նորաբանությունների թարգմանական խնդիրների լուծման ճանապարհին ֆենթըզի ժանրի ստեղծագործության թարգմանիչը, առավելագույն թարգմանական համարժեքության ձգտելով, թարգմանության բազմազան ռազմավարություններ է կիրառում: Այդպիսի թարգմանական հնարների համապարփակ դասակարգումներ են առաջարկում, օրինակ, Փ. Նյումարքը և Ժ. Պ. Վինեն ու Ժ. Դարբելեն:

Փ. Նյումարքը առաձնացնում է թարգմանության հետևյալ հնարները՝ *փոխանցում (transference)*, *բնականացում (naturalization)*, *մշակութային համարժեք (cultural equivalent)*, *գործառնութային համարժեք (functional equivalent)*, *նկարագրական համարժեք (descriptive equivalent)*, *հոմանիշություն (synonymy)*, *պատճենում (through-translation)*, *փոխադրում (transposition)*, *մոդուլացիա (modulation)*, *ընդունված թարգմանություն (recognized translation)*, *թարգմանական պիտակ (translation label)*, *փոխհատուցում (compensation)*, *բաղադրիչային վերլուծություն (componential analysis)*, *կրճատում և ընդլայնում (reduction and expansion)*, *վերաձևակերպում (paraphrase)*, *համադրում (couplet)*, *նշումներ (notes)* (1988, p. 81-91): Ժ. Պ. Վինեն ու Ժ. Դարբելենն տարբերակում են թարգմանության **ուղիղ (direct)** և **անուղղակի (oblique)** մեթոդները (2004, p. 84-85): **Ուղիղ** մեթոդը ներառում է *փոխառություն (borrowing)*, *պատճենում (calque)* (բառային և կառուցվածքային) և *բառացի (literal) թարգմանություն* հնարները, իսկ **անուղղակի** մեթոդը՝ *փոխադրում (transposition)*, *մոդուլացիա (modulation)*, *համարժեքություն (equivalence)* ու *հարմարեցում (adaptation)* հնարները: Ընդ որում՝ Փ. Նյումարքի դասակարգման մեջ *փոխադրում* և *մոդուլացիա* հնարները սերում են հենց Վինենի և Դարբելենի դասակարգումից, *փոխանցում* հնարը համընկնում է *փոխառության*, իսկ *մշակութային համարժեքը՝ համարժեքության* հետ, ինչպես նաև՝ երկու դասակարգումներում էլ առկա է *պատճենում* հնարը:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ ֆենթըզի ժանրի թարգմանությունը խնդրահարույց է դրանում հաճախ հանդիպող հեղինակային նորաբանությունների պատճառով, քանի որ վերջիններս սովորաբար հագեցած են իմաստագործաբանական ներուժով, արտահայտում են հեղինակի հաղորդակցական մտադրությունն ու աչքի են ընկնում յուրահատուկ կառուցվածքով:

Կախարդական իրերի անվանումների թարգմանության առանձնահատկությունները Զ. Ռոուլինգի սպեղձագործության հայերեն թարգմանվածքներում

«Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպից դուրս քաղված հեղինակային նորաբանությունները կարելի է դասակարգել տարբեր իմաստային խմբերի, ինչպես օրինակ՝ «կերպարների անուններ», «վայրեր», «կախարդական արարածներ», «իրեր և առարկաներ» և այլն: Սույն հետազոտության շրջանակներում դիտարկվում են հեղինակային նորաբանությամբ արտահայտված կախարդական իրերի անվանումները՝ 11 նորաբանություն: Վերջիններիս կազմության վերլուծության միջոցով

փորձ է արվում բացահայտել հեղինակի մտադրությունը, իմաստային և գործաբանական առանձնահատկությունները և վերլուծել այս ամենի համարժեք փոխադրումը թիրախ լեզու՝ Ա. Ջիվանյանի և Լ. Մկրտչյանի թարգմանություններում:

Կախարդների կենսակերպը չի սահմանափակվում իրերով և առարկաներով, որ մագլներն են օգտագործում իրենց կենցաղում: Մոգական աշխարհում կախարդական իրերը յուրահատուկ են՝ գերբնական գործառույթներով օժտված: Ալբուս Դամբլդորին պատկանող «**Put-Outer**» կախարդական իրը, օրինակ, ծառայում է լույսերը մարելու և վառելու համար:

Նորաբանությունը	Ա. Ջ. թարգմ.-ը	Լ. Մ. թարգմ.-ը
Put-Outer (p. 10)	կրակմարիչ (էջ 11)	անջատիչ-վառիչ (էջ 14)

Նորաբանությունը կազմվել է «put out» բային «er» գոյականակերտ ածանցի հավելման արդյունքում: «Put out» նախդրավոր բայն ունի «հանգցնել» իմաստը: Merriam Webster օնլայն բառարանը (*n.d.*) սահմանում է այն հետևյալ կերպ՝ «extinguish//put the fire out»: *Թեև «հանգցնել» իմաստով այս բայը վերաբերում է կրակը մարելուն, ոչ թե էլեկտրական կամ այլ էներգետիկ միջոցով գործարկվող լույսի/ջերմության աղբյուրներին՝ նորաբանության իմաստը այս նեղ համարժեքստեղծում պատճառաբանված է:*

Ա. Ջիվանյանի թարգմանության մեջ օգտագործվել է «**կրակմարիչ**» բառը, այսինքն՝ թարգմանությունը չի կատարվել թիրախ լեզվում նորաբանության վերստեղծման միջոցով: Հայերենի բացատրական բառարանում «կրակմարիչ» բառը սահմանվում է որպես «կրակ մարելու հակահրդեհային սարք» (Աղայան, 1976, էջ 773): Քանի որ «extinguish» և «put out» բառերը հոմանիշներ են, իսկ անգլերեն «extinguisher» բառի համարժեք հայերեն թարգմանությունը «կրակմարիչ» է, ուստի «**կրակմարիչ**» տարբերակը կիրառվել է նաև «put out» բայահիմքով կազմված «**Put-Outer**» նորաբանության համար:

Իմաստագործաբանական համարժեքության պահպանման տեսանկյունից առավել ճշգրիտ է այս դեպքում Լ. Մկրտչյանի թարգմանական տարբերակը՝ «**անջատիչ-վառիչ**», որում առարկայի անունը թիրախ լեզվում վերստեղծվել է նորաբանության միջոցով: Այստեղ ակնհայտորեն կիրառված է Փ. Նյումարքի *ընդլայնում* թարգմանական հնարը, քանի որ ավելացված է «վառիչ» բաղադրիչը, որը բացակայում է բնագրում: Այս կերպ թարգմանիչը փորձել է հաղորդել տեղեկատվություն առարկայի գործառույթային բոլոր կիրառությունների վերաբերյալ. բանն այն է, որ վերջինիս միջոցով հնարավոր է անջատել լուսավորությունը,

այն, կարծես, պահեստավորել և հետո նորից միացնել: Թեև թարգմանության այս տարբերակը չի առաջացնում իմաստի շփոթմունք կրակմարիչի հետ և, կարծես, շեշտադրում է այն փաստը, որ խոսքն այստեղ էլեկտրականության մասին է, մենք կառաջարկենք խուսափել *ընդլայնում* հնարից և նորաբանությունը համարժեքորեն փոխանցել, պարզապես, որպես «անջատիչ», քանի որ բնագրային տարբերակում ևս առարկայի մի գործառույթն է արտահայտված միայն, այն է՝ անջատելու գործառույթը:

Կախարդական աշխարհը, ևս, զերծ չէ գնելու և վաճառելու առօրեական գործընթացներից: Միակ տարբերությունն այն է, որ մոզական իրականությունում պետք է կախարդական արժույթով վճարել:

«**Galleon**», «**Sickle**», «**Knut**» փողերի տեսակներից յուրաքանչյուրը նորաբանություն է: Դրանցով արտահայտված թե՛ նշանակիչը և թե՛ նշանակյալը հեղինակի հորինվածքն են և գործածվում են կախարդական աշխարհում միայն: Դրանց արժողությունը նվազում է «**Galleon**»-ից «**Sickle**», «**Sickle**»-ից «**Knut**» հերթականությամբ, ընդ որում՝ «**Galleon**»-ը ոսկի է, «**Sickle**»-ը արծաթ և «**Knut**»-ը՝ բրոնզ:

Փողային այս նորաբանություններից «**Galleon**»-ը (€), օրինակ, իմաստափոխության արդյունքում է ստեղծվել, քանի որ լեզվում կոնկրետ նշանակություն ունեցող բառը ձեռք է բերել նոր նշանակություն:

Նորաբանությունը	Ա. Զ. թարգմ.-ը	Լ. Մ. թարգմ.-ը
Galleon (p. 81)	գելիոն (էջ 86)	գալեոն (էջ 101)

Merriam Webster ծնլայն բառարանը (*n.d.*) սահմանում է այն՝ որպես «a heavy square-rigged sailing ship of the 15th to early 18th centuries used for war or commerce especially by the Spanish»: Իմաստագործաբանական տեսանկյունից որոշակի պատճառաբանվածություն կարելի է նկատել կապված այն փաստի հետ, որ «**Galleon**» տեսակի նավերը օգտագործվում էին առևտրական նպատակներով:

Ա. Զիվանյանի թարգմանության մեջ այն փոխառված՝ հնչյունադարձված է, մինչդեռ Լ. Մկրտչյանի տարբերակում նորաբանությունը տառադարձված է՝ «**գալեոն**»: Այնուամենայնիվ, հայերեն աղբյուրներում կարելի է հանդիպել հենց «**գալեոն**»՝ նավ, տառադարձված տարբերակը: Քանի որ բառը նավի տեսակի անվանում է և այլ լեզուներում ևս տառադարձվում կամ հնչյունադարձվում է, կարելի է համարել, որ իմաստագործաբանական ազդեցությունը այս դեպքում պահպանված է:

Արձաթյա մետաղադրամ «**Sickle**»-ը, ևս, իմաստափոխության արդյունքում է ստեղծված:

Նորաբանությունը	Ա. Զ. թարգմ.-ը	Լ. Մ. թարգմ.-ը
Sickle (p. 81)	սիքլ (էջ 86)	սիքել (էջ 101)

Merriam Webster բառարանում (n.d) տրված է վերջինիս հետևյալ սահմանումը՝ «an agricultural implement consisting of a curved metal blade with a short handle fitted on a tang»: Սա մանգաղ գործիքն է: Ըստ նշված բառարանի՝ այն ծագում է լատիներեն «secare»՝ «to cut»՝ կտրել, հատել բառից: Իսկ մետաղադրամները, ինչպես գիտենք, հատում են, և ունենք անգլերեն «to cut coins» արտահայտությունը: Մյուս կողմից՝ այս մետաղադրամներից յուրաքանչյուրի համար Զ. Ռոուլինգը նաև խորհրդանշաններ է ձևավորել, և եթե ուշադիր զննենք հենց «Sickle»-ի խորհրդանշանը, ապա կտեսնենք որ այն կիսալուսնաձև, մանգաղի տեսք ունի (☾)

Հայերեն թարգմանության երկու տարբերակներում այս նորաբանությունը, ևս, հնչյունադարձվել է՝ «սիքլ» (Ա. Զիվանյան) և «սիքել» (Լ. Մկրտչյան): Որպեսզի թիրախ լեզվի հասցեատերը ունենար նույն իմաստագործաբանական ընկալումը, ինչ աղբյուր լեզվի ընթերցողը, նորաբանությունը թիրախ լեզու կարելի էր փոխանցել հենց համարժեք թարգմանությամբ՝ մետաղադրամը «մանգաղ», «մարանդի» անվանելով: Սակայն, հաշվի առնելով, որ այս շարքի նախորդ և հաջորդ նորաբանությունների դեպքում ընդունելի ենք համարում վերջիններիս հնչյունադարձված կամ տառադարձված տարբերակները, հետևողականության նկատառումներով՝ այս դեպքում ևս նախընտրելի է նորաբանության թարգմանությունը *հնչյունադարձման* միջոցով:

Հաջորդ մետաղադրամի անվանման՝ «Knut» բառի ծագումը մի փոքր ավելի խնդրահարույց է:

Նորաբանությունը	Ա. Զ. թարգմ.-ը	Լ. Մ. թարգմ.-ը
Knut (p. 81)	քնուֆ (էջ 86)	նաթ (էջ 101)

Նորաբանությունը կա՛մ պարզապես նորաստեղծ բառ է, կա՛մ հեղինակը այն ստեղծել է «Canute the Great» կամ, այլ կերպ անվանվող, «Knut the Great» թագավորի անվան զուգորդմամբ: Հավանական է նաև, որ նորաբանության հիմքում «nut»՝ «մանեկ, պնդօղակ» բառն է: Այդ դեպքում այն իմաստափոխության արդյունքում է ստեղծվել՝ ձևային նմանության հիման վրա: Մետաղադրամի խորհրդանիշը՝ ☸, կարծես հաստատում է այս պնդումը: Բացի այդ, հետաքրքրական է նաև նորաբանության արտասանությունը, քանի որ եթե առաջնորդվեինք անգլերենի արտասանության կանոններով, ապա «K» հնչյունը համր կլիներ, իսկ իրականում այն արտասանվում է որպես «ca-nuts»:

Ա. Զիվանյանի թարգմանության մեջ նորաբանությունը տառադարձված է, մինչդեռ Լ. Մկրտչյանն այն հնչյունադարձել է՝ հետևելով անգլերենի արտասանության կանոններին («նաթ»): Հաշվի առնելով նորաբանության իմաստագործաբանական ներուժի խորքայնությունը՝ հայերենում այն վերստեղծելը տրամաբանական չէր լինի, ուստի *տառադարձումն* այս դեպքում ամենից խելամիտ ընտրությունն է՝ վերջինիս փոխանցման համար:

Զ. Ռուսլինգի ստեղծագործության հանճարը, անշուշտ, այն բոլոր մանրուքների, տարրերի ու բաղադրիչների մեջ է, որոնցով հեղինակը կերտել է ֆենթըզիի այս իրականությունը ու այդչափ հագեցած ու պատկերավոր հանձնել ընթերցողին: Այստեղ մոգական են կախարդների ու վիուկների կյանքին առնչվող բոլոր տարրերն ու իրերը: «**Daily Prophet**» է անվանվում մոգերի աշխարհում հայտնի լրագիրը, որին առաջին անգամ ծանոթանում ենք «Հարրի Փոթերը և Փիլիսոփայական քարը» գրքի հինգերորդ գլխում:

Նորաբանությունը	Ա. Զ. թարգմ.-ը	Լ. Մ. թարգմ.-ը
Daily Prophet (p. 69)	Դեյլի փրոֆիթ (էջ 74)	«Մարգարե» օրաթերթ (էջ 84)

Կազմության տեսանկյունից՝ նորաբանությունը բառակապակցություն է: Իմաստային տեսանկյունից՝ այն որոշակի բեռնվածությամբ է աչքի ընկնում, քանի որ ընթերցողի մոտ առաջացնում է համապատասխան մտազուգորդումները լրագրի, լուրերի հետ: Հեղինակը ստեղծել է նորաբանությունը «Daily News», «Daily Mail» և լրագրերին հատուկ այլ անունների կաղապարով: Միևնույն ժամանակ, այն աչքի է ընկնում որոշակի մոգական երանգով, քանի որ «prophet» բառն ունի «գուշակ, մարգարե» իմաստները:

Հայերեն թարգմանության Ա. Զիվանյանի տարբերակում իմաստագործաբանական այս ազդեցությունը կորսված է՝ հնչյունադարձման եղանակով թարգմանության պատճառով, ինչն այնուամենայնիվ տրամաբանական է, քանի որ լրագրերի, ամսագրերի անունները հիմնականում ընդունված է թարգմանել հենց հնչյունադարձման միջոցով, ինչպես օրինակ՝ «Նյու Յորք Թայմզ», «Դեյլի Մեյլ», «Գարդիան» և այլն: Իմաստագործաբանորեն առավել համարժեք է այս դեպքում Լ. Մկրտչյանի թարգմանությունը ««Մարգարե» օրաթերթ», որում, ակնհայտորեն, թարգմանչուհին կիրառել է պատճենում թարգմանական հնարը՝ փոխադրելով յուրաքանչյուր բաղադրիչը առանձին-առանձին. «Prophet»՝«Մարգարե» և «Daily»՝ «օրաթերթ»:

Վեպի ամենաուշագրավ դրվագներից մեկը աշակերտների բաշխումն է Հոգվորթսի ֆակուլտետներում: Հոգվորթսի աշակերտներից

յուրաքանչյուրը մասնակցում է բաշխման այս լարված արարողությանը, որով էլ հենց որոշվում է նրանց հետագա ճակատագիրը, այն, թե որ ֆակուլտետում են անցկացնելու ուսումնառության իրենց տարիները: Իսկ այդ որոշումը կայացվում է հերթական հեղինակային նորաբանությամբ արտահայտված՝ «**Sorting Hat**» գլխարկի միջոցով:

Նորաբանությունը	Ա. Զ. թարգմ.-ը	Լ. Մ. թարգմ.-ը
Sorting Hat (p. 125)	բաշխիչ գլխարկ (էջ 130)	Տեսակավորող գլխարկ (էջ 157)

Առաջին հայացքից «**Sorting Hat**» կապակցության մեջ չկա որևէ նոր, անծանոթ, հորինված բաղադրիչ կամ բառ, այնուամենայնիվ, բառակապակցությունը հեղինակային նորաբանություն է, քանի որ նշանակում է մի առարկա, որը փոթերյան ֆանտաստիկ իրականությանն է պատկանում և օժտված է կախարդական, գերբնական հատկանիշներով: Խոսող այս գլխարկը, հայտնվելով Հոգվորթսի աշակերտների գլխին, վեր է հանում այն հատկանիշները, որոնք թույլ են տալիս վերջիններիս համապատասխան ֆակուլտետներում բաշխել:

Բառակապակցությամբ արտահայտված նորաբանությունը հայերեն տեքստում փոխանցված է պատճենման միջոցով՝ թե՛ Ա. Զիվանյանի, թե՛ Լ. Մկրտչյանի թարգմանություններում: Առաջին դեպքում դրա բաղադրիչները թարգմանվել են որպես «**բաշխիչ գլխարկ**», իսկ երկրորդ դեպքում՝ որպես «**Տեսակավորող գլխարկ**»: Թե՛ «բաշխիչ» և թե՛ «տեսակավորող» բառերը համարժեքորեն փոխանցում են «**sorting**» բառի նշանակությունը, իսկ նորաբանության թարգմանությունը, իմաստագործաբանական համարժեքության ապահովման տեսանկյունից, հաջողված է:

Վեպում հետաքրքրաշարժ հորինվածքների մի ստվար մասն են կազմում հմայաթուրմերի, դրանց պատրաստման բաղադրիչների անվանումներն ու դրանց կազմության առանձնահատկությունները: Այս թուրմերի շարքին է դասվում «**Draught of Living Death**» թուրմը:

Նորաբանությունը	Ա. Զ. թարգմ.-ը	Լ. Մ. թարգմ.-ը
Draught of Living Death (p. 147)	Կենդանի մեռելների ըմպելիք (էջ 152)	Կենդանի մահվան թուրմ (էջ 188)

Թուրմը խմողները այնպիսի խոր քուն են մտնում, որ մահացած են թվում: Այստեղից էլ ծագում է վերջինիս անվանումը: Այս նորաբանությունը ևս բառակապակցությամբ է արտահայտված: «**Draught**» բառի համատեքստային համապատասխան

թարգմանությունները կարող են լինել «կում, ումպ» և «հեղուկ դեղի դոզա» (Ասմանզույան, 2004, էջ 281), այնուամենայնիվ, այն թարգմանված է որպես «ըմպելիք»՝ Ա. Ջիվանյանի տարբերակում և որպես «թուրմ»՝ Լ. Մկրտչյանի տարբերակում:

Ինչպես տեսնում ենք, նորաբանության թարգմանությունների մեջ միաժամանակ կիրառված են թարգմանական երկու հնարներ: Մի կողմից՝ բառակապակցությունը *պատճենման* միջոցով է թարգմանված, քանի որ բառակապակցության բաղադրիչները առանձին-առանձին փոխանցված են թիրախ լեզու, մյուս կողմից՝ այդ բաղադրիչները ինչ-որ չափով *մոդուլացիայի* են ենթարկված, ինչպես օրինակ՝ ումպ-ըմպելիք-թուրմ բառի դեպքում ամբողջը մասի փոխարեն է կիրառված, իսկ Ա. Ջիվանյանի տարբերակում, նաև մահ-մեռելներ բառի դեպքում՝ երևույթի փոխարեն հանդես է գալիս այն կրողը: Առավել հավատարիմ մնալով բնագրին՝ մենք կառաջարկեինք նորաբանություն-բառակապակցությունը թարգմանել միայն *պատճենման* կիրառմամբ, ինչպես օրինակ՝ «**Կենդանի մահվան ումպ**», որը պատշաճ կլիներ, նաև, իմաստագործաբանական համարժեքության պահպանման տեսակյունից:

Կախարդական իրերի շարքում մեկ այլ հորինվածք է «**Remembrall**» անունով գնդիկը:

Նորաբանությունը	Ա. Ջ. թարգմ.-ը	Լ. Մ. թարգմ.-ը
Remembrall (p. 155)	հուշագնդիկ (էջ 160)	Ամենանմոռուկ (էջ 197)

Այն դյուրին կիրառություն ունի, և անհրաժեշտ է պարզապես ձեռքում պահել, և դրանում լցված փոշին անմիջապես կարմիր գույն կստանա այն դեպքում, եթե նա, ով ձեռքում պահում է գնդիկը, ինչ-որ բան է մոռացել: Հիշելուն պես վերջինս նորից վերադառնում է իր նախկին վիճակին, և փոշին կորցնում է կարմիր երանգը:

Նորաբանության կառուցվածքի գնությունը թույլ է տալիս բացահայտել դրա իմաստագործաբանական առանձնահատկությունները: Մասնավորապես՝ այն կազմվել է «remember» և «ball» բաղադրիչների միաձուլման արդյունքում: Այնուամենայնիվ, կարող ենք առաջ քաշել մեկ այլ վարկած ևս, ըստ որի՝ բառը ոչ թե «remember» և «ball» բաղադրիչների միաձուլումն է, այլ «remember» և «all» բառերից կազմված բարդ բառ, ընդ որում՝ «remember» բառի «e» հնչյունը սղվել է: Սա նույնպես տրամաբանական է, քանի որ գնդիկը թույլ է տալիս հիշել այն ամենը, ինչ մոռացել ես, սակայն առավել հակված ենք առաջին տեսությանը, որում բառի կազմության հիմքում հենց «ball»՝ գնդիկ բառն է՝ հաշվի առնելով առարկայի կառուցվածքը:

Ա. Ջիվանյանի թարգմանության տարբերակում նորաբանությունը փոխադրված է պատճենման միջոցով, քանի որ, ըստ էության, բարդ բառի բաղադրիչները առանձին-առանձին պատճենված են թիրախ լեզու՝ հաշվի առնելով թիրախ լեզվի բառակազմության կանոնները: Հայերենում՝ «հուշ» և «գնդիկ» ձևայինները կցվել են «ա» հոդակապի միջոցով: Այս տարբերակում առկա է նաև փոխատեղում հնարը, քանի որ առաջին ձևային դեպքում նաև խոսքիմասային փոփոխություն է տեղի ունեցել, մասնավորապես՝ «remember» բայը փոխարինվել է «հուշ» գոյականով:

Լ. Մկրտչյանի տարբերակում՝ «Ամենանոռուկ», կարծես հիմք է ընդունվել բառի ստեղծման վերաբերյալ երկրորդ վարկածը, ըստ որի այն ծագում է «remember» և «all» ձևայինների միաձուլումից: Այս դեպքում ևս թարգմանության հիմքում միաժամանակ մի քանի հնարներ են ընկած: Ընդհանուր առմամբ, այստեղ էլ նորաբանությունը թարգմանվել է պատճենման միջոցով, սակայն «remember» ձևային դեպքում առկա են նաև փոխատեղման և մոդուլյացիայի կիրառություններ, քանի որ մի կողմից՝ այստեղ ևս բայը փոխարինվել է գոյականով, իսկ մյուս կողմից՝ նկատելի է տեսակետի փոփոխություն՝ մոդուլյացիա, մասնավորապես՝ «remember»՝ «հիշել» բառը փոխարինվել է վերջինիս հականիշի՝ «մոռանալ» բառի արմատով և «ան» ժխտական նախածանցով: Բառի ծագման վերաբերյալ երկու վարկածներով էլ առաջնորդվելով՝ թարգմանչուհիներին հաջողվել է պահպանել նորաբանության իմաստագործաբանական բեռնվածությունը: Այնուամենայնիվ, առավել նախընտրելի է այս դեպքում Ա. Ջիվանյանի տարբերակը, քանի որ Լ. Մկրտչյանը կիրառել է «անմոռուկ» միավորը, որը հայերենում բացառապես «խոտաբույսի տեսակ» նշանակությունն ունի և կարող է թյուրըմբռնման պատճառ դառնալ:

Ջ. Ռոուլինգի մտադրության ապակողավորումը, սակայն, նույնչափ դյուրին չէ հաջորդ նորաբանություն-հորինվածքի՝ Քվիդիչ կախարդական սպորտում օգտագործվող «**Quaffle**» գնդակի անվան դեպքում: Դրա կազմության վերաբերյալ չկան ո՛չ հասանելի մեկնաբանություններ հեղինակի կողմից, ո՛չ էլ ակնհայտ փաստեր՝ պնդելու, թե արդյոք այն պարզապես նորաստեղծ բառ է, թե ծագում է արդեն իսկ գոյություն ունեցող բառից կամ բառահիմքից:

Նորաբանությունը	Ա. Ջ. թարգմ.-ը	Լ. Մ. թարգմ.-ը
Quaffle (p. 179)	քվոֆլ (էջ 183)	Բրդուն (էջ 227)

Միակ վարկածը, որ հնարավոր է առաջ քաշել կապված նորաբանության կազմության հետ, այն է, որ վերջինս ծագում է «quaff» բառից, որը սահմանվում է հետևյալ կերպ՝ «մեծ կումերով՝ մի շնչով խմել» (Ասմանգույան, 2004, էջ 750): Այս գործընթացը հիշեցնում է Քվիդիչ խաղի էությունը, որում խաղացողները պետք է գնդակը անցկացնեն օղակի միջով, ինչը կարծես մեծ կում է հիշեցնում: Հենց այս զուգորդումն է թույլ տալիս եզրակացնել, որ «**Quaffle**» նորաբանությունը ածանցված բառ է, որը ծագում է «quaff» բառի և «le» վերջածանցի համադրումից: Այնուամենայնիվ, քանի որ չկան բավարար հիմքեր՝ պնդելու, որ այն ծագում է հենց վերոնշյալ բառից, նորաբանությունը համարում ենք նորաստեղծ բառ:

Ա. Ջիվանյանի թարգմանության մեջ նորաբանությունը հնչյունադարձված է, ինչը տրամաբանական է՝ հաշվի առնելով նորաբանության իմաստագործաբանական ներուժի բացահայտման անհնարինությունը, մինչդեռ Լ. Մկրտչյանը կիրառել է «**Բրդուճ**» տարբերակը, օգտագործել է թիրախ լեզվի մշակութային հասկացություն՝ հավանաբար ելնելով նշանակյալների ձևային նմանությունից, ինչը կարող է թյուրընկալումների հանգեցնել:

Քվիդիչում օգտագործվող հաջորդ գնդակը «**Golden Snitch**» կամ, ինչպես այն հաճախ անվանում են, պարզապես «**Snitch**»-ն է:

Նորաբանությունը	Ա. Ջ. թարգմ.-ը	Լ. Մ. թարգմ.-ը
Snitch (p. 181)	սնիչ (էջ 185)	Բանբեր (էջ 229)

Նորաբանության կազմության վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել այն իմաստագործաբանական զուգորդումները, որ վերջինս առաջացնում է ընթերցողի մոտ: Այսպես՝ անգլերենում գոյություն ունի «snitch» բայը, որը Merriam Webster առցանց բառարանում (n.d.) սահմանվում է որպես՝ «to take by stealth», այլ կերպ ասած՝ այն նշանակում է «հափշտակել»: Սա սերտորեն կապվում է այն փաստի հետ, որ «**Snitch**» նորաբանությունը նշանակում է մի առարկա, որն անընդհատ հափշտակում են:

Ա. Ջիվանյանը թարգմանել է նորաբանությունը *փոխանցման հնչյունադարձման* միջոցով. արդյունքում՝ իմաստային զուգորդումը անգլերեն «snitch» բայի հետ չի փոխանցվել: Ինչ վերաբերում է Լ. Մկրտչյանի թարգմանությանը («**Բանբեր**»), այստեղ թարգմանչի մտադրության մեկնությունը փոքր-ինչ խրթին է, քանի որ «բանբեր, լրագիր, լրաբեր» զուգորդումները նորաբանությունը, կարծես, առաջ չի բերում: Այս տարբերակը, հավանաբար, թարգմանչի անձնական,

անհատական զուգորդումների և պատկերացումների հիման վրա է ծնունդ առել: Խաղի էությունը այս առարկայի անվանմամբ ինչ-որ չափով արտացոլելու հեղինակի դիտավորությանը հավատարիմ մնալով՝ առաջարկում ենք նորաբանության թարգմանության «որս» տարբերակը:

Նորաբանությամբ արտահայտված կախարդական առարկաների և իրերի շարքը եզրափակվում է գաղտնի սենյակում պահված «**mirror of Erised**» հայելու անվանմամբ:

Նորաբանությունը	Ա. Զ. թարգմ.-ը	Լ. Մ. թարգմ.-ը
mirror of Erised (p. 229)	Գափափի հայելի (էջ 231)	Իրենքնազարե հայելի (էջ 287)

«**Mirror of Erised**» հեղինակային նորաբանությունը աչքի է ընկնում կազմության տեսանկյունից: Առաջին հայացքից՝ «Erised» բառը նորաստեղծ միավոր է թվում, որը նախկինում լեզվում ոչ մի կերպ չի առկայացվել: Սակայն ավելի ուշադիր զննության արդյունքում նկատում ենք, որ այն անգլերեն «Desire» բառի հետադարձ ուղղությամբ ընթերցվող տարբերակն է: Նորաբանության այս կաղապարում Զ. Ռոուլինգը թաքցրել է այն կարևոր հաղորդագրությունը, որ հայելին արտացոլում է յուրաքանչյուրի «երազանքը, փափագը»: Իսկ հայելու շրջանակի վրա փորագրված նախադասությունը՝ «Erised stra ehru oyt ube cafru oyt on wohsi» ոչ այլ ինչ է, քան «I show not your face but your heart's desire» նախադասության շրջուն տարբերակը:

Հայերեն թարգմանվածքի Ա. Զիվանյանի տարբերակում «գափափ» բառը «փափագ» բառի շրջուն տարբերակն է: Ուստի, կարելի է պնդել, որ նորաբանությունը թարգմանված է *պարծենման* միջոցով: *Պարծենման* հնարն է կիրառված նաև Լ. Մկրտչյանի տարբերակում, որտեղ «Իրենքնազարե» բառը «երազանքներ» բառի շրջուն տարբերակն է: Բացի *պարծենումից*, այս տարբերակում ակնհայտ է նաև *փոխադրեղման* կիրառումը, քանի որ եզակի թվում «desire» բառը փոխանցվել է որպես «երազանքներ»: Հեղինակի մտադրության փոխանցման և համարժեքության ապահովման տեսանկյունից՝ թարգմանության երկու տարբերակներն էլ հավասարապես ընդունելի են:

Եզրակացություն

Զ. Ռոուլինգի «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպում, այսպիսով, հեղինակային նորաբանությունները դասակարգվում են տարբեր իմաստային խմբերի: Վեպից դուրս քաղված 11 նորաբանություններ պատկանում են «Կախարդական իրեր» իմաստային խմբին: Այս միավորների զննությունը թույլ է տալիս բացահայտել

կազմության այն կաղապարները, որ ընկած են նորաբանությունների ստեղծման հիմքում, ինչպես նաև՝ մեկնել դրանց հիմքում ընկած հեղինակի մտադրությունը, իմաստային պատճառաբանվածությունն ու իմաստագործաբանական բեռնվածությունը: Վերոբերյալ 11 նորաբանություններից իննի դեպքում հեղինակի հաղորդակցական մտադրությունն ակնհայտ է դառնում վերջիններիս կառուցվածքի մանրամասն վերլուծության արդյունքում: Երկու նորաբանությունների դեպքում, միայն, իմաստագործաբանական ներուժը ենթադրվում է. այն վառ արտահայտված չէ, ուստի անհնար է վստահ պնդումներ անել դրանց պատճառաբանվածության և հեղինակի մտադրության վերաբերյալ:

Հաշվի առնելով ուսումնասիրվող ստեղծագործությունում հեղինակային նորաբանությունների, մասնավորապես՝ «Կախարդական իրեր» իմաստային խմբի միավորների իմաստագործաբանական առանձնահատկությունները, դրանց համարժեք փոխադրումը այլ լեզուներ լուրջ մարտահրավեր է ներկայացնում թարգմանչի համար: Վերջիններիս՝ Ա. Զիվանյանի և Լ. Մկրտչյանի հայերեն թարգմանությունների զուգադրական վերլուծությունը ցույց է տալիս թիրախ լեզվում համարժեքության ապահովման, ինչպես նաև իմաստագործաբանական ներուժի կորսման դեպքեր: Այսպես, Ա. Զիվանյանի թարգմանությունում հայտնաբերվում են *բառացի թարգմանության՝* մեկ, *փոխառության* կամ *փոխանցման՝* վեց (*հնչյունադարձում՝* հինգ և *դառադարձում՝* մեկ), *պատճենման՝* երկու և *համադրման՝* երկու (*պատճենում+մոդուլյացիա՝* մեկ, *պատճենում+փոխադրում՝* մեկ) դեպքեր: Ինը նորաբանություններից, որոնց դեպքում իմաստագործաբանական բեռնվածությունը հնարավոր է եղել հայտնաբերել, հինգի թարգմանության արդյունքում այն համարժեքորեն փոխանցվել է թիրախ լեզու: Այս հինգ դեպքերից չորսում կիրառված է *պատճենում* և մեկ դեպքում՝ *հնչյունադարձում*: Լ. Մկրտչյանի թարգմանությունում առկա են *փոխառության* կամ *փոխանցման* երեք (*հնչյունադարձում՝* երկու և *դառադարձում՝* մեկ), *պատճենման* երեք, *ընդլայնման՝* մեկ, *համադրման՝* երկու (*պատճենում+մոդուլյացիա՝* մեկ, *պատճենում+մոդուլյացիա +փոխադրում՝* մեկ) և երկու լիովին անհամարժեք թարգմանության դեպքեր: Ինը նորաբանություններից, որոնց դեպքում իմաստագործաբանական բեռնվածությունը հնարավոր է եղել հայտնաբերել, վեցի թարգմանության արդյունքում այն համարժեքորեն փոխանցվել է թիրախ լեզու: Այս վեց դեպքերից հինգում կիրառված է *պատճենում* և մեկ դեպքում՝ *դառադարձում*:

Վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող նորաբանությունների թարգմանության մեջ, համարժեքության ապահովման տեսանկյունից, ամենից արդյունավետ հնարը *պատճենումն* է, քանի որ այն թույլ է տալիս առանձին-առանձին համարժեքորեն փոխանցել նորաբանությունների բաղադրիչները՝ պահպանելով իմաստային առանձնահատկությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Աղայան Է. Բ. (1976), Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1642 էջ:
Aghayan E. B. (1976), Ardi hayereni bacatrakan bar'aran, Erevan, «Hayastan» hrat., 1642 e'j: (In Armenian)
2. Աղայան Է. Բ. (1984), Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 372 էջ:
Aghayan E. B. (1984), Y'ndhanowr & haykakan bar'agitowt'yown, Erevan, EPH hrat., 372 e'j: (In Armenian)
3. Ասմանգուլյան Հ.Ա., Հովհաննիսյան Մ.Ի. (Խմբ), (2004), Անգլերեն-հայերեն բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1144 էջ:
Asmangowlyan H.A., Hovhannisyan M.I. (xmb), (2004), Angleren-hayeren bar'aran, Erevan, «Hayastan» hrat., 1144 e'j: (In Armenian)
4. Ռոուլինգ Ջ.Ք. (2018), Հարրի Փոթերը և Փիլիսոփայական քարը, Ալ. Ջիվանյան (Թարգմ.), Երևան, «Զանգակ» հրատ., 336 էջ:
R'ooling J.Q. (2018), Harri P'ot'ery' & P'ilisop'ayakan qary', Al. Jivanyan (T'argm.), Erevan, «Zangak» hrat., 336 e'j: (In Armenian)
5. Ռոուլինգ Ջ.Ք. (2004), Հարրի Փոթերը և Փիլիսոփայական քարը, Լ. Մկրտչյան (Թարգմ.), Երևան, Մեդիանեթ ՍՊԸ, 416 էջ:
R'ooling J.Q. (2004), Harri P'ot't'ery' & P'ilisop'ayakan qary', L. Mkrtchyan (T'argm.), Erevan, Medianet' SPY', 416 e'j: (In Armenian)
6. Баженова И.С. (2003). Эмоции, прагматика, текст. Монография. Москва. Менеджер, 392 с.
Bazhenova I.S. (2003). Jemocii, pragmatika, tekst. Monografija. Moskva. Menedzher, 392 s. (In Russian)
7. Ковтун Е. Н. (2008). Художественный вымысел в литературе XX века. Учебное пособие. Москва. Высшая школа, 484 с.
http://slavcenteur.ru/Proba/Kovtun/kovtun_vymysel.pdf
(Accessed 10.03.2024).

- Kovtun E. N. (2008). Hudozhestvennyj vymysel v literature HH veka. Uchebnoe posobie. Moskva. Vysshaja shkola, 484 s. (In Russian) http://slavcenteur.ru/Proba/Kovtun/kovtun_vymysel.pdf (Accessed 10.03.2024).
8. Cabré, M. T. (2009). La clasificación de neologismos: Una tarea compleja. *ALFA: Revista de Lingüística*, 50(2), p. 229-250. <http://seer.fclar.unesp.br/alfa/article/download/1421/1122> (Accessed 10.03.2024).
 9. Cabré, M. T. (1999). *Terminology: Theory, methods, and applications*. Amsterdam/Philadelphia: John Benjamins, 247 p.
 10. Encyclopedia Britannica. (2023, Nov. 15). Fantasy. In *Encyclopedia Britannica*. <https://www.britannica.com/art/fantasy-narrative-genre> (Accessed: 10.03.2024).
 11. Irgasheva, Sh. (2022, April). Challenges of translating neologisms. *European Scholar Journal*, 3(4), p. 45-48. <https://www.scholarzest.com> (Accessed: 10.03.2024).
 12. Jackson, R. (2009). *Fantasy: The literature of subversion*. London: Routledge, 134 p.
 13. Merriam-Webster. (n.d.). Galleon. In *Merriam-Webster.com dictionary*. <https://www.merriam-webster.com/dictionary/galleon> (Accessed 09.03.2024).
 14. Merriam-Webster. (n.d.). Sickle. In *Merriam-Webster.com dictionary*. <https://www.merriam-webster.com/dictionary/sickle#h1> (Accessed 09.03.2024).
 15. Merriam-Webster. (n.d.). Snitch. In *Merriam-Webster.com dictionary*. <https://www.merriam-webster.com/dictionary/snitch> (Accessed 09.03.2024).
 16. Merriam-Webster. (n.d.). Put out. In *Merriam-Webster.com dictionary*. <https://www.merriam-webster.com/dictionary/putout> (Accessed 09.03.2024).
 17. Newmark, P. (1988). *A textbook of translation*. Shanghai: Shanghai Foreign Language Education Press, 292 p.
 18. O'Dell, F. (2016, January). Creating new words: Affixation in neologisms. *ELT Journal*, 70(1), Oxford University Press, p. 94-99. <https://doi.org/10.1093/elt/ccv054> (Accessed 09.03.2024).

19. Rey, A. (1995). *Essays on terminology*. Amsterdam/Philadelphia: John Benjamins, 223 p.
20. Rowling, J.K. (2014). *Harry Potter and the Philosopher's Stone*. Bloomsbury, 342 p.
21. Sayadi, F. (2011, April). The translation of neologisms. *Translation Journal*, 16(2). <http://translationjournal.net/journal/56neologisms.htm> (Accessed: 09.03.2024).
22. Vinay, J.P., Darbelnet, J. (2004). A methodology for translation. In L. Venuti(ed.), *The translation studies reader*. London: Routledge, p.84-94.

АННА ШАХБАЗЯН - ПРОБЛЕМА ПЕРЕВОДА НАЗВАНИЙ ВОЛШЕБНЫХ ПРЕДМЕТОВ В АРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ РОМАНА “ГАРРИ ПОТТЕР И ФИЛОСОФСКИЙ КАМЕНЬ”

Ключевые слова: авторский неологизм, процедура перевода, семантико-прагматический потенциал, эквивалентность

Статья посвящена исследованию проблемы эквивалентности в переводе одной из групп авторских неологизмов, а именно названий магических предметов в произведении “Гарри Поттер и философский камень”. На основе сравнительного анализа двух армянских переводов романа рассматриваются проблемы соответствующей передачи семантико-прагматических особенностей неологизмов. В отдельных случаях предлагаются другие, более предпочтительные варианты перевода. Результаты исследования показывают, что с точки зрения передачи авторского замысла и послания, лежащих в основе неологизмов, а также формирования у читателя соответствующих ассоциаций, калькирование является наиболее эффективным методом перевода.

ANNA SHAHBAZYAN - ON THE PROBLEM OF TRANSLATING NAMES OF MAGICAL OBJECTS IN ARMENIAN TRANSLATION OF THE NOVEL "HARRY POTTER AND THE PHILOSOPHER'S STONE"

Keywords: author neologism, translation procedure, semantic-pragmatic potential, equivalence

This article is devoted to the study of the problem of equivalence in the translation of one of the classes of author neologisms, specifically, the names of magical objects in “Harry Potter and the Philosopher’s Stone”. The

challenges of proper transfer of the semantic-pragmatic peculiarities of neologisms are observed based on the comparative analysis of the two Armenian translations of the novel. In specific cases, other, more preferable versions of translation are suggested. The results of the research show that from the point of view of transferring the author's intention and message underlying the creation of the neologisms and evoking the appropriate associations in the reader, *calque* proves to be the most effective translation procedure.

Ներկայացվել է՝ 21.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 06.05.2024 թ.

**ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՔԼ ՔԱՆԻՆԳՇԵՄԻ «ԺԱՄԵՐԸ»
ՎԵՊՈՒՄ**

ՄԱՐԻԱՄ ՎԱՆՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածում ուսումնասիրվում են մոնտաժային պլաններն ու դրանց դրսևորման ձևերը Մայքլ Քանինգհեմի «Ժամերը» վեպում: Մայքլ Քանինգհեմի «Ժամերը» վեպը աչքի է ընկնում մոնտաժի տեխնիկաների լայն կիրառմամբ, ժամանակային տեղաշարժերի և դրանց մեջ գործող երեք տարբեր հարթությունների փոխկապակցմամբ: Մոնտաժի երեք պլաններից յուրաքանչյուրը կարևոր նշանակություն ունի Քանինգհեմի տեքստի առավել խոր ընկալման համար: Խոշոր պլանի տեսարանները վեպում բացահայտում են հերոսների խառնվածքը, այնինչ միջին և ընդհանուր պլանների դրվագները նպաստում են տարածության և ընդհանուր համատեքստի առավել ճշգրիտ ընկալմանը: Հարկ է նշել, որ մոնտաժի միջին և ընդհանուր պլաններն առավել նախընտրելի են Քանինգհեմի համար, քանի որ դրանք ռիթմիկ, լարված հակադրություններ են ստեղծում տեսարանում՝ ընդգծելով տեղի ունեցողի հուզականությունը:

Հիմնաբառեր՝ Քանինգհեմ, «Ժամեր», մոնտաժ, մոնտաժային պլաններ, խոշոր պլան, միջին պլան, ընդհանուր պլան

Ներածություն

Գրականության և կինոարվեստի փոխազդեցության խնդիրը գրականագետներին հետաքրքրել է կինոյի ի հայտ գալուց ի վեր և շարունակում է քննարկվել ժամանակակից հետազոտողների կողմից: Դրա ուսումնասիրության ընթացքում բարձրացված հիմնական հարցերից մեկը վերաբերում է գրական տեքստերում կինեմատոգրաֆիական հնարների կիրառմանը, որոնց մեջ կարևորագույն դեր է կատարում **մոնտաժը:**

Կինոյի տեսաբան Ալեկսեյ Սոկոլովի պնդմամբ՝ մոնտաժն ի հայտ է եկել գրականության մեջ հազարավոր տարիներ առաջ, երբ չկար ո՛չ կինոն, ո՛չ ռադիոն, ո՛չ հեռուստացույցը, ո՛չ էլ համակարգիչը: Մոնտաժի

տեսակները նա բացատրում է գրական տեքստերի միջոցով. ըստ նրա՝ մի բառը մյուսի հետ կապակցելու արդյունքում ստեղծվել է արտահայտությունը, այնուհետև առաջին արտահայտությանը հաջորդել է երկրորդը, և կերտվել է պատումը, իսկ յուրաքանչյուր էկրանային աշխատանք (ֆիլմ, հեռուստահաղորդում, գովազդ կամ հոլովակ), ըստ Սոկրովի, պատում է: Ա.Սոկրովը պնդում է, որ գրականությունն է «հայտնագործել» նաև պատմողական տարբեր տեխնիկաներ՝ հաջորդական, զուգահեռ, ասոցիատիվ և այլն: Կինոն փոխառել է այս տեխնիկաները՝ կոչելով դրանք մոնտաժային տեխնիկաներ:

Այսպիսով, մեր հոդվածը նվիրված է ամերիկացի արձակագիր Մայքլ Քանինգհեմի (Michael Cunningham, 1952թ.) «Ժամերը» (The Hours, 1998) վեպում մոնտաժի տեսակների ուսումնասիրությանը: Քանինգհեմի վեպն աննախադեպ հաջողություն է ունեցել՝ ակտիվ քննարկման առարկա դառնալով գրականագետների շրջանում և արժանանալով հեղինակավոր Պուլիտցերյան ու Ֆոլքերյան մրցանակների: Հետագայում վեպն էկրանավորվել է՝ այդպիսով հասանելի դառնալով ավելի լայն շրջանակներին: Վերջին երկու տասնամյակներում Քանինգհեմի ստեղծագործությունը եղել է բազմաթիվ քննադատների ուշադրության կենտրոնում, որոնք անդրադարձել են վերջինիս հիմնական թեմաների բացահայտմանը, ուսումնասիրել տեքստը ոճական, լեզվաբանական և այլ տեսանկյուններից: Մեր կարծիքով՝ «Ժամերն» առավելապես ուշագրավ է նրանով, որ կինեմատոգրաֆիական մոնտաժային հնարներով հագեցած տեքստ է, սակայն այս համատեքստում այն երբևէ ուսումնասիրության չի ենթարկվել, ինչը և պայմանավորում է հոդվածի նորույթը:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել կինեմատոգրաֆիական մոնտաժի տեսական և գործնական հիմքերը և վերհանել դրանց դրսևորումները Մայքլ Քանինգհեմի «Ժամերը» վեպում:

Նշված նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- դիտարկել կինոմոնտաժի տեխնիկայի կիրառման մեխանիզմները գրականության մեջ,
- վերհանել Մ.Քանինգհեմի վեպում մոնտաժի կիրառման դրսևորումները:

Մոնտաժի տեսակներն ու դրանց դրսևորումները Մայքլ Քանինգհեմի «Ժամերը» վեպում

Հասկանալու համար, թե ինչպես են կադրի կոմպոզիցիայի առանձին բաղադրիչներն ազդում դիտողի վրա ֆիզիոլոգիական և

հոգեբանական տեսանկյունից, առաջացնում այս կամ այն հույզը, անհրաժեշտ է դիտարկել մի շարք հարցեր՝ կապված կոմպոզիցիայի պլաստիկ, գրաֆիկական և այլ տարրերի հետ: Քանինգհեմի «Ժամերը» վեպում մոնտաժային պլանների կիրառումը ստեղծագործության մոնտաժային բնույթն ապահովող ամենաուշագրավ դրսևորումներից է: Սկզբում ուշադրություն դարձնենք այն փաստին, որ յուրաքանչյուր առանձին մոնտաժային պլանում կան որոշակի չափանիշներ, որոնց միջոցով տեղեկատվություն ենք ստանում կատարվածի մասին: Օրինակ, ռուսական ֆիլմերում կադրի բաղադրության մեջ նախ առանձնանում են խոշոր, միջին, ընդհանուր, հեռավոր պլաններ և դետալներ: Ամերիկացիներն ավելի մեծ թվով պլաններ ունեն: Օրինակ, նրանց մոտ խոշոր պլանը ներառում է երեք աստիճան.

դեմք - խիստ խոշոր պլան, որտեղ կադրում դեմքը ճակատի կեսից մինչև կզակի կեսն է;

գլուխ - դիմանկարային պլան, որտեղ գլուխն ամբողջությամբ գտնվում է կադրի մեջ,

խոշոր պլան - կադրում գլուխն ու ուսերն են (Сokolov, 2001, с. 65):

Կադրի նման կոմպոզիցիայի դեպքում գործ ունենք գունային լուծման հետ, որը մոտ է դեմքի գունային բնութագրերի մեր իրական ընկալմանը, այսինքն՝ բնական գույնին: Այնուամենայնիվ, այստեղ կարելի է փոխել գույնը՝ ցուցադրելով կադրը տաք կամ սառը գունային գամմայի տիրույթում: Տաք տոն օգտագործելիս կերպարն ավելի խոշոր է թվում, մոտեցվում է կրանի շրջանակին, ստեղծում ներկայության էֆեկտ. գործողությունը տեղի է ունենում «այստեղ և հիմա»: Մինչ ջերմ տոնը միշտ դրական զգացումներ է առաջացնում, սառը տոնը, ընդհակառակը,, առաջացնում է բացասական հույզեր, անջատվածության զգացում, լարվածություն, անհանգստություն, ժամանակի պայմանականություն, այսինքն՝ հանդիսատեսը կերպարի մեջ ներմուծում է սուբյեկտիվ մեկնաբանություն:

Խոշոր պլան կիրառելիս կարևոր է ճիշտ «դիրքավորել» կերպարին ընդհանուր ֆոնի նկատմամբ: Պլանի խոշորությունը, կոմպոզիցիոն կառուցվածքը (աջակողմյան, ձախակողմյան և կենտրոնական կոմպոզիցիաներ), լուսավորությունը ոչ միայն ազդում են գունային պատկերի, տվյալ կադրի ռիթմիկ շեշտադրումների ընկալման վրա, այլ նաև ստեղծում հաղորդվող պատկերի ռիթմիկ օրինաչափություն: Խոշոր պլանը միշտ ենթադրում է զգացմունքային շեշտադրում:

Այժմ ուսումնասիրենք մոնտաժային կոմպոզիցիայի դրսևորումները Մ.Քանինգհեմի «Ժամերը» վեպում՝ զուգահեռաբար անդրադառնալով Ս.Դոլդրիի ֆիլմին:

Անդրադառնալով խոշոր պլանին՝ պետք է նշենք, որ Քանինգհեմն այն օգտագործում է եզակի դեպքերում՝ առավել հաճախ դիմելով միջին և ընդհանուր պլաններին: Այնուամենայնիվ, մոնտաժի խոշոր պլանի վառ օրինակներ կարող ենք գտնել տեսքում:

Այսպես, օրինակ, առավոտյան, երբ վեպի հերոսուհիներից մեկը՝ Վիրջինիա Վուլֆը, նոր է արթնանում, տեղի է ունենում ընթերցողի հանդիպումը նրա ամուսին Լեոնարդի հետ: Քանինգհեմը նախ պարզապես թվարկում է նրա ամենօրյա, կենցաղային գործողությունները. նա նստած է իր սեղանի առաջ, սրբագրում է առանձնատիպերը: Ապա հեղինակը փորձում է խորացնել Լեոնարդի կերպարի ընկալումը ընթերցողի գիտակցության մեջ. «Լեոնարդը հայացքը գցում է իր կողմ՝ մի ակնթարթ դեռ պահպանելով սրբագրական աշխատանքին բնորոշ դեմքի խոժոռվածությունը: Դա մի հայացք է, որին Վիրջինիան վստահում է և որից վախենում է. խիտ հոնքերի տակից անթափանց մուգ աչքերը սկսում են փայլել, բերանի անկյունները մի տեսակ ծալվում են, և ստացվում է դեմքի մի այնպիսի արտահայտություն, որի դատարկությունը թեև անողոր է, բայց ոչ երբեք անարդարացի կամ մանրախնդիր, ստացվում է մի խոժոռադեմ աստվածություն՝ ամենապես ու հոգնապանջ, որը հավատում է մարդկության ապագային՝ միևնույն ժամանակ հստակ իմանալով, թե ինչ ակնկալիքներ կարելի է ունենալ նրանից: Դեմքի այդ արտահայտությունը Լեոնարդը պահպանում է ցանկացած տեքստի հետ աշխատելիս, այդ թվում (և հատկապես)՝ Վիրջինիայի գործերի դեպքում: Սակայն կնոջը նայելու հենց հաջորդ վայրկյանին Լեոնարդի հայացքը կտրուկ փոխվում է, և նա դառնում է այն մեղմ ու բարի ամուսինը, որը կյանքի ամենաբարդ շրջաններում համբերաբար խնամում է իրեն, երբեք չի պահանջում ավելին, քան ինքը կարող է տալ, և որն անընդհատ համոզում է իրեն ու երբեմն հաջողում ամեն օր մի բաժակ կաթ խմում» (Քանինգհեմ, 2020, էջ 34):

Ներկայացված հատվածը բավական մանրամասն տեղեկատվություն է պարունակում. Լեոնարդի հայացքի նկարագրության շնորհիվ ընթերցողը հստակ պատկերացում է կազմում նրա մասին: Քանինգհեմը հերոսին ներկայացնում է Վիրջինիայի տեսանկյունից, քանի որ հենց Վիրջինիան է տալիս Լեոնարդի նման հայացքի գնահատականը, մեկնաբանությունը: Հետևաբար, պարզ է դառնում, որ Լեոնարդն առանցքային կերպար է Վիրջինիայի կյանքում: Այս հայացքը հենց խոշոր պլանն է. այն իր մեջ ներառում է Լեոնարդի աչքերը, որոնք փայլում են, բերանի անկյունները, որոնք ծալվում են, այսինքն՝ հերոսի միմիկան տվյալ պահին պատկերացնելի է: Այսպիսով, տեսնում ենք, որ տեքստի

հերոսն ու դերասանը նույն գործառույթն են կատարում մոնտաժային կոմպոզիցիայի՝ խոշոր պլանի բաղկացուցիչում:

Դիտարկենք մեկ այլ ուշագրավ դրվագ Քանինգհեմի վեպից.

««Ողջուն»,*- ինքնագոհ բացականչում է Ուլթերը, և նրանք բախվում են համբուրվելու անհարմար պահին: Ուլթերը փորձում է հասնել Կլարիսայի շուրթերին, բայց նա բնագդարար թեքում է գլուխն ու այտը դեմ տալիս: Մի ակնթարթ հեպո ըմբռնում է իր սխալը և կես վայրկյան ուշացումով ետ շրջում գլուխը, սակայն ստացվում է այնպես, որ Ուլթերի շուրթերը միայն նրա բերանի անկյունին են հպվում»* (Քանինգհեմ, 2020, էջ 126):

Խոշոր պլանն այստեղ շատ հստակ է. Կլարիսայի շուրթերին դիպչելու փորձն ու դրա ձախողումը, արդյունքում այտին հպվելը մոտեցնում են ընթերցողի հայացքը Կլարիսայի և Ուլթերի դեմքերին՝ ստեղծելով ներկայության էֆեկտ: Չմոռանանք այն փաստը, որ խոշոր պլանի կիրառումը հաճախ միտված է ամենաանկատ դրսևորումների, դետալների ընդգծմանը: Քանինգհեմը ներկայացնում է հերոսների դեմքի արտահայտության այնպիսի նրբություններ, որոնք իրականում արտացոլում են Կլարիսայի և Ուլթերի խորհրդածությունները՝ այդպիսով ընթերցողի ուշադրությունը սևեռելով նրանց մտքում կատարվողի վրա (Կլարիսան և Ուլթերը ամենատարբեր հուզառատ մտորումներն են ունենում՝ պլանավորելով ողջագուրման ընթացքը):

«Ժամերում» մեծ գործածություն ունեն միջին և ընդհանուր պլանները, սակայն, մինչ դրանք դիտարկելը, հարկ ենք համարում առանձնացնել այս պլաններին բնորոշ մի քանի առանձնահատկություններ:

Կինոէկրանի համար կարևորությամբ երկրորդը միջին պլանն է, որը ներառում է ոչ միայն հերոսի հույզերը և հեղինակի վերաբերմունքը հերոսի նկատմամբ, այլև ժեստերը: Այն նաև մասամբ բնութագրում է տեսարանը:

Պլանների հաջորդ աստիճանավորումը ընդհանուր պլանն է: Դիտորդը ընդհանուր տեղեկատվություն է ստանում 5 վայրկյանում, եթե ընդհանուր պլանը ծանրաբեռնված չէ մանրամասներով, բարդ, բազմաչափ կոմպոզիցիա չէ, հագեցած չէ բազմակողմանի շարժումներով: Եթե կոմպոզիցիան պարունակում է տարասեռ տարրեր, այն վատ է ընկալվում դիտողի կողմից, և դրա ընթերցման համար ավելի շատ ժամանակ է պահանջվում՝ 6-7 վայրկյան: Ընդհանուր պլանը տալիս է ավելի ամբողջական պատկերացում կերպարի շարժման (նրա արագությունն ու ուղղությունը), գործողության վայրի, կերպարների փոխազդեցության (եթե կան մի քանիսը), ինչպես նաև

իրադարձությունների ընդհանուր նկարագրության վերաբերյալ (Утилова, 2004, с. 34):

Ընդհանուր պլանի ընթացքում լավ է ընթերցվում կադրի գունային լուծումը, գունային շերտերի դասավորությունը: Կինոյի տեսաբան ու ռեժիսոր Ս.Էյզենշտեյնը գրում է. «...պլանների այս չափերն արտահայտում են տեսակետի տարբեր բնութագրեր այս կամ այն երևույթի մասին: Ընդհանուր պլանը հաղորդում է երևույթի ընդհանուր ընկալման զգացում: Միջին պլանն ավելի մտերմիկ կապ է ապահովում հանդիսատեսի և էկրանի հերոսների միջև, ստեղծում, այսպես կոչված, ներկայության էֆեկտ:

Եվ վերջապես, խոշոր պլանով դիտողին ներկայացվում է էկրանի վրա կատարվող ամենաինտիմ գործողությունը՝ դողացող թարթիչ, դողացող ձեռք, մատների ծայրեր, ժանյակով ձգված մանժետներ... Դրանք բոլորն էլ ճիշտ պահին մանրուքների միջոցով բացահայտում են հերոսի էությունը» (Эйзенштейн, 2016, с. 290):

Քանինգհեմը կիրառում է միջին և ընդհանուր պլանները վեպի գրեթե բոլոր հերոսների դեպքում: Նրանք ներկայացվում են ամենատարբեր հանգամանքներում, ամենատարբեր գործեր անելիս, սակայն դրանից տեքստի լարվածությունն ու ինտրիգը չեն նվազում:

«Մտնում է աշխատասենյակ, անաղմուկ փակում է դուռը: Վերջ, հիմա ապահով է: Բացում է վարագույրները: Դրսում՝ ապակուց այն կողմ, խաղաղ հոսում է ազնվաբարո Ռիչմոնդի երազային կյաքը: Ծաղականոցներն ու կանաչ ցանկապատերը բարվոք խնամված են, դռների և պատուհանների փեղկերը՝ նախօրոք ներկված: Իրենց հարևանները, որոնց Վիրջինիան չի ճանաչում, աղյուսաշեն կարմիր առանձնապան շերտավարագույրների ետևում զբաղված են, Աստված գիտի, ինչով: Իր մտապայտվածում միայն այդ տան կիսախավար սենյակներն են ու չափից շատ եփված ուտելիքի կծվահոտը» (Քանինգհեմ, 2020, էջ 116):

Սա, անշուշտ, ընդհանուր պլան է: Վիրջինիան երևում է ընթերցողին՝ շրջապատված որոշակի իրողություններով, պատկերվում է Ռիչմոնդը՝ իր երազային թվացող կյանքով, բնությունը, տները: Այսինքն՝ տեսարանում հերոսուհին գործում է համակարգի մեջ, ընդհանուր ֆոնի վրա: Սրա ընկալումը տեղի է ունենում մի քանի վայրկյանների ընթացում, քանի որ ընթերցողը նույնքան ժամանակ է ծախսում՝ տեքստում այս հատվածն ընթերցելու համար: Սակայն այն չի կարող միջին պլան համարվել, քանի որ այստեղ առկա է Վիրջինիայի շարժումը, շրջակայքի նկարագրությունը և դրա փոխկապակցվածությունը հերոսուհու հետ:

Մեկ այլ օրինակ գտնում ենք տիկին Բրաունի մասին պատմող գլուխներից մեկում: Քանինգհեմը Լորայի գործողությունները ներկայացնում է բնության երևույթների հետ համադրության միջոցով՝ այդպիսով ստեղծելով հերոսուհու մտքերին, գործողություններին և հոգեվիճակին համապատասխան մոայլ մթնոլորտ:

«Լորան իր Շեկրոլեով ընթանում է Փասադենայի մայրուղով՝ անցնելով լեռների միջով, որոնց վրա դեռ նկատելի են անցած տարվա հրդեհի հետքերը: Այնպիսի զգացողություն ունի, ասես երազի մեջ է, ավելի ճիշտ՝ ասես մի երազ է հիշում, որը շատ վաղուց է տեսել: Այն ամենը, ինչ նկատում է, կարծես ամրացված լինի այդ երազին, ինչպես եթերով անզգայացած թիթեռնիկն է ամրացված լինում տախտակին: Ահա խանձված սև սարալանջերը՝ կետրագծված գույնզգույն տներով, որոնք հրաշքով խուսափել են հրդեհից: Ահա մշուշոտ կապրասպիտակ երկինքը: Լորան մեքենան վարում է առանց ավելորդ լարվածության՝ ո՛չ շատ դանդաղ, ո՛չ էլ շատ արագ՝ պարբերաբար նայելով հետադարձ հայելուն» (Քանինգհեմ, 2020, էջ 79):

Հարկ է նշել, որ ֆիլմում վերոնշյալ երկու տեսարաններն էլ հստակ փոխանցում են Քանինգհեմի մտադրությունը, և երկուսն էլ ընդհանուր պլանով են նկարահանված:

Միջին պլանի տեսարանները Քանինգհեմի տեքստում և Դոլդրիի ֆիլմում ավելի սահմանափակ են: Ինչպես արդեն նշեցինք, դրանք չեն ցուցադրում տարածությունը լայն համատեքստով և հիմնականում զերծ են հերոսների շարժումներից:

Միջին պլանն ասես ավելի սահուն է դարձնում ստեղծագործության անցումները, և միաժամանակ անհանգստություն է առաջացնում ընթերցողի ու դիտողի մոտ: Վիրջինիայի քույրը՝ Վանեսան, երեխաների հետ եկել է նրան տեսակցության: Վիրջինիան սիրում է երեխաների հետ ժամանակ անցկացնել: Նրանք գնում են պարտեզ, որտեղ տեսնում են մահացած ճնճղուկի և որոշում թաղել նրան: Այս դրվագում գործող անձինք մի քանիսն են, գործողության վայրը պարտեզն է, ավելի հստակ՝ դրա այն հատվածը, որում նրանք գտնվում են: Ահա միջին պլանի տեքստային մի քանի ուշագրավ օրինակներ:

«Վիրջինիան ազատում է ձեռքն ու ծնկի իջնում Անջելինայի կողքին՝ օգնելով նրան պատրաստել ճնճղուկի անկողինը: Քվենթինն ու Ջուլիան նույնպես այստեղ են, բայց թաղման կազմակերպիչը Անժելիկան է՝ մեկը, որի հետ պետք է համաձայնեցնել արարողակարգային մանրամասները» (Քանինգհեմ, 2020, էջ 150):

«Մուրեմնում է հերթական օրվա ավարտը: Վիրջինիայի կիսախավար սենյակի գրասեղանին ցրված են իր նոր վեպի էջերը» (Քանինգհեմ, 2020, էջ 205):

«Ուրեմն այստեղ է վերջը՝ ասֆալտապատ գետնին, լվացքաշորերի ներքո, փշրված ապակու կտորների մեջ: Ռիչարդի ուսից ձեռքը քնքշորեն սահեցնում է ներքև՝ դեպի նրա փխրուն մեջքի գոգավորությունը: Մեղավորության զգացումով, ասես մի անթույլատրելի արարք է գործում, կռանում է ու ճակատով հպվում Ռիչարդի ողնաշարին, քանի դեռ այն ինչ-որ իմաստով նրա ողնաշարն է, իսկ նա ինչ-որ իմաստով դեռ Ռիչարդ Ուրթինգթոն Բրաունն է»:

«Վիրջինիան ոգևորված վեր է կենում բազկաթոռից՝ գիրքը դնելով սեղանին: Կողքի բազկաթոռին նստած Լեոնարդը հարցնում է...» (Քանինգհեմ, 2020, էջ 259)

Միջին և ընդհանուր պլանների տարբերությունն էլ ավելի հստակ պատկերացնել կարող ենք, եթե դիտարկենք հետևյալ օրինակը և համեմատենք այն վերը բերված հատվածների հետ:

«Շքամուտքի դռները բացվում են դեպի հունիսյան առավոտ՝ այնքան պայծառ ու մաքուր, որ Կլարիսան մի պահ կանգ է առնում հենց շենքի մոտ, ինչպես կանչարժանար լողավազանի եզրին՝ դիտելու փիրուզագույն ջրի ծփանքը հախճասալիկին և արևային լույսի ցանցանման տարանումը կապույտ խորության մեջ: Լողավազանի եզրին կանգնած՝ ճիշտ նույն կերպ նա մի ակնթարթով կհետաձգեր իր ցավերը՝ նախքան սառնության թաղանթի միջով ներսուզման ակներև ցնցումն ապրելը:

Եվ այս տարվա հունիսին նույնպես Արևմտյան տասներորդ փողոցի բոլոր ծառերին հիասքանչ փոքրիկ տերևներ են աճել, թեև ծառաների բերունտ քառակուսի եզրավանդակների մեջ հաճախ կարելի շան կղանք կամ դեն նեղված մանր աղբ տեսնել: Եվ կրկին դիմացի շենքում ապրող պատավ կնոջ բնակարանի փոշուր պատուհանագոգին, ուր ինչպես միշտ, կարմիր պլաստմասե խորդենիներ են շարված, մի ինքնակոչ խապուրիկ է հայտնվել» (Քանինգհեմ, 2020, էջ 17):

Այստեղ միանշանակ գործ ունենք ընդհանուր պլանի հետ: Այսպիսի նկարագրությունն ու տեսարանը հեշտ է պատկերացնել, առանց որևէ բարդության ընկալել դրա՝ կոմպոզիցիայի ընդհանուր բաղադրիչ լինելու փաստը: Այս հատվածում գերակշռում է Կլարիսայի միջավայրի, առավոտյան Նյու Յորքի ընդհանուր պատկերը, այդ պատճառով էլ միջին պլանի իրողություններն այստեղ վերագրելի չեն: Ընդհանուր պլանով նկարահանված նման դրվագներ չափազանց տարածված են ֆիլմերում, և

«Ժամերը» բացառություն չէ: Հանդիսատեսն ականատես է դառնում քաղաքային տեսարանների ցուցադրմանը՝ ներգրավվելով ռեժիսորի կողմից կերտված էկրանային իրականության մեջ:

Եզրակացություններ

Ամփոփելով մոնտաժի պլանների դիտարկումը Մայքլ Քանինգհեմի «Ժամերը» վեպում՝ կարելի է փաստել.

1. Մայքլ Քանինգհեմի «Ժամերը» վեպը աչքի է ընկնում մոնտաժի տեխնիկաների լայն կիրառմամբ, ժամանակային տեղաշարժերի և դրանց մեջ գործող երեք տարբեր հարթությունների փոխկապակցմամբ:

2. Մ.Քանինգհեմի վեպում խոշոր, միջին և ընդհանուր պլանների կիրառումը նպաստում է կերպարների հանդեպ առավել անմիջական վերաբերմունքին՝ որոշ դեպքերում ստեղծելով ներկայության էֆեկտ:

3. Մոնտաժի միջին և ընդհանուր պլաններն առավել նախընտրելի են Քանինգհեմի կողմից, քանի որ դրանք ռիթմիկ, լարված հակադրություններ են ստեղծում տեսարանում՝ ընդգծելով տեղի ունեցողի հուզականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Քանինգհեմ Մ. (2020), Ժամերը, Երևան., «Դարակ» հրատարակչություն, 283 էջ:
Qaninghem M. (2020), 'Jhamery', Erevan., «Darak» hratarakchownt'yown, 283 e'j: (in Armenian)
2. Утилова Н. А. (2004). Монтаж. - Москва. Аспент Пресс - 173 с.
Utilova N. A. (2004). Montazh.- Moskva. Aspent Press - 173 s. (in Russian)
3. Соколов А. Г. (2001). Монтаж. - Москва. 625- 205 с.
Sokolov A. G. (2001). Montazh. - Moskva. 625- 205 s. (in Russian)
4. Эйзенштейн С. М. (2016). Монтаж. - Москва. Директ Медия - 99 с.
Jeizenshtejn S.M. (2016). Montazh.-Moskva.Direkt Medija-99s. (in Russian)
5. Cunningham M. (2003). The Hours, UK: Harper's Collinz, 240 p.

МАРИАМ ВАНЯН - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МОНТАЖНЫХ ПЛАНОВ В РОМАНЕ МАЙКЛА КАННИНГЕМА «ЧАСЫ»

Ключевые слова: Каннингем, Часы, монтаж, монтажные планы, крупный план, средний план, общий план

В статье рассматриваются монтажные планы и особенности их использования в романе Майкла Каннингема «Часы». В своем романе Майкл Каннингем широко использует ряд монтажных приемов, прежде всего в контексте временных перемещений и взаимосвязи задействованных в них трех разных измерений. Каждый из трех планов монтажа важен для более глубокого восприятия текста Каннингема. Крупный план раскрывает особенности внутреннего мира героев, а средний и общий планы способствуют более точному восприятию пространства и общего контекста. Стоит отметить, что наиболее часто Каннингем прибегает к использованию средних и общих монтажных кадров, так как они способствуют созданию ритмичных, напряженных контрастов в сцене или кадре, подчеркивая эмоциональность происходящего.

MARIAM VANYAN - PECULIARITIES OF THE USAGE OF EDITING SHOTS IN THE NOVEL "THE HOURS" BY MICHAEL CUNNINGHAM

Keywords: M.Cunningham, The Hours, editing, editing shots, close-up, medium shot, wide shot.

The article deals with the editing shots and the peculiarities of their usage in Michael Cunningham's novel "The Hours". In his novel, Michael Cunningham makes extensive use of a number of editing techniques, primarily in the context of time shifts and the interconnection of three different dimensions in them. Each of the three editing shots is important for a deeper understanding of Cunningham's text. The close-up reveals the features of the characters' inner world, while the medium and wide shots contribute to a more accurate perception of space and the general context. It is worth noting that Cunningham mostly resorts to the use of medium and wide shots, as they contribute to the creation of rhythmic, intense contrasts in the scene/frame, emphasizing the emotionality of what is happening.

Ներկայացվել է՝ 12.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 06.05.2024 թ.

Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵՁՈՒՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԼԵՁՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Համառոտագիր

Լեզվական կրթությունն այսօր անժխտելի կարևորություն ունի զարգացած հասարակություն ձևավորելու գործում. ցկյանս, որակյալ լեզվական կրթությունը նպաստում է ոչ միայն կրթական և մասնագիտական հաջողություններին, այլև անձի զարգացմանը և արժևորմանը, որն իր հերթին ժողովրդավարական, սոցիալապես համախմբված և խաղաղ աշխարհի կայացման գրավականներից է: Ժամանակակից լեզուների դասավանդման մեթոդների, սովորողների բազմալեզու, բազմամշակութային և ճանաչողական կարողությունների իրացման գործում առանցքային դեր ունի Եվրոպայի խորհրդի ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնը (ԺԼԵԿ):

Հիմնաբառեր՝ Եվրախորհուրդ, ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոն, լեզվաքաղաքականություն, օտար լեզուներ, բազմալեզվություն, մշակութային բազմազանություն

Ներածություն

Եվրոպայի խորհրդի ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնը ստեղծվել է 1994թ. Ավստրիայի Գրաց քաղաքում: Այն եզակի կառույց է, որի առաքելությունն է խրախուսել գերազանցությունը և նորարարությունը լեզուների դասավանդման ոլորտում: ԺԼԵԿ-ի կազմում ընդգրկված է Եվրոպայի Խորհրդի անդամ 36 երկիր: Հայաստանը անդամակցում է ԺԼԵԿ-ին 2001 թ. հունիսի 25-ից:

ԺԼԵԿ-ն իր անդամ երկրների կրթության մասնագետների, լեզուներ դասավանդողների, փորձագետների հետ միասին մշակում է եվրոպական հիմնարար արժեքների վրա խարսխված ընդհանուր լեզվաքաղաքականություն, նպաստում է ժամանակակից լեզուների ուսումնառության, դասավանդման և գնահատման ոլորտում Եվրախորհրդի գաղափարախոսության տարածմանը, դրա ներդրմանը և ներդաշնակեցմանը անդամ երկրների կրթական համակարգերին: Այս առաքելության շրջանակներում ԺԼԵԿ-ն իրականացնում է քառամյա ծրագրեր, որոնց առանցքում լեզվական կրթության հիմնախնդիրներն են:

Ծրագրերը ներառում են երկու ուղղություն՝ զարգացման և միջնորդական: Զարգացման ուղղությունը ներկայացնում է նորարարական նախագծեր, որոնք լեզվի մասնագետներին առաջարկում են նոր ռեսուրսներ: Միջնորդական ուղղությունը ներառում է անդամ երկրներում իրականացվող վերապատրաստումներ և խորհրդատվություններ, ինչպես նաև հանրության ավելի լայն շրջանակների համար նախատեսված միջոցառումներ՝ Լեզուների եվրոպական օր (EDL), վեբինարներ և գիտաժողովներ, հրատարակում է հետազոտությունների վրա հիմնված հոդվածներ, լեզվական կրթությանը վերաբերող եզրույթների բառարաններ¹:

ԼԵԶՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԺԼԵԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԸ

ԺԼԵԿ-ը ներկայացնում է ԺԼԵԿ-ի ծրագրերի և, ընդհանրապես, Եվրախորհրդի աշխատանքի հիմքում ընկած լեզվական կրթության ինը հիմնական ոլորտներ, որոնց թեմաները ներառում են լեզուների ուսուցման հիմնական միտումները և տեսությունները, որոնք վերջին տարիներին լեզվական կրթության հետաքրքրությունների շրջանակում են: Յուրաքանչյուր թեմատիկ ոլորտ ուրվագծում է համապատասխան խնդիրներն ու մարտահրավերները և այդ խնդիրների լուծման ուղիների շուրջ կատարված աշխատանքները: ԺԼԵԿ-ի կարևոր նախագծերից մի քանիսը վերաբերում են ուսուցիչների կրթության բովանդակությանը, և դրանք առանցքային դեր ունեն բազմաթիվ երկրներում ինչպես դասավանդողի կրթության, այնպես էլ աշխատանքի ընթացքում նրա մասնագիտական զարգացման գործում:

Լեզու դասավանդողի կարողականությունները չափազանց կարևոր են լեզվական կրթության որակի բարձրացման և արդյունավետության համար: Լեզուների հաջող դասավանդումը մեծապես կախված է լեզվի ուսուցիչների գիտելիքներից, հմտություններից և կարողություններից: Թեև օտար լեզու դասավանդողների հիմնական խնդիրն է նպաստել սովորողների հմտությունների զարգացմանը համապատասխան մեթոդաբանության միջոցով, պակաս կարևոր չէ նաև սովորողների առավել ինքնավար դառնալու հարցում համապատասխան ռազմավարություններ որդեգրելու նրանց ակտիվ դերակատարությունը: **ԺԼԵԿ-ը նպաստում է լեզվի ուսուցչի կարողականությունների զարգացմանը՝ ապահովելով հետևյալ ռեսուրսները.²**

¹<https://www.ecml.at/Aboutus/AboutUsOverview/tabid/172/language/en-GB/Default.aspx>

²<https://www.ecml.at/ECML-Programme/Programme2016-2019/TowardsaCommonEuropeanFrameworkofReferenceforLanguageTeachers/tabid/1850/language/en-GB/Default.aspx>

- Լեզուների եվրոպական պորտֆոլիոն (EPOSTL) ինքնագնահատման գործիք է, որտեղ դասակարգված են լեզուների դասավանդման համար անհրաժեշտ դիդակտիկ գիտելիքները և հմտությունները: Այն հասանելի է 15 լեզուներով³:
- Նախադպրոցական կրթության եվրոպական պորտֆոլիոն (PEPELINO) նախատեսված է նախադպրոցական հատվածում դասավանդող մանկավարժների համար: Այն աջակցում է ուսուցիչներին՝ զարգացնելու իրենց լեզվական և միջմշակութային կարողականությունները:

Յուրաքանչյուր անհատի լեզվական և մշակութային ինքնության, լեզվական և մշակութային բազմազանության, ինչպես նաև սոցիալական արժեքների կարևորումը նույնպես ԺԼԵԿ-ի առաջնահերթություններից է: Բազմալեզու կրթությունը ենթադրում է մայրենի լեզու/ների, օտար լեզուների և տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների ուսուցում: Բազմալեզու կրթությունն ունի երկու հիմնական ուղղություն. կրթություն բազմալեզվության *համար*, որը միտված է սովորողի լեզուների ցանկն ընդլայնելուն, և, կրթություն բազմալեզվության *միջոցով*, երբ ուսուցման ընթացքում կիրառվում են տարբեր լեզուներ՝ որպես որակյալ կրթության ռեսուրս:

Բազմալեզու և միջմշակութային կրթության հիմնահարցերը ԺԼԵԿ-ի ուշադրության առանցքում

Միջմշակութայնությունը ներառում է մի շարք ճանաչողական և վարքագծային կարողականություններ՝ **գիտելիք** (օրինակ՝ գիտելիք այլ մշակութային խմբերի և նրանց գործունեության մասին, գիտելիք տարբեր մշակույթներ կրողների փոխշփման ձևերի մասին), **վերաբերմունք** (օրինակ՝ ուրիշի հանդեպ հարգանք, կարեկցանք, ապրումակցում), **մեկնաբանելու և համեմատելու հմտություններ** (օրինակ՝ մեկ այլ մշակույթի երևույթները մեկնաբանելու և սեփական մշակույթի հետ համեմատելու, ինչպես նաև կիրառելու հմտություն), **բացահայտման հմտություններ** (օրինակ՝ մշակույթի մասին նոր գիտելիք փնտրելու և ձեռք բերելու կարողություն) և **քննական-մշակութային** կարողականություն (սեփական և այլ մշակույթների հանդեպ քննադատական վերաբերմունք ունենալու և գնահատելու կարողություն):

³ <https://www.ecml.at/ECML-Programme/Programme2008-2011/UsingtheEuropeanPortfolioforStudentTeachersofLanguages/tabid/4374/Default.aspx>

- **FREPA/CARAP** նախագիծը տրամադրում է գիտելիքի, կարողությունների և հմտությունների համապարփակ նկարագրություն, որը բազմալեզու և բազմամշակույթ կարողունակությունների հիմքն է: Այս նախագիծը կարևորում է դիդակտիկ այն մոտեցումը, որը ենթադրում է դասավանդման ընթացքում մեկից ավելի լեզուների և/կամ լեզուների տարբերակների, կամ էլ մշակույթների միաժամանակ օգտագործում:
- **Combat** նախագիծն առաջարկում է ուսումնական նյութերի բանկ, ուղեցույց, վերապատրաստման նյութերի փաթեթ և ներկայացնում է դասարանում-լսարանում լեզվական և մշակութային բազմազանությունը խթանելու նորարարական եղանակ՝ համատեղելով բազմալեզու և բազմամշակույթ մոտեցումները՝ լեզվի բովանդակության վրա հիմնված ուսուցման հետ:
- **Gulliver** նախագիծն այն մասին է, որ «Իրար ճանաչելը հանգեցնում է դասավանդվող առարկայի ավելի լավ ըմբռնման» և դպրոցների միջև միջմշակութային փոխըմբռնմանը վերաբերող թեմաներով ֆորումներ ստեղծելու ուղեցույց է:
- **Plurimobil** նախագիծը նպատակ ունի ներկայացնել շարժունության ծրագրերի լավագույն փորձը՝ օգտագործելով Եվրոպայի խորհրդի մշակած լեզվական և միջմշակութային կարողականությունները զարգացնելու համար առաջարկվող գործիքակազմը: Այն հիմնականում միտված է դպրոցական համատեքստում շարժունության խթանմանը, որպեսզի փոխանակման ծրագրերով սովորողները առավելագույն օգուտ քաղեն նոր միջավայրում ձեռք բերած փորձից:

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԼԵՉՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լեզվի ուսուցիչների խնդիրն է գտնել նորարարական ուղիներ և հնարավորություններ՝ լեզվի դասավանդումն առավել արդյունավետ և հետաքրքիր դարձնելու համար՝ միաժամանակ պահպանելով ուսուցման ավանդական մեթոդները:

ԺԼԵԿ-ը նպաստում է նորարարական միջոցների օգտագործմանը իր մի շարք նախագծերի միջոցով

DOTS նախագիծը և դրա հետագա ընթացքն ապահովող **MORE DOTS**-ը ստեղծել են գործունեության նոր հարթակ նրանց համար, ովքեր դասավանդում են առցանց՝ ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ կրթական միջավայրերում: Առկա է լեզվի ուսուցիչների վերապատրաստման փաթեթ, որը խթանում է առցանց ուսուցման ընթացքում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, ներառյալ լեզվի ուսուցիչների վերապատրաստման համար նախատեսված

միջոցառումները, պահանջվող գործողությունների առաջարկները և «ինքնակատարելագործմանը» վերաբերող փորձի փոխանակման համատեղ գործիքները: Նորարարական միջոցների օգտագործումը ոչ միայն տեխնիկական, այլ նաև մանկավարժական հմտություններ է պահանջում⁴:

- **Բլոգներ և լեզվական հարցումներ**

Երկու նախագիծ՝ **BLOGS**-ը և **Language Quests**-ը միտված են այն գործողությունները ներկայացնելուն, որոնք անհրաժեշտ են նորարարական միջոցները կրթական միջավայրին հարմարեցնելու համար: BLOGS-ն օգտագործում է վեբ ամսագրերի գաղափարը՝ ինտերակտիվ հմտություններ զարգացնելու և միջոցառողական փոխանակումների միջոցով հաղորդակցման այդ միջոցն օգտագործելու համար: Language Quests-ը մշակել է վեբկայք, որն ապահովում է ակնթարթային մուտք դեպի «Լեզվի հարցումների հավաքածու»՝ ապահովելով կրթական նպատակներով համացանցում որոնումներ իրականացնելու և գործընկերային ցանցին միանալու միջոցներ:

- **EVOLUTION** նախագիծն ուսումնասիրում է լեզուների ուսուցման գործընթացում ցանցային տեխնոլոգիաների նորագույն կիրառությունների հնարավորությունը: Կայքը ներկայացնում է օրինակներ, թե ինչպես կարող են տեղեկատվական և հաղորդակցական նորագույն տեխնոլոգիաները (S<S) ինտեգրվել ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին և օգնում է ուսուցիչներին ստեղծել S<S հիմքով ուսումնական նյութեր, տրամադրում է տեսական նյութ և հավելված՝ գործնական օրինակներով: Այս նախագծի ռեսուրսները օգնում են զարգացնել.

- առցանց հետազոտությունների իրականացման համար արդյունավետ ռազմավարություններ,

- առցանց տեղեկատվության աղբյուրները գնահատելու և օգտագործելու կարողություն,

- բազմաեղանակային բովանդակություն ստեղծելու ունակություն,

- ավանդական գործիքներից, ինչպիսիք են էլ. փոստը, Web 2.0 հավելվածները, բլոգները, վիքիները, տեսակոնֆերանսները և սոցիալական ցանցերը, օգտվելու հմտություններ:

⁴ <https://www.ecml.at/ECML-Programme/Programme2008-2011/DevelopingOnlineTeachingSkills/tabid/4446/Default.aspx>

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ ԺԼԵԿԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Այսօր Եվրոպան միլիոնավոր առաջին, երկրորդ և երրորդ սերնդի միգրանտների, ինչպես նաև էթնիկ փոքրամասնությունների համայնքների տուն է: Միգրանտների հաջող ինտեգրումը կարևոր տարր է սոցիալական համախմբվածության խթանման համար, և լեզվական կրթությունը, մասնավորապես ընդունող երկրի լեզվի յուրացումը, մեծ դեր ունի երիտասարդ և չափահաս միգրանտներին աջակցելու և նրանց կրթական համակարգեր ներգրավելու հարցում:

ԺԼԵԿԻ նախագծերը նպաստում են միգրանտների կրթությանը և աշխատանքի տեղավորմանը մի շարք նախագծերով, որոնք նվիրված են դպրոցներում և աշխատավայրում միգրանտների հաջող ինտեգրման հարցերին: Դրանք ներառում են.

- **The Language for Work** նախագիծը, որի ամբողջական անվանումն է՝ «Ուսուցման Եվրոպական ցանց մասնագետների համար, որն աջակցում է աշխատավայրում երկրորդ լեզվի ուսուցմանը»: Այս նախագծի նպատակն է մշակել մասնագիտական զարգացման համար մի շարք գործիքներ, որոնց թվում է «արագ ուղեցույցը»՝ չափահաս միգրանտների լեզվական ինտեգրման հարցում տարբեր ընկերություններին աջակցություն ցույց տալու մասին: Հաջորդը միգրանտների կրթությանը համագործակցային և համայնքային մոտեցումն է՝ մանկավարժների համար առաջարկել վիրտուալ բաց դասընթացներ, որոնք ներառում են երիտասարդ միգրանտների կրթությունը բարելավելու նորարարական ուղիներ և զարգացնել կապերը դպրոցների և կրթության ոլորտի գործընկերների միջև: Կրթական համատեղ այս ձեռնարկումը նպաստում է սովորողների լեզվի հմտությունների, ինչպես նաև նրանց բազմալեզու կարողությունների զարգացմանը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԼԵԿԻ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ

Արժևորումը և գնահատումը /Evaluation and assessment/ լեզվական կրթության հիմնական բաղադրիչներից են և ներառում են բազմաթիվ տեսանկյուններ՝ սկսած ազգային և միջազգային ստանդարտացված քննությունների սահմանումից և գնահատումից մինչև ոչ ֆորմալ լսարանային թեստեր: ԺԼԵԿ-ն առաջարկում է տարբերակել երեք տարբեր եզրույթ՝ արժևորում, թեստավորում և գնահատում:

Արժևորումը ենթադրում է որակական գնահատականներ և դատողություններ առաջադրանքի կատարման վերաբերյալ: Թեստավորման դեպքում կարևորվում է թեստավորվողի

կարողականությունները: Գնահատումը լեզու սովորողների իմացության մակարդակի գնահատումն է տարբեր գործիքների միջոցով:

Գնահատման երեք հիմնական տեսակ կա.

- Ձևավորող գնահատումը վեր է հանում սովորողի ուժեղ և թույլ կողմերը և նախանշում է ուղիներ՝ լեզվի իմացությունը բարելավելու համար:
- Ամփոփիչ գնահատումը ցույց է տալիս, թե սովորողն ինչ գիտելիք և կարողականություն է ձեռք բերել, և որքանով է իրականացել նախատեսված նպատակը: Այն սովորաբար թեստի կամ քննության տեսքով է, իսկ կատարողականը չափվում է գնահատականի միջոցով:
- Ինքնագնահատումը թույլ է տալիս սովորողին գնահատել իր առաջընթացը (լեզվի իմացության ի՞նչ մակարդակ ունեմ ես, իսկապե՞ս սովորել եմ այն, ինչ ուզում էի սովորել և այլն):

ԺԼԵԿ-ի նախագծերը նպաստում են արժևորման և գնահատման գործընթացներին հետևյալ միջոցներով.

- Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգը (**ԼԻՀՀ, CEFR**) ապահովում է կայուն հիմք՝ լեզուների ուսումնական պլանների և ուսումնական ծրագրերի ուղեցույցների, դասավանդման և ուսումնական նյութերի մշակման համար, ներկայացնում է, թե ինչպես են բազմալեզվությունն ու բազմաշակութայնությունն արտացոլվում ուսումնական ծրագրերում, քննարկում է ուսումնական ծրագրերի ստեղծման սկզբունքները, լեզուների շարունակական ուսուցումը և գնահատման ձևերը: Լեզվի իմացության մակարդակների (A1-C2) և «կարող եմ անել» (“Can do”) ցուցիչների/նկարագրիչների ուղեկցող նյութերն օգնում են սովորողների կարողականությունները վերագրել ներկայացվող մակարդակներից որևէ մեկին և ընդունելի են լեզվի մասնագետների կողմից Եվրոպայում և նրա սահմաններից դուրս:
- **ReLex** - Լեզուների թեստերի և քննությունների համապատասխանեցումը ԼԻՀՀ-ի շրջանակներին. «Ուսուցում, դասավանդում և գնահատում» և «Կարևորագույն դրվագներ» ձեռնարկներն օգնում են դասավանդողներին հաղթահարել լեզվի գնահատման բարդությունները և Եվրամիության հետ ԺԼԵԿ-ի համագործակցության համաձայնագրի շրջանակներում առաջարկվող RELANG վերապատրաստման աշխատաժողովների հիմքն են: Այս վերապատրաստումների նպատակն է աջակցել լեզվի թեստավորման և գնահատման որակի ապահովման աշխատանքներին և նպաստել, որ սովորողների կարողությունները թեստային ոլորտում արտահայտվեն

ԼԻՀՀ մակարդակներով, որոնք «վավեր են, հասկանալի և լայնորեն ընդունված»⁵:

ԼԵՂՈՒՆԵՐԻ ՎԱՂ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԺԼԵԿ-Ի ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ Է

Եվրոպայում աճող միտում կա՝ սկսել լեզվի ուսուցումը տարրական դասարաններում կամ նույնիսկ մանկապարտեզում: Մանուկներին օտար լեզու դասավանդելը պահանջում է այս տարիքային խմբի համար անհրաժեշտ ընդհանուր հմտությունների և լեզվի ուսուցման հատուկ մոտեցումների համատեղում: Անհրաժեշտ է հաշվի առնել մանուկ հասակի սովորողների ճանաչողական և հուզական զարգացման, ինչպես նաև սոցիալական տարբեր խմբերում միասին սովորելու փորձառությունների առանձնահատկությունները և լեզվի դասավանդման մեթոդները համապատասխանեցնել այս գործոններին:

Լեզվի վաղ ուսուցման առավելությունները

- Մանուկ հասակում սովորողները գտնվում են զարգացման այնպիսի փուլում, երբ նրանք բաց են նոր երևույթների ընկալման համար, սովորելու մոտիվացիան շատ բարձր է, և մանուկները հաճույքով են սովորում նոր լեզու:
- Մանուկները, հատկապես 2-ից 4 տարեկանում, գտնվում են «բնական» լեզվի յուրացման փուլում, երբ ուղեղն առավել ընկալունակ է, օրինակ, նրանք հեշտությամբ կրկնօրինակում են լավ արտասանությունը:
- Վաղ սկսելը օգնում է երեխաներին զգայուն լինել «այլության» նկատմամբ և շատ փոքր տարիքից պատրաստ լինել բազմալեզու և միջմշակութային կրթության մարտահրավերներին դիմակայելուն:
- Լեզվի վաղ ուսուցումը նպաստում է երեխայի ոչ միայն օտար, այլ նաև մայրենի լեզվի յուրացմանը, զարգացնում երեխայի ճանաչողական, հաղորդակցական և լեզվական հմտությունները, ինչպես նաև հիշողությունը և կենտրոնացումը:
- Այն աջակցում է երեխայի սոցիալական և հուզական զարգացմանը՝ զույգերով և խմբերով աշխատելու արդյունքում:

Լեզվի վաղ ուսուցմանը նպաստող ԺԼԵԿ-ի նախագծերը

- **Նախադպրոցական կրթության եվրոպական պորտֆոլիո** նախագիծը (PEPELINO) ներկայացնում է վաղ տարիքի սովորողներին

⁵<https://www.ecml.at/Thematicareas/EvaluationandAssessment/EuropeanLanguagePortfolio/tabid/4179/language/en-GB/Default.aspx>

դասավանդողներին աջակցող ուղեցույց և նրանցից պահանջվող կարողականությունների համապարփակ կատալոգ: Մյուս նախագծերը առաջարկում են մանուկ հասակում սովորողների համար նախատեսված դասարանային գործունեության հաջողված օրինակներ:

- **Լեզվի վաղ ուսուցման մեթոդները:** Նախագծի նպատակն է մի շարք մեթոդների և գործիքակազմի միջոցով տեսանելի դարձնել լեզվի վաղ ուսուցման խնդիրները և հնարավորությունները: Բացահայտվում, վերլուծվում և փաստագրվում են 3-ից 12 տարեկան երեխաներին լեզու դասավանդելու ընթացքում առաջացած խնդիրները և առաջարկվում են արդյունավետ ուղիներ, որոնք մանուկ հասակում սովորողներին հնարավորություն են ընձեռում առաջադիմել լեզվի յուրացման հարցում: Նախագիծը դիտարկում է լեզվի ուսուցումը որպես շարունակական գործընթաց՝ լեզվի նախնական յուրացումից մինչև լեզվական բարդ կառույցների օգտագործում:
- **ILLEY** նախագիծը ներկայացնում է լեզվի վաղ ուսուցումը խրախուսող նյութեր: ԺԼԵԿ-ի այս նախագիծը պատասխանում է «Ի՞նչն է դարձնում լեզվի ուսուցումը ոգեշնչող երեխաների համար» հարցին: Կայքում ներկայացված են լեզվի վաղ ուսուցմանը վերաբերող հիմնական դրույթները՝ գործնական օրինակների հետ միասին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԺԼԵԿ-Ի ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ

Բովանդակության և լեզվի ինտեգրված ուսուցումը (CLIL) ավելի ու ավելի կարևոր դեր է խաղում լեզվական կրթության մեջ՝ թե՛ որպես օտար լեզուների դասավանդման և ուսուցման հիմնավոր բաղադրիչ, թե՛ որպես երկլեզու և բազմալեզու կրթության տարր: Քանի որ այլ առարկա սովորողները ցանկանում են նաև զարգացնել իրենց լեզվական կարողությունները, հարկ է, որ ուսումնական նյութը սովորողներին ներկայացնի լեզվի և այլ գիտակարգերի վրա հիմնված առաջադրանքներ: Դա անելու ձևերից մեկը CLIL-ն է, որտեղ օտար լեզու և որևէ այլ առարկա դասավանդողները աշխատում են միասին. լեզու դասավանդողները ձեռք են բերում այլ առարկաների մասին գիտելիք, իսկ այլ առարկա դասավանդողները ձեռք են բերում փորձառություն՝ լեզվի և տվյալ առարկայի դասավանդման մեթոդները համատեղելու հարցում:

CLIL-ի արդյունավետությունը բարձրացնելուն միտված ԺԼԵԿ-ի նախագծերը

ԺԼԵԿ-ն աջակցում է CLIL ուսուցիչներին և ուսուցիչներ վերապատրաստողներին առարկայական ուսուցման ժամանակ ոչ միայն

հաշվի առնել և ամրապնդել լեզվական բաղադրիչը, այլև զարգացնել ճանաչողական և ակադեմիական գրագիտությունը:

ԺԼԵԿ-ի հրատարակությունների և նախագծերի ամբողջ շարք նվիրված է CLIL-ին: Դրանք ներառում են.

- ✓ Բովանդակության և լեզվի ինտեգրված ուսուցման ուսումնական պլանի մշակում (CLIL CD) և հրապարակում:
- ✓ CLIL ուսուցիչների կրթության համաեվրոպական շրջանակ, բովանդակության և լեզուների ինտեգրված ուսուցում անգլերենից բացի այլ լեզուներով (CLIL Start), որտեղ նկարագրված են CLIL ուսուցիչներին անհրաժեշտ մեթոդական ցուցումները, և որտեղ առկա է նաև CLIL ուսուցման մասին տեսական դրույթներ⁶:

ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԼԵՁՈՒՆԵՐ

Լեզվական կրթությունը ենթադրում է ոչ միայն օտար լեզվի դասավանդում, այլև կարևորում է սովորողների մեծամասնության դպրոցական լեզուն, նրանց տնային լեզուները, ինչպես նաև յուրաքանչյուր առարկա սովորելու համար անհրաժեշտ լեզուն:

Ինչպես են ECML նախագծերը նպաստում դպրոցում դասավանդվող լեզուների արդյունավետությանը

«Լեզուն որպես առարկա» ոլորտում կա երկու նախագիծ. դպրոցական լեզվի ուսուցումը բազմազանության համատեքստում (**Maledive**) և սովորողների մեծամասնության լեզուն բազմալեզու միջավայրում (**Marille**), որոնք անդրադառնում են այն խնդրին, թե ինչպես կարող է բազմալեզու կրթությունը ազդեցություն ունենալ ուսումնառության վրա: Նախագծերը ուսումնասիրում և առաջարկում են ուղիներ, որոնք կարող են նպաստել բազմալեզու և միջմշակութային կրթությանը, ազգային/տարածաշրջանային լեզվի և գրականության արժևորմանը և նույն դասարանում սովորող և տարբեր լեզուներով խոսող աշակերտների անցնցում ինտեգրմանը:

«Այլ առարկաների լեզուներ» ոլորտում «Լեզվական հմտություններ՝ առարկաների հաջող ուսուցման համար» (լեզուների նկարագրիչներ) նախագիծը ներկայացնում է լեզուների նկարագրիչներ՝ պատմություն, քաղաքացիական իրավունք և մաթեմատիկա առարկաների համար:

⁶ <https://www.ecml.at/ECML-Programme/Programme2008-2011/EuropeanFrameworkforCLILTeacherEducation/tabid/4444/Default.aspx>

Բազմակարծության ուսուցումը (PTL) ուսուցիչների և դասավանդման նյութեր մշակողների համար նախանշում է բազմակարծությունը խթանելու ուղիներ՝ կարևորելով ուսանողների առարկայական գրագիտությունը և հայեցակարգային մտածողության զարգացումը:

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

• Լեզուների եվրոպական օր

Լեզուների եվրոպական օրը նշվում է սեպտեմբերի 26-ին, որը հռչակվել է Եվրոպայի խորհրդի կողմից 2001 թվականի դեկտեմբերի 6-ին՝ Եվրախորհրդի և Եվրամիության կողմից համատեղ կազմակերպված Լեզուների եվրոպական տարվա ավարտին:

Լեզուների եվրոպական օրը ամենամյա հնարավորություն է՝ բարձրացնելու հանրության լայն շրջանակների իրազեկվածությունը լեզուների ուսուցման և լեզվական բազմազանության վերաբերյալ: Լեզուների եվրոպական օրվա ընդհանուր նպատակներն են.

- ✓ Նպաստել Եվրոպայի լեզվական և մշակութային բազմազանության տարածմանը:
- ✓ Տեղեկացնել հանրությանը լեզուների ուսուցման կարևորության մասին՝ բազմալեզվությունը խթանելու և միջմշակութային իրազեկությունը բարձրացնելու նպատակով:
- ✓ Խրախուսել լեզուների ցկյանս ուսուցումը

• Այցելություններ ԺԼԵԿ՝

Այցելությունների ծրագրում ներառված է.

- ✓ Եվրոպայի խորհրդի և ԺԼԵԿ-ի շնորհանդեսը՝ լեզվական կրթության ոլորտում հիմնական զարգացումների մասին ակնարկով,
- ✓ այցելություն Հաղորդակցության և ռեսուրսների կենտրոն, որտեղ կարելի է ստանալ տեղեկություն ժողովրդավարական կրթության և ԺԼԵԿ-ի ռեսուրսների վերաբերյալ,
- ✓ խորհրդակցություն Եվրոպական լեզուների պորտֆոլիոների (ELP) և Լեզուների իմացության համաեվրոպական շրջանակի (CEFR) գրադարանային հավաքածուի մասին:

• ԺԼԵԿ-ը վերապատրաստում և խորհրդատվություն է տրամադրում անդամ երկրներին

ԺԼԵԿ-ն իր անդամ երկրներին առաջարկում է լեզվական կրթության եվրոպական փորձը՝ հարմարեցված առանձին երկրների կոնկրետ կարիքներին և կոնկրետ համատեքստերին: ԺԼԵԿ-ի

⁷ www.ecml.at/calendar

փորձագետները աշխատում են ազգային իշխանությունների և փորձագետների հետ՝ տվյալ երկրի կոնկրետ կրթական կարիքները վերհանելու ուղղությամբ և տվյալ թիրախային լսարանի համար մշակում ու իրականացնում համապատասխան միջոցառումներ: Այս երկկողմանի գործընթացն օգնում է ամրապնդել համագործակցությունը անդամ երկրների և ԺԼԵԿ-ի միջև՝ ԺԼԵԿ-ի նախագծերին մասնակցելու արդյունքում ձեռք բերած փորձը ուղղակիորեն անդամ երկրներում ներդնելու առումով: ԺԼԵԿ-ի միջնորդական առաքելությունը աջակցում է անդամ երկրներին՝

- ✓ արձագանքել միգրացիայի և շարժունության հետ կապված մարտահրավերներին,
- ✓ բարելավել լեզու դասավանդողների մասնագիտական հմտությունները,
- ✓ փոխանակել հաջողված փորձառությունները մասնագիտական ցանցերի միջոցով,
- ✓ ապահովել ազգային լեզվական կրթության համապատասխանությունը միջազգային չափանիշներին:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԺԼԵԿ-ը դիտարկում է որոշակի առաջարկով իրենց դիմած անդամ երկրի կրթական և լեզվական կարիքները, որի արդյունքում փորձագիտական թիմը նյութեր է պատրաստում և լեզվական իրազեկությունների բարելավման նպատակով վերապատրաստումներ և/կամ խորհրդատվություններ տրամադրում անդամ երկրին: Անդամ երկրների համար առաջարկվող վերապատրաստումներն ու խորհրդատվությունները ներառում են թեմաներ, որոնք առաջնային են ազգային կրթական համակարգերի համար՝

- Ուսուցչի լեզվական կարողականություններ,
- Բազմալեզու և միջմշակութային կրթություն (FREPA),
- Աջակցություն դպրոցում դասավանդվող լեզվին (ROADMAP),
- Ուսուցման միջավայր, որտեղ ժամանակակից լեզուները հաջողում են (EOL),
- Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների գործիքակազմի օգտագործումը լեզվի դասավանդման գործընթացում (ICT-REV),
- Հետազոտողների գործողությունների պլան (ARC),
- Օտար լեզուն աշխատավայրի համար,
- Բովանդակության և լեզվի ինտեգրված ուսուցում (CLIL),

- Թեստավորում և գնահատում – Լեզվական թեստերի և ուսումնական ծրագրերի համապատասխանեցում լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգին (RELANG):

Վերապատրաստումներ ԺԼԵԿ-ում

1997թ.-ից ի վեր տարին երկու անգամ ԺԼԵԿ-ն առաջարկում է 6-ամսյա վերապատրաստումներ, որոնք վաղուց հավաստել են իրենց արժանահավատությունը որպես ԺԼԵԿ-ի և նրա անդամ երկրների միջև հետագա համագործակցությունը զարգացնելու և միջմշակութային շփումները խթանելու միջոց: Ըստ իրենց հետաքրքրությունների՝ դիմորդները կարող են ընտրել այն հիմնական ոլորտը, որում կցանկանան ներգրավվել. միջոցառումների և հանդիպումների կազմակերպում (Programme), փաստաթղթեր և ռեսուրսներ (DRC), ԺԼԵԿ-ի կայք (Website), վարչարարություն, ֆինանսներ և ընդհանուր կառավարում (Administration):

Եզրակացություն

ԺԼԵԿ-ի գործունեությունը՝ ծրագրերը, նախագծերը, ներկայացվող ռեսուրսները, վերապատրաստման դասընթացները և աշխատաժողովները միտված են չափազանց կարևոր նպատակի՝ աջակցել ԺԼԵԿ-ի անդամ երկրների կրթական համակարգերին և, մասնավորապես, օտար լեզուներ դասավանդողներին՝ դասավանդման և գնահատման մեթոդների բարելավման գործում: Դրանք նվիրված են բազմալեզու և բազմամշակույթ կրթությանը, լեզվի դասավանդման ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության կարևորմանը, օտար լեզուների ուսումնառության, դասավանդման, գնահատման մեթոդների բարելավմանը և կրթության ոլորտի առանցքային այլ հարցերի:

Առավել լայն իմաստով, ԺԼԵԿ-ի առաքելությունն է իր անդամ երկրների կրթության մասնագետներին ծանոթացնել եվրոպական ընդհանուր լեզվաքաղաքականության դրույթներին, համընդհանուր, սակայն ազգային առնձնահատկությունների վրա խարխսված արժեքներին և դրանք ուսուցման գործընթացում կիրառելու առանձնահատկություններին:

GAYANE YEGHIAZARYAN - LANGUAGE POLICY OF THE EUROPEAN CENTER FOR MODERN LANGUAGES OF THE COUNCIL OF EUROPE

Keywords: *Council of Europe, European Center for Modern Languages, language policy, foreign languages, multilingualism, cultural diversity*

The European Centre for Modern Languages (ECML) is a centre to promote quality language education in Europe and beyond. The ECML's mission is to encourage excellence and innovation in language teaching and support its member states in the implementation of effective language education policies. It does so by working with decision-makers in member states and bringing together language experts to develop innovative, research-informed solutions to challenges in language education. The ECML recognises the importance of pedagogical approaches, which are differentiated according to learner needs and to specific language contexts (home/first, second, foreign, regional, of migration, in subjects etc.). The provision of lifelong, quality language education supports not only educational and professional success, but personal development and a sense of self-worth, which in turn contribute to a democratic, socially cohesive and peaceful world.

ГАЯНЕ ЕГИАЗАРЯН - ЯЗЫКОВАЯ ПОЛИТИКА ЕВРОПЕЙСКОГО ЦЕНТРА СОВРЕМЕННЫХ ЯЗЫКОВ СОВЕТА ЕВРОПЫ

***Ключевые слова:** Совет Европы, Европейский центр современных языков, языковая политика, иностранные языки, многоязычие, культурное разнообразие*

Европейский центр современных языков (ECML) - это центр содействия качественному языковому образованию в Европе и за ее пределами. Миссия ECML заключается в поощрении передового опыта и инноваций в преподавании языков, а также в поддержке государств-членов, внедряющих эффективную политику языкового образования. Все вышеперечисленное достигается посредством работы с лицами, принимающими решения в государствах-членах, а также с объединениями экспертов, занимающихся разработкой инновационных, наукоемких решений проблем языкового образования. ECML признает важность педагогических подходов, дифференцирующихся в зависимости от потребностей учащихся и конкретных языковых контекстов (родной/первый, второй, иностранный, региональный, миграционный, по предметам и т. д.). Предоставление непрерывного качественного языкового образования способствует не только образовательным и профессиональным успехам, но и благотворно влияет на личностное развитие и чувство собственного достоинства, что, в свою очередь, способствует построению демократического, социально сплоченного мира.

Գ Ր Ա Խ Ո Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Լ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ - «ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ», ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ՀՐԱՏ., ԵՐԵՎԱՆ, 2023, 502 ԷՋ:

ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Լույս է տեսել ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի ղեկավար պրոֆ. Լ. Մ. Խաչատրյանի մենագրությունը՝ նվիրված հին հայերենի քերականական համակարգի տիպաբանությանը:

Լ. Խաչատրյանն զգալի ներդրում ունի հին հայերենի ուսումնասիրության ոլորտում. գրաբարի դասագիրք, գրաբարի բացատրական բառարաններ, գրաբարի ուսումնական բառարան, գրաբարի խոսքիմասային տարաբժեքության բառարան և այլն:

Հրատարակված սույն աշխատությունն արծարծում է ոչ միայն ներլեզվական խնդիրներ, այլև ունի ընդհանուր լեզվաբանական նշանակություն. աշխարհի լեզուները, անկախ ցեղակցությունից, տիպաբանական ընդհանուր գծեր ու տարբերություններ են դրսևորում: Հարցադրումը հրատապ է դառնում այնքանով, որ աշխարհում չկա մաքուր տիպի լեզու. ցանկացած լեզու դրսևորում է տիպաբանական տարբեր հատկանիշներ (կցականություն, թեքականություն, կրկնություն, տարահիմքություն, սպասարկու բառերի գործածություն, խառը տիպ և այլն): Այս առումով հին հայերենի տիպաբանական բնութագիրը դեռևս որոշակի չէ, մանավանդ եթե նկատի ունենանք, որ լեզվի տարբեր շրջաններ բնորոշվում են տիպաբանական տարբեր հատկանիշներով: Հետևաբար, այդ ոլորտի ցանկացած գիտական ուսումնասիրություն կարող է իր նպաստը բերել հայերենի տարբեր շրջանների տիպաբանական բնութագրի ամբողջացմանը:

Յուրաքանչյուր լեզվի քերականական համակարգի տիպաբանության բացահայտումը տվյալ լեզվի տեսության առանցքային հարցերից է: Տիպաբանության հարցադրումը կարևորվում է ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարժամանակյա առումներով, քանի որ լեզվի տիպաբանական բնութագիրը նրա զարգացման տարբեր փուլերում կարող է փոփոխության ենթարկվել՝ լրիվ կամ մասնակի առումներով:

Աշխատանքում քննարկվում են հին հայերենի քերականական համակարգի տիպաբանության խնդիրները՝ ըստ լեզվական

մակարդակների: Հեղինակը հին հայերենի շրջանակներում քերականական համակարգի տիպաբանությունը դիտարկում է երեք՝ պատմական, տարժամանակյա և համաժամանակյա կտրվածքներով:

Պարմական հայեցակետով քննվել է դասական հայերենի ձևաբանաշարահյուսական մակարդակների փոփոխությունների ընթացքը 7-13-րդ դարերում՝ հետևելով հետդասական և նախամիջին հայերենի ենթափուլերի լեզվավիճակին: Ըստ այդմ՝ ցույց են տրվել համակարգային այն փոփոխությունները, որոնք արձանագրված են նշված դարաշրջանների պատմիչների երկերում:

Հին հայերենի գոյավիճակում տեղի ունեցած տեղաշարժերն անվերապահորեն համարվում են տիպաբանական ֆրագմենտալ փոփոխություններ, որոնք ընդհանրական բնույթ են ստանում լեզվի հաջորդ գոյավիճակում. ընդհանրական փոփոխությունները որոշում են լեզվական գոյավիճակների ժամանակագրական սահմանները՝ դառնալով լեզվափուլերի բաժանման (սահմանազատման) չափորոշիչներ:

Ամփոփելով 7-12-րդ դարերի ընթացքում հին հայերենի կրած ձևաբանական և շարահյուսական ոլորտների պատմական փոփոխությունների նկարագրությունը՝ հեղինակն առանձնացնում է տիպաբանական որոշակի չափորոշիչներ, որոնք նախամիջին հայերենի ենթափուլի վերջում աստիճանաբար կայունանում են.

ա) հոլովման համակարգում ներքին թեքման մասնակի վերացում և անցում *կցականության*,

բ) վերլուծական հոլովաձևերի քայքայում և անցում *կցականության*,

գ) խառը տիպի հոլովման քայքայում և անցում պարզ հոլովման,

դ) խոնարհման համակարգում կցական բառաձևերի դիմաց վերլուծական ձևերի առաջացում,

ե) հավաքական գոյականների անցում եզակի նշանակության՝ քերականական մասնիկների դերի չեզոքացման հետևանքով,

զ) նախդիրների անկում. վերլուծական ձևերից անցում *կցականության*,

է) նախադասության անդամների համաձայնության խախտում,

ը) ստացական դերանվան համաձայնության խախտում,

թ) հոլովական համակարգում –ում և -ով մասնիկների կայունացում:

Տարժամանակյա հայեցակետով քննվել է հին հայերենի ձևաբանական և շարահյուսական մակարդակների տիպաբանական հատկանիշների փոփոխությունների ընթացքն ընդհանուր հայերենում, և ցույց են տրվել դրանց (փոփոխությունների) դրսևորումներն արդի հայերենում:

Տարժամանակյա ձևաբանական տիպաբանության քննությունից հեղինակը կատարում է հետևյալ եզրակացությունները.

1. Փոփոխություններ են կատարվել հոլովական համակարգում

ա) հին հայերենի հոլովական համակարգին բնորոշ է կցականությունը՝ զուգակցված թեքականությամբ. արդի հայերենը հատկանշվում է կցականությամբ և թեքականության կորուստով,

բ) հին հայերենի հոլովական համակարգից դուրս են եկել վերջադրական խառը հոլովումները՝ Ի-Ա, Ո-Ա. այդ հոլովներին պատկանող բառերն արդի հայերենում ենթարկվում են Ի ընդհանրական հոլովման,

գ) վերացել են Ա, Ե պարզ և Ի-Ա խառը ներդրական հոլովումները. այդ կարգի հոլովումներ ունեցող բառերն արդի հայերենում պատկանում են Ի ընդհանրական հոլովման,

դ) հին հայերենին բնորոշ նախդրավոր վերլուծական հոլովածներն արդի հայերենում ձեռք են բերել համադրական կառուցատիպեր,

ե) վերացել են հին հայերենի գոյականի հոլովական զուգաձևությունները,

զ) չեզոքացել է որոշ քերականական մասնիկների դերը,

է) կատարվել է քերականական մասնիկների շարադասական դիրքի փոփոխություն և այլն:

2. Փոփոխություններ են կատարվել խոնարհման համակարգում

ա) հին հայերենի ստորադասական եղանակը տարրալուծվել է, և նրա հիմքի վրա նոր եղանակներ են առաջացել,

բ) փոփոխություն է կատարվել հրամայական եղանակում,

գ) հին հայերենի պարզ ժամանակների դիմաց բաղադրյալ-վերլուծական ձևեր են առաջացել,

դ) հին հայերենի բայական համակարգում կատարվել է զուգաձևությունների չեզոքացում և այլն:

Շարահյուսական հարցերը քննելիս դիտարկվել են՝

1. Շարադասական բնույթի փոփոխությունները.

ա) փոխվել է նախադասության գլխավոր անդամների շարադասության կարգը. հին հայերենում ստորոգյալը ենթակայի նկատմամբ նախադաս է, արդի հայերենում՝ հետադաս,

բ) փոխվել է նախադասության երկրորդական անդամների շարադասությունը. հին հայերենում որոշիչն ունի երկակի շարադասություն, արդի հայերենում այն հիմնականում նախադաս է,

գ) հին հայերենում հատկացուցիչը վերջադաս է, արդի հայերենում՝ նախադաս:

2. Նախադասության անդամների համաձայնության փոփոխությունները.

- ա) վերացել է հին հայերենին բնորոշ ածական-գոյական հոլովական համաձայնությունը,
- բ) վերացել են ստացական դերանունները, հետևաբար՝ նրանցով արտահայտված նախադասության անդամների համաձայնության դեպքերը,
- գ) վերացել են հին հայերենին բնորոշ դերբայական նախադասությունները,
- դ) վերացել է հին հայերենին բնորոշ թեք հոլովներով ենթակայի արտահայտությունը,
- ե) վերացել է անեզական ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնությունը,
- զ) վերացել են հին հայերենին բնորոշ ոճական որոշ հնարներ:

Համաժամանակյա կտրվածքով ուսումնասիրվել է հին հայերենի քերականական համակարգը (ձևաբանական և շարահյուսական մակարդակներ), և առանձնացվել ու մեկնաբանվել են լեզվաքերականական այն միջոցները, որոնք ծառայում են նշված մակարդակների քերականական իմաստներն արտահայտելուն:

1. Ձևաբանական տիպաբանության հարցերը քննության են առնվել անուն խոսքի մասերի և բայի թվի քերականական կարգի, հոլովման, խոնարհման համակարգերի առումներով:

ա) Գոյականի թվի քերականական կարգն ուսումնասիրելիս հեղինակն անդրադարձել է թվակազմական ցուցիչների քերականական արժեքին, անկանոն հոլովման բառերի և ձայնորդահանգ հիմքերով բառերի թվակազմությանը և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հին հայերենում թվի քերականական կարգն արտահայտվում է հիմնականում մասնիկավորման միջոցով. բացառություն են կազմում բայի վերլուծական (բաղադրյալ) ժամանակաձևերը, որոնց դեմքի, թվի և ժամանակի քերականական իմաստներն արտահայտվում են սպասարկու բառերի (օժանդակ բայի խոնարհված ձևերի) միջոցով:

բ) Հոլովական համակարգում գործում են մասնիկավորումը, ներքին թեքումը, տարահիմքությունը և սպասարկու բառերը (կա նաև, այսպես կոչված, խառը տիպ), որոնք մասամբ դժվարացնում են հոլովման համակարգի տիպաբանության որոշումը, այնուամենայնիվ, ըստ ուսումնասիրության արդյունքների, քերականական միջոցների համակարգում գերակշռում է մասնիկավորման եղանակը:

գ) Խոնարհման համակարգում նույնպես գործում են մեկից ավելի քերականական միջոցներ, ինչպես՝ մասնիկավորում, տարահիմքություն,

ներքին թեքում և սպասարկու բառեր: Համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քերականական իմաստների արտահայտման առումով գործառնապես կենսունակ է մասնիկավորման եղանակը:

Հետազոտության առարկայից և ուսումնասիրության արդյունքներից ելնելով՝ կարելի է ասել, որ հին հայերենի ձևաբանական մակարդակում քերականական իմաստներն արտահայտվում են լեզվական-քերականական տարբեր միջոցներով, ինչպես՝ *մասնիկավորում, ներքին թեքում, տարահիմքություն, սպասարկու բառերի գործածություն, քերականական իմաստների արտահայտման խառը տիպ*:

Հեղինակը քննության ընթացքում փորձել է հիմնավորել այն տեսակետը, որ հին հայերենի ձևաբանական կառուցվածքը տիպաբանորեն կցական կառուցատիպի է՝ զուգակցված թեքականությամբ. լեզվի պատմական փոփոխությունների ընթացքում թեքականությունն աստիճանաբար վերացել է և արդի հայերենում պահպանվել է միայն գրաբարատիպ հոլովում ունեցող որոշ բառերի հոլովման համակարգում: Հեղինակն աշխատել է ցույց տալ, որ հին հայերենում, մասնիկավորումից և ներքին թեքումից բացի, քերականական իմաստներ արտահայտելու տեսակետից որոշակի դեր ունեն նաև տարահիմքությունն ու սպասարկու բառերը. մի հանգամանք, որ զգալիորեն խայտաբղետ է դարձնում հին հայերենում քերականական իմաստների արտահայտման միջոցների համակարգը. ուստի վիճակագրական մոտեցումով հնարավոր է միայն հստակ որոշել, թե հին հայերենում լեզվական-քերականական ո՞ր միջոցն է գերակշռում քերականական իմաստներ արտահայտելու տեսակետից:

2. Շարահյուսական տիպաբանության հարցերը դիտարկվել են նախադասությունների կառուցատիպերի, նախադասության անդամների համաձայնության, ներառման ստորադասական կապակցությունների, սպասարկու բառերով կառույցների իմաստների, նրանց շարահասական կաղապարների առումներով և այլն:

Նախադասության տիպաբանության ուսումնասիրության շրջանակներում բացահայտվում են նախադասության անդամների համաձայնության տիպերը՝ մի կողմից՝ գլխավոր անդամների, մյուս կողմից՝ գերադաս և կախյալ անդամների միջև: Նախադասության տիպաբանության առանցքային հարցերից են շարահասական կաղապարները, որոնք ներառում են նախադասության գլխավոր և երկրորդական անդամների շարահասության կարգը:

Այս ոլորտում քննության առարկա են դարձել՝

ա) շարահյուսական կառույցների տիպաբանությունը, որի շրջանակներում բացահայտվել են նախադասության տիպաբանությունը, նախադասության անդամների համաձայնության տիպերը, հետադաս հարաբերյալների շարահասակական կաղապարները,

բ) ներառման ստորադասական կապակցության կաղապարները, որոնց շրջանակներում մեկնաբանվել են նախդիրներով և նախադրություններով ներառման կապակցությունները, բացահայտվել են կրկնակի ներառման կառույցների իմաստային յուրահատկություններն ու նրանց կաղապարները,

գ) սպասարկու բառերով կառույցների տիպաբանությունը. դիտարկվել են նախդիր + հոլովածե և նախադրություն + հոլովածե կապակցությունների տիպաբանական կաղապարները և այլն:

Շարահյուսության ոլորտում կատարված ուսումնասիրությունն ու նրա արդյունքների ընդհանրական վերլուծությունը հիմք են տալիս եզրակացնելու, որ հին հայերենի շարահյուսական համակարգն իր բնորոշ գծերով տիպաբանորեն բավարարում է անվանական կառուցատիպի լեզուների տիպաբանության չափանիշները, և շարահյուսորեն այն պատկանում է *անվանական կառուցվածքի լեզուների դասին*:

Հայագիտության մեջ ընդունված է այն տեսակետը, որ հին հայերենը տիպաբանորեն պատկանում է թեքական կառուցատիպի լեզուների թվին, թեև ունի կցականության որոշ տարրեր: Անշուշտ, այս տեսակետը որոշակի հիմնավորում ունի, եթե հարցը դիտարկում ենք գոյականի հոլովման և բայի խոնարհման համակարգերում, սակայն այդ նույն համակարգերում քերականական իմաստներն արտահայտվում են առավելապես կցականության (մասնիկավորման) միջոցով, եթե անտեսենք քերականական իմաստների արտահայտման այլ միջոցներ ևս, որոնք նույնպես կենսունակ են այդ ոլորտում, ինչպես՝ ներքին թեքում, տարահիմքություն, սպասարկու բառերի գործածություն և այլն: Ըստ այդմ՝ անհրաժեշտություն է առաջանում նոր մեթոդաբանությամբ ուսումնասիրել հին հայերենի համաժամանակյա քերականական կառուցվածքը, որոշել նրա տիպաբանական բնութագիրը, ճշգրտել որոշակի հարցեր, որոնք մինչ այժմ անտեսվել են՝ տուրք տալով հին հայերենի քերականական համակարգի ավանդական բնութագրին:

Աշխատանքում փորձ է արվում հիմնավորելու այն տեսակետը, որ հին հայերենի *ձևաբանական կառուցվածքը* տիպաբանորեն կցական կառուցատիպի է՝ զուգակցված թեքականությամբ, իսկ *շարահյուսական համակարգը* բավարարում է անվանական կառուցատիպի լեզուների

տիպաբանության չափանիշները և բնութագրվում է անվանական կառուցվածքի լեզուների տիպով:

Հեղինակի կատարած ուսումնասիրության արդյունքների և ամփոփիչ եզրակացության տվյալների հիման վրա հաստատվում է նրա առաջ քաշած վարկածը. հին հայերենի ձևաբանական տիպաբանությունը *բնութագրվում է մասնիկավորմամբ՝ թեքականության տարրերով:* Հետևաբար պետք է վերանայել հին հայերենին տրված թեքականության բնութագիրը և այն դիտել *կցական կառուցատիպի լեզու՝* միաժամանակ չանտեսելով այն հանգամանքը, որ չկա մաքուր տիպի լեզու, և որ ցանկացած լեզվում գործում են մեկից ավելի լեզվական-քերականական միջոցներ, այդ թվում՝ նաև հին հայերենում: Սակայն հարցն այն է, թե լեզվական-քերականական ո՞ր միջոցն է գերակշռում տվյալ լեզվում: Այդ տեսանկյունից հին հայերենի ձևաբանական մակարդակին բնութագրական է *մասնիկավորումը*, որ հիմք է տալիս հաստատելու, որ այն *կցական կառուցատիպի լեզու է՝ զուգակցված թեքականությամբ:*

Պրոֆ. Լ. Խաչատրյանի հեղինակած աշխատանքը՝ «Հին հայերենի քերականական համակարգի տիպաբանությունը», ինչպես նշեցինք, ունի ոչ միայն հայագիտական, այլև ընդհանուր լեզվաբանական նշանակություն. այն տալիս է այնպիսի կնճռոտ հարցերի պատասխանը, ինչպիսին հին հայերենի տիպաբանության խնդիրներն են: Աշխատանքը կարևորվում է հայոց լեզվի պատմության, պատմական քերականության և լեզվաբանական տիպաբանության հարցադրումների քննության համատեքստում. այն կարող է օգտակար լինել բանասիրական ֆակուլտետների ուսանողների, մագիստրոսների, ասպիրանտների, դասախոսների և, ընդհանրապես, բոլոր նրանց համար, ովքեր զբաղվում են հայոց լեզվի պատմության և լեզվաբանական տիպաբանության հարցերով:

Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր



(Ս.Ա. Հայրապետյան)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԶԱՐԻԿ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայոց լեզվի ամբիոն, Երևանի պետական համալսարան

АГАДЖАНЫН ЗАРИК - кандидат филологических наук, доцент, кафедра армянского языка, Ереванский государственный университет

AGHAJANYAN ZARIK - Candidate of Sciences (Philology), Associate Professor, Chair of Armenian Language, Yerevan State University

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱՄԱՐԱ - բանասիրական գիտությունների թեկնածու, բանասիրության և պատմաիրավագիտության ամբիոն, Գորիսի պետական համալսարան

АНДРЕАСЯН ТАМАРА - кандидат филологических наук, кафедра филологии и историко-правоведения, Горисский государственный университет

ANDREASYAN TAMARA - Candidate of Sciences (Philology), Chair of Philology, History and Law, Goris State University

ԲԱԴԱԼՅԱՆ ԼԻԼԻԹ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, անգլերենի հաղորդակցության ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

БАДАЛЯН ЛИЛИТ - кандидат филологических наук, доцент кафедры английской коммуникации, Государственный университет им. В. Брюсова

BADALYAN LILIT - Candidate of Sciences (Philology), Associate Professor, Chair of English Communication, Brusov State University

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ - բանասիրական գիտությունների թեկնածու, ասիստենտ, հայոց լեզվի ամբիոն, Երևանի պետական համալսարան

ГАБРИЕЛЯН СУСАННА - кандидат филологических наук, ассистент, кафедра армянского языка, Ереванский государственный университет

GABRIELYAN SUSANNA - Candidate of Sciences (Philology), Chair of Armenian Language, Yerevan State University

ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ ԴՎԿԻԹ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայագիտության ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական

համալսարան

ГЮРДЖИНЯН ДАВИД - кандидат филологических наук, доцент, кафедра арменоведения, Государственный университет им. В. Брюсова

GYURJINYAN DAVIT - Candidate of Sciences (Philology), Associate Professor, Chair of Armenian Studies, Brusov State University

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերենի ամբիոնի վարիչ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

ЕГИАЗАРЯН ГАЯНЕ - доктор филологических наук, профессор, зав. каф. английского языка, Государственный университет им. В. Брюсова

YEGHIAZARYAN GAYANE - Doctor in Philology, Prof., Head of Chair of English, Brusov State University

ԶԱՔԱՐՅԱՆ ՀՌԻՓՍԻՄԵ - բանասիրական գիտությունների թեկնածու

ЗАКАРЯН РИПСИМЕ - кандидат филологических наук

ZAKARYAN HRIPSIME - Candidate of Sciences (Philology)

ԹԱՄԱԶՅԱՆ ԱՆԻ - հայցորդ, Հայաստանի Եվրոպական համալսարան, լեզուների հաղորդակցության և մանկավարժության ամբիոնի վարիչ, Եվրասիա միջազգային համալսարան

ТАМАЗЯН АНИ - соискатель, кафедра прикладной лингвистики, Европейский университет Армении, заведующая кафедрой языков, коммуникации и педагогики, международный университет Евразия

TAMAZYAN ANI - Researcher, Chair of Applied Linguistics, European University of Armenia, Head of the Chair of Languages, Communication and Pedagogy, Eurasia International University

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԼԱԼԻԿ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի ղեկավար

ХАЧАТРЯН ЛАЛИК - доктор филологических наук, профессор, заведующий лабораторией лингвистических исследований Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна

KNACHATRYAN LALIK - Doctor of Sciences of Philology, Professor, Head of the Linguistic Research Laboratory, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԵՐԳՈ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

АЙРАПЕТАН СЕРГО - доктор филологических наук, профессор

HAYRAPETYAN SERGO - Doctor of Sciences (Philology), Professor

ՂՈՒԼՅԱՆ ԱՐՏԱԿ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայագիտության ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

ГУЛЯН АРТАК - кандидат филологических наук, доцент кафедры арменоведения, Государственный университет им. В. Брюсова

GHULYAN ARTAK - Candidate of Sciences (Philology), Associate Professor, Chair of Armenian Studies, Brusov State University

ՄԻՐՈՒՄՅԱՆ ՄԱՐԳՈՒՇ - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան

МИРУМЯН МАРГУШ - кандидат педагогических наук, доцент кафедры родного языка и методики его преподавания, Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна

MIRUMYAN MARGUSH - Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor, Department of Mother tongue and its Teaching Methodology, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ - ասպիրանտ, դասախոս, անգլերենի ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

МХИТАРЯН СПАРТАК - аспирант, преподаватель кафедры английского языка, Государственный университет им. В. Брюсова

MKHITARYAN SPARTAK - Ph.D student, Lecturer, Chair of English, Brusov State University

ՄԿՐՏՉՅԱՆ ՄԿՐՏԻՉ - ասպիրանտ, լեզվաբանության ամբիոն, դասախոս, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, կրտսեր գիտաշխատող, ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

МКРТЧЯН МКРТЫЧ - аспирант, кафедра языкознания, преподаватель, Государственный университет им. В. Брюсова, младший научный сотрудник, отдел общего и сравнительного языкознания, институт языка

им. Г. Ачаряна НАН РА

МКՐՏՇՅԱՆ ՄՐՏԻՇ - Ph.D student, chairs of Linguistics, Lecturer, Brusov State University, junior researcher, the Department of General and Comparative Linguistics, NAS RA Institute of Language after H. Acharyan

ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՆՆԱ - դասախոս, անգլերենի թարգմանության ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

ШАХБАЗЯН АННА - преподаватель, Кафедра перевода английского языка, Государственный университет им. В. Брюсова

SHANBAZYAN ANNA - Lecturer, Chair of English Translation, Brusov State University

ՇԱՄԻՐՅԱՆ ՍԱՍՈՒՆ - բանասիրության բակալավր, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

ШАМИРЯН САСУН - бакалавр филологии, Государственный университет им. В. Брюсова

SHAMIRYAN SASUN - Bachelor of Philology, Brusov State University

ՎԱՆՅԱՆ ՄԱՐԻԱՄ - ասպիրանտ, համաշխարհային գրականության և քաղաքակրթությունների ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

ВАНЯН МАРИАМ - аспирант, кафедра мировой литературы и цивилизаций, Государственный университет им. В. Брюсова

VANYAN MARIAM - Ph.D student, Lecturer, Chair of World Literature and Civilizations, Brusov State University

Համակարգչային ձևավորումը՝

Հասմիկ Փիլավջյանի

Տպաքանակը՝ 100

«Լինգվա» հրատարակչություն
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ 0002, Երևան, Թումանյան փող. 42
Հեռ.՝ (+374) 10 52 20 20
Էլ. հասցե՝ bsu.sciencedep@gmail.com
<http://www.brusov.am>

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի
«Բանբեր» գիտական պարբերականի 1(68) համարը երաշխավորվել է
տպագրության ԲՊՀ գիտական խորհրդի 2024 թվականի հունիսի 12-ի
№ 9 նիստի որոշմամբ:

*«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի
«Բանբեր» գիտական պարբերականում տպագրության համար
հողվածներին առաջադրվող պահանջները ներկայացված են ԲՊՀ
պաշտոնական կայքում.*
<https://brusov.am/hy/journal list/banber v bryusovi anvan petakan hamalsarani>